# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

---

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Հանրային կառավարման գծով խորհրդատու՝ Արմեն Խուդավերդյան
Ֆինանսական հարցերով փորձագետ՝ Արտակ Քյուրումյան
«Սոցիես» փորձագիտական ՀԿ՝ Հարություն Վերմիշյան

---

ISBN 978-9939-1-1870-3
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
www.transparency.am

Երևան 2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ** ........ 3

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ** ........ 4

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ........ 13

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** ........ 16

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** ........ 18

**1. ԿԿՀ գնահատումն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների** ........ 18

1.1 Հանձնաժողովի անկախությունը և կարգավիճակը ........ 19

1.2 ԿԿՀ ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ........ 31

1.3 ԿԿՀ ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը ........ 41

1.4 Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը ........ 48

1.5 Կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում ........ 62

1.6 Համագործակցություն և արտաքին հարաբերություններ ........ 74

**2. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի** ........ 82

**3. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության** ........ 85

Հավելված 1. ԿԿՀ գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ ........ 93

Հավելված 2. ԿԿՀ գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման խմբերի և ցուցանիշների ........ 272

Հավելված 3. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին ազդեցության և կատարողականը բնութագրող գործոնների ........ 273

Հավելված 4. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ Հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ ԿԿՀ-ի համար ........ 276

Գրականության ցանկ ........ 298

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԺ | Ազգային ժողով |
| ԱՄՆ ՄԶԳ | Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն |
| ԲԴԽ | Բարձրագույն դատական խորհուրդ |
| ԲՊԱԷ | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով |
| ԳՐԵԿՈ | Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԹԻ ԿԸՀ | ԹԻ կոռուպցիայի ընկալման համաթիվ |
| ԹԻ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպություն |
| ԹԻՀԿ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |
| ԿԳՄՍՆ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| ԿԿՀ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀԿՄ | Հակակոռուպցիոն մարմին |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՌԿԿ | Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԻՊ | Մարդու իրավունքների պաշտպան |
| ՄՌԿ | Մարդկային ռեսուրսների կառավարում |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| ՔԾԳ | Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ) բարելավելու կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմնի գործունեությունը: Խնդիրն է՝ գնահատել ԿԿՀ համապատասխանությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայից» բխող պահանջներին և Ջակարտայի հայտարարությամբ սահմանված սկզբունքներին և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

Որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել ԿԿՀ փաստացի ձևավորումից՝ 2019 թվականի նոյեմբերի 19-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

ԿԿՀ գնահատումն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության քարտուղարության կողմից մշակված հակակոռուպցիոն մարմինների գործունեության գնահատման գործիքով,[1] որի հիմքում ընկած են Ջակարտայի սկզբունքները: Տվյալ գործիքը տեղայնացվել է և հարմարեցվել ԿԿՀ համար՝ հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով ԿԿՀ-ին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացման համար սահմանված պահանջները:

Գնահատումն իրականացվել է հակակոռուպցիոն մարմնի (ՀԿՄ) գործունեությունը բնութագրող 51 ցուցանիշ ներառող 6 չափման խմբերով, ներառյալ՝ Հանձնաժողովի անկախությունը և կարգավիճակը, ապահովածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման ապահովումը, կանխարգելումը, հակակոռուպցիոն կրթությունը և հանրային իրազեկումը, համագործակցությունը և արտաքին հարաբերությունները: Այնուհետ գնահատվել է ԿԿՀ գործունեությունը իր վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոնների, իր վերահսկողության ներքո գտնվող ներքին գործոնների և կառույցի կատարողականը բնութագրող ուղղակի գործոնների հաշվառմամբ: Ջակարտայի հայտարարությամբ սահմանված սկզբունքներին համապատասխանությունը գնահատվել է՝ հիմք ընդունելով դրանց վերաբերելի 37 ցուցանիշները:

Յուրաքանչյուր ցուցանիշի գնահատման համար իրականացվել է փաստաթղթային ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն: Տվյալների հավաքագրման նպատակով կիրառվել են ԿԿՀ-ից, ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից (ՔԾԳ) և այլ պետական մարմիններից հարցաշարերի միջոցով պաշտոնական հարցումների, հետաքննող լրագրողների հետ ֆոկուս խմբային քննարկումների, ոլորտի փորձագետների, պաշտոնատար անձանց, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ԿԿՀ գործող և նախկին ծառայողների հետ անանուն հարցումների, մամուլում, էլեկտրոնային սոցիալական ցանցերում հանրային ծառայողների

[1] TI, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf

բարեվարքությանը վերաբերելի առանձին հոդվածների, հրապարակային ելույթների ու հարցազրույցների տվյալների հավաքագրման եղանակները:

Համաձայն վերոնշյալ մեթոդաբանության՝ ԿԿՀ գործունեության մակարդակը գնահատվել է՝

- անկախության և կարգավիճակի առումով՝ 77.8%, որը վկայում է, որ ԿԿՀ-ն հիմնականում ապահովվել է անկախության համեմատաբար բարձր կարգավիճակով,
- համագործակցության և արտաքին հարաբերությունների առումով՝ 41.7%, որը հիմնականում ապահովվել է միջազգային հակակոռուպցիոն կառույցների հետ համագործակցության բարձր մակարդակի, ԿԿՀ-ին վստահության, բարեվարքությամբ զբաղվող այլ մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և ոչ կառավարական այլ կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հաշվին,
- ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության առումով՝ 38.9%, ինչը վկայում է դրանց ոչ բավարար մակարդակի մասին,
- ներքին բարեվարքության և հաշվետվողականության առումով՝ 25%, ինչը պայմանավորված է ԿԿՀ բարեվարքության և վերահսկողության ներքին մեխանիզմների, հանրության կողմից տրվող հարցումներին արձագանքողականության միջին մակարդակով,
- հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու առումով՝ 27.7%, ինչն ապահովվել է ի հաշիվ բարեվարքության պահանջների խախտումներին վերաբերող տեղեկատվություն ներկայացնողներին, դիմումներին, բողոքներին արձագանքողականության բարձր ցուցանիշի, ինչպես նաև բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում՝ նախաձեռնողականության, պատասխանատվության միջոցների կիրառման, քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ վարույթների ու քննությունների իրականացման միջին մակարդակի,
- կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկման չափանիշով ԿԿՀ գործունեության գնահատականը ցածր է՝ 22%, որը հիմնականում ապահովվել է կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված ԿԿՀ առաջարկությունների՝ բարձր, իսկ հանրային իրազեկման բարձրացման ծրագրերով սահմանված տեղեկությունների տարածման, առցանց հաղորդակցման ուղիների/սոցիալական ցանցերի օգտագործման ցուցանիշների՝ միջին գնահատականներով,
- ԿԿՀ վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ կառույցի գործունեության մակարդակը գնահատվել է 50%, ներքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ 46%, իսկ կատարողականի գնահատման ցուցանիշներով պայմանավորված՝ ԿԿՀ գործունեության մակարդակը գնահատվել է 19%,
- Ջակարտայի հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից ԿԿՀ գործունեությունը գնահատվել է 44.5%:

ԿԿՀ գործունեության գնահատմամբ վերհանված խնդիրների առնչությամբ ներկայացվել են առաջարկություններ:

**ՀՀ Ազգային ժողովին և կառավարությանը՝**

1. օրենսդրորեն ԿԿՀ-ին վերապահել պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների նկատմամբ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների համակարգման գործառույթը,
2. օրենսդրորեն ընդլայնել ԿԿՀ գործառույթների շրջանակը՝ օրենսդիր, դատական, դատախազական, քննչական, ՏԻՄ մարմինների պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների, շահերի բախման, այլ սահմանափակումների միասնական կիրառման, հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործում,
3. օրենսդրորեն կանոնակարգել պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակման գործընթացները, ԿԿՀ-ին վերապահել կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակման գործառույթի՝ մեթոդաբանության հաստատման, առաջնահերթությունների սահմանման և համակարգման լիազորությունները,
4. օրենսդրորեն ԿԿՀ գործառույթների շրջանակում նախատեսել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության՝ կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի կիրառման լիազորություններ,
5. օրենսդրորեն ԿԿՀ-ին վերապահել կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում, կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունների իրականացման պատվիրատուի գործառույթները՝ ապահովելով վերջինիս կողմից հակակոռուպցիոն հետազոտությունների արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրերի մշակումը և դրանց հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերում փոփոխությունների կատարման վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացման լիազորությունները,
6. օրենսդրորեն սահմանել, որ ԿԿՀ-ին վերապահված մանդատի շրջանակներում բարեվարքության պահանջների խախտումների մասով ԿԿՀ-ի կողմից իրավասու մարմիններին ներկայացված եզրակացությունները և առաջարկությունները, իրավասու մարմինների ղեկավարների համար պարտադիր են հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և ծառայողների նկատմամբ կիրառելու պատասխանատվության միջոցներ,
7. օրենսդրորեն ամրագրել նաև, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների մասով իրավասու մարմնին ԿԿՀ կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ պատասխանատվության միջոցներ չկիրառելու դեպքում, իրավասու մարմնի ղեկավարի նկատմամբ կիրառվում են պատասխանատվության միջոցներ,
8. ԿԿՀ ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից ԿԿՀ ամենամյա բյուջետային հայտերը փոփոխելու և վերանայելու գործառույթները: ԿԿՀ բյուջետային հայտերի վերաբերյալ կառավարության դիտողությունները ներառել տվյալ տարվա բյուջեի նախագծում և այն քննարկման

առարկա դարձնել ՀՀ ԱԺ-ում բյուջետային քննարկումների փուլում: Ապահովել ԿԿՀ մասնակցությունն ԱԺ-ում բյուջեի նախագծի ոլորտային քննարկումներին,

9. օրենսդրորեն ԱԺ պետական-իրավական հարցերով մշտական հանձնաժողովին վերապահել ԿԿՀ գործունեության ամենամյա արդյունքների գնահատման, քաղաքացիական հասարակության և բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ հրապարակային քննարկումների կազմակերպման, ԿԿՀ անդամների թափուր հաստիքների համալրման ու պաշտոնավարման նպատակահարմարության, ԿԿՀ ռազմավարական պլանի և գործունեության արդյունքների մոնիտորինգի, բյուջեի նախագծի մշակման ու իրականացման խնդիրների լուծման վերաբերյալ Ազգային ժողովին առաջարկությունների ներկայացման լիազորությունները,
10. քննարկել օրենսդրորեն ԿԿՀ անդամների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման և այլ սահմանափակումների խախտումների քննության ու լուծման գործառույթների իրականացման մեխանիզմների հարցը,
11. ԿԿՀ արտաքին վերահսկողության մասով ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսել ԿԿՀ գործունեության հաշվեքննության իրականացման միջոցառումներ,
12. օրենսդրորեն ԿԿՀ անձնակազմի քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառել բարեվարքության ուսումնասիրությունների իրականացման գործիքակազմ և քաղաքացիական ծառայողների մասնագիտական խմբի 5-րդ ենթախմբից բարձր բոլոր ծառայողներին ներառել գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկում,
13. օրենսդրորեն ԿԿՀ-ին ապահովել ազդարարների էլեկտրոնային համակարգին հասանելիություն՝ սահմանելով բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումների ընդունման և դրանց արձագանքման կառուցակարգեր:

**ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին՝**

14. ԿԿՀ-ի հետ համատեղ վերլուծել և ուսումնասիրել ԿԿՀ անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն բարձր մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները: Ուսումնասիրության արդյունքում մշակել առաջարկություններ ԿԿՀ քաղաքացիական ծառայողների բարձր հոսունության և փորձագիտության ցածր մակարդակի հաղթահարման, մարդկային ռեսուրսների կառավարման գործող քաղաքականության և օրենսդրական փոփոխությունների իրականացման վերաբերյալ,
15. ԿԿՀ աշխատակազմի օրինակով իրականացնել քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգի գնահատում՝ գործող պաշտոնի անձնագրերով սահմանված լիազորությունների և վարձատրության սանդղակով սահմանված նվազագույն գործակիցների համապատասխանության, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար ու մասնագիտական խմբերի, ԿԿՀ անդամների ու քաղաքացիական ծառայողների ղեկավար խմբերի վարձատրության մակարդակների խտացման գործակիցների հարաբերակցության նվազեցման ուղղությամբ,
16. վերանայել ԿԿՀ հիմնական գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողների վարձատրության սանդղակները՝ դրանք մոտարկելով հակակոռուպցիոն այլ մարմինների համարժեք պաշտոնների համար սահմանված սանդղակներին: ԿԿՀ-ի համար օրենսդրորեն սահմանել աշխատակիցների վարձատրության հավելավճարների

ու լրավճարների գործիքակազմեր,

17. քաղաքացիական ծառայողների պարգևատրումների համակարգը ուղղակի կախվածության մեջ դնել կատարողականի գնահատման մեխանիզմներից ՝ բացառելով թափուր հաստիքների հաշվին պարգևատրումների իրականացումը,
18. ԿԿՀ-ի, ՔԾԳ-ի, ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ հավաստագրել (սետիֆիկացնել) հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթություն իրականացնող ՔՀԿ-ների՝ հակակոռուպցիոն դպրոցների (ակադեմիաների) ծրագրերը, տրված վկայականները ճանաչել որպես հակակոռուպցիոն կրթական դասընթացի վկայականներ և դրանք հանրային ծառայողների համար հաշվարկել որպես վերապատրաստման կրեդիտներ,
19. օրենսդրորեն ՀՀ վարչապետի աշխատակազմի ՔԾԳ-ի կողմից առանձին պետական մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների գործունեության վերահսկողության իրականացման գործում պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման «համաձայնությունների» տրամադրման կամ մերժման մեխանիզմները փոխարինել քաղաքացիական ծառայության առանձին գործընթացների համար օրենսդրությամբ սահմանված մեթոդական ցուցումների ու պահանջների իրականացման համապատասխանության ստուգման ու մոնիտորինգի գործիքակազմերով:

**Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝**

20. իրականացնել ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման կարիքների գնահատում, վերջինիս հիման վրա մշակել ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման ու վերապատրաստումների միջնաժամկետ ծրագիր՝ ապահովված ՀՀ բյուջետային միջոցներով և համապատասխան հաստիքներով,
21. հրապարակել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված բարեվարքության վերաբերյալ ամենամյա հաղորդումները՝ հիմքում ունենալով կոռուպցիայի կանխարգելման ու բարեվարքության գնահատման համար մշակված վիճակագրական տվյալներն ու ցուցանիշները,
22. ԿԿՀ նախագահին՝ հաստատել ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանը և կազմակերպել ԿԿՀ գործունեության գնահատման ներքին աուդիտ՝ ապահովելով նշված փաստաթղթերի հրապարակայնությունը,
23. օրենսդրական փոփոխությունների պայմաններում ԿԿՀ-ում ներդնել անանուն հաղորդումների ընդունման շուրջօրյա թեժ գիծ: Գործնականում կիրառելի դարձնել azdararir.am, e-requst.am, թեժ գիծ, անանուն հաղորդումների ներկայացման էլեկտրոնային հարթակով դիմումների, բողոքների, հաղորդումների վերաբերյալ տեղեկատվության ստացման հնարավորությունները,
24. օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ազդարարողների էլեկտրոնային համակարգին հասանելիության պայմաններում, ապահովել բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումների ընդունման և դրանց արձագանքման բարձր մակարդակ: Մշակել ազդարարման վարույթների իրականացման մեթոդաբանություն՝ ներառյալ անանուն ազդարարումների ու հաղորդումների միջոցով ստացված տվյալների վերլուծության ու վարույթների իրականացման չափորոշիչները,
25. ավարտին հասցնել «պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի

կանոնները (կանոնագիրքը) հաստատելու մասին» ԿԿՀ որոշման նախագծի մշակման աշխատանքները,[2]

26. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման օրենսդրական կարգավորումների պայմաններում գործնականում կիրառելի դարձնել շահերի բախման իրավիճակների խախտումների բացահայտման գործիքակազմերը, ներդնելով՝ շահերի բախման իրավիճակների հաղորդումների և դրանց լուծման միջոցների (գրավոր և բանավոր) արձանագրման ռեեստր,
27. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նվերների ընդունման սահմանափակումների կիրառման տեսանկյունից ավարտին հասցնել նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ընթացակարգերի մշակման գործընթացները՝ ապահովելով նվերների ռեեստրի գործունեությունը և ռեեստրից տվյալների հասանելիությունը հանրությանը,[3]
28. մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների այլ սահմանափակումների կիրառումն ապահովող ընթացակարգերը և գործնականում կիրառելի դարձնել այլ սահմանափակումների խախտումների բացահայտման ու կառավարման գործընթացները,
29. ԿԿՀ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի, պետական ու ՏԻՄ մարմինների ու այլ կազմակերպությունների տվյալների էլեկտրոնային շտեմարաններին փոխգործակցելիության ապահովման արդյունքում կրճատել բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննության միջին ժամկետները,
30. ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանով, ինչպես նաև միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման իրատեսական առաջադրանքներ այն հաշվով, որ հայտարարագրման պարտականություն ունեցող յուրաքանչյուր պաշտոնատար անձի մասով 5 տարվա ընթացքում միջին հաշվով գոնե մեկ անգամ ԿԿՀ-ի կողմից վերլուծության ենթարկվեն վերջինիս հայտարարագրերը,
31. մշակել հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և սահմանել ռիսկային չափորոշիչները: Հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությամբ սահմանել ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների բացահայտման եղանակները, կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ տարրերի արձանագրման, ինչպես նաև հայտարարագրերում կեղծ տվյալների և տվյալները թաքցնելու չափորոշիչները,
32. հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությամբ սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների բացահայտման չափորոշիչներն ու եղանակները: Միաժամանակ, նույն մեթոդաբանությամբ, որպես ռիսկային չափորոշիչ դիտարկել նաև հետաքննող լրագրողների կողմից հրապարակված նյութերն ու հաղորդումները,
33. սահմանել հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկը, հայտարարագրերի ռեեստրի

[2] ԿԿՀ 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված է վերոնշյալ կանոնագիրքը, որը ուժի մեջ է մտնելու 2024 թվականի ապրիլի 1-ից, http://cpcarmenia.am/files/legislation/1359.pdf

[3] 2023 թվականի դեկտեմբերի 22-ին մշակվել և 2024 թվականի հունվարի մեկից ուժի մեջ է մտել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» ԿԿՀ որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188181 Գործառույթը պատշաճ իրականացնելու նպատակով նվերների հաշվառման թվային Ռեեստրը դեռևս գործարկված չէ: Մշակվել և ներդրվել է Էլ. ձևաթուղթ, https://shorturl.at/fgmBR

վարման կարգերը այն հաշվով, որ հայտարարագրերի ռեեստրը հնարավորություն ընձեռի հասանելիություն ունենալ հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների բոլոր տարիների հայտարարագրերին մեկ պատուհանի միջոցով: Միաժամանակ, հայտարարագրերի ռեեստրը պետք է ապահովի հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների մասով տվյալների ստացմանը, առանձին ռիսկային չափորոշիչներով դուրս բերելու հայտարարագրեր և կատարելու ընտրանք,

34. մշակել կոռուպցիայի կանխարգելման առանձին ոլորտային ծրագրեր և դրանք տեղակայել ԿԿՀ կայքէջում,
35. ապահովել պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների ու հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների բնականոն գործունեության կազմակերպման համար մեթոդական ու խորհրդատվական նյութերի, ուղեցույցների մշակումը,
36. մշակել պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների անդամների համար մասնագիտական վերապատրաստման ծրագրեր և կազմակերպել դրանց իրականացումը,
37. մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, համար «Հանրային ծառայողների բարեվարքություն», ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման այլ թեմաներով վերապատրաստման ծրագրեր և ներկայացնել իրավասու մարմիններին դրանց իրականացումն ապահովելու համար,
38. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների, ինչպես նաև կրթական հաստատությունների հակակոռուպցիոն ծրագրեր իրականացնողների համար մշակել ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր,
39. ԿԿՀ և մի շարք բուհերի հետ կնքված համագործակցության հուշագրերի շրջանակներում մշակել և իրականացնել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում կոնկրետ կրթական ծրագրեր, մասնավորապես օժանդակել բուհերում հակակոռուպցիոն կրթական մագիստրոսական կամ բակալավրիատի կրթական ծրագրի մշակմանը,
40. միջազգային տեխնիկական աջակցության շրջանակներում վերապատրաստում իրականացնողների (ToT) համար կազմակերպվող դասընթացներում, բացի ԿԿՀ անձնակազմից, ներգրավվել նաև համագործակցության հուշագրեր կնքած բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնող, ՔՀԿ-ների և այլ կազմակերպությունների դասախոս ներկայացուցիչներին,
41. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենսդրական փոփոխությունների արդյունքում ԿԿՀ-ին ապահովել կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները, կուսակցությունների հաշվետվությունների աուդիտի ենթարկման, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունները օրենսդրորեն սահմանված ժամկետներում ներկայացման օրենսդրական պահանջը,
42. հիմք ընդունելով կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունների (հանրության շրջանում հարցումների) արդյունքները՝ մշակել հակակոռուպցիոն թեմաներով հանրային իրազեկման բարձրացման միջնաժամկետ ծրագիր՝ թիրախավորելով ինչպես հանրային ոլորտի ծառայողներին, այնպես էլ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից առավել խոցելի խմբերին ու հանրության շերտերին,

43. հանրության շրջանում հարցումների տեխնիկական առաջադրանքներում ներառել խոցելի խմբերի նկատմամբ կոռուպցիայի ազդեցության և դրանց հիման վրա կանխարգելման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցադրումներ՝ ապահովելով մարգինալացված (խոցելի) խմբերի մասով կոռուպցիայի ազդեցության և գնահատման վիճակագրական տվյալների վարումը,
44. հակակոռուպցիոն իրազեկման ծրագրերի իրականացումը կազմակերպել ինչպես դոնոր կազմակերպությունների աջակցության միջոցներով, այնպես էլ ֆինանսավորում նախատեսել նաև ՀՀ պետական բյուջեում, որը հնարավորություն կտա ընդլայնելու իրազեկման թիրախներն ու ոլորտները,
45. հանրային իրազեկման միջնաժամկետ ծրագրի շրջանակներում նախատեսել նաև քարոզարշավների կազմակերպման միջոցառումներ,
46. վերակազմավորել ԿԿՀ կայքէջը՝ իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ, մասնավորապես՝

- ԿԿՀ գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքները, որոշումները, հրամանները, կարգադրությունները, հայտարարագրերի, բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ կայացրած որոշումները, մշակված ուղեցույցներն ու մեթոդական հրահանգները, կրթական ու իրազեկման ծրագրերը նպատակահարմար է խմբավորել ըստ թեմատիկ ոլորտների, ուղղությունների առանձին բաժիններում, իսկ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը համալրել ԿԿՀ այլ գործառույթներով պայմանավորված տեղեկատվությամբ,
- առանձին բաժիններով հրապարակել ԿԿՀ աշխատակազմի աշխատակիցների կոնտակտային տվյալները, գործունեության ամենամյա ծրագիրը, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլանները, դրանց կատարողականները, մարմնի բյուջեն և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները, թափուր աշխատատեղերի հայտարարությունները, ազդարարման կարգի ու պատասխանատուի վերաբերյալ տվյալները,
- «Հայտարարագրերի ռեեստր»-ը օգտվողների համար դարձնել մատչելի՝ ապահովելով ռիսկային չափանիշներով հայտարարագրերի ընտրության, տվյալների ամբողջական արտահանման, այլ տվյալների և համակարգերի հետ փոխգործելիության, թվայնացված վերլուծության, ինչպես նաև մեկ պատուհանում պաշտոնատար անձի ու նրա ընտանիքի անդամների բոլոր հայտարարագրերը տեսնելու ու հասանելիություն ունենալու հնարավորությամբ,
- կայքի կառուցվածքային բաժիններում հրապարակվող փաստաթղթերը ներկայացնել բաց տվյալների սկզբունքներին համապատասխանության ձևաչափով՝ դրանք դարձնել մատչելի՝ պատճենելու, մեքենայաընթեռնելի հնարավորությամբ, կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը,
- կայքի որոնման համակարգը դարձնել գործունակ: Տեղադրել ԿԿՀ-ից տեղեկատվություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգը, հարցման օրինակելի ձևը, դրա լրացման վերաբերյալ ցուցումները, ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները,
- հրապարակել տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին, հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ, ստեղծել դաշտեր քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու համար:

47. ԿԿՀ հաստիքացուցակում նախատեսել հասարակայնության հետ կապերի կամ աշխատանքների պատասխանատուի կամ էլ մամուլի խոսնակի հաստիք,
48. միջազգային կառույցների, այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ համագործակցության զարգացման նպատակով ԿԿՀ աշխատակազմում նախատեսել միջազգային համագործակցության հարցերով կառուցվածքային կամ հաստիքային միավոր:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական պատասխանատուն ՀՀ կառավարությունն է, որը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տարվող քաղաքականությունն իրականացնում է հակակոռուպցիոն ռազմավարությունների, դրանց իրականացման միջոցառումների ծրագրերի մշակման ու իրականացման, ինչպես նաև հակակոռուպցիոն մարմինների (այսուհետ՝ ՀԿՄ) ձևավորման ու դրանց կայացմանն ու գործունեությանն աջակցելու միջոցով:

2018 թվականի գարնանը տեղի ունեցած հեղափոխությունից հետո, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված, հակակոռուպցիոն նոր ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման արդյունքում[4] Հայաստանում ձևավորվեցին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԿՀ կամ Հանձնաժողով), Հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազության կազմում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ստորաբաժանումները, իսկ դատական համակարգում՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանները:

ՀՀ կառավարությունն իր գործունեության 2021-2026 թվականների ծրագրում շեշտել է, որ «Կառավարությունը վճռական է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ անզիջում պայքար մղելու կոռուպցիայի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելու կոռուպցիոն հիմնական դրսևորումները: Կառավարությունը հակակոռուպցիոն գործընթացներում հաջողելու համար  ունի բավարար քաղաքական կամք և այդ կամքն իրական արդյունքի վերածելու նպատակով շարունակելու է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ստեղծմանը և զարգացմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքների իրականացումը: Կառավարությունը շարունակելու է աջակցել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով՝ օրենսդրության զարգացման, անհրաժեշտ գործիքակազմի և նյութատեխնիկական պահանջների բավարարման հարցերում» :[5]

ՀՀ կառավարության կոռուպցիայի դեմ պայքարում հետևողականություն դրսևորելու, այդ թվում կանխարգելմանը միտված գործողություններ իրականացնելու քայլերի արդյունքում զգալիորեն բարելավվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) Հայաստանի արժեքը՝ 2018 թվականի 37-ից 2019 թվականին հասնելով 42-ի, իսկ 2020  և 2021 թվականներին՝ 49-ի, թեև 2022 թվականին նահանջել է 3 միավորով: Նույն ժամանակահատվածում Համաշխարհային բանկի (ՀԲ) Կոռուպցիայի վերահսկման ցուցիչի արժեքը (-0.4)-ից բարձրացավ մինչև 0 (-2.5-ից 2.5) սանդղակով:

Հակակոռուպցիոն մարմինների կազմավորման և գործունեության առումով Հայաստանն առաջնորդվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» և «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարությամբ (Ջակարտայի սկզբունքներ) սահմանված  չափանիշներով:

[4] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»  որոշում, https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.2.pdf

[5] ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf

2003 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան»[6] պահանջում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան ապահովի կոռուպցիայի կանխարգելում իրականացնող մարմնի կամ մարմինների առկայությունը, դրանց կողմից կանխարգելիչ բնույթի հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը, ըստ անհրաժեշտության, դրա վերահսկողությունը և համակարգումը, կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ գիտելիքի ընդլայնումը և տարածումը:[7] Միաժամանակ, յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան կոռուպցիայի դեմ պայքարի մարմնին կամ մարմիններին պետք է օժտի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի դրանք իրենց գործառույթներն իրականացնեն արդյունավետ և ազատ անհարկի միջամտությունից: Պետք է ապահովվեն անհրաժեշտ նյութական ռեսուրսներ և մասնագիտացած աշխատակազմ, ինչպես նաև աշխատողների վերապատրաստում՝ իրականացնելու նրանց տրված գործառույթները:

2012 թվականի նոյեմբերի 26-27-ին Ջակարտայում տարբեր երկրների հակակոռուպցիոն մարմինների ներկա և նախկին ղեկավարների, հակակոռուպցիոն ոլորտի պաշտոնյաների և փորձագետների կողմից ընդունվել է «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» հայտարարությունը,[8] որով ամրագրվել են հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքները: Դրանք ներառում են ՀԿՄ-ների մանդատը, համագործակցությունը այլ կառույցների հետ, մշտականությունը, նշանակումը, շարունակականությունը, ղեկավարների հեռացումը, էթիկական վարքագիծը, անձեռնմխելիությունը, վարձատրությունը, իրավասությունը մարդկային ռեսուրսների նկատմամբ, համարժեք և հուսալի ռեսուրսների առկայությունը, ֆինանսական ինքնավարությունը, ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային հաշվետվությունը, հանրային հաղորդակցությունն ու ներգրավումը:

ԿԿՀ-ն գործում է որպես ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ինքնավար մարմին: Այն ձևավորվել է 2019 թվականի հոկտեմբերին՝ 2017 թվականին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ դառնալով 2011 թվականից մինչև ԿԿՀ ձևավորման պահը գործող Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (ԲՊԱԷՀ) իրավահաջորդը: Վերջինի համեմատ՝ ԿԿՀ լիազորություններն ընդլայնվել են և ներառում են հետևյալ գործառույթները՝

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակումը և միջոցառումների իրականացումը,
- հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը,
- կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը,

[6] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» Հայաստանը ստորագրել է 2005 թ., վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. հոկտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 2006 թ. նոյեմբերի 11-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28164:

[7] UN Office on Drugs and Crime, United Nations Convention Against Corruption, New York, 2004, Article 6, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026_E.pdf

[8] Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies, Jakarta, 26-27 November 2012, https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf

- ընտրված պետական պաշտոնյաների (Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների, դատավորների) թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պետական պաշտոնյաների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ պատրաստելը,
- հակակոռուպցիոն քաղաքականությանը մասնակցությունը,
- էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության պահանջների պահպանման մասով մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրումը,
- կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակումը և դրանք Կառավարություն ներկայացումը, հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծությունը և առաջարկությունների ներկայացումը,
- պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերների սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դեպքերի քննության ու լուծման գործառույթները:

Վերոնշյալ գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով օրենքով ԿԿՀ-ն օժտված է վարույթների, վերլուծությունների իրականացման, եզրակացությունների տրամադրման, առաջարկությունների ներկայացման, վարչական վարույթների արդյունքում պատասխանատվության միջոցների կիրառման լիազորություններով:

Հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը և ԿԿՀ-ին՝ բարելավելու կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմնի գործունեությունը:

Հետազոտության խնդիրն է գնահատել ԿԿՀ համապատասխանությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայից» բխող պահանջներին և Ջակարտայի հայտարարությամբ սահմանված սկզբունքներին և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

Որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել ԿԿՀ փաստացի ձևավորումից՝ 2019 թվականի նոյեմբերի 19-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:[9]

[9] ԿԿՀ-ի հետ քննարկումների արդյունքում զեկույցի հղումների դաշտում արտացոլվել են 2023-2024 թվականներին ԿԿՀ գործունեության արդյունքներով իրականացված և արձանագրված միջոցառումները:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Գնահատման մեթոդը**

ԿԿՀ գնահատումն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության քարտուղարության կողմից մշակված՝ հակակոռուպցիոն մարմինների գործունեության գնահատման գործիքով,[10] որի հիմքում ընկած են Ջակարտայի սկզբունքները: Տվյալ գործիքը տեղայնացվել է և հարմարեցվել ԿԿՀ-ի համար՝ հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով ԿԿՀ-ին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացման համար սահմանված պահանջները:

ԿԿՀ գնահատումն իրականացվել է միջազգային սկզբունքներից բխող 6 չափման խմբերով՝ 51 ցուցանիշներով, որը ներկայացված է Հավելված 1-ում: Այդ խմբերն են՝

1. Հանձնաժողովի անկախությունը և կարգավիճակը ( 9 ցուցանիշ),
2. Հանձնաժողովի ապահովածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով (9 ցուցանիշ),
3. Հանձնաժողովի հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը (9 ցուցանիշ),
4. հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման ապահովումը (9 ցուցանիշ),
5. կանխարգելում**,** հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում (9 ցուցանիշ),
6. համագործակցություն և արտաքին հարաբերություններ (6 ցուցանիշ):

Յուրաքանչյուր ցուցանիշի գնահատման համար իրականացվել է փաստաթղթային ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ ստացված տվյալները հիմնավորվել են խորը հարցազրույցներով:[11]

Գնահատումն իրականացվել է փորձագիտական եղանակով՝ յուրաքանչյուր ցուցանիշ գնահատելով 0-2 սանդղակով՝ ցածր (0), միջին (1) կամ բարձր (2): Տվյալների համարժեք, վստահելի և ստուգելի աղբյուրների բացակայության պայմաններում, տրվել է «գնահատումը հնարավոր չէ» գնահատականը: Բացառիկ դեպքերում, եթե ցուցանիշը կիրառելի չի եղել, այն դուրս է թողնվել գնահատման գործընթացից:

Ըստ 6 խմբերի և 51 ցուցանիշների ձևավորված գնահատականների՝ ընդհանուր պատկերը ներկայացված է Հավելված 2-ում:

---

[10] Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf

[11] Վերջնական գնահատումների համար կոռուպցիայի կանխարգելման ոլորտի փորձագետների հետ հարցազրույցները, ԿԿՀ գործող և նախկին ծառայողների հետ անանուն հարցումների արդյունքները համադրվել են հավաքագրված այլ աղբյուրներից ստացված տվյալների հետ:

Ի լրումն, վերոնշյալ գնահատված ցուցանիշները դասակարգվել են և դիտարկվել՝ ըստ ԿԿՀ գործունեության վրա ազդեցություն ունեցող երեք գործոնների, ներառյալ՝

- ԿԿՀ վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոններ (16 ցուցանիշ),
- ԿԿՀ վերահսկողության ներքո գտնվող ներքին գործոններ (14 ցուցանիշ),
- ԿԿՀ կատարողականը բնութագրող ուղղակի գործոններ (21 ցուցանիշ):

Վերջիններիս գնահատականը ներկայացված է Հավելված 3-ում:

ԿԿՀ գործունեության համապատասխանությունը Ջակարտայի սկզբունքներին չափվել է դիտարկված ցուցանիշներից 37-ի գնահատված արժեքներով, որոնք ներառում են 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ խմբերով սահմանված բոլոր ցուցանիշները (Հավելված 4):

ԿԿՀ տարբեր գնահատումները (ըստ խմբերի, գործոնների և Ջակարտայի սկզբունքների համապատասխանության) ներկայացվել են տոկոսային արտահայտությամբ, որտեղ կիրառվել է միևնույն հաշվարկային բանաձևը՝ չափելով դիտարկվող մասի ցուցանիշների գնահատված միավորների գումարի և տվյալ մասի ցուցանիշների առավելագույն հնարավոր միավորների հանրագումարի հարաբերակցությունը:

**Տեղեկատվության հավաքագրման եղանակներն ու աղբյուրները**

ԿԿՀ գործունեության գնահատման համար պահանջվող տեղեկատվությունը հավաքագրվել է պաշտոնական բաց աղբյուրներից, այդ թվում՝

- ԿԿՀ կայքում[12] հասանելի հաշվետվություններից, զեկույցներից, ԿԿՀ անդամների հարցազրույցներից,
- ՀՀ արդարադատության նախարարության կայքի՝[13] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի մոնիտորինգի հաշվետվություններից,
- ՀՀ կառավարության կայքի[14]՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի ամենամյա միջոցառումների իրականացման հաշվետվություններից,
- ՀՀ գլխավոր դատախազության կայքի՝[15] ՀՀ գլխավոր դատախազության կողմից ամեն տարի հրապարակվող կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկանքից,
- ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի[16] նիստերի արձանագրություններից, հաշվետվություններից և օրակարգային հարցերի նյութերից:

---

[12] http://cpcarmenia.am
[13] https://www.moj.am
[14] https://www.gov.am/am/Five-Year-Action-Program/
[15] https://www.prosecutor.am
[16] https://anti-corruption.gov.am

Տեղեկատվության հավաքագրման եղանակների շարքում իրականացվել են՝

- պաշտոնական հարցումներ՝ ուղղված ԿԿՀ-ին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ ՔԾԳ-ին և այլ պետական մարմիններին,
- ֆոկուս խմբային քննարկումներ կոռուպցիայի կանխարգելման հարցերով մասնագիտացած հետաքննող լրագրողների հետ,
- հարցազրույցներ ոլորտի փորձագետների, պաշտոնատար անձանց, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ,
- անանուն հարցումներ ԿԿՀ գործող և նախկին ծառայողների հետ,
- մամուլում, էլեկտրոնային հարթակներում և սոցիալական ցանցերում հանրային ծառայողների բարեվարքությանը վերաբերելի առանձին հոդվածների ու հրապարակային ելույթների ու հարցազրույցների ուսումնասիրություն:

Տեղեկատվության աղբյուր են ծառայել նաև կոռուպցիայի կանխարգելման գործում Հայաստանին տրամադրվող միջազգային աջակցության ծրագրերի շրջանակներում մշակված փաստաթղթերը, հաշվետվությունները, ՏՀԶԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի» հանձնառությունների մասով Հայաստանի գնահատման զեկույցները:

Զեկույցի նախագիծը քննարկվել է ԿԿՀ անդամների և աշխատակազմի ներկայացուցիչների հետ:[17]

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 1. ԿԿՀ գնահատումը՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների

ԿԿՀ գործունեության գնահատումն իրականացվել է ՀԿՄ գործունեությունը բնութագրող 6 չափման խմբերով, ներառյալ՝ Հանձնաժողովի անկախությունը և կարգավիճակը, ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման ապահովումը, կանխարգելումը, հակակոռուպցիոն կրթությունը և հանրային իրազեկումը, համագործակցությունը և արտաքին հարաբերությունները:

ԿԿՀ գործունեության ընդհանուր պատկերն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների գնահատման, ներկայացված է ստորև գծապատկերում.

[17] ԿԿՀ-ի հետ զեկույցի աշխատանքային քննարկումը կազմակերպվել է 2024 թվականի հունվարի 19-ին:

**Գծապատկեր 1. ԿԿՀ գործունեության ընդհանուր պատկերն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների գնահատման**




## 1.1 Հանձնաժողովի անկախությունը և կարգավիճակը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախության և կարգավիճակի գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Ինստիտուցիոնալ անկախությունը,** որը գնահատում է Կառավարությունից ԿԿՀ անկախության աստիճանը, բնորոշվում է կառույցի կարգավիճակով՝ պետական կամ սահմանադրական մարմին լինելուց մինչև որևէ գերատեսչության կամ նախարարության ստորաբաժանում հանդիսանալը:
- **Հանձնաժողովի անդամների նշանակման և հեռացման գործընթացը,** որը գնահատում է ԿԿՀ կազմավորման կամ նշանակման համար պատասխանատու մարմինների (անձանց), հանձնաժողովի անդամների հեռացման կամ փոխարինման պայմանները, անկողմնակալության ապահովման երաշխիքները, ընտրության անաչառ չափանիշները և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը:

- **Հանձնաժողովի մանդատը,** որը գնահատում է ԿԿՀ գործառույթների շրջանակը և բնութագրվում է կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման, բարեվարքության պահանջների պահպանման նկատմամբ համակարգման գործառույթներով:
- **Իրավասության շրջանակը,** որը գնահատում է ԿԿՀ մանդատի ոլորտային և աշխարհագրական ընդգրկվածությունը վարչական կառավարման բոլոր մակարդակներում, ներառյալ՝ պետական և ՏԻՄ մարմինները, մասնավոր հատվածը (այդ թվում պետական մասնակցությամբ կազմակերպությունները):
- **Վարույթների ու վերլուծությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման լիազորությունները,** որը գնահատում է ԿԿՀ իրավասությունը նախաձեռնելու վարույթներ, այլ պետական և ՏԻՄ մարմիններից պահանջելու իրականացնել քրեական հետապնդումներ, դիմելու՝ կատարելու օպերատիվ - հետախուզական աշխատանքներ, տրամադրելու տեղեկատվություն և փորձագիտական եզրակացություններ, հասանելիություն ունենալու այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրելու կասկածելի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն:
- **Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները,** որը գնահատում է ԿԿՀ իրավասությունը մշակելու և ներկայացնելու կատարման ենթակա առաջարկություններ այլ գերատեսչություններին կամ, ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարությանը՝ հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ, հրապարակայնորեն զեկուցելու առաջարկությունների մասին, բացահայտելու խնդիրները և անցկացնելու հանրային լսումներ ու հարցումներ:
- **Իրավական ինքնավարությունը,** որը գնահատում է վարույթների, վերլուծությունների և բարեվարքության եզրակացությունների տրամադրման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում լիակատար ինքնուրույնությունը: ԿԿՀ լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար Հանձնաժողովի անդամների և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց անձեռնմխելիությունը քրեական և/կամ քաղաքացիական հետապնդումից, բարձրաստիճան պաշտոնյաների կամ այլ մարմինների ղեկավարների հրահանգներին չենթարկվելը:
- **Գործառնական ինքնավարությունը,** որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ անմիջական վերահսկողության իրականացման, ԿԿՀ նախագահի բացակայության դեպքում Հանձնաժողովի բնականոն գործունեության շարունակականության ապահովման, կառավարության կողմից ԿԿՀ առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության մեխանիզմների առկայությունը:
- **Լիազորությունների քաղաքական նպատակով օգտագործումը,** որը գնահատում է ԿԿՀ-ն Կառավարության կողմից քաղաքական հակառակորդների կամ այլ քաղաքական դրդապատճառներով որպես գործիք օգտագործելու մեխանիզմների առկայությունը:

ԿԿՀ անկախության և կարգավիճակի գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 2. ԿԿՀ անկախության և կարգավիճակի գնահատման մակարդակը**




Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, առավելագույն 18 միավորից ապահովելով 14 միավոր՝ ԿԿՀ անկախության և կարգավիճակի չափումը գնահատվել է 77.8%:

**Ինստիտուցիոնալ անկախությունը (2 միավոր)**

ԿԿՀ-ն ունի ինստիտուցիոնալ անկախության համեմատաբար բարձր մակարդակ, քանի որ ձևավորվել է առանձին օրենքով՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ինքնավար պետական մարմին և հաշվետու է օրենսդիր մարմնին: ԿԿՀ-ն գործում է կոլեգիալության, ֆինանսական ինքնուրույնության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության, համագործակցության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա: Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Հանձնաժողովն իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է ԱԺ:

**Հանձնաժողովի անդամների նշանակման և հեռացման գործընթացը (2 միավոր)**

ԿԿՀ անդամների նշանակման և հեռացման գործընթացները 2019 թվականից ի վեր կազմակերպվել են երկու տարբեր մոդելներով՝ քաղաքական առաջարկներով/ բանակցություններով և մրցութային կարգով: ԿԿՀ առաջին կազմը ձևավորվել է 2019 թվականին, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 146.2-րդ և 153.1-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ԱԺ-ում ներկայացված 3 խմբակցությունների, Կառավարության և Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) կողմից ներկայացված թեկնածուների՝ ԱԺ պատգամավորների կողմից քվեարկության արդյունքում: 2021 թվականին օրենսդրական փոփոխությունների արդյունքում ԿԿՀ անդամի ընտրության կարգը փոխվել է: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածով ԿԿՀ թափուր հաստիքների թեկնածուների մրցույթի կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև մրցույթի արդյունքներին վերաբերող հարցերի կապակցությամբ

որոշումների ընդունումը վերապահվել է մրցութային խորհրդին: Վերջինս ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների կամ Ազգային ժողովի խորհրդի, ԲԴԽ, Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) և Փաստաբանների պալատի կողմից մեկական ներկայացուցիչ առաջարկելու միջոցով՝ ԱԺ նախագահի որոշմամբ:[18] Մրցութային խորհուրդն ԱԺ աշխատակազմի օժանդակությամբ իրականացնում է մրցույթի կազմակերպման գործընթացները, որի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն ընտրվում է ԱԺ պատգամավորների կողմից փակ, գաղտնի քվեարկությամբ: ԿԿՀ անդամների նշանակման երկու մոդելների պայմաններում էլ փորձագետների և ԿԿՀ գնահատումներով առկա է քաղաքական գործոնի նշանակալի ազդեցություն: Ըստ փորձագետների՝

*«… Անդամների առումով չէի ասի, որ շատ անկախ ա: Այսինքն՝ ընդեղ ուղղորդված ինչ-որ մարդիկ կան էլի, որ գնում են կառավարության օժանդակությամբ, ոնց որ իրենց սրտի անդամներն են, սենց ասած էլի: Դե Ազգային ժողովն ա վերջի վերջո նշանակումն անում, բայց ներկայացվում են կառավարության թեկնածուները…»:*

*(Փորձագետ)*

ԿԿՀ դիտարկմամբ՝ ԱԺ-ի կողմից ձևավորվող մրցութային խորհրդի անդամների ճնշող մասը նույնպես ներկայացվում է քաղաքական նշանակումներով: Այսպես, ԲԴԽ թեկնածու ԲԴԽ ոչ դատավոր անդամները և Մարդու իրավունքների պաշտպանը նույնպես ընտրվում են ԱԺ քաղաքական մեծամասնության կողմից և ներկայացված են եղել տվյալ կուսակցությանն անդամակցության կամ զբաղեցրել են քաղաքական պաշտոններ: Արդյունքում, ԿԿՀ անդամի ընտրության մրցութային խորհրդի ներկայացուցիչ անդամները նույնպես իրենց վրա կրում են քաղաքական ազդեցություն:

ԹԻՀԿ կարծիքով մրցութային ընթացակարգի պարագայում կարող է բարդ լինել պահպանել իշխանություն-ընդդիմություն բալանսը: Այսպես, ԿԿՀ անդամների բաց մրցութային կարգով ընտրությունը ԱԺ-ում տիրող քաղաքական պառակտվածության և ընդդիմադիր մասի բոյկոտի պայմաններում՝ բացառապես ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մեծամասնության ձայներով, կարող է հանրության ընկալումներում առաջացնել ԿԿՀ անդամի քաղաքական չեզոքության հետ կապված մտահոգություններ:

Մրցութային ընթացակարգի խնդրահարույց կողմերի մասով փորձագետները նշել են նաև մրցույթներին դիմողների փոքրաթիվ լինելու հանգամանքը, մրցակցության բացակայությունը, որը կարող է լինել ինչպես ԿԿՀ գործունեության առանձնահատկություններով պայմանավորված մասնագիտական ներուժի բացակայության արդյունք, այնպես էլ՝ կարծրատիպերի և թերահավատության հետևանք, քանի որ կա ենթադրություն, որ անկախ մրցակցային ձևաչափից և արժանիքահեն ընտրություն կատարելու մոտեցումից՝ ԿԿՀ անդամ ընտրվելու համար պարտադիր է ունենալ ՀՀ կառավարության (ԱԺ-ում մեծամասնություն կազմող կուսակցության) նախնական հավանությունը և ոչ ֆորմալ հավաստիացումը: Այսինքն, ԿԿՀ անդամի որևէ թեկնածու, որը հետաքրքրված է և բավարարում է ներկայացվող պահանջներին, կարող է խուսափել մրցույթին մասնակցելուց:

---

[18] ԱԺ, Մրցութային խորհրդի կազմ, https://shorturl.at/ckBL6

*«Հիմա միգուցե մարդկանց մոտ էլ կարծրատիպեր փոխելու անհրաժեշտություն կա, բայց շատ քիչ են դիմում մրցույթի, բոլորը մտածում են, որ իրանց չեն ընտրի ու էդ համատեքստում չեն դիմում մարդիկ…»:*

*(Փորձագետ)*

Մրցութային խորհուրդը, 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ՄԽՈ-Ո-04 որոշմամբ հաստատված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգի»[19] 14-րդ կետի համաձայն՝ բացի տվյալ պահին հարցազրույցին մասնակցող հավակնորդից, այլ անձանց չի թույլատրում ներկա գտնվել հարցազրույցի անցկացման սենյակում:

Օրենսդրական վերոնշյալ կարգավորումը սահմանափակում է ԿԿՀ անդամների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության գործընթացում և մրցութային խորհրդում հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների, մասնավոր ոլորտի միավորումների ներկայացուցիչների ներգրավվածությունը և մասնակցությունը, ինչը կասկածի տակ կարող է դնել կազմակերպվող մրցույթների արդարությունը և ընտրության արժանիքահեն լինելը: ԿԿՀ թափուր հաստիքների 2023 թվականին կազմակերպված մրցութային գործընթացը դիտարկելու վերաբերյալ ԹԻՀԿ դիմումը ԱԺ-ն մերժել է՝ հիմք ընդունելով մրցութային խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ՄԽՈ-Ո-04 որոշմամբ հաստատված վերոնշյալ կարգի պահանջները:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները միասնական են այլ ինքնավար մարմինների հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջներին, մասնավորապես ԿԿՀ «…անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից)»: Մինչդեռ, ԿԿՀ անդամի թեկնածուի միայն քաղաքական, ինքնավար, հայեցողական կամ վարչական պաշտոններում աշխատանքային փորձառությունը կամ այլ ոլորտներում ղեկավար աշխատանքի փորձը բավարար չեն հանձնաժողովում մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

Ինքնավար մարմինների անդամներին ներկայացվող միասնական պահանջները գործում են նման հանձնաժողովների ձևավորման և անդամների նշանակման տարբեր մոդելների պայմաններում: Մասնավորապես տնտեսական մրցակցության և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների ինքնավար մարմինների անդամների նշանակումները կատարվում են Կառավարության, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունների և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների կողմից

[19] ԿԿՀ անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ ՄԽՈ-Ո-04 որոշումը, ընդունված՝ 2023 թ. հոկտեմբերի 3-ին, http://parliament.am/Competition_Committee/03102023-MKH_VO_04.pdf?lang=arm

ներկայացված թեկնածուների առաջադրման միջոցով, մինչդեռ, ԿԿՀ անդամների ընտրությունը՝ բաց մրցութային եղանակով:

ԿԿՀ անդամները ընտրվում են 6 տարի ժամկետով: ԿԿՀ գործունեության կայունության ապահովման նկատառումներով ԿԿՀ առաջին կազմի անդամներն ընտրվել են տարբեր ժամկետներով՝ հանձնաժողովի 1 անդամը՝ 3 տարով, 2 անդամը՝ 4 տարով և 2-ը՝ 6 տարի ժամկետով: ԿԿՀ նախագահին ընտրվում է Հանձնաժողովի անդամների կողմից, ինչը տարբերակում է ԿԿՀ-ին մյուս ինքնավար մարմիններից:

ԿԿՀ անդամի լիազորությունների դադարման, դադարեցման և կասեցման գործընթացների հիմք հանդիսացող հանգամանքները (անձնական դիմում, անհամատեղելիության պահանջների, քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտման, հանձնաժողովի նիստերից անհարգելի բացակայություն, օրենքով սահմանված պաշտոնավարման տարիքի ու դատավորին ներկայացվող հիվանդության պահանջներին անհամապատասխանություն) ուղղակիորեն պայմանավորված չեն ԿԿՀ անդամի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտությամբ և կողմնակի ազդեցությամբ: Միայն ԿԿՀ նախագահի մասով է նախատեսված պաշտոնից հեռացման հնարավորություն «իր պարտականությունները չկատարելու հիմքով» հանձնաժողովի անդամների 2/3-ի ընդհանուր ձայների միջոցով: Հանձնաժողովի մյուս անդամների համար նման մեխանիզմ առկա չէ:

**Հանձնաժողովի մանդատը (2 միավոր)**

ԿԿՀ-ն ունի հստակ մանդատ, այն է՝ կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման, բարեվարքության պահանջների պահպանման վերահսկում, ինչը համահունչ է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածով, ինչպես նաև Ջակարտայի հայտարարությամբ կոռուպցիայի կանխարգելման մարմիններին ներկայացվող պահանջներին: Այդուհանդերձ, ԿԿՀ-ն լայն մանդատ ունի երաշխավորելու միայն պետական պաշտոն զբաղեցնող բարձրաստիճան պաշտոնատար անձանց բարեվարքությունը, կառավարելու հայտարարագրերի համակարգը, վերահսկելու պետական պաշտոնյաների վարքագիծը:

**ԿԿՀ-ին վերապահված իրավասության շրջանակը (0 միավոր)**

Հանձնաժողովի՝ կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու մանդատի շրջանակում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահված է իրավասության նեղ շրջանակ: Մասնավորապես պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների մասով ԿԿՀ-ն չունի կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթ: Պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների պահպանման նկատմամբ ԿԿՀ ունեցած գործառույթները չեն ծածկում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ողջ շրջանակը: ԿԿՀ-ն չունի ՏԻՄ-երի, օրենսդիր և դատական մարմիներում, ինչպես նաև դատախազական ու քննչական գործառույթներ ունեցող մարմինների վարքագծի կանոնների, շահերի բախման, այլ սահմանափակումների պահանջների պահպանման, հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների,

բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթներ:

**Վարույթների, վերլուծությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման լիազորություններ (2 միավոր)**

ԿԿՀ-ին վերապահված մանդատի շրջանակներում հանձնաժողովը օժտված է վարույթների, վերլուծությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման լայն լիազորություններով: Օրենսդրությամբ ԿԿՀ-ն իրավասու է նաև իրեն վերապահված մանդատի շրջանակներում նախաձեռնելու վարույթներ: ԿԿՀ-ին վերապահված հայտարարագրերի վերլուծության ու ստուգումների արդյունքում վարույթների իրականացումը, պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, համապատասխան եզրակացության տրամադրումը իրավասու մարմնին կամ դրա ղեկավարին, ինչպես նաև դատավորի, դատախազի քննիչի թեկնածուների հավակնորդների, առաջխաղացման ենթակա դատավորների, դատախազների, հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց բարեվարքության ստուգման արդյունքներով խորհրդատվական եզրակացությունների տրամադրում է իրավասու մարմնին: Միաժամանակ, ԿԿՀ-ին է վերապահված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման վարույթի իրականումը, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգային առանձնահատկություններով պայմանավորված ազդարարման վարույթի և ՀՀ դատական օրենսգրքով սահմանված դատավոր կամ ԲԴԽ անդամի կողմից հայտարարագրերի ներկայացման սահմանված ժամկետի և ներկայացվող պահանջների խախտումների համար, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին զուգահեռ, կարգապահական վարույթ հարուցելու, կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների ստուգման և աուդիտի արդյունքներով կուսակցություններին պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունների տրամադրման լիազորությունները:

Վարույթների իրականացման գործընթացում Հանձնաժողովն իրավասու է «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն, դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ, պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

**Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ (1 միավոր)**

Հանձնաժողովին վերապահված մանդատի շրջանակներում ԿԿՀ-ն օժտված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության պահանջների արձանագրված խախտումների վերաբերյալ կազմված եզրակացությունները և հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման մասով առաջարկությունները իրավասու մարմիններին ներկայացնելու լիազորություններով: Ըստ էության, ԿԿՀ-ն օրենսդրությամբ օժտված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման մասնակցային գործառույթով՝ ՀՀ կառավարությանը և դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու լիազորությամբ:

Այդուհանդերձ, պետական պաշտոն զբաղեցնող առանձին խումբ պաշտոնատար անձանց թեկնածուների մասով բարեվարքության ուսումնասիրությունների եզրակացությունները ունեն խորհրդատվական բնույթ, և ԿԿՀ գնահատականները հիմք չեն պաշտոնատար անձին կամ թեկնածուին պաշտոնի նշանակման կամ պատասխանատվության ենթարկելու համար: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ԿԿՀ կայացրած եզրակացությունները միայն «կարող են» հիմք հանդիսանալ իրավասու մարմինների համար կիրառելու պատասխանատվության միջոցներ: Օրենսդրությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների մասով ԿԿՀ եզրակացությունների հիման վրա պատասխանատվության միջոցներ չկիրառելը իրավասու մարմնի ղեկավարի համար չի առաջացնում պատասխանատվություն: Անմիջական ղեկավար չունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց  վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների պահանջների խախտումների մասով նույնպես պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն:

Կոռուպցիայի կանխարգելման գործառույթի շրջանակներում դեռևս օրենսդրորեն սահմանված և գործարկված չեն կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակման, ինչպես նաև դրանց առնչվող իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման գործիքակազմերը:

**ԿԿՀ իրավական ինքնավարությունը  (2 միավոր)**

Իրավական ինքնավարության տեսանկյունից ԿԿՀ-ն օրենսդրությամբ վարույթների, վերլուծությունների և բարեվարքության եզրակացությունների տրամադրման գործընթացում ունի լիակատար ինքնուրույնություն: Մասնավորապես հայտարարագրերի վերլուծության ու ստուգման, իրավիճակային հայտարարագրեր պահանջելու հիմքերի, վարչական իրավախախտումների մասով վարույթների, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների, բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ վարույթների, վարքագծի կանոնների եզրակացությունների վերանայման և ազդարարման վարույթների իրականացման գործում ունի լիարժեք ինքնուրույնություն որոշումների կայացման գործում՝ առաջնորդվելով վերլուծությունների, վարույթների իրականացման և եզրակացությունների տրամադրման համապատասխան օրենսդրական ակտերով սահմանված ընթացակարգերով:

ԿԿՀ անդամները նշված լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար օժտված են անկախության և անձեռնմխելիության պաշտպանությամբ: Մասնավորապես «Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ», ինչպես նաև՝ «Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա՝ միայն Հանձնաժողովի համաձայնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել 72 ժամից ավելի»:[20] Հանձնաժողովի անդամը պարտավոր չէ բացատրություններ տալ Հանձնաժողովի վարույթում գտնվող կամ Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի կամ փաստաթղթերի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:[21]

**ԿԿՀ գործառնական ինքնավարությունը (1 միավոր)**

ԿԿՀ գործառնական ինքնավարության գնահատման տեսանկյունից օրենքով ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումներում մասնագիտական գործունեությունը քաղաքացիական ծառայություն է, իսկ կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները՝ քաղաքացիական ծառայողներ, որոնք պաշտոնի նշանակվում են մրցութային հիմունքներով և ազատվում օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում:

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ ԿԿՀ նախագահը պատասխանատու է ԿԿՀ գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ից 3-րդ ենթախմբերի ծառայողների նշանակման ու ազատման գործընթացների համար: ԿԿՀ անձնակազմի մյուս ենթախմբերի քաղաքացիական ծառայողների նշանակման ու ազատման գործընթացների համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը: ԿԿՀ անձնակազմի քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման մրցույթների կազմակերպման ու մրցութային հանձնաժողովների ձևավորման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը:

ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոնների զբաղեցման, տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է ԿԿՀ նախագահը՝ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց մասով, իսկ գխավոր քարտուղարը՝ քաղաքացիական ծառայողների այլ խմբերի մասով:

[20] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 17, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271
[21] Նույն տեղում:

ԿԿՀ գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, և միայն տվյալ պաշտոնի մրցույթն է կազմակերպվում և իրականացվում ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (ՔԾԳ) կողմից, իսկ նշանակումը՝ ԿԿՀ նախագահի կողմից:

ԿԿՀ նախագահի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից օրենսդրորեն նախատեսված է՝ «Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը»: Որպես Հանձնաժողովի գործառնական ինքնավարության վրա արտաքին միջամտության և խոչընդոտող հանգամանք՝ ԿԿՀ-ն դիտարկում է «աշխատակազմի ձևավորման վրա ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից, որոշակի կախվածությունը, քանի որ առանց գրասենյակի կողմից տրված թույլտվության, Հանձնաժողովը լիազորություն չունի քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրերում որևէ փոփոխություն կատարելու»: ՔԾԳ-ի կողմից քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման մասով համաձայնությունների կամ «թույլտվությունների» ինստիտուտի՝ որպես կոռուպցիոն ռիսկ, անդրադարձել է նաև ԹԻՀԿ-ն «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցում՝ նշելով, որ առհասարակ «ՄՌԿ առանձին գործընթացների համաձայնեցումը ՔԾԳ-ի հետ ավելորդ վարչարարություն է ստեղծում և վերացնում է ՔԾԳ-ի վերահսկողության բուն բովանդակությունը: ՔԾԳ-ի դերակատարումը համաձայնությունների տրամադրման գործում ավելորդ հայեցողություն է պարունակում»:

ԿԿՀ-ն իր գործառնական ինքնուրույնության վրա ՀՀ կառավարության ազդեցության լծակներից է դիտարկում նաև «Հանձնաժողովի բյուջետային հայտի ընդունման ու հաստատման, ինչպես նաև ԿԿՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակի և հաստիքացուցակի հաստատման գործընթացներում կառավարությանը օրենսդրությամբ վերապահված լիազորությունները»: Մասնավորապես աշխատողների քանակի ու հաստիքացուցակի հաստատման գործում Կառավարությունը կարող է սահմանափակել պահանջվող մարդկային ռեսուրսները, իսկ ամենամյա բյուջետային հայտը՝ չբավարարել ամբողջությամբ կամ կրճատել՝ առանց ԿԿՀ-ի հետ համաձայնության և/կամ հիմնավորումների: Նման պայմաններում ռիսկի տակ կարող է դրվել ԿԿՀ-ի կողմից օրենքով սահմանված լիազորությունների կամ վերապահված մանդատի իրականացումը: Այդուհանդերձ, պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԿԿՀ 2021 և 2022 թվականների բյուջետային հայտերի մեծությունների նույնիսկ ՀՀ կառավարության կողմից նվազեցման պայմաններում ԱԺ հաստատած բյուջետային միջոցներն ամբողջությամբ չեն օգտագործվել: ԿԿՀ բյուջեի կատարողականը չի գերազանցել 85%-ը: Ինչ վերաբերում է աշխատողների թվաքանակի ու հաստիքացուցակի հաստատման գործընթացում Կառավարության կողմից հնարավոր ազդեցություններին, ապա գործնականում 2020-2022 թվականների միտումը եղել է դրական: ԿԿՀ աշխատողների թիվը 40-ից հասցվել է 57-ի, իսկ այդ ընթացքում ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի 1500-Ա որոշմամբ հաստատված աշխատողների թվաքանակն ու հաստիքացուցակը 4 անգամ փոփոխվել են ԿԿՀ առաջարկությամբ: Վերոնշյալը վկայում է, որ Կառավարության ազդեցության լծակները ԿԿՀ բնականոն գործունեության նկատմամբ ավելի շուտ տեսական են և գործնականում չեն կիրառվել:

Փորձագետների կարծիքով, չնայած ԿԿՀ աշխատակիցները ենթարկվում են քաղաքացիական ծառայության կանոնակարգերին, ԿԿՀ գործառնական ինքնավարությանը կարելի է տալ դրական գնահատական: Շեշտվում է, որ ԿԿՀ-ն կցանկանար լինել առավել անկախ, ինչպես օրինակ՝ ՄԻՊ գրասենյակը, սակայն, ներկա իրավիճակում անկախության և/կամ ինքնավարության տեսանկյունից խնդիրներ չեն արձանագրվել:

**ԿԿՀ լիազորությունների քաղաքական օգտագործումը (2 միավոր)**

ԿԿՀ-ին՝ որպես գործիք, կամ այլ դրդապատճառներով քաղաքական իշխանության կողմից ընդդիմադիր գործիչների դեմ կիրառելու առումով փորձագետները խնդիր չեն տեսնում և գտնում են, որ բարեվարքության ուսումնասիրությունների տեսանկյունից չկա որևէ քաղաքական կողմնակալություն:

Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքները վկայում են, որ չնայած ԿԿՀ-ում առկա շատ խնդիրներին՝ «Հանձնաժողովն, ընդհանուր առմամբ, հակված է պահպանել անկախություն և օբյեկտիվություն»:

*«ԿԿՀ-ն բավարար չափով անկախ է: Բարեվարքության ուսումնասիրությունների տեսանկյունից չկա որևէ քաղաքական կողմնակալություն: ԿԿՀ-ն այս տեսանկյունից բավական վստահելի կառույց է: Վերջինիս աշխատակիցները կոռումպացված և/կամ կողմնակալ չեն»:*

*(Փորձագետ)*

Ընդհանուր դիտարկումն այն է, որ ԿԿՀ-ն ձգտում է չենթարկվել արտաքին ազդեցության կամ ճնշման, սակայն կան կարծիքներ, որ առանձին դեպքերում եղել են կոմպրոմիսներ: Որպես վերջինիս օրինակ նշվել են քաղաքական պաշտոնյաների մասով որոշ վարույթների ելքերը:

*«Ասենք վարույթի ելքը: Ասենք համաչափության սկզբունքով պայմանավորված որոշ դեպքերում կարող էր տույժի տեսակն ավելի խիստ լինել, իրենք ավելի նվազ խստության որոշում են կայացրել: Որոշ դեպքերում ես տեսել եմ, որ նույնիսկ քննադատվել է մեդիայով, որոշումը շատ կոմպրոմիսային էր... կարող էին ավելի համարձակ որոշում կայացնել, բայց դա եղել է այդ պահով պայմանավորված, այդ պահին ձևավորված կոնյուկտուրայով»:*

*(Փորձագետ)*

Մեկ այլ փորձագետի կարծիքով ԿԿՀ-ն ոչ այնքան օգտագործվում է որպես լծակ առանձին քաղաքական ուժերի վրա ճնշում գործադրելու նպատակով, այլ այն բավարար ուշադրություն չի դարձնում և/կամ անգործություն է դրսևորում քաղաքական իշխանության ներկայացուցիչներին առնչվող կոռուպցիոն ռիսկերին անդրադարձ կատարելու առումով:

Լրատվամիջոցներում ևս ԿԿՀ-ին որպես գործիք կամ այլ դրդապատճառներով քաղաքական իշխանության կողմից իրենց հակառակորդների դեմ կիրառելու մասով փաստեր չեն արձանագրվել:

**Առաջարկություններ**

1.1.1 ԿԿՀ անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կողմից հաստատված ԿԿՀ անդամի մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգում նախատեսել հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացած ՔՀԿ-ների ներկայացվածության և գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու հնարավորություն,

1.1.2 օրենսդրորեն ԿԿՀ-ին վերապահել կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակման գործառույթի համակարգման լիազորությունները՝ սահմանելով, որ նշված ոլորտում ԿԿՀ-ի կողմից սահմանված առաջնահերթ կանխարգելման միջոցառումները հիմք են պետական և ՏԻՄ մարմինների հակակոռուպցիոն ծրագրերում ներառելու համար,

1.1.3 օրենսդրորեն ԿԿՀ գործառույթների շրջանակում նախատեսել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության՝ կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի կիրառման լիազորություններ,

1.1.4 օրենսդրորեն ընդլայնել ԿԿՀ գործառույթների շրջանակը՝ վերջինիս վերապահելով ՏԻՄ մարմիններում համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց և համայնքային ծառայողների բարեվարքության, օրենսդիր, դատական, դատախազական ու քննչական գործառույթներ ունեցող մարմինների ծառայողների վարքագծի կանոնների, շահերի բախման, այլ սահմանափակումներին ներկայացվող պահանջների միասնական կիրառման, հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթները,

1.1.5 ԿԿՀ-ին վերապահել պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների մասով կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության գործունեության համակարգման գործառույթները,

1.1.6 օրենսդրորեն ամրագրել, որ ԿԿՀ-ին վերապահված մանդատի շրջանակներում, բարեվարքության պահանջների խախտումների մասով ԿԿՀ-ի կողմից իրավասու մարմիններին ներկայացված եզրակացությունները և առաջարկությունները իրավասու մարմինների համար հիմք են և/կամ պարտադիր են հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և ծառայողների նկատմամբ կիրառելու պատասխանատվության միջոցներ,

1.1.7 օրենսդրորեն ամրագրել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների մասով իրավասու մարմնին ԿԿՀ-ի կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ իրավասու մարմնի ղեկավարի կողմից պատասխանատվության միջոցներ չկիրառելու համար իրավասու մարմնի ղեկավարի նկատմամբ կիրառվում են պատասխանատվության միջոցներ,

1.1.8 օրենսդրորեն ՔԾԳ-ի կողմից առանձին պետական մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների գործունեության վերահսկողության իրականացման գործում պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման «համաձայնությունների» տրամադրման կամ մերժման մեխանիզմները փոխարինել քաղաքացիական ծառայության առանձին գործընթացների համար օրենսդրությամբ սահմանված մեթոդական ցուցումների ու պահանջների իրականացման համապատասխանության ստուգման ու մոնիտորինգի գործիքակազմերով:

## 1.2 ԿԿՀ ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով չափման գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Բյուջեի համամասնությունը**, որը գնահատում է կոռուպցիայի կանխարգելման ու բարեվարքության գործառույթներով պայմանավորված ԿԿՀ բյուջեի միջին հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեի նկատմամբ:
- **Բյուջեի բավարար լինելը,** որը գնահատում է ԿԿՀ բյուջեի պատշաճությունն իր գործառույթներն իրականացնելու համար, սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթները և դրա արդյունքում դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանն ապավինելը:
- **Բյուջեի անվտանգությունը և կայունությունը,** որը գնահատում է ԿԿՀ տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում առաջացող խնդիրները, բյուջեի հատկացման ժամկետները, հաստատված բյուջեում կատարված էական փոփոխությունները, դրանց պատճառները, բյուջետային հատկացումներին կցված պայմանները, ինչպես նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումները:
- **Աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը**, որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները, վարձատրության և խրախուսումների փոփոխությունները, աշխատավարձերի մրցունակությունը մասնավոր հատվածի, ինչպես նաև պետական հատվածի այլ քաղծառայողների աշխատավարձերի հետ:
- **Աշխատակազմի ընտրությունը,** որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի համալրման ներքին ընթացակարգերը, դրանց արժանիքահենությունը հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա և թափանցիկությունը:
- **Քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը**, որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները, բարեվարքության պահանջների խախտումների քննության և առերևույթ կոռուպցիոն տարրեր պարունակող դեպքերի արձանագրման ոլորտում փորձագիտությունը: Այն հաշվարկվում է ԿԿՀ անձնակազմի (հատկապես քննության և վարույթների մեթոդների) կրթական կամ որակավորման մակարդակի և վերապատրաստումների, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի միջին աշխատանքային ստաժի տեղեկատվության վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ կիրառվում է նաև ԿԿՀ քննության և/կամ վարույթների գործառույթների համար պատասխանատու աշխատակիցների թափուր հաստիքների քանակը:
- **Կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության իրականացման փորձագիտությունը**, որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության համակարգի, հակակոռուպցիոն կրթության ոլորտում: Այն հաշվարկվում է ԿԿՀ անձնակազմի (հատկապես կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության) կրթական կամ որակավորման մակարդակի և վերապատրաստումների, ինչպես նաև ԿԿՀ-ի անձնակազմի միջին աշխատանքային ստաժի հիման վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ կիրառվում է նաև ԿԿՀ կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության, բարեվարքության համակարգի

գործառույթների համար պատասխանատու աշխատակիցների թափուր հաստիքների քանակը:

- **Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը**, որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի վերապատրաստման մակարդակը: Այն հիմնված է վերապատրաստման հասանելի դասընթացների քանակի ու տեսակի, ինչպես նաև դրանց մասնակցած աշխատակիցների քանակի ու վերապատրաստմանը հատկացված բյուջեի ցուցանիշների վրա:
- **Անձնակազմի կայունությունը,** որը գնահատում է ԿԿՀ կադրերի հոսունության մակարդակը, ԿԿՀ և այլ պետական մարմիններ կամ հակառակն անձնակազմի ժամանակավորապես գործուղման, փոխադրման կամ ռոտացիայի պայմանները:

ԿԿՀ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 3. ԿԿՀ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը**




Ինչպես ներկայացված է Գծապատկեր 3-ում, առավելագույն 18 միավորից ապահովելով 7 միավոր՝ ԿԿՀ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության մակարդակը գնահատվել է 38.9%:

**Բյուջեի համամասնությունը (0 միավոր)**

Հանձնաժողովի գործունեության ֆինանսական ապահովվածությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:[22] Պետական բյուջեի ծախսային մասում ԿԿՀ ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

---

[22] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ 1997 թ. հունիսի 24-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=175826

Բյուջեի համամասնության, դրա բավարարության և անվտանգության ցուցանիշներով ԿԿՀ-ն չի ապահովել բավարար մակարդակ: Մասնավորապես 2020-2022 թվականներին ԿԿՀ ֆինանսավորումը կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.01%-ից պակաս մասը: Չնայած նշված տարիներին ՀՀ պետական բյուջեից ԿԿՀ փաստացի ֆինանսավորումն ավելացել է 77%-ով (121.44 մլն-ից հասնելով 214.97մլն դրամ), իսկ 2022 թվականին 2021 թվականի համեմատ՝ 67%-ով (214.97 մլն-ից հասնելով 358.41 մլն դրամի)՝ այդուհանդերձ, նախորդ տարիների ընթացքում ԿԿՀ-ին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը 2020 թվականի 0.0064%-ից 2022 թվականին հասել է բյուջեի ընդհանուր ծախսերի միայն 0.016%: Նման պայմաններում, «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» տողով ԿԿՀ-ին հատկացված բյուջետային միջոցառման կատարողականը կազմել է 86.4%, որը հիմնականում պայմանավորված է հաստիքներն ամբողջությամբ չհամալրվելու հանգամանքով: Ավելին, ԿԿՀ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների համար 2019-2021 թվականների համար նախատեսված 10.3 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ այդ աշխատանքները (8 ուսումնամեթոդական ուղեցույցի պատրաստում, հանրության համար հակակոռուպցիոն ուղղվածությամբ 4 սոցիալական հոլովակ, պաշտոնատար անձանց ու ՔՀԿ ներկայացուցիչների համար 60 սեմինարների ու թրեյնինգների իրականացում և այլն) իրականացվել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և այլ դոնոր կազմակերպությունների ֆինանսական օժանդակության շրջանակներում: 2022 թվականին հակակոռուպցիոն կրթության ծրագրերի մասով պետական բյուջեում ընդհանրապես ֆինանսավորում չի պլանավորվել:

**Բյուջեի բավարար լինելը (0 միավոր)**

2020-2022 թվականներին ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն մասնակի են բավարարել ԿԿՀ բյուջետային հայտը: Մասնավորապես ՀՀ կառավարություն ներկայացված ԿԿՀ բյուջետային հայտերի բավարարման մակարդակը տատանվել է՝ 2020 թվականի 89.14%-ից նվազելով 2022 թվականի 60.14%-ի: ԿԿՀ կարծիքով գործող օրենսդրության շրջանակներում ՀՀ կառավարությունը կարող է առանց համապատասխան հիմնավորումների փոփոխության ենթարկել ԿԿՀ բյուջետային հայտը, որը վտանգում է ԿԿՀ-ի կողմից օրենքով վերապահված լիազորությունների ամբողջական կատարումը:

Պետական բյուջեի կատարման 2022 թվականի հաշվետվության համաձայն նախատեսվել է, որ ԿԿՀ-ի կողմից ռիսկային ցուցանիշների հիման վրա դուրսբերված և վերլուծված հայտարարագրերի տեսակարար կշիռը պետք է կազմի 30%, փաստացի այն կազմել է 64.12%: Բարեվարքության պահանջների անհամատեղելիության, այլ սահմանափակումների, շահերի բախման և վարքագծի կանոնների վերաբերյալ նախատեսվել է ուսումնասիրել 100 դեպք, իրականում ուսումնասիրվել է 162-ը: Նախատեսվել է կազմակերպել 3 դասընթաց, սակայն իրականում կազմակերպվել է 11-ը: Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ փաստացի հատկացված բյուջետային միջոցները հիմնականում բավարարել են նախանշված արդյունքային ցուցանիշների ապահովմանը, իսկ գերակատարումներն, ամենայն հավանականությամբ, իրականացվել են դոնոր կազմակերպությունների ֆինանսական օժանդակության ծրագրերի շրջանակներում:

**Բյուջեի անվտանգությունը և կայունությունը (1 միավոր)**

Բյուջեի անվտանգության և կայունության տեսանկյունից ՀՀ կառավարության կողմից ԿԿՀ-ին կատարված ֆինանսական հատկացումները 2021-2022 թվականներին ավելացել են: Չնայած դրան, ԿԿՀ-ն չի օգտագործել հատկացված բոլոր միջոցները, իսկ 2021 թվականին չի օգտագործել անգամ օրենքով նախատեսված (չավելացված) մեծությունը: 2022 թվականին ԿԿՀ փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է ԿԿՀ-ին կատարված հատկացումները: Չնայած ՀՀ կառավարության կողմից բյուջետային ֆինանսավորման ավելացումներին՝ այդուհանդերձ, ԿԿՀ-ն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը: Փորձագետների կարծիքով շատ են եղել դեպքեր, երբ ԿԿՀ կատարողականը եղել է ցածր, և կատարվել է միջոցների բյուջե վերադարձ:

*«Շատ ա եղել, օրինակ՝ իրանց շատ տրվել ա՝ չեն հասցրել իրականացնել, անընդհատ վերադարձնում են, շատ ուզում են՝ վերադարձնում են, ուզում են՝ վերադարձնում են...Եղել ա, որ իրենք օրինակ՝ երեք-չորս ծրագրի համար ուզել են, երկուսն էլ չեն արել...»:*

*(Փորձագետ)*

Բյուջետային միջոցների ֆինանսավորման խնդիրների մասով ԿԿՀ-ն առաջարկում է փոփոխություններ կատարել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում:[23] Մասնավորապես ԿԿՀ-ն խնդրահարույց է համարում՝

- ՀՀ կառավարության կողմից Հանձնաժողովի և նրա աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) Կառավարության կողմից ընդունելու գործընթացում առանց հիմնավոր առարկությունների վերանայումը,
- բյուջետային միջոցների տրամադրման համամասնություններն ու տրամադրման եղանակները,
- ԿԿՀ-ին հատկացվելիք բյուջետային միջոցների չափն ու կայունության ռիսկերը՝ առաջարկելով օրենքով ամրագրել, որ բյուջետային տարում տրամադրվելիք ֆինանսական միջոցները չպետք է փոքր լինեն նախորդ տարվա փաստացի հատկացումներից:

Ներկայացված խնդիրներն արդիական են և դրանց լուծումը պահանջում է ԿԿՀ ֆինանսական միջոցներով ապահովության մակարդակի բարձրացում:

**Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում (1 միավոր)**

ԿԿՀ գրավչությունը ուղղակիորեն պայմանավորված չէ աշխատակազմի վարձատրության և խրախուսման հանգամանքներով:

Նկատի ունենալով, որ ԿԿՀ աշխատակազմի ճնշող մեծամասնությունը քաղաքացիական ծառայողներ են, ապա վերջիններիս վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը կարգավորված են

[23] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթի նախագիծ, https://www.e-draft.am/projects/4256/about

«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով:

Քաղաքացիական ծառայողի բազիսային աշխատավարձը 2022 թվականին սահմանվել է 83,200 ՀՀ դրամ: Այն կազմում է օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի՝ 94.2%-ը, որը գտնվում է վերոնշյալ օրենքով սահմանված 80-120% անվանական նվազագույն աշխատավարձի միջակայքում: Սա նշանակում է, որ օրենսդրությամբ խրախուսվում է պետական ծառայության համալրումը քաղաքացիական ծառայության ամենացածր՝ 8-րդ մասնագիտական պաշտոնների խմբից սկսած:

ԿԿՀ քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար են հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ: Քաղաքացիական ծառայողների ղեկավար պաշտոնների խմբի համար գործակիցը գտնվում է 3.88-ից 9.65-ի միջակայքում, այլ խոսքով՝ վարձատրության խտացման գործակիցը (նվազագույն և առավելագույն գործակիցների հարաբերակցությունը) կազմում է 2.48, որը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում ղեկավար խմբի քաղաքացիական ծառայողների վարձատրության մակարդակները միմյանցից տարբերվում են մոտ 2.5 անգամ: Մասնագիտական պաշտոնների համար խտացման գործակիցը կազմում է 3.5, որն ավելի լայն է սահմանված, քան ղեկավար պաշտոնների համար:

ԿԿՀ անդամների և աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների վարձատրության խտացման միջին գործակիցների հարաբերակցությունը ցույց է տալիս, որ միջին հաշվով ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները 4.29 անգամ նվազ են վարձատրվում ԿԿՀ անդամների համեմատ:

Մասնավոր ոլորտի նկատմամբ ԿԿՀ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրության մրցունակության առումով ներկայումս դժվար է համադրություններ կատարել: Այդուհանդերձ, ինչպես ցույց են տալիս ՔԾԳ-ի կողմից 2021 թվականին իրականացված զեկույցի[24] արդյունքները, «ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը 471,473 դրամ է (պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 38%-ով), տնտեսագետինը՝ 533,995 (բարձր է 2-ից ավել անգամ), կառավարման ոլորտի մասնագետինը (այդ թվում՝ մենեջերներ, տնօրեններ)՝ 643,962 (պետական հատվածի գրեթե կրկնակին է): Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ»:

ԹԻՀԿ կողմից ԿԿՀ նախկին և գործող աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքներով նախկին աշխատակիցների 49.2%-ը «ավելի շուտ բավարարված էին» վարձատրության մակարդակով, սակայն նույնքանն էլ «ավելի շուտ բավարարված չէին» և գտնում էին, որ նման աշխատանք կատարողները նույն վարձատրությունն են ստանում: Մինչդեռ, ԿԿՀ գործող աշխատակիցների 81.8%-ը ընդհանրապես բավարարված չէ

[24] ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» զեկույց, https://cso.gov.am/charts Զեկույցի հաջորդ հրապարակումը կիրականացվի 2024 թ.-ին:

վարձատրության մակարդակով: Ավելին, վերջիններս կարծում են, որ աշխատավարձի մակարդակը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքին, և նման աշխատանք կատարողներն ավելի բարձր են վարձատրվում:

Քաղաքացիական ծառայողներին ծառայությունում պահելու մոտիվացման հաջորդ հանգամանքը հավելավճարների ու պարգևատրումների հիմնավորված համակարգի առկայությունն է: ԿԿՀ-ում բյուջեով պարգևատրումների պլանավորված մակարդակը ԿԿՀ անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում 2022 թվականին կազմել է 22.1%: Նկատի ունենալով, որ ԿԿՀ-ում հաստիքների համալրման մակարդակը կազմել է ընդհանուր հաստիքների 76.5%-ը՝ կարելի է եզրահանգել, որ տնտեսված միջոցները նույնպես ուղղվել են քաղաքացիական ծառայողների պարգևատրումներին: 2022 թվականին ԿԿՀ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» բյուջետային հոդվածով փաստացի պարգևատրումների բյուջետային հատկացումները 2021 թվականի նկատմամբ ավելացել են 1.5 անգամ, իսկ 2020 թվականի նկատմամբ՝ 2.5 անգամ: «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածով՝ 2022 թվականին ԿԿՀ-ի կողմից փաստացի օգտագործված պարգևատրումների միջոցները 2021 թվականի համեմատ աճել են 3.3 անգամ, իսկ 2020 թվականի փաստացի միջոցների նկատմամբ՝ 2.6 անգամ: Արդյունքում, քաղաքացիական ծառայության ցածր և բարձր խմբի պաշտոններում ընդգրկվածների միջին աշխատավարձերի զգալիորեն մեծ տարբերությունները տեղի են ունեցել հենց պարգևատրումների հաշվին: Թափուր հաստիքների հաշվին տնտեսված միջոցները ուղղվել են պարգևատրումներին, որի արդյունքում արհեստականորեն բարձրացել է նաև ծառայողների փաստացի վարձատրությունը, և խաթարվել է ըստ կատարողականի գնահատման պարգևատրման համակարգը:

Փորձագետների հետ հարցազրույցի արդյունքները փաստում են, որ ԿԿՀ-ում կան որոշակի պարգևավճարներ, սակայն դրանց հատկացման պրոցեսը բավարար հստակեցված և հիմնավորված չէ, չկան աշխատակիցների կատարողականի գնահատման մեխանիզմներ: Նաև կա կարծիք, որ, ընդհանուր առմամբ, պետական հատվածում (այդ թվում՝ նախարարություններում և ԿԿՀ-ում) սահմանված խրախուսումները/տոկոսային հավելումները բավարար չեն աշխատակիցներին մոտիվացնելու համար, մյուս կողմից՝ դրանք հիմնականում վերաբերում են վարչության պետերին:

ԿԿՀ նախկին և ներկա աշխատակիցները նույնպես արձանագրել են պարգևատրումների առկայությունը, մինչդեռ, դրամական պարգևատրումների տրամադրման գործոնների մասով առկա են տրամագծորեն հակադիր կարծիքներ: Ըստ նախկին աշխատակիցների՝ դրամական խրախուսումների համար հիմք են հանդիսացել «ղեկավարության հետ հարաբերությունները»՝ 100% և «ԿԿՀ-ում բարեկամական, անձնական կապեր ունենալը»՝ 50%, մինչդեռ կատարողականի գնահատման արդյունքները հիմք չեն հանդիսացել հավելավճարների ու պարգևատրումների համար: Ներկա աշխատակիցների 80%-ի կարծիքով «բարձր կատարողականը» և «պրոֆեսիոնալիզմը» հիմք հանդիսացել են պարգևատրումների ու դրամական խրախուսումների համար, սակայն հարցվողների միայն 25,0%-ն է նշել, որ իրենց կատարողականի գնահատման արդյունքներն են հիմք հանդիսացել պարգևատրումների համար:

2021 թվականին ԹԻՀԿ կողմից քաղաքացիական ծառայողների շրջանում անցկացված անանուն հարցման մասնակիցների կողմից նշվել են մեկնաբանություններ առ այն, որ «պարգևատրման գործընթացը սուբյեկտիվ տարրեր ունի, և պետք է բացառել բոլորին հավասարաչափ պարգևատրելու պրակտիկան, քանզի այն կարող է նաև կոմպետենտ աշխատողներին ապամոտիվացնելու պատճառ դառնալ»[25]:

**Աշխատակազմի ընտրություն (2 միավոր)**

ԿԿՀ մարդկային ռեսուրսներով ապահովվածության վրա նշանակալի ազդեցություն ունի աշխատակազմի ընտրության մեխանիզմը: ԿԿՀ-ն անձնակազմի հավաքագրման սեփական ընթացակարգեր չունի և հավաքագրումն իրականացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված մրցութային կարգով և ՀՀ փոխվարչապետի կողմից հաստատված թեստավորման և հարցազրույցի, փաստաթղթերի համապատասխանության ստուգման գործընթացով:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով քաղաքացական ծառայության առանձին խմբերի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված են կրթության և մասնագիտական ստաժի նվազագույն պահանջներ[26]: ՀՀ փոխվարչապետի որոշմամբ սահմանված է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը:

ԿԿ տրամադրած տվյալներով 2023 թ. մայիսի 3-ի դրությամբ կառույցի 57 հաստիքային միավորից թափուր են մնում 14-ը, համալրված՝ 43 հաստիքային միավոր: 2021 և 2022 թվականներին կազմակերպվել է քաղաքացիական ծառայողի թափուր հաստիքների համալրման համապատասխանաբար՝ 63 և 67 մրցույթ: Նշված մրցույթներում հաղթող է ճանաչվել և պաշտոնում նշանակվել համապատասխանաբար 33 և 22 քաղաքացի: Նշված թվերի համադրությունը ցույց է տալիս, որ եթե 2021 թվականին միջինում երկու մրցույթի արդյունքում է կատարվել նշանակում, ապա 2022 թվականին՝ այդ ցուցանիշը վատթարացել և կազմել է 3: Այսինքն, ավելացող մրցույթների քանակի պայմաններում, նվազել է մրցույթում հաղթող ճանաչվողների ու պաշտոնի նշանակումների թիվը: Սա վկայում է մարդկային ռեսուրսների համալրման գործընթացների ոչ արդյունավետ կազմակերպման մասին այն դեպքում, երբ այդ մրցույթներն անցկացվում են թափանցիկ ու հրապարակային, իսկ մրցույթի արդյունքները բողոքարկողների թիվը զգալիորեն կրճատվել է՝ 16-ից հասնելով 6-ի: Այդուհանդերձ, ԿԿՀ-ից և ՀՀ վարչապետի աշխատակազմի ՔԾԳ-ից ստացված տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ ԿԿՀ-ում աշխատանքի ընդունվելը դեռևս գրավիչ է, քանի որ 2023 թ. մայիսի 3-ի դրությամբ իրականացված 134-ից ավել մրցույթներին մասնակցել են 1,310-ից ավելի դիմորդներ: Նույն մարդը տարբեր պաշտոնների համար մրցույթներին դիմել է միջինը 7 անգամ:

[25] ԹԻՀԿ, «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույց, 2021 թ., https://www.transparency.am/en/publication/pdf/276/9667#page=27&zoom=100,92,432

[26] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, https://www.arlis.am/documentview.aspx?docid=138910

**Կանխարգելման, բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության, քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը (1 միավոր)**

Հոսունության բարձր տեմպերն ազդել են ԿԿՀ անձնակազմի կրթական և փորձագիտական որակների վրա:

ԿԿՀ քննության և վարույթների, ինչպես նաև կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության գործառույթներ իրականացնող մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցների փորձագիտությունը գնահատվել է մոտ 30%[27]: Մասնագիտական ստորաբաժանումներում թափուր հաստիքների առկայությունը, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի հոսունության բարձր և համալրվածության ցածր մակարդակներն անուղղակիորեն վկայում են մասնագիտական ստորաբաժանումների աշխատակիցների սահմանափակ փորձագիտական ստաժի մասին:

ԿԿՀ նախկին և ներկա աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքներով նախկին աշխատակիցների մոտ 43%-ն ունեցել է գիտական աստիճան և ԿԿՀ-ում աշխատանքի 1 տարուց ավելի փորձ: Մինչդեռ, գործող աշխատակազմի աշխատակիցների միայն 72.0%-ն ունի մագիստրոսի աստիճան, իսկ 20%-ը՝ բակալավրի: Զբաղեցրած պաշտոնների մասով՝ նախկին աշխատակիցների 43%-ը վարչության պետեր են եղել, իսկ ներկա աշխատակիցների միայն 37%-ն է զբաղեցնում վարչության պետի պաշտոն:

Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքները վկայում են, որ ԿԿՀ անձնակազմի որոշ մասը բավական պրոֆեսիոնալ է իր գործում: ԿԿՀ աշխատակիցների գիտելիքներն ու հմտությունները, ընդհանուր առմամբ, բավարար են կառույցի արդյունավետ գործունեության ապահովման համար: Միաժամանակ, հաճախ ընդգծվել են ԿԿՀ աշխատանքում առկա թերացումները, որոնց պատճառը հենց փորձագիտության հետ կապված խնդիրներն են: Դրանց հիմքում փորձագետներն առաջին հերթին տեսնում են վարչական վարույթներ հարուցելու, ֆինանսական հաշվետվությունների (հայտարարագրերի) վերլուծություն իրականացնելու հմտությունների և փորձի պակասը:

«*Չի արվում բովանդակային վերլուծություն, դեռ լավ չեն պատկերացնում կոռուպցիոն ռիսկերի վերհանման գործընթացը*»:

(*Փորձագետ*)

Ի լրումն նշվածի՝ ռիսկային է կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքների փոքրաթիվ լինելը. մասնավորապես զգալի ծավալով աշխատանք ակնկալվող հակակոռուպցիոն կրթության և մեթոդական աջակցության վարչությունում նախատեսված է ընդամենը 3 հաստիք:

[27] ԿԿՀ անձնակազմի փորձագիտությունը գնահատվել է քննության ու վարույթների, կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության ու բարեվարքության պահանջների պահպանման գործառույթներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներում թափուր հաստիքների քանակով, քանի որ ԿԿՀ-ի կողմից կոնկրետ աշխատողների ստաժի ու կրթության վերաբերյալ տվյալներ տրամադրելը համարվել է անհնար:

**Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը (1 միավոր)**

Փորձագիտության ցածր մակարդակը հետևանք է նաև անձնակազմի ուսուցման ու վերապատրաստումների կազմակերպված համակարգի բացակայության:

ԿԿՀ աշխատակիցների ուսուցումն ու վերապատրաստումը 2020-2022 թվականներին հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների՝ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն», Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) աջակցությամբ ծրագրերի շրջանակներում, չեն կրել պլանավորված բնույթ ու հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման համար միջոցներ չեն ծախսվել:

ԿԿՀ նախկին և ներկա աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ ներկա աշխատակիցների միայն 18.2%-ն է լիովին բավարարված վերապատրաստման հնարավորություններով, իսկ 54.5%-ն ավելի շուտ բավարարված է: Մինչդեռ, նախկին աշխատակիցներից և ոչ մեկը լիովին բավարարված չի եղել վերապատրաստման հնարավորություններով, իսկ 57.2%-ը ընդհանրապես բավարարված չէր կամ ավելի շուտ բավարարված չի եղել վերապատրաստման հնարավորություններով: ԿԿՀ-ում կազմակերպվող վերապատրաստումների հաճախականության մասով նախկին աշխատակիցների 42%-ը հստակ դիրքորոշում չի արտահայտել, մինչդեռ ներկա աշխատակիցների 42%-ը գտնում է, որ հաճախ են կազմակերպվում բարեվարքության հարցերի շուրջ վերապատրաստումներ:

Փորձագետների հետ կազմակերպված հարցազրույցների արդյունքները վկայում են, որ ԿԿՀ աշխատակիցները որոշակի վերապատրաստումների մասնակցում են, առանձին ուշադրություն է դարձվում կարողությունների զարգացմանը: Սակայն հարց է, թե ԿԿՀ կարողությունների զարգացման պլանը որքանով է մշակված, որքանով են հետևողական այդ հարցում: Նշվել է, որ նախկինում ԿԿՀ գլխավոր քարտուղարը կազմել է վերապատրաստումների տարեկան պլան, սակայն ներկա իրավիճակի մասին փորձագետները մանրամասնորեն տեղեկացված չեն:

**Անձնակազմի կայունությունը (0 միավոր)**

ԿԿՀ մարդկային ռեսուրսներով ապահովվածության տեսանկյունից առավել խոցելի են անձնակազմի կայունության, աշխատողների փորձառության, ուսուցման և վերապատրաստման հարցերը: Կարձատրության, անձնակազմի համալրման գործընթացները ունեն հարաբերականորեն կայուն մակարդակ:

ԿԿՀ անձնակազմի կայունության ցածր մակարդակը պայմանավորված է կադրերի հոսունության բարձր տեմպերով: 2021 թվականին ԿԿՀ-ում հոսունությունը կազմել է 18.6%, իսկ 2022 թվականին՝ 23.4%: ԿԿՀ-ում հոսունությունը բարձր է նաև քաղաքացիական ծառայողների շրջանում: 2021 թվականին ԿԿՀ աշխատակազմում քաղաքացիական ծառայողների հոսունությունը կազմել է 34.6%, իսկ 2022 թվականին այն նվազել, հասել է 21.8%-ի: ՀՀ քաղաքացիական ծառայությունում հաշվարկված միջին հոսունությանը (8%) այն գերազանցում է ավելի քան 2.3 անգամ, մինչդեռ, հոսունության 2-3%-ն է համարվում բնական:

ՔԾԳ պաշտոնական, փաստաթղթավորված արձանագրումներով հոսունությունը հիմնավորվել է՝ «ազատվել են սեփական դիմումի հիման վրա» պատճառաբանությամբ: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ԿԿՀ աշխատակազմի նախկին աշխատակիցների շրջանում հարցման արդյունքները, աշխատանքից ազատման հիմնական պատճառների շարքում առավելապես նշվել են «վատ աշխատանքային միջավայրի և մթնոլորտի առկայությունը»՝ 85.7% և «ցածր աշխատանքի վարձատրությունը/եկամուտը»՝ 28.6%: ԿԿՀ աշխատակազմի գործող աշխատակիցների շրջանում կատարված հարցման արդյունքները տրամագծորեն հակառակ պատկերն են նկարագրում: Մասնավորապես ԿԿՀ-ում մնալու հիմնական գործոնների շարքում 72.7%-ը կարևորել է «ԿԿՀ-ում լավ աշխատանքային միջավայրի առկայությունը», 63.6%-ը՝ «հանրությանը ծառայելու» վեհ գաղափարը, իսկ 45.5%-ը՝ «աշխատանքի հեղինակությունը»: Նույնիսկ նման միջավայրում ԿԿՀ աշխատակիցների 72.7%-ը «մեկ կամ երկու անգամ կամ պարբերաբար» իսկ 63.6%-ը՝ «մշտապես կամ հաճախ» մտածում են իրենց աշխատանքը փոխելու մասին:

Փորձագետների դիտարկմամբ նույնպես ԿԿՀ-ում բարձր հոսունության պատճառներից մեկը ԿԿՀ-ում վատ աշխատանքային մթնոլորտն է: Վերջինս, որոշ փորձագետներ կապել են ԿԿՀ նախագահի հետ համատեղ աշխատանքի բարդությունների հետ, իսկ որոշները՝ միակենտրոն կառավարման հետ:

*«Ճիշտն ասած, շատ չեն մանրամասնել, բայց ոնց հասկացա՝ միակենտրոն ղեկավարում ա, էլի: Ու ինչ-որ հարցեր են լինում՝ իրենք նեղվում են... Մի քիչ դեմոկրատական միջավայր չի...»:*

(*Փորձագետ*)

ԿԿՀ աշխատակազմի բարձր հոսունության պատճառներից փորձագետները նշում են նաև կառույցում առաջխաղացման հնարավորությունների սահմանափակ լինելը:

**Առաջարկություններ**

1.2.1 ԿԿՀ ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից ԿԿՀ ամենամյա բյուջետային հայտերը փոփոխելու և վերանայելու գործառույթները, ԿԿՀ բյուջետային հայտերի վերաբերյալ կառավարության դիտողությունները ներառել տվյալ տարվա բյուջեի նախագծում և քննարկման առարկա դարձնել ՀՀ ԱԺ-ում բյուջետային քննարկումների փուլում, ապահովել ԿԿՀ մասնակցությունն ԱԺ-ում բյուջեի նախագծի ոլորտային քննարկումներին,

1.2.2 ԿԿՀ-ում վերանայել մարդկային ռեսուրսների կառավարման գործող քաղաքականությունը, վերլուծել և ուսումնասիրել ԿԿՀ անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները, վերլուծության արդյունքներով առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարություն ԿԿՀ կառավարման կազմակերպական կառուցվածքի, հաստիքների, թվաքանակի վերանայման (ավելացման), աշխատակազմի կառուցվածքային միավորների խոշորացման մասով,

1.2.3 իրականացնել ԿԿՀ անձնակազմի զարգացման կարիքների գնահատում, որի հիման վրա մշակել անձնակազմի կարողությունների զարգացման ու վերապատրաստումների միջնաժամկետ ծրագիր՝ ապահովված ՀՀ բյուջետային միջոցներով,

1.2.4 վերանայել ԿԿՀ հիմնական գործառույթ իրականացնող քաղաքացիական ծառայողների վարձատրության սանդղակները՝ դրանք մոտարկելով հակակոռուպցիոն այլ մարմինների համարժեք պաշտոնների համար սահմանված վարձատրության սանդղակներին,

1.2.5 ԿԿՀ աշխատակազմի օրինակով իրականացնել քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգի գնահատում գործող պաշտոնի անձնագրերով սահմանված լիազորությունների և վարձատրության սանդղակով սահմանված նվազագույն գործակիցների համապատասխանության, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար ու մասնագիտական խմբերի, ԿԿՀ անդամների ու քաղաքացիական ծառայողների ղեկավար խմբերի վարձատրության մակարդակների խտացման գործակիցների հարաբերակցության նվազեցման ուղղությամբ,

1.2.6 ԿԿՀ աշխատակիցների համար օրենսդրորեն սահմանել վարձատրության հավելավճարների ու լրավճարների գործիքակազմեր,

1.2.7 ԿԿՀ քաղաքացիական ծառայողների պարգևատրումների համակարգը կապակցել կատարողականի գնահատման մեխանիզմների հետ՝ բացառելով թափուր հաստիքների հաշվին պարգևատրումների իրականացումը:

### 1.3 ԿԿՀ ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներքին բարեվարքության և հաշվետվողականության չափման գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Տարեկան հաշվետվությունը,** որը գնահատում է ԿԿՀ ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատում է նաև ԿԿՀ ամենամյա հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունների համապարփակությունը և հաշվետվության հասանելիությունը հանրությանը: Համապարփակությունը նշանակում է, որ հաշվետվության մեջ ներառված են ԿԿՀ գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ մանրամասն տվյալներ, որոնք օգտագործման տեսանկյունից կիրառելի են:
- **Արձագանքողականությունը հանրության կողմից ներկայացվող հարցումներին,** որը գնահատում է ԿԿՀ թափանցիկությունը հանրության կողմից ներկայացվող հարցումներին արձագանքելու տեսանկյունից:

- **Արտաքին վերահսկողության մեխանիզմները,** որը գնահատում է ԿԿՀ արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԿԿՀ գործունեության անմիջական վերահսկողական կառույցին: ԿԿՀ անմիջական վերահսկողական կառույցի բացակայության պայմաններում դիտարկվում է վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների առկայությունը՝ կանոնավոր հաշվետվությունների ներկայացումը Խորհրդարանին, արտաքին աուդիտի անցկացումը և ոլորտային վերահսկողության այլ մեխանիզմները:
- **Ներքին վերահսկողության մեխանիզմները,** որը գնահատում է ԿԿՀ ներքին վերահսկողության գործընթացները, ներառյալ՝ ԿԿՀ-ում կազմակերպության «կառավարման ծրագրի (կորպորատիվ պլան)», «Մոնիտորինգի և գնահատման շրջանակի» և կատարողականի գնահատման մեխանիզմների առկայության չափանիշները:
- **Գործընթացների պատշաճ պահպանումը,** որը գնահատում է հանրության վստահությունը ԿԿՀ-ի կողմից իր լիազորություններն օգտագործելիս և վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի կիրառման ու պահպանման գործում պատշաճությունը, անկողմնակալությունը և արդարացի վերաբերմունքը:
- **Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը,** որը գնահատում է ազդարարողների, բողոքողների՝ ԿԿՀ-ին իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը, որը հանդիսանում է ԿԿՀ գործընթացների հանդեպ նրանց վստահության ցուցանիշը: Այն չափվում է՝ անանուն և ստորագրված գրավոր բողոքների թիվը համադրելով ստացված բողոքների ընդհանուր թվի հետ:
- **ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը,** որը գնահատում է ԿԿՀ անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի կիրառման արդյունավետությունը:
- **Բողոքների արդյունքները,** որը գնահատում է ԿԿՀ-ի և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները: ԿԿՀ-ի և նրա անձնակազմի սխալ վարքագծի համար ներկայացված հիմնավոր բողոքների քանակը, դրա արդյունքներով նշանակված պատասխանատվության միջոցները:
- **Բարեվարքության ներքին մեխանիզմները,** որը գնահատում է ԿԿՀ-ի և նրա անձնակազմի վարքագծի կանոնների համապարփակությունը, գույքի և ակտիվների հայտարարագրման, շահերի բախման կանոնների, նվերների և հյուրասիրության ընդունման, հետաշխատանքային և այլ սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների և դրանց խախտումների վերացման գործնականում կիրառելի ընթացակարգերն ու ներքին բողոքների քննությունը:

ԿԿՀ ներքին բարեվարքության և հաշվետվողականության գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 4. ԿԿՀ ներքին բարեվարքության և հաշվետվողականության մակարդակը**




Ինչպես ներկայացված է Գծապատկեր 4-ում, առավելագույն 16 միավորից ապահովելով 4 միավոր՝ ԿԿՀ ներքին բարեվարքության և հաշվետվողականության մակարդակը գնահատվել է 25.0%: Գնահատման ենթակա ցուցանիշներից չի գնահատվել «Ազդարարողների, բոլոր ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը ԿԿՀ-ին բացահայտելու պատրաստակամության» ցուցանիշը, քանի որ ԿԿՀ-ում անանուն ազդարարման ինստիտուտը 2022 թվականին օրենսդրորեն սահմանված չի եղել և գործնականում չի կիրառվել, նաև դատախազությունից համանման հաղորդումները ԿԿՀ-ին չեն փոխանցվել:

**Տարեկան հաշվետվությունը (1 միավոր)**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով պահանջվող՝ գործունեության մասին հաղորդումներից հրապարակված են միայն 2021 և 2022 թվականների ԱԺ-ին ուղղված տարեկան գործունեության հաղորդումները, ինչպես նաև կիսամյակային հաշվետվությունները: Հրապարակվում են նաև ԿԿՀ որոշումներն ու եզրակացությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց քննարկման արդյունքները: Դեռևս մշակված և հրապարակված չեն բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումները:

ԿԿՀ տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ ներկայացնելու օրենսդրական պահանջի իրականացումն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ապահովված չէ: ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 26-րդ գլխում կանոնակարգված են միայն սահմանադրական մարմինների կողմից ԱԺ-ին ներկայացվող հաղորդումների քննարկման գործընթացները: Ինքնավար մարմինների մասով նման

կարգավորումները բացակայում են: Արդյունքում՝ ԿԿՀ՝ ԱԺ ներկայացված տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ-ի կողմից չի քննարկվում և «ի գիտություն» չի ընդունվում:

ԿԿՀ գործունեության հաղորդումների համապարփակության տեսանկյունից առկա ամենամյա հաղորդումներն ու հաշվետվությունները չունեն միասնական կառուցվածք, տեղեկատվության ներկայացման ձևաչափը էականորեն տարբեր է, բացակայում է կոռուպցիայի կանխարգելման վիճակագրական տվյալների միասնական համակարգը: Դրանցում տեղ չեն գտնում հանրության շրջանում սոցիոլոգիական հարցումների արդյունքները և դրանց հիման վրա մշակված առաջարկները: Մասնավորապես, 2022-2023 թվականներին իրականացված երկու[28] հարցումների կամ հետազոտությունների արդյունքները չեն վերածվել գործողությունների ծրագրի և չեն ներառվել ԿԿՀ ամենամյա հաղորդումներում:[29]

**Արձագանքողականությունը հանրության կողմից ներկայացվող հարցումներին (1 միավոր)**

Ֆոկուս խմբային քննարկումը ցույց է տալիս, որ լրագրողների կողմից ԿԿՀ-ին հասցեագրվող հարցումները, ընդհանուր առմամբ, ստանում են արձագանք, սակայն ոչ միշտ են բովանդակային տեսանկյունից լիարժեք:

*«ԿԿՀ-ն գրավոր հարցումներին ժամանակին պատասխանում է. խնդիրը պատասխանի բովանդակությունն է և ոչ ժամկետները… «Ստեղ խնդիրն ավելի շատ ոչ թե ժամկետներն ա, այլ բովանդակային պատասխան տալն ա էդ հարցերին, որովհետև իրանք կարող ա ժամկետի մեջ բան անեն՝ կամ բովանդակային չպատասխանեն, կամ կարող ա դու տենց մի 10 հատ կետ ուղարկես իրան հարցման մեջ սենց առանձնացրած կետերով՝ 4 կետի վերաբերյալ պատասխան գա, էն 6 կետը տենց… Հետո մի հատ էլ ուղարկես… Մենք դեպք ունենք իրեք հատ հարցում ենք արել մի հատ հարցի վերաբերյալ… Էդ կետին տենց էլ պատասխան չկարացանք ստանանք…»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

**Արտաքին վերահսկողության մեխանիզմներ (0 միավոր)**

ԿԿՀ գործունեության նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմները բացակայում են: ԿԿՀ-ն հանդիսանում է ինքնավար մարմին, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ն ինքնավար մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացնում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ հանրային լսումների մեխանիզմով ԿԿՀ-ին վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպման հնարավորությունը:

ԿԿՀ ամենամյա գործունեության նկատմամբ վերահսկողություն կարող է իրականացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով ԱԺ-ին ամենամյա հաղորդումների ներկայացման

---

[28] ԿԿՀ, Մեկնարկում է Հայաստանի պետական հատվածի հաշվետվողականության գնահատման ծրագիրը, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/05/06/2022-05-06, ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf

[29] ԿԿՀ տեղեկատվությամբ՝ վերոնշյալ հարցման և հետազոտության որոշ արդյունքներ ներառվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թթ. գործողությունների ծրագրում:

ենթատեքստում: ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրերում ԿԿՀ գործունեության հաշվեքննություն երբևէ ներառված չի եղել:

**Ներքին վերահսկողության մեխանիզմները (1 միավոր)**

Ներքին վերահսկողության մեխանիզմների մասով «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքով ինքնավար մարմիններն իրականացնում են պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության վերահսկողությունը:[30] ԿԿՀ կանոնադրությամբ[31] «Հանձնաժողովի նախագահից պահանջվում է հաստատել ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանը և ներքին կարգապահական կանոնները»: ԿԿՀ կայքէջում բացակայում է ԿԿՀ ռազմավարական պլանի վերաբերյալ փաստաթուղթը: ԹԻՀԿ հարցման արդյունքներով ԿԿՀ նախագահի 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ 01-Լ հրամանով հաստատվել է ԿԿՀ աշխատանքային կարգապահությանը ներկայացվող պահանջների փաստաթուղթը:

Ինքնավար մարմիններում ներքին աուդիտի համակարգը[32] գործում է տվյալ կոլեգիալ մարմնի ենթակայությամբ: ԿԿՀ կայքէջում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի առկայության և անցած 4 տարիների ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին: ԹԻՀԿ կողմից ԿԿՀ-ին ուղղված հարցման արդյունքներով նույնպես համապատասխան տվյալներ չեն ստացվել:

**Գործընթացների պատշաճ պահպանումը (0 միավոր)**

Փորձագետների հարցման արդյունքներով ԿԿՀ գործունեության արդյունավետության վրա նշանակալի ազդեցություն ունի ԿԿՀ ներքին կառուցվածքային և գործառութային, որոշումների կայացման գործընթացների կազմակերպման խնդիրները: Մասնավորապես խոսքը վերաբերում է նշված գործընթացներում ԿԿՀ նախագահի դերին և գործառույթներին: Ըստ փորձագետների, կառավարչական որոշ խնդիրներ առաջին հերթին կապված են կոլեգիալության սկզբունքի պահպանման և ԿԿՀ կառավարման գործող պրակտիկայի հետ: ԿԿՀ կառավարման տեսանկյունից կոլեգիալության սկզբունքն առաջացնում է որոշակի թյուրըմբռնում: Գործնականում ԿԿՀ նախագահն ունի առանցքային դեր ԿԿՀ-ում որոշումների կայացման գործում, մինչդեռ նա առավելապես պետք է գործի որպես Հանձնաժողովի ադմինիստրատիվ ղեկավար: Որոշ դեպքերում ԿԿՀ անդամների և նախագահի գործառույթներն իրավական տեսանկյունից հստակ սահմանված են, սակայն պրակտիկայում դրանք չեն պահպանվում, ինչի հիմքում ավելի շատ ընդգծվում են անձնային գործոններ և հավակնություններ:

«*Կառավարման գրագիտության, ինդիվիդուալ հավակնությունների և պրոֆեսիոնալիզմի պակասի խնդիրներ*»:

(*Փորձագետ)*

[30] «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, arlis.am/DocumentView.aspx?docid=171966:
[31] «ԿԿՀ կանոնադրությունը հաստատելու մասին» ԿԿՀ 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 02-Ա որոշում, 14-րդ կետ, 451.pdf (cpcarmenia.am)
[32] «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138980

**ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը, բողոքների արդյունքները (0 միավոր)**

ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը կազմակերպվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ծառայողական քննությունների անցկացման կարգով: Այդուհանդերձ, ԿԿՀ 2021 և 2022 թվականների ամենամյա հաղորդումները[33] ոչ մի տվյալ չեն պարունակում ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության արդյունքում կիրառված պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, միջոցների վերաբերյալ:

**Բարեվարքության ներքին մեխանիզմները (1 միավոր)**

ԿԿՀ աշխատակազմում բարեվարքության ներքին մեխանիզմներն ամբողջությամբ ձևավորված չեն: ԿԿՀ-ի կողմից դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,[34] այդ թվում՝ ԿԿՀ անդամների մասով, իսկ քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագրքի[35] առկայության պայմաններում ՔԾԳ և ԿԿՀ կայքէջերում բացակայում է որևէ տեղեկատվություն ԿԿՀ քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին:

ԿԿՀ անդամների և աշխատակիցների բարեվարքության մեխանիզմների կիրարկման տեսանկյունից գործնականում ոչ մի գործընթաց չի իրականացվել: ԹԻՀԿ պաշտոնական հարցման արդյունքներով՝ ԿԿՀ-ն նման տեղեկատվության չի տիրապետում: Փորձագետների հետ հարցազրույցի արդյունքները փաստում են, որ բացասական է համարվում այն, որ վերապատրաստումների ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները՝ որպես դասախոսներ/դասընթացավարներ, չեն ներկայացնում ԿԿՀ փորձը բարեվարքության ներքին կանոնների խախտմանն առնչվող հարցերում:

*«...Հանձնաժողովը հենց պետք ա ինքը օրինակ ծառայի մարմինների համար, դա էլ մենք չենք տեսնում էլի: Օրինակ՝ դեպքեր, նման հարց բարձրացվի, օրինակ՝ հանձնաժողովում սենց մի հատ խնդիր ա եղել, էսպիսի լուծում ա ստացել: Ինքը շատ լավ մոտեցում կարա լինի միանական մյուս պետական կառավարման համակարգի մարմինների մասով, բայց դա չեմ տեսել»:*

*(Փորձագետ)*

Որպես բացասական կողմ նշվել է նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հետ կամ համագործակցությամբ իրականացվող ԿԿՀ աշխատակիցների վերապատրաստումների մեկանգամյա բնույթը, իսկ դրանց արդյունավետության հետ կապված կան որոշ վերապահումներ:

---

[33] ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf

[34] Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանելու մասին ԿԿՀ որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/5555/about

[35] ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» N 697-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169106

ԿԿՀ անդամների բարեվարքության մեխանիզմների կիրառման տեսանկյունից խնդրահարույց է ԿԿՀ անդամների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման և այլ սահմանափակումների խախտումների քննությունն ու լուծման գործառույթների վերապահումը ԿԿՀ-ին: Հայտարարագրման մասով խնդրահարույց է ԿԿՀ աշխատակազմի քաղաքացիական ծառայող հանդիսացող և ուղղակիորեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման, կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության, կոռուպցիայի կանխարգելման այլ գործառույթների իրականացման գործում ներգրավված քաղաքացիական ծառայողներին հայտարարագրման համակարգում չներառելը:

**Առաջարկություններ**

1.3.1 ԿԿՀ կողմից մշակել ու հրապարակել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված բարեվարքության վերաբերյալ ամենամյա հաղորդումները,

1.3.2 բարեվարքության վերաբերյալ հաղորդումների պատրաստման համար մշակել կոռուպցիայի կանխարգելման ու բարեվարքության գնահատման վիճակագրական տվյալների ու ցուցանիշների համակարգ,

1.3.3 ԿԿՀ գործունեության հաշվետվողականության նկատմամբ ԱԺ վերահսկողությունը կազմակերպել ԱԺ գլխադասային մշտական հանձնաժողովի կողմից ԿԿՀ ամենամյա հաղորդումների հրապարակային քննարկմանը՝ քաղաքացիական հասարակության և բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ,

1.3.4 ԿԿՀ արտաքին վերահսկողության ապահովման նպատակով ԱԺ գլխադասային հանձնաժողովին վերապահել ԿԿՀ գործունեության գնահատման, ԿԿՀ անդամների թափուր հաստիքների համալրման ու պաշտոնավարման նպատակահարմարության, ԿԿՀ ռազմավարական պլանի և գործունեության արդյունքների մոնիտորինգի, բյուջեի նախագծի մշակման ու իրականացման խնդիրների լուծման վերաբերյալ Ազգային ժողովին առաջարկություններ ներկայացնելու լիազորությունները,

1.3.5 ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսել ԿԿՀ գործունեության հաշվեքննության իրականացման միջոցառումներ,

1.3.6 ԿԿՀ նախագահին՝ հաստատել ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանը և կազմակերպել ԿԿՀ գործունեության գնահատման ներքին աուդիտ՝ ապահովելով նշված փաստաթղթերի հրապարակայնությունը,

1.3.7 ԿԿՀ կանոնադրությամբ տարանջատել ԿԿՀ անդամների և ԿԿՀ նախագահի գործառույթներն ու լիազորությունների շրջանակը և հստակեցնել աշխատակազմի հետ փոխհարաբերությունները: Ըստ անհրաժեշտության՝ օրենսդրությամբ հստակեցնել ԿԿՀ նախագահի՝ որպես ԿԿՀ գործունեության կառավարչական որոշումներ կայացնողի և ԿԿՀ անդամների՝ որպես ԿԿՀ-ին վերապահված հիմնական գործառույթների իրականացումն ապահովողների լիազորությունների շրջանակը,

1.3.8 ԿԿՀ կայքէջում ստեղծել թեժ գիծ, ինչպես նաև օրենսդրորեն սահմանել անանուն հաղորդումների ընդունման հնարավորություն ԿԿՀ անձնակազմի գործունեության, այդ թվում բարեվարքության պահանջների խախտումների մասին դիմումների, բողոքների, առաջարկությունների ստացման և դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման վերաբերյալ,

1.3.9 քննարկել ԿԿՀ անդամների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման և այլ սահմանափակումների խախտումների քննության ու լուծման գործառույթների իրականացման մեխանիզմները,

1.3.10 ԿԿՀ անձնակազմի քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառել բարեվարքության ուսումնասիրությունների իրականացման գործիքակազմ և նրանց ներառել գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկում:

## 1.4 Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Հասանելիությունը,** որը գնահատում է բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին (ազդարարումներին, դիմումներին, բողոքներին) հասանելիության մակարդակը: Հաշվարկվում է ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոնյաների ու ծառայողներին ներկայացվող բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների (ազդարարումների, դիմումներին և բողոքների) քանակը երկրի բնակչության թվաքանակի մեջ կշռելու միջոցով (10,000 կամ 20,000 բնակչի հաշվով):
- **Արձագանքողականությունը դիմում-բողոքներին**, որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, բողոքներին արձագանքման մակարդակը: Հաշվարկվում է՝ հիմք ընդունելով բարեվարքության պահանջների տեսակների տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, բողոքների խախտումների մասնաբաժինը ԿԿՀ-ին ներկայացված հաղորդումների, դիմումների և բողոքների ընդհանուր թվի մեջ:
- **Նախաձեռնողականությունը,** որը գնահատում է, ԿԿՀ նախաձեռնությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և դրանց մասով վարույթների իրականացման ու քննության մակարդակը: Հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ԿԿՀ նախաձեռնությամբ իրականացված բարեվարքության պահանջների խախտումների դեպքերով վարույթների համամասնությունը նույն ժամանակահատվածում ԿԿՀ-ի կողմից իրականացված վարույթների ընդհանուր քանակում:
- **Բարեվարքության պահանջների պահպանության արդյունավետությունը և պրոֆեսիոնալիզմը,** որտեղ արդյունավետության մակարդակի ցուցանիշը գնահատվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննությունն ավարտելու համար ԿԿՀ-ից պահանջված միջին ժամանակով: ԿԿՀ պրոֆեսիոնալիզմը գնահատվում է բարեվարքության պահանջների խախտման դեպքերը քննելու հարցում հաջողությամբ վարույթ հարուցված գործերի թվով և պատասխանատվության ենթարկված պաշտոնատար անձանց թվով:

- **Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող՝ բարեվարքության պահանջների խախտումների հետապնդումները,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից քննված բարեվարքության պահանջների խախտումների, առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող դեպքերով հետապնդման միջին մակարդակը: Հաշվարկվում է բարեվարքության պահանջների խախտումների այն դեպքերի մասով, որոնք իրենց մեջ պարունակել են առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր և ենթակա են փոխանցման ՀՀ գլխավոր դատախազություն քրեական հետապնդում հարուցելու համար:
- **Պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների խախտումներով քննված դեպքերի և դրանց համար կիրառված պատասխանատվության միջոցների միջին մակարդակը: Բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը հաշվարկվում է ԿԿՀ-ի կողմից հարուցված վարույթների արդյունքում ԿԿՀ-ի կամ այլ իրավասու մարմնի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ ծառայողի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների քանակի հարաբերակցությամբ:
- **Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտման քննությունները,** որը գնահատում է ԿԿՀ պատրաստակամությունն «առանց վախի և բարեհաճությամբ» իրականացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտումների մասով քննություն: Հաշվարկվում է քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց բարեվարքության պահանջների խախտումների մասով իրականացված վարույթների և կիրառված պատասխանատվության միջոցների քանակով:
- **Ապօրինի հարստացման և ապօրինի ակտիվների վերականգնման գործընթացին աջակցությունը,** որը գնահատում է ԿԿՀ դերը հանրային պաշտոնյաների ու ծառայողների հայտարարագրերի վերլուծության հիման վրա ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների բացահայտման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման գործում ուսումնասիրություններին աջակցության մակարդակը: Հաշվարկվում է հայտարարագրերի հիման վրա ապօրինի հարստացման դեպքերով հարուցված քրեական գործերի քանակով, որոնցում հիմք են ընդունվել ԿԿՀ-ից ստացված հաղորդումները:
- **ԿԿՀ կատարողականի ընկալումը,** որը գնահատում է ԿԿՀ կատարողականը հանրային ընկալումներում: Հաշվարկվում է ԿԿՀ կատարողականի մակարդակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներով:

ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների[36] պահպանմանը հետևելու գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

[36] «Բարեվարքության պահանջների պահպանման» եզրույթի ներքո հասկացվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների և շահերի բախման իրավիճակների, գույքի եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրմանը ներկայացվող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները:

**Գծապատկեր 5. Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը**




Ինչպես ներկայացված է Գծապատկեր 5-ում,  առավելագույն 18 միավորից ապահովելով 5 միավոր՝ ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու մակարդակը գնահատվել 27.7%:

**Հասանելիությունը բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին/ազդարարումներին, դիմումներին, բողոքներին (0 միավոր)**

Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթի մասով ԿԿՀ հասանելիությունը տեղեկատվություն ներկայացնողներին/ազդարարողներին, դիմումներին, բողոքներին ապահովվել է Հանձնաժողովի կայքէջի, էլեկտրոնային հասցեի,[37] ֆեյսբուքյան էջի,[38] +37412777721 ընդհանուր հեռախոսահամարի կամ թղթային եղանակով  ԿԿՀ հասցեով ստացված նամակների տեսքով: Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request համապետական կապուղու միջոցով հաղորդումներին հասանելիությունն իրականացվում է ԿԿՀ էլեկտրոնային հասցեով: Այդուհանդերձ, ԿԿՀ-ն չունի թեժ գիծ, ինչպես նաև անանուն հաղորդումների ընդունման հնարավորություն: ԿԿՀ-ն չունի ուղղակի հասանելիություն ազդարարման էլեկտրոնային համակարգին, որով հնարավորություն կունենար ստանալ անանուն հաղորդումներ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ: ԹԻՀԿ-ի կողմից հարցմանը՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ azdararir.am, e-request.am, թեժ գիծ, անանուն հաղորդումների ներկայացման էլեկտրոնային հարթակով դիմումների, բողոքների, հաղորդումների

[37] info@cpcarmenia.am
[38] https://www.facebook.com/profile.php?id=100068554087037

վերաբերյալ տեղեկատվության ստացման վերաբերյալ, ԿԿՀ-ն նշել է, որ «դրանց գործնական կիրառման մեխանիզմները ևս սնանկ են, և երբևէ չեն կիրառվել»:

ԿԿՀ հասանելիությունն ազդարարումներին կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին 2021 թվականին Հայաստանի 20 հազար բնակչի հաշվով կազմել է 0.44, իսկ 2022 թվականին՝ 0.53%,[39] ինչը վկայում է ազդարարումների, դիմումների և բողոքների համար ԿԿՀ հասանելիության ցածր մակարդակի մասին:

**Արձագանքողականությունը բարեվարքության պահանջների խախտումներին վերաբերող տեղեկատվություն ներկայացնողներին, դիմումներին, բողոքներին (2 միավոր)**

ԿԿՀ-ի կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին, տեղեկատվություն ներկայացնողներին, լրատվամիջոցների հրապարակումներին արձագանքողականության քանակական գնահատականը բարձր է. այն 2021 թվականին կազմել է 83.3%, իսկ 2022 թվականին՝ 96.2%: ԿԿՀ-ին ներկայացված դիմումների, բողոքների, մամուլի հրապարակումների շարքում դիտարկված չեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ազդարարողների կողմից անանուն հաղորդումների հարթակը, քանի որ այն կիրառելի չի եղել: Այդուհանդերձ, ինչպես վկայում են հետաքննող լրագրողների հետ ֆոկուս խմբային քննարկման արդյունքները,[40] լրագրողները հիմնականում դժգոհում են ներկայացված հարցումներին կամ հրապարակված հոդվածներում արձանագրված փաստերին ԿԿՀ թերի արձագանքման մասին:

Միաժամանակ նշվում է, որ այս կամ այն պաշտոնյայի մասին բացահայտված առերևույթ անհամապատասխանություններին ԿԿՀ-ն կարող է արձագանքել ընտրանքային և խտրական մոտեցմամբ դրանց քննությունը հետաձգել, խոստանալ դրանց անդրադառնալ հետագայում և/կամ չդիտարկել:

*«...ավելի շատ ոնց որ մեր խնդիրը էն ա, որ մենք խնդիրներ ենք տեսնում, մենք գրում ենք դրա մասին, բայց դրանք չեն դառնում օրինակ հանձնաժողովի համար ուսումնասիրության լուրջ նյութեր, ու էդ ցանկը շատ մեծ ա...»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

Լրագրողների շրջանում ԿԿՀ-ից դժգոհությունը մեծ է հեռախոսազանգերին չպատասխանելու և հարցումներին օպերատիվ չարձագանքելու տեսանկյունից:

*«Հիմնական համարներն էլ չեն վերցնում, էդ էլ ա պրոբլեմ: Զանգում ես հանձնաժողով՝ վերցնող չկա: Ասենք ինչի՞ չկա, կարող ա սաղովի գործի չեն եկել...»:*

Միաժամանակ՝ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներից մեկը նշում է հակառակի մասին:

[39] ԿԿՀ հասանելիությունը տեղեկատվություն ներկայացնողներին /ազդարարողներին, դիմումներ-բողոքների ցուցանիշը հաշվարկվել է որպես ԿԿՀ-ին հասցեգրված բոլոր դիմումների, բողոքների ու հաղորդումների թվի հարաբերությունը ՀՀ բնակչության թվին՝ բազմապատկած 20,000-ով: ԿԿՀ 2021 և 2022 թվականների տարեկան հաղորդումներ, ՀՀ բնակչության թվաքանակի մասին ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի հրապարակված տվյալներ:

[40] «Սոցիես» փորձագիտական ՀԿ, Լրագրողների հետ ֆոկուս խմբային քննարկման ամփոփագիր, 2023 թ. :

*«Հայկուհի Հարությունյանին որ կանգում ես, ինքը պատասխանում ա: Օրինակ՝ ես քանի անգամ կանգել եմ, նենց չի որ բացարձակ անհասանելի են էլի...»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրողներ)*

Մասնակիցները փաստում են, որ որոշ հարցումներից հետո լրատվամիջոցների ներկայացուցիչները հրավիրվել են ԿԿՀ դեմ առ դեմ հանդիպման, սակայն ի վերջո հարցումները մնացել են անպատասխան:

Ընդհանուր առմամբ քննարկումը ցույց է տալիս, որ ԿԿՀ նախագահի կամ ներկայացուցիչների հետ հանդիպումները կազմակերպվել են որպես ԿԿՀ «պատասխան արձագանք» որոշակի դեպքերի, որոնք հարցականի տակ են դրել կառույցի կամ ղեկավարի հեղինակությունը, իսկ հանդիպումները նպատակ են ունեցել սոսկ շտկելու նման իրավիճակները»:

**Նախաձեռնողականությունը բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում (1 միավոր)**

Բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման գործում ԿԿՀ նախաձեռնողականությունը գնահատվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ԿԿՀ-ին վերապահված «Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու» լիազորության շրջանակներում[41]: Բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման առումով ԿԿՀ նախաձեռնողականության միջին մակարդակը 2021 թվականի 1.7%-ից, 2022 թվականին հասել է 6.25%, որը համապատասխանում է միջին գնահատականին:

*«...կա տպավորություն, որ ԿԿՀ-ի նախաձեռնողականությունը շատ ցածր է, այսինքն՝ հանձնաժողովն ինքը չի նախաձեռնում հայտարարագրված տվյալների ստուգում, ուսումնասիրություններ նախաձեռնվում են հիմնականում մամուլի հրապարակումների առկայության դեպքում: Մյուս կողմից՝ մամուլի ոչ բոլոր հրապարակումներն են բավարար ուշադրության արժանանում ԿԿՀ-ի կողմից: Վերջինս ևս կապվում է ԿԿՀ-ի անկախության ցածր մակարդակի հետ»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրողներ)*

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարքագծի կանոնների, շահերի բախման, նվերների ընդունման և այլ սահմանափակումների մասով 2021-2022 թվականներին ԿԿՀ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ վարույթներ չեն հարուցվել:

**Բարեվարքության պահանջների պահպանման արդյունավետություն և պրոֆեսիոնալիզմ (0 միավոր)**

Բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման գործում ԿԿՀ արդյունավետությունը և պրոֆեսիոնալիզմը գնահատվել է բարեվարքության պահանջների առանձին տեսակների խախտումների գործերի քննության միջին ժամկետի հաշվարկով:

[41] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 27, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271

«Բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննությունն ավարտելու համար ԿԿՀ-ից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան ԿԿՀ-ն հայտնել է, որ «նշված բանաձևով վերլուծություն հնարավոր չէ իրականացնել»:

ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ բարեվարքության պահանջների պահպանության արդյունավետության մակարդակի գնահատման համար վարչական վարույթների մասով հիմք է ընդունվել վարույթի առավելագույն՝ 30-օրյա ժամկետը, որն առանձին դեպքերում կարող է երկարաձգվել 10-30 օրով:[42] Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վարույթների մասով վարույթի առավելագույն ժամկետը 90 օր է:[43]

Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ ԿԿՀ-ն 2021 թվականի ընթացքում քննել և լուծել է (վարույթը եզրափակել է որոշմամբ) 26 գործով վարույթներ, իսկ թվով 16 գործի վարույթները եզրափակվել են 2022 թվականի հաշվետու տարվան հաջորդող ամիսների ընթացքում: Կարգապահական վարույթների մասով հարուցված 3 գործերով վարույթների ժամկետները պահպանվել են: Անհամատեղելիության պահանջների խախտումների վարույթների մասով 2021 թվականին մեկ վարույթի տևողությունը միջինում կազմել է 3.2 ամիս: 2022 թվականին անհամատեղելիության պահանջների խախտման մասով հարուցված 10 համապատասխան վարույթներից եզրափակվել է ընդամենը մեկ վարույթ: 2023 թվականի ընթացքում սահմանված ժամկետների պահպանմամբ եզրափակվել են 2 գործով կասեցված վարույթի նյութերը՝ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու հիմքով:

Բարեվարքության պահանջների խախտումների մյուս տեսակների մասով վարույթներ չեն իրականացվել: Ինչպես վկայում են «Հետք»[44] և «Ինֆոկոմ»[45] հետաքննող լրագրողների հրապարակումները՝ ԿԿՀ-ն ձգձգում է վարույթներ սկսելու գործընթացները անհասկանալի պատճառաբանություններով և ապագայում համալիր վերլուծություններ կատարելու վերաբերյալ խոստումներով երկարաձգում վարույթների հարուցման գործընթացները:

Փորձագետների կարծիքով ԿԿՀ-ում վարութային կարգավորումներն ամբողջական չեն:

*«Իրենց վարութային ընթացակարգերն ամբողջական չեն: Օրինակ՝ առանձնահատուկ են, բայց վարչական իրավախախտումների օրենսգրքով սահմանված նեղ ժամկետում պետք ա անեն, որը հնարավորություն չի տալիս իրանց նորմալ վարույթ անեն, ու նման հարցերը որպեսզի լինեն առանձնահատուկ, պետք ա օրենքով կարգավորվեն…»:*

*(Փորձագետ)*

Եթե հիմք ընդունենք նաև ԿԿՀ վարույթների եզրակացությունների հիման վրա կայացրած որոշումները, ապա կարող ենք պնդել, որ ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների

[42] «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 46 և 47, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165294

[43] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 32, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271

[44] Հետք, Ինչի՞ց է վախենում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Փաշինյանի հարազատներին պատասխանատվության կանչելու հարցում, 06 հունիսի, 2023 թ., https://hetq.am/hy/article/156800

[45] Ինֆոկոմ, ԿԿՀ նախագահի ընտանիքի անդամները երկու տարի հայտարարագիր չեն ներկայացրել. վարույթ չի նախաձեռնվել, 06 մայիսի, 2023 թ., https://infocom.am/hy/article/102475?fbclid=IwAR0I4gHeKlKSo1OHjPy_kNmk0KOtwb4uhFYaKX1DXABMGXSAltsAWG-7CH0

պահպանության գործում վարույթների իրականացումը արդյունավետության «ցածր» մակարդակում է:

**Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների նկատմամբ հետապնդումներ (0 միավոր)**

Բարեվարքության պահանջների՝ առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող խախտումների հետապնդման գնահատումներն իրականացվել են Հակակոռուպցիոն կոմիտեից ստացված տվյալների՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմումների հիման վրա, քրեական գործերի քննության նախաձեռնման առիթ հանդիսացած գործերի քանակով:

2021 թվականի ընթացքում հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու կամ հայտարարագրման տվյալը թաքցնելու հատկանիշներով հարուցվել է 14 գործ, որից 5-ի հարուցման առիթ են հանդիսացել ԿԿՀ-ից ստացված փաստաթղթերը: 2022 թվականին հարուցված 31 գործերից 7-ի դեպքում են հարուցման առիթ հանդիսացել Հանձնաժողովի ներկայացրած նյութերը:[46]

2021 և 2022 թվականներին ԿԿՀ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների կասկածով հաղորդումներ և դրանց հիման վրա հարուցված քրեական գործեր չեն արձանագրվել: ԿԿՀ-ի կողմից անհամատեղելիության պահանջների, նվերների ստացման և այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների խախտումների քննված դեպքերի մասով կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ տարրեր չեն արձանագրվել: Արդյունքում, ԿԿՀ-ի կողմից առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների հետապնդումների ցուցանիշը 2021 թվականին կազմել է 35.7%, իսկ 2022 թվականին՝ 22.5%, որոնք բավականին ցածր ցուցանիշներ են:

**Պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը (1 միավոր)**

Բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը գնահատվել է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքով ԿԿՀ-ին վերապահված հայտարարագրերին առնչվող իրավախախտումների վերաբերյալ պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունների մասով:[47] «Նվերներ ընդունելու կամ հաշվառելու սահմանված կարգը խախտելու» և «շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու» առումով պատասխանատվության միջոցների կիրառման գնահատումներ չեն իրականացվել, քանի որ իրավական կարգավորումները ուժի մեջ են մտել 2022 թվականի դեկտեմբերին:

ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը հաշվարկվել է կիրառված պատասխանատվության միջոցների և եզրափակված վարույթների տոկոսային հարաբերություն: Բարեվարքության պահանջների

[46] ՀՀ գլխավոր դատախազության 2021 և 2022 թվականնների կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկանք, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report1
[47] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178682

մյուս տեսակների մասով պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը գնահատվել է ԿԿՀ-ի կողմից կազմված եզրակացության հիման վրա համապատասխան իրավասու մարմնի կողմից օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակով: ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման միջին մակարդակը՝ բարեվարքության պահանջների մասով 2021 թվականի համար կազմել է 11.9%, իսկ 2022 թվականին նվազել է՝ հասնելով 8.7%-ի, որը գնահատվում է շատ ցածր:

Բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման համեմատաբար բարձր մակարդակ է ապահովվել գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրմանն առնչվող[48] խախտումների մասով, որոնց վերաբերյալ պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը 2021 թվականի 38.5%-ից 2022 թվականին հասել է 52.4%-ի: Կարգապահական վարույթների մասով[49] 2021-2022 թվականներին պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 0%, քանի որ ԿԿՀ քննության արդյունքում՝ ԲԴԽ-ն իր որոշումներով կարճել կամ մերժել է ԿԿՀ միջնորդությունները,[50] իսկ 2022 թվականին ԿԿՀ-ն է կարճել իր իսկ կողմից հարուցված կարգապահական վարույթները՝ բացառությամբ մեկ գործի, որով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճվել է ԲԴԽ-ի կողմից դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով:

Անհամատեղելիության պահանջների խախտումների մասով[51] 2021 թվականին պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը 33.3%-ից նվազել է և 2022 թվականին հասել 0%-ի: 2021 թվականին ԿԿՀ-ի կողմից հարուցված թվով 3 վարույթներից մեկ գործով ավագանու կողմից քննարկվել և ԿԿՀ-ին է ներկայացվել տեղեկատվություն առ այն, որ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով, իսկ ԲԴԽ որոշմամբ դադարեցվել են դատավորի լիազորությունները:[52] 2022 թվականին 10 համապատասխան վարույթներից եզրափակվել է մեկ վարույթ, որը հարուցվել է մարզպետի տեղակալի նկատմամբ, սակայն վերջինիս կողմից անհամատեղելիության պահանջի խախտումը գործնականում չի լուծվել:[53]

48 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

49 Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահիապան վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման հիմքով, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է ԲԴխ-ն:

50 ԲԴԽ որոշումներ, ԲԴԽ-36-Ո-Կ-13, ԲԴԽ-36-Ո-Կ-14, ԲԴԽ-38-Ո-Կ-16 :

51 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումներով Հանձնաժողովն իրականացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների առերույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ, որոնց հարուցման համար հիմք են հանդիսանում հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ հայտնաբերելու դեպքերը, լրատվամիջոցների հրապարակումները, անձանց գրավոր դիմումները,

52 ԲԴԽ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-19 որոշում, ընդունված՝ 2021 թ. հոկտեմբերի 04-ին, https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmlV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf

53 Շիրակի համայնքի ավագանու անդամների ցուցակ, http://shirak.mtad.am/community-leader-council/582/ , Շիրակի մարզպետի աշխատակակազմ, մարզպետի տեղակալ, http://shirak.mtad.am/structure/

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ ԿԿՀ-ի կողմից վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների խախտումների, էթիկայի հանձնաժողովների եզրակացության վերանայման, ազդարարման վերաբերյալ 2021-2022 թվականներին վարույթներ չեն հարուցվել և եզրակացություններ չեն ներկայացվել իրավասու մարմիններին:

**Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտման քննություններ (1 միավոր)**

ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով քննություն իրականացնելու որոշումների ընդունումը պայմանավորված է եղել ԲԴԽ անդամների, Սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների դատավորների հայտարարագրերի[54] վերլուծության օրենսդրական պահանջով, ինչպես նաև ԿԿՀ որոշմամբ,[55] որով սահմանվել է 2022 թվականի ընթացքում քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց խմբում ներառված 34 պաշտոնների՝ 95 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծության պահանջ: Ընդհանուր առմամբ, 2021 թվականին հայտարարագրմանն առնչվող խախտումների[56] մասով ԿԿՀ-ի կողմից հարուցված 42 վարչական վարույթներից 36-ը (85.7%) վերաբերել է քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որոնցից 18-ը հարուցվել են հանրային պետական պաշտոն, այդ թվում՝ ԱԺ պատգամավորի, ԲԴԽ անդամի, դատախազի, քննիչի, վարչական պաշտոն զբաղեցնող անձանց, և 18-ն էլ՝ համայնքային՝ Երևանի վարչական շրջանի ղեկավարի տեղակալի, համայնքների ղեկավարի, ավագանու անդամի, համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Վերոնշյալ հայտարարատու 2 անձանց նկատմամբ որպես նախազգուշացում կիրառվել է վարչական տույժը, իսկ 8-ի նկատմամբ՝ վարչական տուգանք՝ 200,000-ական ՀՀ դրամի չափով:

Կարգապահական վարույթների մասով հարուցվել է 3 վարույթ ԲԴԽ անդամների նատմամբ: ԲԴԽ-ն իր որոշումներով երկու գործով կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը, մեկի դեպքում միջնորդությունը մերժել է: Անհամատեղելիության պահանջների խախտումների մասով հարուցվել է 3 վարույթ: ԲԴԽ-ն, քննության առնելով ԿԿՀ՝ դատավորի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ եզրակացությունը և վարույթի նյութերը՝ դադարեցրել է պաշտոնատար անձի լիազորությունները:[57] Մեկ այլ դեպքով,[58] 2021 թվականի սեպտեմբերի 17-ին կայացված ԿԿՀ եզրակացությամբ համայնքի ավագանու կողմից քննարկվել և Հանձնաժողովին է ներկայացվել տեղեկատվություն առ այն, որ համայնքի ղեկավարի

---

[54]«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 2020 թ. մարտի 25-ին, անցումային դրույթներ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141497

[55] ԿԿՀ 2022 թ. հոկտեմբերի 19-ի թիվ 02-Լ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» որոշում, http://cpcarmenia.am/files/legislation/779.pdf

[56] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

[57] ԲԴԽ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-19 որոշում, https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf

[58] ԿԿՀ «Մարտիկ Թևոնյանի մողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ» 03/2021 եզրակացություն, ընդունված՝ 2021 թ. սեպտեմբերի 17-ին, http://cpcarmenia.am/files/legislation/502.pdf , https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf

լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով: 2022 թվականի ընթացքում ԿԿՀ-ի կողմից հարուցված 118 վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներից 15-ը հարուցվել է դատավորների նկատմամբ, 3-ը՝ Ազգային ժողովի պատգամավորների (սուբյեկտներից 2-ը վարույթի հարուցման պահին եղել են նախկին պատգամավոր), 1-ը՝ նախարարի նկատմամբ: ԱԺ նախկին պատգամավորների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի, ԱԺ մեկ պատգամավորի նկատմամբ կիրառվել է 200,000 ՀՀ դրամ վարչական տույժ: Կարգապահական վարույթների արդյունքում ԿԿՀ-ն կայացրել է վարույթը կարճելու մասին 14 որոշում: Մեկ գործով ԲԴԽ որոշմամբ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով գործը կարճվել է:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով ԿԿՀ-ի կողմից հարուցվել է թվով 10 վարույթ ԱԺ պատգամավորների, համայնքի ղեկավարի, մարզպետի և Երևանի քաղաքապետի տեղակալի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ: Հարուցված 10 վարույթներից եզրափակվել է մեկը, որը հարուցվել է մարզպետի տեղակալի նկատմամբ, որը համատեղել է համայնքի ավագանու պաշտոնը:[59] Այդուհանդերձ, ԿԿՀ եզրակացության հիման վրա առաջացած անհամատեղելիության պահանջի խախտումը գործնականում չի լուծվել:[60] Իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի առիթով Շիրակի մարզպետի նկատմամբ հարուցված վարույթի[61] արդյունքով նույնպես բարձրաստիճան պաշտոնյայի նկատմամբ պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել: 2021-2022 թվականներին քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների խախտումների, էթիկայի հանձնաժողովների եզրակացության վերանայման, ազդարարման վերաբերյալ վարույթներ չեն հարուցվել:

Արդյունքում, 2021-2022 թվականներին ԿԿՀ-ի կողմից քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված վարչական վարույթների տեսակարար կշիռը վարույթների ընդհանուր թվում 85.7%-ից նվազել և 2022 թվականին կազմել է ընդամենը 17.8%: Նման երևույթը հենց հիմք է հանդիսացել հետաքննող լրագրողների մոտ ձևավորելու կարծիք, որ ԿԿՀ-ն խուսափում է բարձրաստիճան պաշտոնատար որոշ անձանց, մասնավորապես ՀՀ վարչապետի ընտանիքի անդամների կամ նրա հետ փոխկապակցված բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով վարույթներ սկսել: Հրապարակված առանձին հոդվածներ[62] վերաբերել են անմիջապես ԿԿՀ նախագահին, որը խուսափել է իր հետ փոխկապակցված հայտարարագրման

[59] ԿԿՀ «Ալբերտ Այվազյանի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ» 01/2022 եզրակացություն, ընդունված՝ 2022 թ. սեպտեմբերի 20-ին, http://cpcarmenia.am/files/legislation/765.pdf
[60] Շիրակի համայնքի ավագանու անդամների ցուցակ, http://shirak.mtad.am/community-leader-council/582/ , Շիրակի մարզպետի աշխատակազմ, մարզպետի տեղակալ, http://shirak.mtad.am/structure/
[61] ԿԿՀ, «Իրավիճակային շահերի բածման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» N 09/2022 որոշում, ընդունված՝ 2022 թ. դեկտեմբերի 9-ին, http://cpcarmenia.am/files/legislation/891.pdf , ԿԿՀ, 1ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Հրաչյայի Բաղդասարյանի գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության մասին» 09/2022-2023 եզրակացություն, ընդունված՝ 2023 թ. ապրիլի 5-ին, http://cpcarmenia.am/files/legislation/994.pdf /ներառել գրականության ցանկում/
[62] Հետք, Ինչի՞ց է վախենում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Փաշինյանի հարազատներին պատասխանատվության կանչելու հարցում, 06 հունիսի, 2023 թ., https://hetq.am/hy/article/156800 , Ինֆոկոմ, ԿԿՀ նախագահի ընտանիքի անդամները երկու տարի հայտարարագիր չեն ներկայացրել. վարույթ չի նախաձեռնվել, 06 մայիսի, 2023 թ., https://infocom.am/hy/article/102475?fbclid=IwAR0I4gHeKlKSo1OHjPy_kNmk0KOtwb4uhFYaKX1DXABMGXSAltsAWG-7CH0

պարտականություն ունեցող ընտանիքի չափահաս անդամների նկատմամբ վարույթներ սկսել:

Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքում փաստվեց, որ ԿԿՀ-ի կողմից տրվող բարեվարքության եզրակացությունները կրում են խորհրդատվական բնույթ և համապատասխան իրավասու մարմինը կարող է հաշվի չառնել վերջինիս եզրակացությունները: Նման դեպքերը համատարած չեն, սակայն որոշ դեպքերում ԿԿՀ եզրակացությունները հաշվի չեն առնվում կամ որևէ դեր չեն ունենում:

**Ապօրինի հարստացման և ապօրինի ակտիվների վերականգնման գործընթացին աջակցություն (0 միավոր)**

Ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների հանգամանքներով պայմանավորված ԿԿՀ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված նյութերի մասով տեղեկատվությունը բացակայում է:[63] 2021 թվականին հանձնաժողովը ԲԴԽ նախկին նախագահի հայտարարագրերի վերլուծության արդյունքները և դրանց առնչվող նյութերը ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն: Ապօրինի հարստացման հոդվածով 2021 թվականին հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ԿԿՀ ներկայացմամբ ոչ մի գործ չի նախապատրաստվել,[64] իսկ 2022 թվականին ապօրինի հարստանալու (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Նշված՝ ապօրինի հարստացման հոդվածով քրեական գործի հարուցման առիթ են հանդիսացել մեկ այլ քրեական գործով նախաքննության ընթացքում առերևույթ հանցագործության մասին ստացված տվյալները:

**ԿԿՀ կատարողականի ընկալում (0 միավոր)**

ԿԿՀ կատարողականի վերաբերյալ հանրային ընկալումն առանձին ուսումնասիրություններում ու հրապարակված զեկույցներում ցույց է տալիս, որ պետական անձանց և այլ հաստատությունների համեմատ ԿԿՀ-ն առավել քիչ կոռումպացված կառույցներից է. հայաստանցիների ընդամենը 11.8%-ն է կարծում, որ այն «մեծապես կոռումպացված է», և 18.4%-ը՝ որ «որոշ չափով է կոռումպացված» (n=897): Սակայն, հարկ է հաշվի առնել, որ այս հարցին պատասխանողների 84%-ը գրեթե տեղյակ չէ ԿԿՀ գործունեության մասին:[65] ԿԿՀ գործունեությամբ լիովին բավարարված են հարցվածների 9%-ը, ավելի շուտ բավարարված՝ 25%-ը (n=1513), դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել հարցվածներ 8%-ը:[66]

[63] ԿԿՀ 2021 և 2022 թվականների տարեկան գործունեության մասին ԱԺ հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf

[64] ՀՀ գլխավոր դատախազություն, «Տեղեկանք 2021 և 2022 թվականների ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ», https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf

[65] ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, էջ 102, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

[66] Միջազգային հանրապետական ինստիտուտ, Բրեվիս, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն,2023, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/

Մեկ այլ զեկույցի[67] արդյունքներով 2022 թվականին ԿԿՀ-ի մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) հարցվածների 49%-ը, որոնց միայն 9.4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/ գործառույթների մասին: 2019 թվականին իրականացված համանման զեկույցում ԿԿՀ-ի մասին տեղյակ է եղել հարցվածների 1.1%-ը, 2021 թվականին՝ 8.4%-ը: ԿԿՀ աշխատանքն արդյունավետ է գնահատել կառույցի գործունեությանը տեղյակ հարցվածների (n=143) գրեթե 51%-ը:

ՀՀ հանրային ծառայողների շրջանում հարցման արդյունքներով,[68] չնայած հանրային ծառայողների 86%-ը լսել է ԿԿՀ գործունեության մասին, սակայն միայն 27%-ն է ծանոթ ԿԿՀ-ին և նրա գործառույթներին: Հարցվածների միայն 23%-ն է արդյունավետ գնահատել ԿԿՀ գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում:

Լրագրողների կարծիքով «ԿԿՀ-ի աշխատանքի արդյունավետությունը 1-10 սանդղակով (1 - խիստ անարդյունավետ,10-ը՝ շատ արդյունավետ) գնահատվել է համապատասխանաբար՝ 6, 3 (կամ 4), 2.4 և 2.0, որը նշանակում է որ ԿԿՀ-ի գործունեությունը ճանաչվել է հիմնականում անարդյունավետ կամ ավելի շատ անարդյունավետ:

*«Իսկ մյուս հարցը՝ թե արդյունավետությունն ինչքան եմ գնահատում, երևի 3 կամ 4: Երեքն էլ գնահատում եմ նրա համար, որ հայտարարագրերի ռեեստրը լրիվ չեն փակել էլի: Այսինքն՝ ուրիշ ինչ-որ բան չկա [ծիծաղում են]», «...էդ կառույցը չի կարողանում նույնիսկ ֆիքսի՝ քանի հոգի հայտարարագիր չի ներկայացրել, որ պիտի ներկայացներ...»:*[69]

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

Նաև մասնակիցները նշել են, որ ԿԿՀ արդյունավետությունը ցածր է կոռուպցիոն ռիսկերի վերհանման տեսանկյունից՝ չնայած վերջին շրջանում հանձնաժողովի գործունեության մեջ տեղի են ունեցել որոշակի բարելավումներ, մասնավորապես կատարելագործվել է հայտարարագրման համակարգը, շատացել են գործիքները: Հայտարարագրման համակարգի վերանայման վերաբերյալ հնչում են բացասական կարծիքներ: Կա կարծիք, որ, ընդհանուր առմամբ, հանձնաժողովն անգործության է մատնված:

*«Իրենք հիմնականում զբաղված են փաստաթուղթ ընդունելու և փաստաթուղթ հրապարակելու գործառույթով, և դա մեխանիկական աշխատանք ա, դրա համար կարելի ա մի հատ ինչ-որ IT ընկերության ասել, մի հատ հավելված սարքի և էդ հանձնաժողովը փակել»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

Որպես աշխատանքի արդյունավետության ցածր մակարդակի ցուցանիշ նշվում է նաև ԿԿՀ-ի կողմից տարվա ընթացքում սակավաթիվ հայտարարագրերի ստուգման կարողությունը:[70]

---

[67] ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, էջ 102, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

[68] ՀԲ-ի կողմից մշակված «Surveys of Public Servants: Accountability and Integrity in Public Management of Armenia». 2023, p. 26 (ԿԿՀ տրամադրած տեղեկատվության համաձայն):

[69] ԿԿՀ տեղեկացմամբ հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի ներդրմամբ նշված խնդիրը լուծվել է:

[70] «Սոցիես» փորձագիտական ՀԿ-ի կողմից հետաքննող լրագրողների հետ իրականացված ֆոկուս խմբային քննարկման ամփոփագիր:

*«Հանձնաժողովը տարվա ընթացքում պլանավորում է ստուգել ընդամենը 95 հայտարարագիր: Այսինքն, էդ ամբողջ կառույցը, որ հայտարարագրերի վերլուծության վարչությունում 12 հաստիքի տեղ ունի, 95 հայտարարագիր ա նախատեսում ստուգել, վերլուծել...»:*[71]

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

ԿԿՀ ներկա և նախկին աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքներով, ԿԿՀ աշխատանքի արդյունքները «շատ անարդյունավետ» է գնահատել նախկին աշխատակիցների 57.1%-ը, այն դեպքում, երբ ներկա աշխատակիցների 45.5%-ն այն գնահատել է «հիմնականում արդյունավետ»: Կոռուպցիայի դեմ պայքարում ԿԿՀ ներկա աշխատակիցների 54.5%-ն արդյունավետ է համարում ԿԿՀ և Դատախազության գործունեությունը, իսկ նախկին աշխատակիցները հակակոռուպցիոն բոլոր մարմինների գործունեությունը համարել են անարդյունավետ:

Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքները վկայում են, որ ԿԿՀ-ն հանրության համար բավարար չափով հասանելի չի, և այդ ուղղությամբ բավարար աշխատանք չի տարվում: Ընդհանուր առմամբ ԿԿՀ գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավական ցածր է, հանրության կապը ԿԿՀ-ի հետ գրեթե բացակայում է:

**Առաջարկություններ**

1.4.1 օրենսդրորեն ԿԿՀ-ին ապահովել ազդարարման էլեկտրոնային համակարգին հասանելիություն՝ սահմանելով բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումների ընդունման և դրանց արձագանքման կառուցակարգեր,

1.4.2 ԿԿՀ-ում ներդնել անանուն հաղորդումների ընդունման շուրջօրյա թեժ գիծ: Գործնականում կիրառելի դարձնել azdararir.am, e-request.am, թեժ գիծ, անանուն հաղորդումների ներկայացման էլեկտրոնային հարթակով դիմումների, բողոքների, հաղորդումների վերաբերյալ տեղեկատվության ստացման հնարավորությունները,

1.4.3 ԿԿՀ-ի կողմից մշակել ազդարարման վարույթների իրականացման մեթոդաբանություն, ներառյալ՝ անանուն ազդարարումների ու հաղորդումների միջոցով ստացված տվյալների վերլուծության ու վարույթների իրականացման չափորոշիչներ,

1.4.4 ԿԿՀ-ի կողմից ավարտին հասցնել «պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը) հաստատելու մասին» ԿԿՀ որոշման նախագծի մշակման աշխատանքները,[72]

---

[71] ԿԿՀ տեղեկատվությամբ հայտարարագրերի վերլուծության ցածր մակարդակը պայմանավորված է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների անբավարությամբ:

[72] «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» ԿԿՀ որոշումը ընդունված՝ 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ, http://cpcarmenia.am/files/legislation/1359.pdf

1.4.5 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման օրենսդրական նոր կարգավորումների պայմաններում գործնականում կիրառելի դարձնել շահերի բախման իրավիճակների խախտումների բացահայտման գործիքակազմերը՝ ներդնելով շահերի բախման իրավիճակների հաղորդումների և դրանց լուծման միջոցների (գրավոր և բանավոր) արձանագրման ռեեստր,

1.4.6 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նվերների ընդունման սահմանափակումների կիրառման տեսանկյունից ավարտին հասցնել նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ընթացակարգերի մշակման գործընթացները՝ ապահովելով նվերների ռեեստրի գործունեությունը և ռեեստրից տվյալների հասանելիությունը հանրությանը,[73]

1.4.7 օրենսդրորեն կանոնակարգել և մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների այլ սահմանափակումների կիրառումն ապահովող ընթացակարգերը և գործնականում կիրառելի դարձնել այլ սահմանափակումների խախտումների բացահայտման ու կառավարման գործընթացները,

1.4.8 ԿԿՀ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի, պետական ու ՏԻՄ մարմինների ու այլ կազմակերպությունների տվյալների էլեկտրոնային շտեմարանների հետ փոխգործակցելիության ապահովման արդյունքում կրճատել բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննության միջին ժամկետները,

1.4.9 ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանով, ինչպես նաև միջնաժամկետ ծախսերի ծրագրով, սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման իրատեսական առաջադրանքներ՝ այն հաշվով, որ հայտարարագրման պարտականություն ունեցող յուրաքանչյուր պաշտոնատար անձի մասով 5 տարվա ընթացքում միջին հաշվով գոնե մեկ անգամ ԿԿՀ-ի կողմից վերլուծության ենթարկվեն վերջինիս հայտարարագրերը,

1.4.10 ԿԿՀ-ի կողմից մշակել հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները: Հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությամբ սահմանել ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների բացահայտման եղանակները, առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների տարրերի արձանագրման, ինչպես նաև հայտարարագրերում կեղծ տվյալների և տվյալները թաքցնելու չափորոշիչները,

1.4.11 հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությամբ սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների բացահայտման չափորոշիչներն ու եղանակները: Միաժամանակ, նույն մեթոդաբանությամբ, որպես ռիսկային չափորոշիչ դիտարկել նաև հետաքննող լրագրողների կողմից հրապարակված նյութերն ու հաղորդումները,

1.4.12 ԿԿՀ-ի կողմից սահմանել հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկը, հայտարարագրերի ռեեստրի վարման կարգերը, այն հաշվով, որ հայտարարագրերի ռեեստրը հնարավորություն ընձեռի հասանելիություն ունենալ հայտարարատու

[73] 2023 թվականի դեկտեմբերի 22-ին մշակվել և 2024 թվականի հունվարի մեկից ուժի մեջ է մտել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» ԿԿՀ որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188181 Գործառույթը պատշաճ իրականացնելու նպատակով նվերների հաշվառման թվային Ռեեստրը դեռևս գործարկված չէ, մշակվել և ներդրվել է Էլ. ձևաթուղթ՝ https://shorturl.at/fgmBR

պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների բոլոր տարիների հայտարարագրերին մեկ պատուհանի միջոցով: Միաժամանակ, հայտարարագրերի ռեեստրը պետք է ապահովի հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների մասով տվյալների ստացումը, հնարավորություն տա ռեեստրից առանձին ռիսկային չափորոշիչներով դուրս բերելու հայտարարագրեր և/կամ կատարելու ընտրանք,

1.4.13 օրենսդրությամբ վերանայել ԿԿՀ-ի կողմից վարույթների իրականացման ընթացակարգերը՝ սահմանելով դրանց իրականացման խելամիտ ժամկետներ, բարեվարքության պահանջների խախտումների գնահատման չափանիշներ:

## 1.5 Կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման չափման գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Հատկացված բյուջեն,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից հանրային իրազեկմանը, հաղորդակցմանը և կանխարգելմանը հատկացված գործառնական ծախսերի միջին մասնաբաժինը:
- **Կանխարգելման ռազմավարական ծրագրումը/պլանավորումը,** որը գնահատում է ԿԿՀ կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրերի համապարփակությունը և դրանց իրականացումը:
- **Հակակոռուպցիոն կրթությունը և զարգացումը,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից նախաձեռնված հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման նախաձեռնությունները: Հաշվարկվում է ԿԿ կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, ԿԿՀ այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և հանրային պաշտոն զբաղեցրած և ծառայողների վերապատրաստման դասընթացների քանակը և դրանց մասնակցած պաշտոնյաների թիվը:
- **Կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրությունները,** որը գնահատում է կոռուպցիայի կանխարգելման նպատակով ԿԿՀ-ի կողմից պետական և ՏԻՄ մարմիններում իրականացված կազմակերպական ընթացակարգերի, համակարգերի, հնարավորությունների և ռիսկերի ուսումնասիրությունները:
- **Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները,** որը գնահատում է ԿԿՀ գործունեության ընթացքում վեր հանված և ձևակերպված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների քանակը: Հաշվարկվում է կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման, բացերի և թերությունների շտկման և կոռուպցիայի դեմ պայքարի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք հայտնելու նպատակով ԿԿՀ-ի կողմից պատրաստված առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) քանակը և դրանց տեսակարար կշիռն իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների (եզրակացություններ, վարույթների քանակ և այլն) թվում:

- **Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունները,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտման նպատակով կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները:
- **Տարածումը և քարոզարշավները,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման ծրագրերով սահմանված տեղեկությունների տարածման տեսակը, քարոզարշավների կազմակերպման միջոցով կոռուպցիայի կանխարգելման ուղերձի տարածման մակարդակը:
- **Առցանց հաղորդակցությունը,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցիալական ցանցերի օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար:
- **Կուսակցությունների ֆինանսական գործունեության և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողությունը,** որը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվություններին «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանմանը հետևելու մակարդակը: Կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները ԿԿՀ-ին ներկայացնելու ժամկետների պահպանումը, առդիտ անցած հաշվետվությունների թիվը, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունների առկայության, ԿԿՀ-ի կողմից սահմանված պահանջների խախտումների համար կիրառված պատասխանատվության միջոցները:

ԿԿՀ-ի կողմից կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ապահովման գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 6. Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ապահովումը**



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 6-ում, առավելագույն 18 միավորից ապահովելով 4-ը՝ ԿԿՀ կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման մակարդակը գնահատվել է 22.0%:

**Հատկացված բյուջե (0 միավոր)**

ՀՀ պետական բյուջեով ԿԿՀ հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ԿԿՀ-ի համար 2020-2021 թվականներին պլանավորված 10,254.0 հազ. դրամ ծախսերը չեն օգտագործվել, իսկ 2022 թվականի համար նման հատկացումներ չեն կատարվել:

**ԿԿՀ կանխարգելման ռազմավարական ծրագրավորում/պլանավորումը (0 միավոր)**

Կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մասով ԿԿՀ գործունեությունը միտված է եղել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով սահմանված ԿԿՀ-ին վերապահված գործողությունների իրականացմանը, ՀՀ պետական մարմինների կողմից հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների և առաջարկությունների ներկայացմանը:[74] Այդուհանդերձ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով վերապահված՝ «մշակում է կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնում է Կառավարություն» լիազորությունը չի իրականացվել, և հանձնաժողովի կայքէջում բացակայում են նման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և դրա իրականացման մոնիտորինգի զեկույցները:[75]

**Հակակոռուպցիոն կրթություն և զարգացում (0 միավոր)**

Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման մասով ԿԿՀ-ի կողմից 2021 թվականին իրականացվել է հայաստանյան 15 կազմակերպությունների կողմից մատուցվող հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ուսումնասիրություն, իսկ 2022 թվականին ԵՄ թվինինգ ծրագրի «կրթական ծրագրեր» բաղադրիչի մասով հավաքագրվել է տեղեկատվություն, վերլուծվել են թիրախային խմբերի վերապատրաստման կարիքները, իրականացվել են քննարկումներ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության թեմաներով ոչ ֆորմալ հակակոռուպցիոն ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ների ներկայացուցիչների և փորձագետների հետ:

ԿԿՀ-ի կողմից պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու առումով 2022 թվականին կազմակերպվել է պետական կառավարման համակարգի ավելի քան 60 մարմինների՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնակցությամբ աշխատաժողով «Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով:[76] Հակակոռուպցիոն կրթական

[74] ԿԿՀ-ի 2021 և 2022 թվականների հաշվետվություններ, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf
[75] http://cpcarmenia.am/hy/strategy/
[76] ԿԿՀ, Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/01/14/2022-01-14

ծրագրերի իրականացման համար ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր ԿԿՀ-ի կողմից չեն մշակվել:

Փորձագետների կարծիքով հակակոռուպցիոն կրթական ծրագրերի առումով ներկա պահին ԿԿՀ-ի համար առաջնային մարտահրավերներ են վերապատրաստման ծրագրերի/մոդուլների մշակումը, գործողների վերանայումը, մեթոդական ուղեցույցների մշակումը և կայքի թարմացումը վերջիններիս մասին տեղեկատվությամբ: Նրանք կարևորում են, որ ԿԿՀ-ն այժմ կենտրոնանա և ռեսուրսներ տրամադրի իրազեկման և կրթական գործառույթների իրականացման համար:

ԿԿՀ-ում կրթական ծրագրերի մշակման ընթացակարգերը նույնպես բավարար հստակեցված և սահմանված չեն: Ընդ որում՝ սա վերաբերում է թե՛ հանրային իրազեկման, կրթական գործընթացներին և թե՛ քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման մոդուլներին:

**Կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրություններ (0 միավոր)**

ԿԿՀ-ի կողմից կազմակերպություններում, պետական և ՏԻՄ մարմիններում, կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ուսումնասիրություններ չեն կատարվել: Պետական և ՏԻՄ մարմիններում, հանրային կառավարման առանձին ոլորտներում, կոռուպցիոն ռիսկերի հիման վրա հակակոռուպցիոն ուսումնասիրությունների ու ծրագրերի մշակման գործառույթ ուղղակիորեն սահմանված չէ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի հոդված 24-ի 1-ին մասի կետ 12-ում, սահմանված է, որ ԿԿՀ-ն «իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ՝ իրավասու մարմին»: Այդ իսկ պատճառով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների վերանայված ծրագրում «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում» ռազմավարական միջոցառման ներքո նախատեսվել էր «Մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգ և ներկայացնել Կառավարության հաստատմանը» ակնկալվող արդյունքը:[77] Կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը գտնվում է լրամշակման փուլում:[78]

**Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ (2 միավոր)**

ԿԿՀ-ն լիազորված է ներկայացնել առաջարկություններ և կարծիք կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև իր գործունեության ընթացքում վեր հանված կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկման վերաբերյալ: 2021 թվականին այլ

[77] ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1351-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168042

[78] ՀՀ արդարադատության նախարարություն «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույց», https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf

պետական մարմինների կողմից շրջանառվող թվով 4 օրենսդրական փոփոխությունների փաթեթների վերաբերյալ ԿԿՀ-ն ներկայացրել է 37 առաջարկություն և գրավոր դիրքորոշում, իսկ 2022 թվականին՝ 11 իրավական ակտերի նախագծերի ավելի քան 41 առաջարկություններ: Հանձնաժողովի կողմից ընդունվել է 8 իրավական ակտ, որից 6-ը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն են:

ԿԿՀ գործունեության ընթացքում վեր հանված խնդրահարույց կարգավորումների, օրենսդրական բացերի վերացմանն ուղղված օրենսդրական ակտերի մշակման աշխատանքների մասով մշակվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների, կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման, կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու նպատակով հայեցակարգեր և օրենսդրական նոր կարգավորումների վերաբերյալ առաջարկություններ:[79] Վերոնշյալ առաջարկությունները բխում են ԿԿՀ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործառույթից, ունեն համակարգային բնույթ և հայեցակարգային նոր լուծումներ են առաջարկում հանրային ծառայողների բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման նոր գործիքակազմերի ու դրանց կառուցակարգերի մշակման ու կիրառման գործում:

**Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտություններ (0 միավոր)**

Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունները հիմք են հանդիսանում պետական և ՏԻՄ մարմիններում, ինչպես նաև առանձին կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման, ինչպես նաև կոռուպցիայի առանձին տեսակների, գործոնների բացահայտման համար:

2021 և 2022 թվականներին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, պետական այլ գերատեսչությունների, ՀԲ և ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի համագործակցության շրջանակներում կազմակերպվել է 2 հանրային կարծիքի վերաբերյալ ուսումնասիրության իրականացում, որոնցից «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունն»[80] իրականացվել է 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին, իսկ «Հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցումը՝ 2022 թվականին:[81] Այլ հետազոտություններ չեն պատվիրվել կամ անցկացվել:

ԿԿՀ-ի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու

[79] ԿԿՀ, Հաղորդում 2020-2021 թվականների գործունեության վերաբերյալ, 2022 թ., http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf, ԿԿՀ, 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, 2023 թ., http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf

[80] ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

[81] ԿԿՀ, 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, 2023 թ., http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf ԿԿՀ դիտարկմամբ դեռևս չի ստացվել ՀԲ «Հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ» հետազոտության արդյունքները:

ուսումնասիրությունների օգտագործման առումով մշակված չէ դրանց իրականացման հետագա գործողությունների ծրագիր:

**Տարածում և քարոզարշավներ (1 միավոր)**

Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկության բարձրացման ծրագրերի մշակման ու միջոցառումների իրականացման լիազորությունների շրջանակում ԿԿՀ-ի կողմից 2022 թվականին իրականացվել է 2 ծրագիր, որոնցով սահմանվել է 12 իրազեկման միջոցառում բարեվարքության հարցերով կազմակերպիչների, մանկավարժների և ծնողների շրջանում իրականացնելու համար: Պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով ավելի քան 60 կազմակերպիչների համար իրականացվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով իրազեկման միջոցառում: «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ 5 մարզերի 33 ուսումնական հաստատություններից 131 մանկավարժների և ծնողների, իսկ Երևանում՝ 6 ուսումնական հաստատություններից 141 մասնակիցների համար: Ընդհանուր առմամբ, 2022 թվականին ԿԿՀ-ի կողմից իրականացվել է իրազեկման 11 հանդիպումներ, որոնց մասնակցել են 272 մանկավարժ և ծնող:

Հանրային իրազեկության բարձրացման հակակոռուպցիոն ծրագրերի մասով գերակշռել են ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ իրականացված իրազեկման միջոցառումները: Միաժամանակ, ԿԿՀ նախաձեռնությամբ հանձնաժողովի գործառույթների և առկա թափուր աշխատատեղերի մասին իրազեկման երկու հանդիպում է տեղի ունեցել ուսանողների հետ: Մասնակիցների քանակի մասին տվյալներ առկա չեն:

ՔՀԿ-ների նախաձեռնությամբ ԿԿՀ-ում կազմակերպվել են ճանաչողական այցեր հակակոռուպցիոն դպրոցների ունկնդիրների, ինչպես նաև Վանաձորի, Ալավերդու բուհերի և քոլեջների, Բերդի պետական բազմագործառութային քոլեջի, Պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի տեխնոլոգիական քոլեջի մանկավարժների և ուսանողների մասնակցությամբ:[82] Այցելությունների մասնակիցների քանակի մասին տեղեկատվությունը նույնպես բացակայում է:

ԿԿՀ-ի կողմից որպես իրազեկման միջոցառումներ (ծրագրեր) են համարվել նաև միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպված աշխատաժողովները, աշխատանքային թեմատիկ քննարկումները: Իրազեկման միջոցառում է ներկայացված նույնիսկ ՀԲ օժանդակությամբ «Հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների ու դրանց ընկալումների վերաբերյալ» հարցախույզի անցկացումը, ինչպես նաև ՀՌԿԿ-ի կողմից իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը»:[83] Այդուհանդերձ, նշված միջոցառումները չեն հանդիսացել նախօրոք ծրագրավորված ԿԿՀ կոռուպցիայի

[82] ԿԿՀ, Վանաձորի բուհերի և քոլեջների մի խումբ ուսանողներ հյուրընկալվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/04/21/2022-04-21/, ՀՀ Լոռու մարզից մի խումբ երիտասարդներ հյուրընկալվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/10/17/2022-10-17/, Հանձնաժողովը հյուրընկալել է Բերդի պետական բազմագործառութային քոլեջի ուսանողների և մանկավարժների. ներկայացվել է կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմը, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/11/18/2022-11-18-1/, Պոլիտեխնիկական համալսարանի մի խումբ ուսանողների ներկայացվել է մեր երկրում կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքակազմերը, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/11/04/2022-11-04/

[83] ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության մասին հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf

կանխարգելման և իրազեկման բարձրացման միջոցառումների ծրագրի մաս և դրանց արդյունքների մոնիտորինգ ու գնահատում չի իրականացվել: Նշված միջոցառումներն առավելապես իրականացվել են դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ, կրել են իրավիճակային բնույթ և նպատակ են ունեցել բացահայտելու առանձին խմբերի կողմից կոռուպցիայի ընկալումներն ու իրազեկվածության խնդիրները: Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության տարածման և հանրությանն իրազեկման քարոզարշավների կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

ԿԿՀ-ի մասին հանրության տեղեկացվածության ցածր մակարդակն առաջին հերթին պայմանավորված է ԿԿՀ-ի կողմից տեղեկատվության տարածման, հանրության իրազեկման և կրթական աշխատանքների պակասով: Տեղեկատվության տարածման միջոցառումներ և քարոզարշավներ հանձնաժողովը չի իրականացնում:

Փորձագետները փաստում են, որ, ընդհանուր առմամբ, հանրային իրազեկման տեսանկյունից հանձնաժողովի աշխատանքն անարդյունավետ է: Հանրային իրազեկման և հանրության հետ հաղորդակցության խնդիրների հիմքում նրանք տեսնում են ԿԿՀ-ում հաղորդակցության մասնագետների պրոֆեսիոնալիզմի պակասը, ինչպես նաև ԿԿՀ դերի սահմանման և ինքնաընկալման հետ կապված խնդիրները:

*«ԿԿՀ-ում հստակ չեն պատկերացնում ինչպես պետք է կազմակերպել հանրային իրազեկում՝ ԿԿՀ-ում առկա են փորձագիտության խնդիրներ, ուրվագծվում է նաև կանխարգելման փորձագիտության պակասը*: *Համագործակցությունը մեդիայի հետ հնարավորություն կտար ԿԿՀ-ին տարածել հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ ինֆորմացիա: Սակայն, նման քայլեր և նման համագործակցություն ԿԿՀ-ն չի իրականացնում*:

*(Փորձագետ)*

**Առցանց հաղորդակցություն (1 միավոր)**

Կոռուպցիայի կանխարգելման տեղեկատվության տարածման և հանրության շրջանում առավել տարածելի դարձնելու հիմնական գործիքը ԿԿՀ պաշտոնական ինտերնետային կայքն է,[84] որում պարբերաբար տեղադրվում են կառույցի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2022 թվականին 2021 թվականի համեմատ ավելի քան կրկնակի աճել է հրապարակումների քանակը՝ 60-ից հասնելով 140-ի: Նույնքան անգամ ավելացել է ԿԿՀ անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպված հարցազրույցների թիվը: Գործարկվել է ԿԿՀ ֆեյսբուքյան էջը, որը ունի մոտ 2,200 հետևորդ: ԿԿՀ կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ ակտիվ հղումներով:

ԿԿՀ պաշտոնական կայքում[85] սոցիալական ցանցերի էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Սակայն կայքի բոլոր՝ «թվիթեր», «լինքդին» և «ֆեյսբուք» հղումները, տանում են ֆեյսբուքյան էջ:

[84] www.cpcarmenia.am

[85] ԿԿՀ տեղեկացմամբ մշակվում է Հանձնաժողովի նոր կայք: Բոլոր բարձրաձայնված խնդիրները քարտեզագրվել են և ներկայացվել կայքը նախագծող ընկերությանը:

ԿԿՀ կայքում հրապարակված են մարմնի կառուցվածքը, գործառույթները, լիազորությունները, կանոնադրությունը, ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները, գործունեության առնչվող նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքներ, որոշումներ, հրամաններ, կարգադրությունները, սակայն դրանք խմբավորված չեն ըստ թեմատիկ ոլորտների ու ուղղությունների:

Կայքի «Կազմակերպության կառուցվածքը» բաժնում միայն ներկայացված են ԿԿՀ նախագահի ու անդամների վերաբերյալ տեղեկատվությունը: Բացակայում են աշխատակազմի աշխատակիցների կոնտակտային տվյալները: Դատարկ է «Ռազմավարություն» բաժինը, որտեղ կարող էին տեղադրված լինել ԿԿՀ գործունեության ծրագիրը, նախորդ և ներկա հակակոռուպցիոն ռազմավարությունները, ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների ամենամյա աշխատանքային պլանները, դրանց կատարողականները: ԿԿՀ պաշտոնական կայքում առկա չեն հայտարարագրերի, նվերների, բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ կայացրած որոշումների առանձնացված բաժիններ: Հանձնաժողովի կայքը կառուցված է հայտարարագրման «կոճակի» արժևորման տրամաբանությամբ: «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում նոր հայտարարագրերի որոնումն իրականացվում է պաշտոնատար անձի «Անուն, Ազգանուն Հայրանուն», «Պաշտոն», «Տարի», «Խումբ», «Հայտարարատուի տեսակ», «Հայտարարագրի տեսակ», «Մարմնի անվանում» ընդլայնված հայտանիշներով: «Հայտարարագրերի ռեեստր»-ն օգտվողների համար դեռևս մատչելի չէ ռիսկային չափանիշներով հայտարարագրերի ընտրության, ինչպես նաև մեկ պատուհանում պաշտոնատար անձի ու նրա ընտանիքի անդամների բոլոր հայտարարագրերը տեսնելու ու հասանելիություն ունենալու հնարավորությամբ: Ռեեստրը չունի տվյալների ամբողջական արտահանման, այլ տվյալների և համակարգերի հետ փոխգործելիության ապահովման, ինչպես նաև՝ թվայնացված վերլուծության հնարավորություն:[86]

Կայքի կառուցվածքային բաժիններում հրապարակվող փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք ներկայացվում են միայն PDF ձևաչափով, չունեն պատճենելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկատվությունն առկա չէ այլընտրանքային ձևաչափերով: Առկա չէ տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիք:

Կայքում չի գործում որոնման համակարգը: Առկա չէ տեղեկատվություն, խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները բացակայում են: Բացակայում են նաև ստացված հարցումների վերաբերյալ ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների:

Կայքում հրապարակված չէ տեղեկատվություն քաղաքացիների ներգրավման, հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր, քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին տեղեկատվություն: Միաժամանակ՝

[86] ԿԿՀ տեղեկացմամբ նշված խնդիրները գտնվում են իրականացման փուլում և ներառված են հայտարարագրման էլեկտրոնային համակարգի բարելավման ծրագրում:

կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «Հայտարարություններ» ընդհանուր բաժնում: Առանձին բաժնով հրապարակված չեն մարմնի բյուջեն և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները: Առկա չէ ազդարարման առանձնացված պատուհան: Հայտարարություններ բաժնում ազդարարման կարգի մասին տեղեկատվությունը հին է:[87] Կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում ներկայացված են միայն հայտարարագրման համակարգի վերաբերյալ հարցեր: ԿԿՀ այլ գործառույթների և կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերի մասին տեղեկատվություն առկա չէ: ԿԿՀ-ի կողմից մշակված ուղեցույցները տեսանելի և օգտագործողին հարմար դաշտերում չեն գտնվում:

Ընդհանուր առմամբ, ԿԿՀ կայքն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ ունի բարելավման կարիք:

Լրագրողները ԿԿՀ-ի մասին լուսաբանումներ կատարելու համար հիմնականում օգտվում են կայքից, որոշ դեպքերում կատարում են տեղեկատվության գրավոր հարցումներ, որոշ դեպքերում էլ փորձում են բանավոր կերպով ստանալ իրենց հարցերի պատասխանները: Ընդհանուր դիտարկումն այն է, որ ԿԿՀ-ն չունի մամուլի հետ աշխատանքի գծով որևէ պատասխանատու աշխատակից: Չկա որևէ անձ, որը պարզաբանումներ կտար լրագրողների մոտ ծագող, մասնավորապես հայտարարագրերի հետ կապված հարցերին:[88]

*«Իսկ ամենակարևորը՝ մամուլի խոսնակ չունեն… Մենք կանգում ենք օրինակ էնտեղ հայտարարագրերի վերլուծության բաժին ունեն, էդ բաժնի պետին: Պատասխանում ա, հետո չգիտի՝ էդ իրա հայտարարագրերը վերլուծի, թե՞ մեր հարցերին պատասխանի: Էդ առումով հաղորդակցությունը շատ վատ ա…»:*

*(Ֆոկուս խմբի մասնակից լրագրող)*

Փորձագետների կարծիքով ԿԿՀ առցանց հաղորդակցության տեսանկյունից առկա են բացեր: Մասնավորապես ԿԿՀ կայքը բավարար չափով ինֆորմատիվ չէ: Նշվում է, որ ԿԿՀ կայքում հստակ չեն տարբեր շահագրգիռ խմբերի համար անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու/ստանալու եղանակներն ու մեխանիզմները: Խնդիրներ կան որոնողական մեխանիզմների հետ կապված. դրանք բավարար չափով ինֆորմատիվ և հարմար չեն: ԿԿՀ նիստերի արձանագրությունները կայքում բացակայում են. դրանք պետք է պարտադիր տեղադրված լինեն:

**Կուսակցությունների ֆինանսական գործունեության և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողություն (0 միավոր)**

Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեությունը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և

[87] ԿԿՀ, Ազդարարում, http://cpcarmenia.am/hy/notification/
[88] «Սոցիես» փորձագիտական ՀԿ, Լրագրողների հետ ֆոկուս խմբային քննարկման ամփոփագիր, , 2023 թ.:

դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողության իրականացումը ԿԿՀ-ին վերապահվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով, 2022 թվականի հունվարից:[89] Նշված գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով ԿԿՀ-ի կողմից հաստատվել են կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը,[90] հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև կուսակցության տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը, սահմանվել են աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմավորման կարգը և գործառույթները,[91] կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը,[92] կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:[93]

ՀՀ-ում 2022 թվականին գրանցված 115 կուսակցությունից[94] միայն 55-ից է ստացվել աուդիտի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, ինչի հիման վրա դուրս է բերվել 2022 թվականին աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկը, որը ներառել է 11 կուսակցություն:[95] Աուդիտի գործընթացը փաստացի ավարտին է հասցվել միայն 2022 թվականի հոկտեմբերի 15-ին և ԿԿՀ-ին է ներկայացվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների 11 աուդիտորական եզրակացություն:[96]

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում պարզվել է, որ «Սահմանադրական օրենքի կիրառելիության հետ կապված առկա են որոշակի անհամապատասխանություններ, կիրառվող հասկացությունների ոչ հստակություն, կիրառման ենթակա հարցերում՝ օրենսդրական բացեր, ինչպես նաև իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ»: Արդյունքում, 2022 թվականին կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները ԿԿՀ-ին ներկայացնելու ժամկետների պահպանման, աուդիտ անցած հաշվետվությունների, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունների

89 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242

90 ԿԿՀ «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 04-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հուլիսի 22-ին, arlis.am/DocumentView.aspx?docid=166518

91 «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշում, arlis.am/DocumentView.aspx?DocID=164524

92 «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշում, arlis.am/DocumentView.aspx?DocID=164739

93 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԿԿՀ 2022 թվականի հուլիսի 29-ի N 05-Ն որոշում, arlis.am/DocumentView.aspx?DocID=166673

94 ԿԿՀ, Հանրության համար կուսակցությունները պետք է լինեն հնարավորինս թափանցիկ և հաշվետու. սա Հանձնաժողովի նպատակներից է, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/04/22/2022-04-22-1/

95 ԿԿՀ, 11 կուսակցությունների՝ 2021 թվականի տարեկան հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, http://cpcarmenia.am/hy/news/item/2022/06/29/2022-06-29/

96 ԿԿՀ, 2022 թվականիգործունեության մասին հաղորդում, 2023 թ., http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf:

առկայության մասով ԿԿՀ-ի կողմից օրենքով սահմանված պահանջների խախտումների համար չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ: Ավելին, որպես բացառություն, առանց «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման, ՀՀ կառավարությունը կուսակցություններին հատկացրել է նպատակային ֆինանսավորում:[97]

**Առաջարկություններ**

1.5.1 ԿԿՀ-ի կողմից մշակել կոռուպցիայի կանխարգելման առանձին ոլորտային ծրագրեր և դրանք տեղակայել ԿԿՀ կայքում,

1.5.2 ԿԿՀ-ի կողմից մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների, պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների անդամների համար մասնագիտական զարգացման վերապատրաստման ծրագրեր և ներկայացնել իրավասու մարմիններին դրանց իրականացումն ապահովելու համար,

1.5.3 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների, ինչպես նաև կրթական հաստատությունների հակակոռուպցիոն ծրագրեր իրականացնողների համար մշակել ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր,

1.5.4 ԿԿՀ-ի և մի շարք բուհերի հետ կնքված համագործակցության հուշագրերի շրջանակներում, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման մասով օժանդակել բուհերում հակակոռուպցիոն կրթական մագիստրոսական կամ բակալավրիատի կրթական ծրագրի մշակմանը,

1.5.5 կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգի հիման վրա օրենսդրորեն կանոնակարգել պետական և ՏԻՄ մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակման գործընթացները՝ ԿԿՀ-ին վերապահելով կոռուպցիոն ռիսկերի հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանության հաստատման, առաջնահերթությունների սահմանման և համակարգման գործառույթները,

1.5.6 կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացներում օրենսդրորեն ԿԿՀ-ի համար նախատեսել նաև իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման գործիքակազմի մշակման ու ներդրման պատասխանատվության հարցը,

1.5.7 կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում օրենսդրորեն նախատեսել կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունների իրականացման պատվիրատուի գործառույթները ԿԿՀ-ին վերապահելու հարցը՝ ապահովելով վերջինիս կողմից հակակոռուպցիոն հետազոտությունների արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրերի մշակումը և դրանց հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա մշակված հակակոռուպցիոն ծրագրերում փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն իրավասու մարմիններին,

1.5.8 հիմք ընդունելով կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունների արդյունքները՝ ԿԿՀ-ի կողմից մշակել հակակոռուպցիոն հարցերով հանրային իրազեկման բարձրացման միջնաժամկետ ծրագիր՝ թիրախավորելով ինչպես հանրային ոլորտի ծառայողներին,

[97] Նույն տեղում:

այնպես էլ՝ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից առավել խոցելի խմբերին ու հանրության շերտերին,

1.5.9 հակակոռուպցիոն իրազեկման ծրագրերի իրականացումը կազմակերպել ինչպես դոնոր աջակցության միջոցներով, այնպես էլ ՀՀ պետական ֆինանսավորմամբ, ինչը հնարավորություն կտա ընդլայնելու իրազեկման թիրախներն ու ոլորտները,

1.5.10 մշակել ԿԿՀ հանրային իրազեկման և տեղեկատվության տարածման ծրագիր, որի շրջանակներում, նախատեսել ԿԿՀ դերի սահմանման և ինքնաընկալման հետ կապված հարցերը, ԶԼՄ-ների (մեդիա) հետ համագործակցության ուղիները, ԿԿՀ հաղորդակցման ոլորտում աշխատակիցների փորձագիտական կարողությունների զարգացումը, ինչպես նաև քարոզարշավների կազմակերպման միջոցառումների իրականացումը,

1.5.11 ԿԿՀ հաստիքացուցակում նախատեսել հասարակայնության հետ կապերի կամ մամուլի խոսնակի հաստիք,

1.5.12 վերակազմավորել ԿԿՀ կայքէջը՝ իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ, մասնավորապես՝

- ԿԿՀ գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքները, որոշումներ, հրամանները, կարգադրությունները, հայտարարագրերի, բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ կայացրած որոշումները, մշակված ուղեցույցներն ու մեթոդական հրահանգները, կրթական ու իրազեկման ծրագրերը նպատակահարմար է խմբավորել՝ ըստ թեմատիկ ոլորտների, ուղղությունների առանձին բաժինների, իսկ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը՝ համալրել ԿԿՀ այլ գործառույթներով պայմանավորված տեղեկատվությամբ,
- առանձին բաժիններով հրապարակել ԿԿՀ աշխատակազմի աշխատակիցների կոնտակտային տվյալները, գործունեության ամենամյա ծրագիրը, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլանները, դրանց կատարողականները, մարմնի բյուջեն և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները, թափուր աշխատատեղերի հայտարարությունները, ազդարարման կարգի ու պատասխանատուի վերաբերյալ տվյալները,
- «Հայտարարագրերի ռեեստր»-ը օգտվողների համար դարձնել մատչելի՝ ապահովելով ռիսկային չափանիշներով հայտարարագրերի ընտրության, տվյալների ամբողջական արտահանման, այլ տվյալների և համակարգերի հետ փոխգործելիության, թվայնացված վերլուծության, ինչպես նաև՝ մեկ պատուհանում պաշտոնատար անձի ու նրա ընտանիքի անդամների բոլոր հայտարարագրերը տեսնելու ու հասանելիություն ունենալու հնարավորությամբ,
- կայքի կառուցվածքային բաժիններում հրապարակվող փաստաթղթերը ներկայացնել բաց տվյալների սկզբունքներին համապատասխանող ձևաչափով՝ դրանք դարձնել մեքենայաընթեռնելի և մատչելի՝ պատճենելու հնարավորությամբ, կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը, կայքի որոնման համակարգը դարձնել գործունակ:
- Տեղադրել ԿԿՀ-ից տեղեկատվություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգը, հարցման օրինակելի ձևը, դրա լրացման վերաբերյալ ցուցումները, ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները,

- հրապարակել տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին, հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ, ստեղծել դաշտեր քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու համար:

1.5.13 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ ԿԿՀ-ին ապահովել կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները, կուսակցությունների հաշվետվությունների աուդիտի ենթարկման, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունները օրենսդրորեն սահմանված ժամկետներում ներկայացման օրենսդրական պահանջը:

## 1.6 Համագործակցություն և արտաքին հարաբերություններ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից համագործակցություն և արտաքին հարաբերությունների չափման գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները.

- **Վստահությունը կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ,** որը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ կառավարությունը ԿԿՀ-ին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիան կանխարգելելու համար: Գնահատման համար հիմք են ընդունվել հանրության շրջանում հարցումները, նշված թեմայով հետազոտությունների արդյունքները, ՔՀԿ և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցները:
- **Համագործակցությունը բարեվարքությամբ զբաղվող այլ մարմինների հետ,** որը գնահատում է կոռուպցիայի կանխարգելման գործընթացում ԿԿՀ, պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների և այլ մարմինների հետ փոխհարաբերությունները:
- **Համագործակցությունը ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ,** որը գնահատում է կոռուպցիայի կանխարգելման, գործունեության հանրայնացման առումով ԿԿՀ և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների միջև գործակցությունը:
- **Միջազգային հակակոռուպցիոն ցանցերը,** որը գնահատում է ԿԿՀ մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և դրանց մասնակցության (ներգրավվածության) աստիճանը:
- **Համագործակցությունը այլ երկրների հետ,** որը գնահատում է ԿԿՀ գործակցությունն այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ համատեղ ծրագրերի, տրամադրված փորձագիտական օժանդակության, տեղեկատվության ու փորձի փոխանակման տեսանկյունից:

- **Հասանելիությունը մարգինալ խմբերին,** որը գնահատում է ԿԿՀ արձագանքողականությունը և հասանելիությունը խոցելի խմբերի կարիքներին: Դիտարկում է ըստ մարգինալացված (խոցելի) խմբերի ագրեգացված տվյալների մոնիտորինգի ընթացակարգերի առկայությունը այդ տվյալների օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման և իրազեկման ծրագրերի մշակման ու հանրայնացման համար:

ԿԿՀ համագործակցության և արտաքին հարաբերությունների գնահատման արդյունքներն ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 7. Համագործակցության և արտաքին հարաբերությունների ապահովումը**




Ինչպես ներկայացված է Գծապատկեր 7-ում, առավելագույն 12 միավորից ապահովելով 5-ը՝ ԿԿՀ համագործակցության և արտաքին հարաբերությունների մակարդակը գնահատվել է 41.7%:

**Վստահությունը կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ (1 միավոր)**

Հարցումներին մասնակցող քաղաքացիների ճնշող մեծամասնությունը հավանություն է տալիս ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ իրականացվող կամ դեռևս օրենքի կարգավիճակում գտնվող հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին: Քաղաքացիների ավելի քան 45.8%-ն արդյունավետ է գնահատել Կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը: Այն ավելի արդյունավետ դարձնելու համար, նրանց ընկալմամբ, Կառավարության առաջնահերթություններից պետք է լինեն պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումն ու ստուգումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու պատժի անխուսափելիության ապահովումն իրավապահների կողմից և օրենքներում ու գործադիր իշխանության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը:

Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող կառույցների շարքում ԿԿՀ գործունեության/գործառույթների մասին 2019 թվականին տեղյակ էր քաղաքացիների միայն 1.1%-ը, իսկ 2021 թվականին՝ արդեն 8.4%-ը: Միևնույն ժամանակ, ԿԿՀ-ի մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) 49% հարցվածներ, որոնց միայն 9.4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/գործառույթների մասին: ԿԿՀ աշխատանքն արդյունավետ է գնահատել կառույցի գործունեությանը տեղյակ 143 անձանցից մոտ 51%-ը:[98]

Ըստ փորձագետների՝[99] ԿԿՀ-ն գործում է չափազանց անկախ՝ չհամագործակցելով այլ մարմինների հետ:

*«Նույնիսկ տեսեք, ասում եք անկախ, իմ մոտ էնպիսի տպավորություն ա, որ չափազանց անկախ ա էլի, էդ համագործակցային միջավայրը տարբեր մարմինների հետ կարծես թե սերտ չի»: «Ինքը [ԿԿՀ-ն] անկախ ա: Պատկերացրեք, էնքան անկախ ա, որ ինքը պետությունից էլ ա անկախ: Իրանք էնքան անկախ են, որ էդ անկախությունը հասկացել են ուրիշ ձև էլի... Շատ անկախ են իրանք: Էդ անկախության խնդիրը չկա, բայց լուրջ խնդիր կա, որ էդ համագործակցությունը պիտի վերականգնվի գործադիրի հետ, էդ շատ լուրջ ա ու երկու կողմին էլ վնասում ա էդ...»:*

*(Փորձագետ)*

**Համագործակցություն բարեվարքությամբ զբաղվող այլ մարմինների հետ (1 միավոր)**

ԿԿՀ ու բարեվարքության հարցերով զբաղվող այլ կառույցների ու մարմինների հետ համագործակցության տեսանկյունից առկա են բացեր ու խնդիրներ: Փորձագետները նշում են, որ ԿԿՀ-ի հետ համագործակցության տեսանկյունից որոշ խնդիրներ են արձանագրում իրավապահ մարմինների ներկայացուցիչները: Որոշ հարցերում առաջանում են բյուրոկրատական բարդություններ. ԿԿՀ աշխատակիցները հրաժարվում են պատասխանել հարցերի կամ տեղեկատվություն տրամադրել՝ նշելով, որ անհրաժեշտ է դիմել ԿԿՀ անդամներին: Բացակայում են հաղորդակցության մեխանիզմները ԿԿՀ-ի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև:

*«Կարա նենց դեպք լինի, որ հաղորդումը գնա և՛ Հակակոռուպցիոն կոմիտե, և՛ ԿԿՀ, սա սկսի վարչական վարույթ, սա էլ սկսի քրեական վարույթ: Ու էդ կապը հետադարձ չկա... համագործակցության ուղղությունները հստակ չի, չկա մի հատ ուղեցույց, որ իրար հետ սենց ենք աշխատում, էս խողովակներով մենք պետք ա ինֆորմացիա փոխանցենք, այ սենց...»:*

*(Փորձագետ)*

Նկատելի են նաև հաղորդակցության բացերը ԿԿՀ-ի և ՀՀ վարչապետի աշխատակազմի ՔԾԳ-ի միջև:

---

[98] ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, էջ 67, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

[99] «Սոցիես» փորձագիտական ՀԿ, Փորձագետների հետ հարցազրույցի ամփոփագիր, 2023 թ.:

*«Ինձ թվում ա՝ կապն ա Քաղծառայության գրասենյակի ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, սերտ չի: Որովհետև էդ կոմպետենցիայի [բարեվարքության կոմպետենցիա] մոդուլի մշակման հարցում ես կարծում եմ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ու նաև Քաղծառայության գրասենյակը պետք ա սերտ համագործակցեն, որովհետև, ցավոք սրտի այդ մոդուլն անհաջող մոդուլ ա*»:

*(Փորձագետ)*

ԿԿՀ-ի հետ համագործակցության խնդիրներն առկա են նաև Արդարադատության նախարարության և այլ պետական մարմինների հետ:

*«…որ իրենք առավել համագործակցային լինեն պետական մարմինների հետ, ավելի շատ բան առաջ կգնար… տեսե՛ք, կան ուրիշ ինքնավար մարմիններ, մենք էլի ունենք անկախ մարմիններ, բայց կառավարության քաղաքականության հետ մի հունով գնալը չի նշանակում, որ ձեր անկախությունը տուժում ա, բնականաբար… կա պետություն, կա քաղաքականություն, ու պետք ա էդ հունով գնալ…»:*

*(Փորձագետ)*

ԿԿՀ համագործակցության և հաղորդակցության տեսանկյունից խնդիրներ են առկա պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության պահանջների պահպանմանը հետևող բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների հետ: Առաջին հերթին, բարեվարքության հարցերով կազմակերպիչների դերը և գործառույթները դեռևս հստակեցված և սահմանված չեն: Մյուս կողմից, վերջիններիս հետ ԿԿՀ համագործակցության շրջանակը և ձևաչափը ևս հստակեցված չէ: Ասվածը վերաբերում է նաև էթիկայի հանձնաժողովների հետ ԿԿՀ համագործակցությանը: ԿԿՀ-ն չունի բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար սահմանված ուղենիշներ, աջակցող նյութեր: Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում ԿԿՀ-ի կողմից կազմակերպվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար միայն մեկ դասընթաց, որը բավարար չէ:

Բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ ԿԿՀ առնչության համատեքստում հատկանշական է փորձագետների այն դիտարկումը, որ «ԿԿՀ-ն առավել հակված է վերջիններիս վերահսկել, քան ուղղորդել կամ վերապատրաստել»:

*«Իրանք [ԿԿՀ-ն] ուզում են բարեվարքության հարցերով կազմակերպիչներին հսկեն, և նենց համակարգ լինի, որ էդ բարեվարքության հարցերով կազմակերպիչները լինեն իրանց աշխատողները այլ մարմիններում… Բարեվարքության հարցերով կազմակերպչի խնդիրը էն չի, որ ինքը գնա, սենց մահակով կանգնի, ասի… ինքը էդ հսկող, դաժան ֆիգուրը չի էլի… ԿԿՀ-ն դա պատկերացնում ա որպես իրա աշխատողներ՝ ուղարկեմ, հսկեն, ինձ ինֆոն տան… Դրա փոխարեն ինքը պետք ա սրանց հետ աշխատանք տանի, կրթի, բացատրի, գործիքները տրամադրի ու հետադարձ կապը ապահովի…»:*

*(Փորձագետ)*

Այս տեսանկյունից պետական մարմինները բացասաբար են վերաբերվում բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ ԿԿՀ աշխատանքին՝ դա դիտարկելով որպես ԿԿՀ-ի կողմից միջամտություն:

ԿԿՀ՝ պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների և էթիկայի հանձնաժողովների հետ համագործակցության խնդիրները պայմանավորված են նաև օրենսդրական մակարդակով հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթների կամ լիազորությունների բացակայությամբ:

**Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ (1 միավոր)**

ԿԿՀ հարաբերությունները ՔՀԿ-ների հետ ևս համագործակցային չեն: Փորձագետների կարծիքով որոշ կազմակերպություններ գոհ են ԿԿՀ-ի հետ հարաբերություններից, սակայն, ընդհանուր առմամբ, դժգոհությունները գերակշռում են: ՔՀԿ-ների հետ ԿԿՀ համագործակցությունը ծավալվել է հիմնականում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և կառույցի գործունեության հանրայնացման շրջանակներում: Այդ նպատակով համագործակցության հուշագրեր են ստորագրվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի, Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (International Anti-Corruption Academy (IACA) հետ,[100] սակայն որևէ գործողություն դեռ չի հաջորդել նշված հուշագրերին:[101]

ԿԿՀ-ի կողմից դեռևս մշակված և հաստատված չեն հանրային պաշտոնյաների և ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության, ինչպես նաև շահերի բախման, այլ սահմանափակումների, նվերների ընդունման սահմանափակումների կիրարկման ուղեցույցները: Վերապատրաստումների և մեթոդական նյութերի բացակայության պայմաններում տարբեր պետական մարմիններից բարեվարքության հարցերով կազմակերպիչները դիմում են հակակոռուպցիոն կրթություն իրականացնող ներկայացուցիչներին անհրաժեշտ նյութերի տրամադրման հարցով:

*«Օրինակ՝ էսօրվա դրությամբ մեկ, շատ ա լինում, դիմում են բարեվարքության հարցերով կազմակերպիչները, որոնք իրենց ձեռքի տակ չունեն համապատասխան նյութեր: Այսինքն՝ որպեսզի բոլոր մարմիններում միատեսակ մոտեցում կիրառվի, շատ կարևոր ա նաև ունենալ էդ մեթոդական ուղեցույցները, հարց ու պատասխանի տեսքով, որովհետև դրանք շատ օգտակար կլինեն մարմիններին: Ստիպված են լինում մարմինները երբեմն մեր դասախոսության ուղղակի սլայդերը խնդրելու...»:*

*(Փորձագետ)*

[100] ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության մասին հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf
[101] ԿԿՀ-ի տեղեկացմամբ 2022 թվականին ՊԿԱ-ի ուսանողները ուսումնաարտադրական պրակտիկա են անցել ԿԿՀ-ում:

Ըստ փորձագետի ցանկալի է, որ ԿԿՀ-ն ավելի սերտ համագործակցի վերապատրաստում իրականացնող կառույցների, այդ թվում՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթություն իրականացնող ՔՀԿ-ների հետ.

*«Կուզենայի, որ վերապատրաստման ծրագրերի մասով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սերտ համագործակցեր վերապատրաստում իրականացնող կառույցների հետ: Երբեմն իմանում ենք, որ ToT-ներ են արել, բայց մենք՝ որպես վերապատրաստում իրականացնող կառույց, ես, օրինակ՝ որպես դասախոս, շատ հաճախ լինում ա, որ դրսից եմ իմանում»:*[102]

*(Փորձագետ)*

Փորձագետների կարծիքներն ամփոփելով՝ ԿԿՀ-ի հետ աշխատանքը եղել է բավական բարդ և ոչ համագործակցային.[103]

*«դա որոշակիորեն պայմանավորված է հենց ԿԿՀ նախագահի անձով», «Ես աշխատել եմ 7-8 գերատեսչության հետ: Ամենադժվարը եղել ա իրանց [ԿԿՀ-ի] հետ: Նույնիսկ գնացել եմ Հակակոռուպցիոն կոմիտե, Քննչական... էստեղ [ԿԿՀ] ես գնացել եմ, նախագահը ինքը տենց չուզեց հարցազրույցին մասնակցել, պատվիրակեց իրա անդամներից մեկին և աշխատողներից մեկին, որոնք ընդհանրապես բաց չէին, այսինքն՝ հարցերին կցկտուր, ոնց որ չուզենան քեզ ավել ինֆորմացիա տան: Ես չեմ հասկանում խնդիրը ինչն ա»:*

*(Փորձագետ)*

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում դրսևորվել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ առանձին աշխատաժողովների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման շրջանակներում նրանց մասնակցության, առանձին նախագծերի վերաբերյալ փորձագիտական կարծիքների ստացման եղանակներով:[104]

**Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր (2 միավոր)**

ԿԿՀ-ն ակտիվ ներգրավվածություն ու մասնակցություն ունի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցում,[105] որում պատասխանատու է ՀՀ կառավարության կողմից ստանձնած ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պարտավորությունների իրականացման համար: ԿԿՀ-ն ներգրավված է նաև Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած կանխարգելմանը վերաբերելի պարտավորությունների,[106] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի

---

[102] ԿԿՀ տեղեկացմամբ ToT-ներ իրականացվել են միայն 2023 թվականից սկսած:
[103] «Սոցիես» փորձագիտական ՀԿ, Փորձագետների հետ հարցազրույցի ամփոփագիր, 2023 թ.:
[104] ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության մասին հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf
[105] OECD, Istanbul Anti-corruption Action Plan, https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm
[106] GRECO, Armenia-Fifth evaluation round, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia

դեմ կոնվենցիայի» պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների[107] պատրաստման գործում կոնվենցիայի «Կոռուպցիայի կանխարգելման միջոցները» գլխի պահանջների կատարման մասով: «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան»[108] նախաձեռնության շրջանակներում ԿԿՀ-ն ստանձնել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի» ստեղծման հանձնառությունը:

Միջազգային տեխնիկական աջակցության առանձին ծրագրերի շրջանակներում ԿԿՀ-ն համագործակցում է ԱՄՆ ՄԶԳ, «Հայաստանի բարեվարքություն», ինչպես նաև ԵՄ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում», ՀԲ պետական հատվածի արդիականացման ծրագրերի հետ, որոնց շրջանակներում իրականացվող միջոցառումները միտված են ԿԿՀ կարողությունների զարգացմանը, կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմերի ու կառուցակարգերի ստեղծմանը:

**Համագործակցություն այլ երկրների հետ (0 միավոր)**

Այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված կառույցների հետ համագործակցության ուղղությամբ ակտիվ տեղաշարժեր արձանագրված չեն: 2021 թվականին Հայաստանում գտնվող Արաբական Միացյալ Էմիրությունների վերահսկիչ պալատի նախագահի՝ ԿԿՀ-ում ընդունելության[109] ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա կապերն ակտիվացնելու համար ձևավորել համագործակցության օրակարգ: Այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ համագործակցությունը սահմանափակվել է միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմակերպված ուսումնական ու ճանաչողական այցերով ու հանդիպումներով: Այլ երկրներում գործող կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ համագործակցության գործողություններ արձանագրված չեն:

Փորձագետների կողմից կարևորվում է ԿԿՀ-ում միջազգային համագործակցությունը համակարգող ստորաբաժանման ստեղծումը: Ներկայումս, հիմնականում նման հարցերով զբաղվում է հենց Հանձնաժողովի նախագահը, և այս առումով կա ինստիտուցիոնալ հիշողության խնդիր:

*«Միջազգային համագործակցության հետ կապված ստորաբաժանում ա պետք, որովհետև էսօրվա օրով, եթե հանկարծակի նախագահը դուրս եկավ աշխատանքից, չկա ընդեղ ինստիտուցիոնալ որևէ unit...»:*

*(Փորձագետ)*

[107] UN, Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf
[108] Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան, Գործողությունների ծրագիր, https://ogp.gov.am/hy/commitments/33
[109] ԿԿՀ 2021 գործունեության մասին հաղորդում, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf

**Հասանելիությունը մարգինալ խմբերին (0 միավոր)**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիների զգալի մասը[110] կամ տեղյակ չեն կամ չեն նկատում կոռուպցիային առնչվող գենդերային առանձնահատկությունները: Թեև կոռուպցիայի ազդեցությունը կանանց և տղամարդկանց, երիտասարդների և տարեցների, հաշմանդամություն ունեցող մարդկանց և սոցիալապես խոցելի այլ խմբերի վրա փոփոխվում է, այդուհանդերձ հարցվածներից քչերն են տեսել կոռուպցիայի կապը սեռի ու սոցիալապես խոցելի այլ խմբերի հետ:

ԿԿՀ-ն հանրության մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիայի ազդեցության և դրանց մասով կանխարգելման քայլերի ամփոփ վիճակագրական տվյալներ չի վարում:[111]

**Առաջարկություններ**

1.6.1 ԿԿՀ-ի կողմից մշակել պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների ու հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների բնականոն գործունեության ապահովման համար մեթոդական ու խորհրդատվական նյութեր, ուղեցույցներ, ինչպես նաև դրանց հիման վրա կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ:

1.6.2 Միջազգային տեխնիկական աջակցության շրջանակներում, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև վերապատրաստողների վերապատրաստում իրականացնողների համար (ToT) կազմակերպվող դասընթացներում բացի ԿԿՀ անձնակազմից ներգրավվել նաև վերջինիս հետ համագործակցության հուշագրեր կնքած բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, ՔՀԿ-ների դասավանդող/վերապատրաստող ներկայացուցիչներին:

1.6.3 Բուհերի հետ կնքված հուշագրերի շրջանակներում մշակել և իրականացնել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում կոնկրետ կրթական ծրագրեր:

1.6.4 ԿԿՀ-ի, ՔԾԳ-ի և ԿԳՄՍ-ի կողմից հավաստագրել (սերտիֆիկացնել) հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթություն իրականացնող ՔՀԿ-ների՝ հակակոռուպցիոն կրթական ծրագրերը, տրված վկայականները ճանաչել որպես հակակոռուպցիոն կրթական դասընթացի վկայականներ, իսկ համապատասխան դասընթացները հանրային ծառայողների համար հաշվարկել որպես վերապատրաստման կրեդիտներ:

1.6.5 Միջազգային կառույցների, այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ համագործակցության զարգացման նպատակով ԿԿՀ աշխատակազմում ստեղծել միջազգային համագործակցության հարցերով կառուցվածքային միավոր և ձևավորել համապատասխան հաստիքներ:

---

[110] USAID, Armenia Integrity Project, Gender Equality and Social Inclusion Analysis: Corruption in Armenia, June 2022, AIP GESI Analysis Final Report_Dec 2022 (encompassworld.com)

[111] ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության մասին հաղորդումներ, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf

1.6.6 ԿԿՀ-ի կողմից մշակվող հանրության շրջանում սոցիոլոգիական հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել սեռերի և խոցելի խմբերի նկատմամբ կոռուպցիայի ազդեցության չափման և դրա հիման վրա կանխարգելման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար նախատեսված հարցադրումներ:

1.6.7 Ապահովելով մարգինալացված (խոցելի) խմբերի մասով կոռուպցիայի ազդեցության և գնահատման վիճակագրական տվյալների վարում:

## 2. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի

ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ ազդեցության գործոնների և կատարողականի, բացահայտում է ԿԿՀ գործունեության արդյունքների վրա օրենսդրական կարգավորումների, ռեսուրսներով ապահովածության, ԿԿՀ-ին վերապահված լիազորությունների ու նոր իրավասությունների տեսանկյունից կառավարության աջակցության և պատրաստակամության մակարդակը: Տվյալ գնահատումն իրականացվել է ԿԿՀ գործունեության գնահատման վերը նշված 51 ցուցանիշների համապատասխան խմբավորման միջոցով:

Ըստ արտաքին և ներքին գործոնների և կատարողականի՝ գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում և ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 8. ԿԿՀ գործունեության գնահատումն ըստ արտաքին ու ներքին ազդեցության գործոնների և կատարողականի**



Ինչպես երևում է Գծապատկեր 8-ում, արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ ԿԿՀ գործունեության մակարդակը գնահատվել է 50%, որտեղ առավելագույն 32 միավորից ապահովվել է 16-ը, ներքին ազդեցության գործոններով պայմանավորած՝ այն գնահատվել է 46%, որտեղ առավելագույն 28 միավորից ապահովվել է 13-ը, իսկ կատարողականի գնահատման ցուցանիշներով պայմանավորած՝ ԿԿՀ գործունեության մակարդակը գնահատվել է 19%, որտեղ առավելագույն 42 միավորից ապահովվել է 8-ը:

**Արտաքին ազդեցության գործոնների** շարքում դիտարկվել են ինստիտուցիոնալ անկախությունը, հանձնաժողովի անդամների նշանակումն ու հեռացումը, ԿԿՀ-ին վերապահված մանդատը, իրավասությունը, վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման, առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները, իրավական և գործառնական ինքնավարությունը, լիազորությունների օգտագործումը քաղաքական նպատակներով, բյուջեի համամասնությունը, բավարար լինելը, անվտանգությունը և կայունությունը, կրթության և իրազեկման նպատակով հատկացված բյուջեն, արտաքին վերահսկողական մեխանիզմները, պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը, հանրային վստահությունը Կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության առնչությամբ:

Հատկանշական է, որ արտաքին գործոնների համեմատաբար բարձր մակարդակը հիմնականում ապահովվել են անկախության և կարգավիճակի ցուցանիշների գնահատականները: Դրանց շարքում առավելագույն գնահատականներ են ապահովել ԿԿՀ-ին վերապահված մանդատի, ինստիտուցիոնալ անկախության, անդամների նշանակման ու ազատման, լիազորությունների քաղաքական օգտագործման ու իրավական ինքնավարության ցուցանիշների մեծությունները:

Արտաքին գործոնների շարքում առավել խնդրահարույց են բյուջետային կամ ֆինանսական անկախության ու ապահովության, բյուջետային միջոցների անբավարարության, դրանց կայունության ցածր մակարդակները, ինչպես նաև արտաքին վերահսկողության մեխանիզմների բացակայությունը և իրավասու մարմինների կողմից ԿԿՀ ներկայացրած բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ եզրակացությունների ու որոշումների կատարման հայեցողությունը:

**Ներքին ազդեցության գործոնների** շարքում դիտարկվել են աշխատակազմի ընտրությունը, աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը, քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը, կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության փորձագիտությունը, անձնակազմի ուսուցումը, վերապատրաստումը, կայունությունը, տարեկան հաշվետվությունը, արձագանքողականությունը հանրության խնդրանքներին, ներքին վերահսկողական և բարեվարքության մեխանիզմները, համագործակցությունը բարեվարքության համար պատասխանատու այլ մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային հակակոռուպցիոն ցանցերի, այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ, հասանելիությունը մարգինալացված խմբերին:

Ներքին գործոնների շարքում ԿԿՀ մարդկային ռեսուրսների ապահովվածության և միջազգային համագործակցության մասով առավելագույն բարձր միավորներ են ապահովել աշխատակազմի ընտրության գործընթացների պահպանման, ինչպես նաև միջազգային հակակոռուպցիոն ցանցերին անդամակցության ցուցանիշներով, իսկ միջին մակարդակի գնահատականներ են ստացվել աշխատակազմի վարձատրության, փորձագիտության, հաշվետվողականության, հանրության դիմումներին արձագանքողականության, ոչ կառավարական կազմակերպությունների ու բարեվարքությամբ զբաղվող այլ կառույցների հետ համագործակցության, ներքին բարեվարքության ցուցանիշները: Առավելապես խնդրահարույց են մնում ԿԿՀ անձնակազմի կայունության, ներքին վերահսկողության մեխանիզմների, այլ երկրների համանուն կառույցների հետ համագործակցության հարցերը, ինչպես նաև ներքին գործոններով պայմանավորված մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հարցերը:

**Կատարողականի** գնահատման համար դիտարկվել են գործընթացների պատշաճ պահպանումը, ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը, բողոքների քննությունը և արդյունքները, հասանելիությունը և արձագանքողականությունը բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին/ազդարարումներին, դիմումներին, բողոքներին, նախաձեռնողականությունը բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում, արդյունավետությունը և պրոֆեսիոնալիզմը, առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների հետապնդումների ցուցանիշը, քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտման քննությունները, ապօրինի հարստացման և ապօրինի ծագում ունեցող ակտիվների վերականգնման գործընթացին աջակցությունը, կանխարգելման ռազմավարական ծրագրավորումը/պլանավորումը, հակակոռուպցիոն կրթությունը և զարգացումը, կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրությունները, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները, կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտությունները, տարածում և քարոզարշավները, առցանց հաղորդակցությունը, կուսակցությունների ֆինանսական գործունեության և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողությունը, հասանելիությունը մարգինալացված խմբերին և ԿԿՀ կատարողականի վերաբերյալ ընկալումը:

ԿԿՀ կատարողականի մակարդակն ապահովել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման մասով բարձր արձագանքողականության, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների, այդ թվում կանխարգելման ոլորտային կարգավորումների օրենսդրական վերանայմանը միտված նախագծերի մշակման, ինչպես նաև բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման ու քաղաքական ազդեցություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով քննությունների իրականացման ցուցանիշների միջին մակարդակները: ԿԿՀ կատարողականի վրա դրական ազդեցություն են ունեցել նաև հակակոռուպցիոն կրթության ու իրազեկման ոլորտում իրականացված միջոցառումների և առցանց հաղորդակցման միջոցով հակակոռուպցիոն տեղեկատվության տարածման ցուցանիշների միջին գնահատականները:

Այդուհանդերձ, ԿԿՀ կատարողականի ցածր մակարդակի վրա իրենց ազդեցություն են ունեցել օրենսդրական բացերի արդյունքում հակակոռուպցիոն կանխարգելման ծրագրերի՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների (ուսումնասիրությունների) հիման վրա պետական և ՏԻՄ մարմիններում, ինչպես նաև պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային ու ոչ առևտրային կազմակերպություններում հակակոռուպցիոն ծրագրերի բացակայությունը: Վերջինիս հետևանքով կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման սոցիոլոգիական հարցումների հետազոտության արդյունքները գործնականում մնացել են չիրականացված: Օրենսդրական կարգավորումների անհստակությունների պայմաններում ԿԿՀ-ն գործնականում չի իրականացրել նաև կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթները. ՀՀ կառավարությանը չեն ներկայացվել կուսակցություններին պետական բյուջեից հատկացվող միջոցների համար հիմք հանդիսացող եզրակացությունները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների բացահայտման և քննության գործընթացներում ԿԿՀ հասանելիությունը տեղեկատվություն ներկայացնողներին, դիմումներին, բողոքներին մնում է ցածր՝ ընդամենը 0.5 դիմում 20,000 բնակչի հաշվով: ԿԿՀ-ն չունի հասանելիություն մարգինալացված (խոցելի) խմբերի կոռուպցիոն ռիսկերի գնահատման տվյալներին, չի վարում նման տվյալների վիճակագրություն: ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքներն ու դրանց արդյունքները չեն արձանագրվում և գործնականում չեն կիրառվում: Իրականացվող վարույթների տևողությունը երկար է, իսկ հաջողությամբ ավարտված վարույթների տեսակարար կշիռը՝ ցածր: Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների, ինչպես նաև ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների բացահայտման դեպքերի մակարդակը նույնպես ցածր է: Վարքագծի կանոնների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, ինչպես նաև շահերի բախման խախտումների մասով ԿԿՀ-ն վարույթներ չի իրականացրել: Չեն իրականացվել նաև հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման և ազդարարման համակարգի մասին օրենքով սահմանված վարույթներ: Վերոնշյալ խնդիրներով պայմանավորված՝ հանրության ընկալումներում ԿԿՀ-ի կողմից գործընթացների պահպանման նկատմամբ վստահությունը դեռևս ցածր է՝ 8.4%, իսկ ԿԿՀ գործունեությունից բավարարվածները կազմում են հարցվողների ընդամենը 9%-ը: Հանրային ծառայողների շրջանում միայն 23%-ն է ԿԿՀ գործունեությունը (աշխատանքը) գնահատում արդյունավետ:

## 3. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության

2012 թվականի նոյեմբերին Ջակարտայում ընդունված «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» հայտարարությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխանության գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 4-ում և պատկերված են ստորև գծապատկերում.

**Գծապատկեր 9. ԿԿՀ գործունեության համապատասխանությունը Ջակարտայի սկզբունքներին**




Ինչպես ներկայացված է գծապատկեր 9-ում, ԿԿՀ գործունեության համապատասխանությունը Ջակարտայի սկզբունքներին կազմել է 44.5%՝ առավելագույն 74 միավորից ապահովելով 33-ը:

1. **Մանդատ (7 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով:

ԿԿՀ-ին օրենսդրությամբ վերապահված է կոռուպցիայի կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, վարույթների, վերլուծությունների, եզրակացությունների ու առաջարկությունների տրամադրման հստակ մանդատ: Լայն մանդատի պայմաններում ԿԿՀ-ն ունի սահմանափակ իրավասություն, որի արդյունքում չի ապահովվում ԿԿՀ-ի կողմից պետական համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների համակարգման գործընթացը: Միաժամանակ, ԿԿՀ ունեցած մանդատը չի տարածվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ողջ շրջանակի վրա: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ եզրակացություններն

ու քաղաքականության մշակմանը միտված ԿԿՀ առաջարկություններն իրավասու մարմինների համար չունեն պարտադիր կիրառման պահանջ:

2. **Համագործակցություն (4 միավոր)**

ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսի: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ միջազգային համագործակցությունը:

ԿԿՀ-ն իր գործունեությունը կազմակերպում է պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի, ներառյալ միջազգային կառույցների հետ համագործակցության սկզբունքով: Առավել ակտիվ է ԿԿՀ ներգրավվածությունն ու մասնակցությունը միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և միջազգային տեխնիկական աջակցության առանձին ծրագրերին: Այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված կառույցների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներ չեն տարվում: Պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների հետ համագործակցության մասով ԿԿՀ-ն օրենսդրորեն սահմանված գործառույթներ չունի, այն սահմանափակված է միայն մեթոդական նյութերի ու ուղեցույցների տրամադրման գործընթացներով: ԿԿՀ համագործակցությունը ՔՀԿ միավորումների և այլ կազմակերպությունների հետ սահմանափակվել է հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և գործունեության հանրայնացման՝ առանձին միջոցառումների, աշխատաժողովների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման շրջանակներում:

3. **Մշտականություն (2 միավոր)**

ՀԿՄ-ները, երկրների հիմնական իրավական սկզբունքներին համաձայն, պետք է ստեղծվեն պատշաճ և կայուն օրենսդրական դաշտով, Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա:

ԿԿՀ գործունեության կայունությունը (մշտականությունը) օրենսդրորեն ապահովված է, ԿԿՀ-ն գործում է առանձին օրենքով՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ինքնավար մարմնի կարգավիճակով:

4. **Նշանակում (2 միավոր)**

ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և կոմպետենտությունը:

ԿԿՀ անդամների նշանակումները կատարվում են ԱԺ-ի կողմից ձևավորված խորհրդի և օրենքով սահմանված բաց մրցութային ընթացակարգերով, որը հիմնականում ապահովում է նշանակումների անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը: Այդուհանդերձ, խնդրահարույց է մնում ԿԿՀ անդամի թեկնածուի(ների) ընտրության քաղաքական որոշման կանխատեսելիությունը: ԱԺ-ում «Քաղաքացիական պայմանագիր»

կուսակցության ձայների մեծամասնության պայմաններում, ԱԺ-ում տիրող քաղաքական պառակտվածության և ընդդիմադիր մասի բոյկոտի արդյունքում, քվեարկության արդյունքներով չի ապահովում կոնսենսուս: Խնդրահարույց է նաև թեկնածուին ներկայացվող մեղմ պահանջները, որոնք չեն ներառում մասնագիտական ստաժի կամ հակակոռուպցիոն ոլորտում աշխատանքի փորձառության պահանջներ:

5. **Շարունակականություն (1 միավոր)**

Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ համապատասխան պաշտոնյային մինչև ՀԿՄ նոր ղեկավարի նշանակումը:

ԿԿՀ գործունեության շարունակականության սկզբունքի պահպանման տեսանկյունից օրենսդրորեն ապահոված է ԿԿՀ նախագահի և անդամների լիազորությունները համապատասխան պաշտոնյային պատվիրակելու սկզբունքը:

6. **Հեռացում (2 միավոր)**

ՀԿՄ ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և հեռացվեն միայն իրավականորեն սահմանված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատար անձանց պաշտոնազրկման ընթացակարգին:

ԿԿՀ անդամների հեռացման համար օրենսդրորեն ապահոված է պաշտոնավարման ժամկետի անվտանգությունը և իրավականորեն սահմանված են ԿԿՀ նախագահի լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի դեպքերն ու ընթացակարգերը:

7. **Էթիկական վարքագիծ (1 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որոնք իրենց անձնակազմից պահանջեն էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության պահանջների պահպանման խիստ ռեժիմ:

ԿԿՀ անդամների և աշխատակազմի ծառայողների էթիկական վարքագծի պահանջները սահմանված են հանրային ծառայության մասին և քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքներով: ԿԿՀ անդամների մասով դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, այն գտնվում է նախագծման փուլում: ԿԿՀ քաղաքացիական ծառայողների մասով, բարեվարքության պահանջների առավել խիստ ռեժիմ սահմանելու սկզբունքի տեսանկյունից, դեռևս ռիսկային է քաղաքացիական ծառայության ղեկավար և մասնագիտական խմբերի բոլոր ծառայողներին բարեվարքության ուսումնասիրությունների և գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրման համակարգ չներառելը: ԿԿՀ քաղաքացիական ծառայողների բարեվարքության պահանջների՝ ներքին կամ արտաքին բողոքների, հաղորդումների հիման վրա խախտման դեպքեր գործնականում չեն արձանագրվել, քննություններ չեն իրականացվել:

8. **Անձեռնմխելիություն (2 միավոր)**

ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:

ԿԿՀ անդամների անձեռնմխելիության ապահովման սկզբունքի կիրարկման տեսանկյունից օրենսդրորեն ապահովված է ԿԿՀ անդամների անձեռնմխելիությունը իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար քաղաքացիական և քրեական վարույթներից: ԿԿՀ անդամները պաշտպանված են կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:

9. **Վարձատրություն (1 միավոր)**

ՀԿՄ աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված անձանց:

ԿԿՀ աշխատակիցների վարձատրության մակարդակի, բավարար թվով որակավորված աշխատողների ներգրավման սկզբունքի համապատասխանության պահանջները կանոնակարգված են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի սահմանված են ԿԿՀ անդամների ու աշխատակազմի ծառայողների վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը: ԿԿՀ քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար են հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ: Մասնավոր ոլորտի նկատմամբ դրանք համարժեքորեն մրցունակ չեն: Անձնակազմի կայունության տեսանկյունից ԿԿՀ-ում կադրերի հոսունության բարձր տեմպերը, թափուր հաստիքների մեծ չափերով, խրոնիկ առկայությունը, հաստիքների համալրման գործընթացների տեմպերի դանդաղեցման պայմաններում քաղաքացիական ծառայողներին ԿԿՀ-ում պահելու և մոտիվացման տեսանկյունից ունեն բացասական ազդեցություն:

10. **Իրավասություն մարդկային ռեսուրսների նկատմամբ (4 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն՝ ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն:

ԿԿՀ մարդկային ռեսուրսների նկատմամբ իրավասության ապահովման սկզբունքի համապատասխանության տեսանկյունից ԿԿՀ-ն քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերով ունի լիարժեք ինքնուրույնություն ու լիազորություն հավաքագրելու և հեռացնելու իր աշխատակազմի անդամներին: ԿԿՀ նախագահը և գլխավոր քարտուղարը պատասխանատու են ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների նշանակման ու ազատման տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար: Խնդրահարույց է դիտվում ԿԿՀ աշխատակազմի համալրման գործընթացում ՔԾԳ-ի կողմից քաղաքացիական

ծառայողների պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման մասով համաձայնությունների կամ «թույլտվությունների» ստացման ինստիտուտը:

11. **Համարժեք և հուսալի ռեսուրսներ (2 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և տարածքը: ՀԿՄ-ները պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ-ի մանդատի իրագործման համար:

ԿԿՀ մանդատի իրագործման համար ֆինանսական և կարողությունների զարգացման համար ռեսուրսներով ապահովման սկզբունքի համապատասխանության տեսանկյունից ԿԿՀ ֆինանսավորումն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: ԿԿՀ ֆինանսավորումը նախորդ երեք տարիների ընթացքում կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.01%-ից պակաս: Բյուջետային ֆինանսավորման գործընթացի մասով ԿԿՀ գրեթե բոլոր տարիների բյուջետային հայտերը խմբագրվել են Կառավարության կողմից, իսկ ծախսային ծրագրերը՝ ենթարկվել փոփոխությունների և կրճատվել: ԿԿՀ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և մանդատի իրագործման մասով ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման ծրագրերի համար բյուջետային միջոցներ չեն հատկացվել: ԿԿՀ անձնակազմի վերապատրաստման, կարողությունների զարգացման դասընթացները իրականացվել են միջազգային կազմակերպությունների ու կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, որոնք չեն կրել կայուն ու պլանավորված բնույթ:

12. **Ֆինանսական ինքնավարություն (0 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է ստանան բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունենան կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին:

ԿԿՀ ֆինանսական ինքնավարության սկզբունքին համապատասխանության ապահովման տեսանկյունից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով ԿԿՀ-ն ԱԺ-ում բյուջեի նախագծի քննարկումների նախնական փուլում հնարավորություն ունի ներկայացնելու առարկություններ կառավարության կողմից բյուջետային հայտում կատարված փոփոխությունների վերաբերյալ՝ հայտնելով անհամաձայնություններ: Այդուհանդերձ, ԿԿՀ ֆինանսական ինքնուրույնության ապահովման սկզբունքի կիրառման տեսանկյունից ՀՀ կառավարության իրավասությունը ԿԿՀ-ին ԱԺ կողմից հատկացված բյուջետային միջոցների կառավարման և վերահսկման գործընթացում փոփոխության ենթարկելու կամ վերաբաշխելու լիազորությունը դիտվում է խնդրահարույց:

13. **Ներքին հաշվետվողականություն (1 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, ներառյալ՝ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու որևէ սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում:

ԿԿՀ ներքին հաշվետվողականության սկզբունքի համապատասխանության ապահովման տեսանկյունից «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված են ԿԿՀ անդամների և աշխատակազմի ծառայողների վարքագծի կանոնների սահմանման պահանջ: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: ԿԿՀ-ի կողմից դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, այդ թվում ԿԿՀ անդամների մասով:[112] ԿԿՀ աշխատակիցների կարգապահական կանոնները հաստատված է ԿԿՀ նախագահի կողմից: ԿԿՀ աշխատակարգը դեռևս հաստատված չէ:[113] ԿԿՀ անձնակազմի նկատմամբ ստացված բողոքների, դրանց քննության արդյունքում կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ տվյալները նույնպես բացակայում են: ԿԿՀ ներքին հաշվետվողականության սկզբունքի ապահովման տեսանկյունից ԿԿՀ անդամների և աշխատակիցների բարեվարքության մեխանիզմները, սահմանված ընթացակարգերը գործնականում չեն կիրառվում:

14. **Արտաքին հաշվետվողականություն (0 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմներով, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար:

ԿԿՀ արտաքին հաշվետվողականության սկզբունքին համապատասխանության ապահովման տեսանկյունից ԿԿՀ արտաքին վերահսկողության մեխանիզմները բացակայում են: ԿԿՀ-ն, հանդիսանալով ինքնավար մարմին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով, ԱԺ-ի կողմից ուղղակի վերահսկողության չի ենթարկվում: ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով ԿԿՀ գործունեության հաշվեքննություն կամ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

15. **Հրապարակային հաշվետվություններ (2 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարին մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանն իրենց գործունեության մասին:

ԿԿՀ հրապարակային հաշվետվությունների սկզբունքին համապատասխանության ապահովման տեսանկյունից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված է ԿԿՀ գործունեության կիսամյակային, տարեկան և բարեվարքության վիճակի վերաբերյալ հաղորդումների հրապարակում հանձնաժողովի կայքէջում:

[112] ԿԿՀ 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված է վերոնշյալ կանոնագիրքը, որը ուժի մեջ է մտնելու 2024 թվականի ապրիլի 1-ից, http://cpcarmenia.am/files/legislation/1359.pdf

[113] «ԿԿՀ-ի նիստերի անցակացման աշխատակարգը հաստատելու մասին» որոշումը ընդունվել է ԿԿՀ 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 02-L որոշմամբ, http://cpcarmenia.am/files/legislation/1207.pdf

Գործնականում հրապարակվում են միայն կիսամյակային ու տարեկան հաղորդումները: Խնդրահարույց են մնում ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումների համապարփակությունը՝ հաշվետվությունների ոչ միասնական կառուցվածքը, տվյալների անհամադրելիությունը և հարցումների կամ հետազոտությունների արդյունքները չներառելը: Դեռևս մշակված ու հրապարակված չեն բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումները:

16. **Հանրային հաղորդակցություն և ներգրավում (2 միավոր)**

ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և աշխատակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության վստահությունն իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ:[114]

ԿԿՀ հանրային հաղորդակցության և ներգրավման սկզբունքին համապատասխանության ապահովման տեսանկյունից, հանրության ընկալումներում, չնայած ԿԿՀ-ի մասին տեղեկացվածության մակարդակի աճին, այն մնում է դեռևս շատ ցածր մակարդակում: ԿԿՀ հանրության հետ հաղորդակցման ու ներգրավման հիմնական գործիքը շարունակում է մնալ www.cpcarmenia.am պաշտոնական կայքէջը, որն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ ու բովանդակությամբ ունի բարելավման կարիք:

[114] Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies, Jakarta, 26-27 November 2012, https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf

Հավելված 1. ԿԿՀ գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | **Անկախությունը և կարգավիճակը (9 ցուցանիշ)** | | | | | | |
| 1. | Ինստիտուցիոնալ անկախություն | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անդամների, անձնակազմի և իրավաբանների հետ | Ոստիկանության կամ նախարարության ներսում | Առանձին գերատեսչություն, որը հաշվետու է նախարարությանը | Օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմին | Բարձր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ինքնավար պետական մարմին է», այն գործում է կոլեգիալության, ֆինանսական ինքնուրույնության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության, համագործակցության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա: Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Հանձնաժողովն իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածը պահանջում է, որ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված»: |
| | | | *Ուղղորդում*: Միավորներն արտացոլում են կառավարությունից ԿԿՀ անկախության աստիճանը՝ պետական կամ սահմանադրական մարմին | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | լինելուց մինչև ոստիկանության կամ նախարարության ստորաբաժանում լինելը: | | | | |
| 2. | Հանձնաժողովի անդամների նշանակում և հեռացում | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀանդամների հետ | Վարչապետը / Նախագահը / պետության ղեկավարը նշանակման մասին որոշում է կայացնում առանց անկողմնակալության ապահովման երաշխիքների (այդ թվում՝ | Նախարարական հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում անկողմնակալության ապահովման որոշ երաշխիքներով (օրինակ՝ թափանցիկ ընթացակարգ) , և/կամ հանձնաժողովի | Անկախ հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում անկողմնակալության ապահովման ուժեղ երաշխիքներով (ներառյալ՝ թափանցիկ ընթացակարգը), և հանձնաժողովի անդամները ունեն հաստատ | Բարձր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 9-ից 18-րդը կարգավորում են ԿԿՀ անդամների նշանակման, նրանց ներկայացվող պահանջների, պաշտոնի դադարեցման գործընթացները: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271 ԿԿՀ անդամների նշանակման և հանձնաժողովի ձևավորման գործընթացները կանոնակարգված են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 146.2 և 153.1 հոդվածներով սահմանված կարգով: ԿԿՀ առաջին կազմը ձևավորվել է 2019 թվականին ԱԺ-ում ներկայացված 3 խմբակցությունների, Կառավարության և ԲԴԽ-ի կողմից ներկայացված թեկնածուներից: ԿԿՀ անդամները ընտրվում են 6 տարի ժամկետով: Նկատի ունենալով ԿԿՀգործունեության շարունակականության ապահովման խնդիրը՝ ԿԿՀ առաջին կազմը ընտրվել է հանձնաժողովի 1 անդամ 3 տարի, 2 անդամ՝ 4 տարի, 2 անդամ՝ 6 տարի ժամկետներով: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2020 թ.-ից ԿԿՀ թափուր անդամի պաշտոնում նշանակումները կատարվում են բաց մրցույթի եղանակով: Այդ նպատակով ԿԿՀ-ն ձևավորվում է ՀՀ ԱԺ-ի կողմից ստեղծված մրցութային խորհրդի միջոցով: Մրցութային խորհրդի անդամները նշանակվում են Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների կամ Ազգային ժողովի խորհրդի, ԲԴԽ-ի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի կողմից՝ մեկական անդամներ: Մրցութային խորհուրդն ԱԺ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | թափանցիկ ընթացակարգի), և/կամ հանձնաժողովի անդամները չունեն հաստատագրված ժամկետ և կարող են հեշտությամբ փոխարինվել: | անդամները ունեն հաստատագրված ժամկետ (առանց պաշտոնավարման ժամկետի), բայց նրանց հեռացնելը դժվար չէ: | ագրված ժամկետ (պաշտոնավարության ժամկետով) և չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ, անձեռնհասություն կամ սխալ վարքագիծ) | | աշխատակազմի օժանդակությամբ իրականացնում է մրցույթի կազմակերպման գործընթացները՝ ապահովելով թեկնածուների կողմից օրենքով սահմանված փաստաթղթերի ընդունման, թեկնածուների թեստավորման ու հարցազրույցների անցկացումը, գնահատման հիման վրա մրցույթը հաղթահարած թեկնածուների ցուցակն ԱԺ նախագահին ներկայացնելը: Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են ԱԺ կայքէջում: http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=17&month=01&year=2023&NewsID=18051&lang=arm , http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=22&month=03&year=2023&NewsID=18420&lang=arm<br>Մրցույթին մասնակցության համար ԿԿՀ անդամի թեկնածուներին ներկայացվող պահանջների մասով սահմանված պահանջները միասնական են այլ ինքնավար մարմինների հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի 6-րդ մասը նույնական է ԿԿՀ-ի մասին ՀՀ օրենքի հոդված 10-ի 1-ին մասին:, https://www.arlis.am/documentview.aspx?docid=175837<br>Նման մոտեցումը խնդրահարույց է, քանի որ ԿԿՀ-ն, ի տարբերություն մյուս ինքնավար մարմինների, իրականացնում է կոռուպցիայի կանխարգելմանը միտված գործառույթներ և պատահական չէ, որ վերջինիս անդամների նշանակումները կազմակերպվում են բաց մրցույթների միջոցով, իսկ մյուս ինքնավար մարմինների անդամներին՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Բացի այդ, ԿԿՀ անդամից պահանջել միայն քաղաքական, ինքնավար, հայեցողական կամ վարչական պաշտոններում աշխատանքային փորձառություն կամ էլ այլ ոլորտներում ղեկավար աշխատանքի փորձ, բավարար չէ հանձնաժողովում մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Անհրաժեշտ է ներառել մասնագիտական ստաժի և հակակոռուպցիոն ոլորտում աշխատանքի փորձառություն:<br><br>Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն ընտրվում է ԱԺ պատգամավորների կողմից փակ գաղտնի քվեարկությամբ: Գործնականում հաշվի առնելով ԱԺ-ում տիրող քաղաքական պառակտվածությունը և ընդդիմադիր մասի բոյկոտը՝ անհրաժեշտ է փաստել, որ ԿԿՀ անդամի գործող կարգով նշանակված 2 անդամները ընտրվել են բացառապես ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կուսակցության մեծամասնության ձայներով, այլ խոսքով՝ բացակայել է կոնսենսուսը, որը կապահովեր ԿԿՀ անդամի քաղաքական չեզոքությունը:<br><br>ԿԿՀ անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցման գործընթացները կանոնակարգված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, որում ԿԿՀ անդամի պաշտոնից հեռացման հայեցողական հիմքերը բացակայում են: ԿԿՀ անդամի պաշտոնից հեռացման բոլոր հանգամանքները՝ անձնական դիմում, անհամատեղելիության պահանջներ, քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտում, հանձնաժողովի նիստերից անհարգելի բացակայություն, օրենքով սահմանված պաշտոնավարման տարիքի ու դատավորին ներկայացվող հիվանդության պահանջներին անհամապատասխանություն, ուղղակիորեն պայմանավորված չեն ԿԿՀ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | անդամի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտությամբ և կողմնակի ազդեցությամբ: Միայն ԿԿՀ նախագահի մասով է նախատեսված պաշտոնից հեռացման հնարավորություն «իր պարտականությունները չկատարելու հիմքով» հանձնաժողովի անդամների 2/3-ի ընդհանուր ձայների միջոցով: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը նկարագրում է ԿԿՀ անդամների նշանակման և հեռացման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անանց և նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները: Անկողմնակալության ապահովման երաշխիքները ներառում են ընտրության անաչառ չափանիշները և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը: Հետազոտողը պետք է իր դատողությամբ որոշի, թե նշանակման և հեռացման բոլոր հատկանիշների համադրությունը, որն առկա է ԿԿՀ-ում, ցածր, միջին, թե բարձր միավոր է կազմում՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 3. | Մանդատ | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ-տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ | Կրթում և կանխարգելում առանց վարույթների | Հիմնական ուշադրությունը՝ բարեվարքության պահանջների պահպանման վրա | Ուշադրության կենտրոնում են կանխարգելումը, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությունը և բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը | Բարձր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 23-ով և 24-ով սահմանված են ԿԿՀ-ին վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը: [https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271)<br><br>ԿԿՀ-ի մանդատը ներառում է՝<br>• պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելը,<br>• կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակումը և միջոցառումների իրականացումը,<br>• հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը,<br>• կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը,<br>• ընտրված պետական պաշտոնյաների (ԲԴԽ անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների, դատավորների) թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պետական պաշտոնյաների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ պատրաստելը,<br>• հակակոռուպցիոն քաղաքականությանը մասնակցությունը,<br>• էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության պահանջների պահպանման մասով մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրումը,<br>• կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակումը և դրանք Կառավարություն ներկայացումը, հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծությունը և առաջարկությունների ներկայացումը,<br>• քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերների սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դեպքերը:<br><br>Վերոնշյալ գործառույթներով պայմանավորված՝ համաձայն ԿԿՀ 2022 թվականի գործունեության մասին հաղորդման, «Հանձնաժողովը լայն մանդատ ունի երաշխավորելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքությունը, կառավարելու հայտարարագրերի համակարգը, վերահսկելու պետական պաշտոնյաների վարքագիծը ....»: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf#page=142&zoom=100,249,97 |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը կենտրոնանում է ԿԿՀ մանդատի և գործառույթների վրա և նշանակվում է բարձր միավոր, երբ ԿԿՀ-ն իրականացնում է հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրեր, օժտված է կոռուպցիայի կանխարգելման, իրականացնում է բարեվարքության պահանջների պահպանման նկատմամբ համակարգման գործառույթներ: Նշանակվում է միջին միավոր, երբ ԿԿՀ-ն ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հակակոռուպցիոն կրթության վրա: ԿԿՀ-ն ցածր միավոր է ստանում, եթե չի քննում կոռուպցիոն ռիսկեր պարունակող և բարեվարքության պահանջների խախտումների դեպքերը և ուշադրությունը կենտրոնացնում է միայն կրթման և կանխարգելման վրա: | | | | |
| 4. | Իրավասություն | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ | Միայն պետական հատվածը՝ կենտրոնական մակարդակում | Ե՛վ պետական, և՛ մասնավոր հատվածը, բայց միայն կենտրոնական մակարդակում կամ միայն պետական հատվածը, բայց թե՛ կենտրոնական, | Թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածները և՛ կենտրոնական, և՛ ենթազգային մակարդակներում | Ցածր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271 հոդված 23-ով սահմանված ԿԿՀ գործառույթների շրջանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն օժտված է միայն պետական կառավարման և մասնակիորեն ՏԻՄ մարմինների հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շրջանում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության միասնական պահանջների պահպանման գործառույթներով: Պետական համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների մասով ԿԿՀ-ն չունի կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթ: Միաժամանակ, ԿԿՀ-ն պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների պահպանման նկատմամբ ունեցած գործառույթները չեն ծածկում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ողջ շրջանակը: Մասնավորապես ԿԿՀ-ն գործառույթներ չունի օրենսդիր, դատական մարմիններում, ինչպես նաև դատախազական ու քննչական գործառույթներ ունեցող մարմինների վարքագծի կանոնների, շահերի բախման, այլ սահմանափակումների խախտումների բացահայտման, հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների, |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | թե՛ ենթազգային մակարդակներում | | | ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության համակարգման մասով: https://transparency.am/hy/publication/pdf/244/1351 |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը կենտրոնանում է ԿԿՀ ոլորտային և աշխարհագրական ընդգրկման վրա: Նշանակվում է բարձր միավոր, եթե ԿԿՀ-ն անդրադառնում է կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության պահանջների պահպանմանը, ինչպես պետական և ՏԻՄ մարմիններում, այնպես էլ մասնավոր հատվածում (ներառյալ՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները)՝ վարչական կառավարման բոլոր մակարդակներում: Տրվում է միջին միավոր, եթե այս պայմաններից միայն որոշներն են բավարարված, իսկ ցածր միավոր տրվում է, եթե ԿԿՀ-ն անդրադառնում է կոռուպցիայի կանխարգելմանը միայն պետական կառավարման | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | մարմիններում՝ կենտրոնական կառավարման մակարդակում: | | | | |
| 5. | Վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման լիազորություններ (քննությ | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ | Սակավաթիվ լիազորություններ կամ ոչ մի լիազորություն | Որոշ լիազորություններ | Ընդարձակ լիազորություններ՝ ներառյալ վարույթներ, վերլուծություններ և եզրակացությունների տրամադրման լիազորություններ | Բարձր | Վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման գործում ԿԿՀ լիազորությունները սահմանված են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-41-րդ հոդվածներով: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271<br><br>Նշված հոդվածներով ԿԿՀ-ին վերապահված է հայտարարագրերի վերլուծության արդյունքում դրանց խախտման մասով վարույթների իրականացում, պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների մասով համապատասխան եզրակացության տրամադրում իրավասու մարմնին կամ դրա ղեկավարին, ինչպես նաև դատավորի, դատախազի, քննիչի թեկնածուների հավակնորդների, առաջխաղացման ենթակա դատավորների, դատախազների, հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց բարեվարքության ստուգման արդյունքներով խորհրդատվական եզրակացությունների տրամադրում իրավասու մարմնին:<br><br>Նշված հոդվածներով ԿԿՀ-ին է վերապահված 5 խումբ վարույթների իրականացման լիազորություններ՝<br>• վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,<br>• անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ վարույթներ, |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ունև հետապնդում) | | | | | | • անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման վարույթ,<br>• «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգային առանձնահատկություններով պայմանավորված ազդարարման վարույթ,<br>• ՀՀ դատական օրենսգրքով սահմանված դատավոր կամ ԲԴԽ անդամի կողմից հայտարարագրերի ներկայացված սահմանված ժամկետի և ներկայացվող պահանջների խախտումների համար, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին զուգահեռ, կարգապահական վարույթ:<br><br>ԿԿՀ-ն օրենքով իրեն վերապահված մանդատի շրջանակներում իրավասու է նախաձեռնելու վարույթներ՝ «յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում»:<br><br>Վարույթների իրականացման գործընթացում «Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն: Հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումը, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելը ստուգելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ»:<br><br>Հանձնաժողովն իրավասու է նաև իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը կենտրոնանում է ԿԿՀ՝ իր մանդատն իրականացնելու գործնական լիազորությունների վրա (ինչպես նկարագրված է 3-րդ ցուցանիշի ներքո): Տրվում է բարձր միավոր, եթե ԿԿՀ-ն իրավասու է նախաձեռնողական վարույթ սկսելու և ունի | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | լիազորությունների լայն շրջանակ (օրինակ, ստիպել այլ պետական մարմիններին՝ գործակցել. քրեական հետապնդումներ իրականացնել, դիմել՝ կատարելու օպերատիվ - հետախուզական աշխատանքներ, հասանելիություն ունենալ այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրել կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն): ԿԿՀ-ին պետք է նշանակվի միջին միավոր, եթե ունի վերը նշված լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե գործում է ոչ թե նախաձեռնողական, այլ արձագանքում է կատարվածին և/կամ ունի վերը նշված լիազորություններից միայն մեկը կամ երկուսը: | | | | |
| 6. | Առաջարկություններ | ԿԿՀ-ի մասին օրենք, ԿԿՀ տարեկան | Սակավաթիվ լիազորություններ կամ ոչ մի | Որոշ լիազորություններ | Ընդարձակ լիազորություններ | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ով ԿԿՀ-ին վերապահված է առաջարկություններ ներկայացնելու հետևյալ լիազորությունները՝<br>• անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ | հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ | լիազորություն | | | | ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ) իրավասու մարմիններին,<br>• Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ,<br>• պետական պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն,<br>• կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության արդյունքներով առաջարկությունների ներկայացում իրավասու մարմին,<br>• իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմին,<br>• կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,<br>• իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների արդյունքներով առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններին:<br><br>Ըստ էության, ԿԿՀ-ն օրենսդրությամբ օժտված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման մասնակցության գործառույթով և դրա |

| | ՑՈՒ ՑԱ ՆԻՇ | ՏՎՅԱԼ ՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կառավարությանը: Իսկ իրեն վերապահված անմիջական բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ կայացրած եզրակացությունները **կարող են** հիմք հանդիսանալ իրավասու մարմինների համար հանրային պաշտոնյաների ու ծառայողների նկատմամբ կիրառելու պատասխանատվության միջոցներ, իսկ բարեվարքության ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կայացնել նշանակման որոշումներ՝ ելնելով եզրակացության դրական կամ բացասական արդյունքներից: Այդուհանդերձ, առաջարկությունների ներկայացման «կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության արդյունքներով առաջարկությունների ներկայացում իրավասու մարմնին» լիազորության մասով դեռևս ենթաօրենսդրական մակարդակով մշակված չեն կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանությունն, ու նոր հայեցակարգը կյանքի չի կոչվել, այդ իսկ պատճառով նշված լիազորությունը չի իրականացվում: Հակակոռուպցիոն քաղաքականության մասնակցության մասով իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները պարտադիր չեն կիրարկման, քանի որ դրանք կրում են օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ լուծումներ, որոնք կարող են կառավարության կամ ԱԺ-ի կողմից չընդունվել: Բարեվարքության պահանջների խախտումների մասով իրավասու մարմնին ներկայացված եզրակացությունների հիման վրա իրավասու մարմնի կողմից պատասխանատվության միջոցներ չկիրառելու համար իրավասու մարմնի ղեկավարի համար պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն: Անմիջական ղեկավար չունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների պահանջների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | խախտումների մասով պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն: |
| | | | *Ուղղորդում*: ԿԿՀ-ն ստանում է բարձր միավոր, եթե իրավասու է մշակելու և կիրարկելու կատարման առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ առավել ընդհանրական, կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է առաջարկությունների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը: ԿԿՀ-ն ստանում է միջին միավոր, եթե ունի վերոնշյալ լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե չունի իր առաջարկությունները կիրարկելու որևէ լիազորություն և/կամ ենթարկվում է քննարկումների արգելքի կանոնին: | | | | |
| 7. | Իրավական | ԿԿՀ-ի մասին օրենք, | Իրավական ինքնավ | Որոշ չափով ունի | Ունի լիարժեք իրավակա | բարձր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի գլուխ 5-ն ամբողջությամբ կարգավորում է ԿԿՀ՝ վարույթների, վերլուծությունների և բարեվարքության եզրակացությունների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ինքնավարություն | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ | արություն չունի | իրավական ինքնավարություն | ն ինքնավարություն | | տրամադրման գործընթացում լիազորությունների շրջանակը: Նշված գլխի հայտարարագրերի վերլուծության ու ստուգման, իրավիճակային հայտարարագրեր պահանջելու հիմքերի, վարչական իրավախախտումների մասով վարույթների, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ վարույթների, վերանայման և ազդարարման վարույթների իրականացման գործում ունի լիարժեք ինքնուրույնություն որոշումների կայացման գործում՝ առաջնորդվելով համապատասխան օրենսդրական ակտերով սահմանված վերլուծությունների, վարույթների իրականացման և եզրակացությունների տրամադրման սահմանված ընթացակարգերով: Միաժամանակ ԿԿՀ անդամները, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով, օժտված են անկախության և անձեռնմխելիության պաշտպանությամբ: Վերջինս ենթադրում է, որ «Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ», ինչպես նաև «Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա միայն Հանձնաժողովի համաձայնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել 72 ժամից ավելի»: Հանձնաժողովի անդամը պարտավոր չէ բացատրություններ տալ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Հանձնաժողովի վարույթում գտնվող կամ Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի կամ փաստաթղթերի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:<br><br>ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք ճանաչված են քաղաքացիական ծառայողներ և որպես այդպիսիք քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով պաշտպանված է նրանց մասնագիտական գործունեությունը՝ տարանջատելով քաղաքական գործունեությունից: Նրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված չեն անձեռնմխելիության պահանջներ, սակայն պետք է նկատի ունենալ, որ նրանք վարույթների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացման գործում չունեն որոշումների կայացման լիազորություն: |
| | | | *Ուղղորդում*: Բարձր միավոր է տրվում այն դեպքում, երբ ԿԿՀ-ն լիակատար ինքնուրույնություն ունի վարույթների, վերլուծությունների և բարեվարքության եզրակացությունների տրամադրման (քննությունների և/կամ հետապնդումների) վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում, և եթե հանձնաժողովի անդամները և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմն անձեռնամխելի են քրեական և/կամ քաղաքացիական | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հետապնդումից իրենց լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար: Տրվում է միջին միավոր, եթե ԿԿՀ-ն որոշ չափով ենթարկվում է նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի կամ մարմնի հրահանգներին կամ եթե ԿԿՀ անդամները և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմի անդամներն իրենց գործունեության համար պատասխանատու են հետապնդման: Տրվում է ցածր միավոր, եթե ԿԿՀ-ն և նրա աշխատակազմը ենթարկվում են նախարարի կամ պետական մարմնի ղեկավարի հրահանգներին և պատասխանատու են հետապնդման համար: | | | | |
| 8. | Գործառնական ինքնավարո | Հարցազրույցներ ԿԿՀ անդամների, աշխատակազմի | Գործառնական ինքնավարության ցածր աստիճան | Գործառնական ինքնավարության սահմանափակ | Գործառնական ինքնավարության բարձր աստիճան | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ով «Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է, իսկ կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ւթյուն | ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ հետ | | աստիճան | | | քաղաքացիական ծառայողներ են: Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է»:<br><br>Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175823 հոդված 16-ի՝ ԿԿՀ նախագահը պատասխանատու է ԿԿՀ գլխավոր քարտուղարի և ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1- 3-րդ ենթախմբերի ծառայողների նշանակման ու ազատման համար: ԿԿՀ անձնակազմի մյուս ենթախմբերի քաղաքացիական ծառայողների նշանակման ու ազատման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը: ԿԿՀ անձնակազմի քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման մրցույթների կազմակերպման ու մրցութային հանձնաժողովների ձևավորման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը: Միայն գլխավոր քարտուղարի թափուր պաշտոնի մրցույթը կազմակերպվում և իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից, իսկ նշանակումը՝ ԿԿՀ նախագահի կողմից:<br><br>Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող անձը, այն է ԿԿՀ նախագահը՝ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց մասով և գխավոր քարտուղարն այլ խմբերի քաղաքացիական ծառայողների մասով:<br><br>ԿԿՀ նախագահի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից «Կոռուպցիայի կանխարգելման |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ը նախատեսում է «Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը»:<br><br>ԿԿՀ անձնակազմի ձևավորման, քաղաքացիական ծառայողների ընտրության և հեռացման գործընթացներում որպես Հանձնաժողովի գործառնական ինքնավարության վրա արտաքին միջամտության և խոչընդոտող հանգամանք ԿԿՀ-ն նշում է, որ «աշխատակազմի ձևավորումը որոշակի կախվածություն ունի ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից, քանի որ առանց գրասենյակի կողմից տրված թույլտվության, Հանձնաժողովը լիազորություն չունի պաշտոնի անձնագրերում որևէ փոփոխություն կատարելու»: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf ՔԾԳ-ի կողմից քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման մասով համաձայնությունների կամ «թույլտվությունների» ինստիտուտին՝ որպես կոռուպցիոն ռիսկերի, անդրադարձել նաև ԹԻՀԿ-ն իր կողմից մշակված «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցում՝ նշելով, որ «ՄՌԿ առանձին գործընթացների համաձայնեցումը ՔԾԳ-ի հետ ավելորդ վարչարարություն է ստեղծում և վերացնում է վերահսկողության բուն բովանդակությունը: ՔԾԳ-ի դերակատարումը հիմնավորված չէ և ավելորդ հայեցողություն է պարունակում» և առաջարկել է, որպեսզի «ՔԾԳ-ն առանձին պետական մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների գործունեության |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | վերահսկողության իրականացման «համաձայնությունների» տրամադրման կամ մերժման մեխանիզմները փոխարինի քաղաքացիական ծառայության առանձին գործընթացների համար օրենսդրությամբ սահմանված մեթոդական ցուցումների ու պահանջների իրականացման համապատասխանության ստուգման ու մշտադիտարկման գործիքակազմերով»: https://transparency.am/hy/publication/pdf/276/9667 |
| | | | *Ուղղորդում*: Տրվում է բարձր միավոր, եթե ԿԿՀ-ն անմիջական (օպերատիվ) վերահսկողություն է իրականացնում անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ (այդ թվում՝ ԿԿՀ նախագահի բացակայության դեպքում ապահովված է շարունակականությունն ապահովելու մեխանիզմները), և եթե չկա կառավարության կողմից ԿԿՀ առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության որևէ ապացույց: Տրվում է միջին միավոր, որտեղ առկա են կա՛մ անձնակազմի ընտրության, հեռացման և փոխադրման վրա արտաքին ազդեցության, կա՛մ՝ ԿԿՀ գործունեության այլ ասպեկտներին քաղաքական միջամտության որոշակի | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ապացույցներ: Ցածր միավոր է տրվում այն դեպքում, եթե այս տեսակի միջամտությունները համատարած են: Եթե ԿԿՅ-ն իր ամենօրյա գործունեության մեջ հանդիպում է կառավարության կողմից քաղաքական միջամտության: Պետք է տրամադրվեն այդ դեպքերի թիվը և մանրամասները, ներառյալ՝ լրատվամիջոցների հաղորդումները, եթե առկա են: | | | | |
| 9. | Լիազորությունների քաղաքական օգտագործում | ԿԿՅ-ի կողմից իրական ացված վարույթներ ընդդիմության առաջնորդների վերաբերյալ՝ լրատվամիջոցների լուսաբա | Կառավարության կողմից ԿԿՅ-ի՝ որպես քաղաքական հակառակորդների դեմ գործիքի լայնորեն օգտագործման ապացույցներ | Կառավարության կողմից ԿԿՅ-ի՝ քաղաքական դրդապատճառներով սահմանափակ մանիպուլյացիայի որոշ ապացույցներ | Կառավարությունը ԿԿՅ-ն չի օգտագործել որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ քաղաքական դրդապատճառներով | Բարձր | ԿԿՅ-ին որպես գործիք կամ այլ քաղաքական դրդապատճառներով քաղաքական իշխանության կողմից քաղաքական հակառակորդների դեմ կիրառելու փաստեր մամուլում, լրատվամիջոցներում, ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից հայտարարություններում ԹԻՀԿ-ն չի արձանագրել:<br><br>Փորձագետների հետ հարցազրույցներում.<br><br>Ըստ հարցազրույցների արդյունքների՝ չնայած ԿԿՅ-ում առկա շատ խնդիրներին՝ հանձնաժողովն, ընդհանուր առմամբ, հակված է պահպանել անկախություն և օբյեկտիվություն:<br><br>*«Ինչքան էլ խնդիրները կա, բայց ես մի տեսակ մտածում եմ, որ իրանց վրա ճնշում գործադրելը էդքան հեշտ չի…»:* |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | նումը, հարցազրույցներ ԿԿՀ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ընդդիմության առաջնորդների, ՔՀԿ-ների ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ | | | | | ԿԿՀ անկախությունը փորձագետներից մեկն առավելապես ընդգծում է նախկին իշխանությունների օրոք համապատասխան մարմնի գործունեության հետ համեմատության համատեքստում:<br><br>*«ԿԿՀ-ն նաև էդ հեղինակությունը կարողացել է ձեռք բերել, որովհետև նա չի վերածվել նոնց որ նախկին էթիկայի հանձնաժողովը, որ նախագահին կից ինստիտուտ էր, ինքը չի վերածվել ուղղակի ասենք հրահանգներ կատարողի: Եթե դուք ուսումնասիրեք նախկին որոշումները, որպես կանոն, բավարարում են հարցի քննարկումը, վարչական ակտ չէր ընդունվում, ասենք Գագիկ Ծառուկյանը չէր ենթարկվում տույժի, իսկ էս մարմինը Գագիկ Ծառուկյանին, բոլորին անխտիր ենթարկում ա տույժի, պատասխանատվության և այլն, և այլն…»:*<br><br>Մյուս կողմից փորձագետները փաստում են, որ իշխանությունը շարունակաբար փորձում է ԿԿՀ-ի վրա որոշակի ճնշում գործադրել: Վերջինս նշվում է որպես ԿԿՀ արդյունավետ գործունեությանը խոչընդոտող արտաքին ազդակ: Ըստ փորձագետներից մեկի՝ նման ճնշումն անխուսափելի է այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, սակայն մեծամասամբ ԿԿՀ-ն պահպանում է օբյեկտիվություն:<br><br>*«Դե տեսեք իրենք չունեն իրենց բանակը, ոստիկանությունը, այսինքն՝ իրենք սովորական հանրային մարմին են, բնականաբար նրանց նկատմամբ հեշտ է ճնշում գործադրել, բայց իրենք չեն նահանջում, որովհետև ես տեսնում եմ իրենց որոշումների դինամիկան, բովանդակությունը, նոնց որ իրենք սկսել են, այդպես էլ գնում են… իհարկե կարող ա որոշ տեղեր կոմպրոմիսների են գնացել, դա ընդունված է, որովհետև կա նաև մոտեցում, որ կոմպրոմիսը դա նույնպես պրոգրես է,* |

| | ՑՈՒ ՑԱ ՆԻՇ | ՏՎՅԱԼ ՆԵՐԻ ԱՂԲՅՈ ՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | *բայց որոշումների բովանդակությունը ուսումնասիրելով ես տեսնում եմ, որ իրենք իրենց դրած ստանդարտներից չեն նահանջում...»:*<br><br>*«...իրանց վրա ես լսել եմ, որ կա, փորձում են ճնշումներ անել: Այսինքն՝ եթե պետք ա, որ ինչ-որ մեկը լինի դրական, կանգեր են լինում էլի անդադար, կանգեր, ինչ-որ հարցեր և այլն...»:*<br><br>Ընդհանուր դիտարկումն այն է, որ ԿԿՀ-ն ձգտում է չենթարկվել արտաքին ազդեցության կամ ճնշման, սակայն առանձին դեպքերում լինում են կոմպրոմիսներ: Որպես վերջինիս օրինակ՝ նշվում են վարույթների ելքերը:<br><br>*«Ասենք վարույթի ելքը: Ասենք համաչափության սկզբունքով պայմանավորված որոշ դեպքերում կարող էր տույժի տեսակն ավելի խիստ լինել, իրենք ավելի նվազ խստության որոշում են կայացրել: Որոշ դեպքերում ես տեսել եմ, որ նույնիսկ քննադատվել է մեղիայով, որոշումը շատ կոմպրոմիսային էր... կարող էին ավելի համարձակ որոշում կայացնել, բայց դա եղել է այդ պահով պայմանավորված, այդ պահին ձևավորված կոնյուկտուրայով»:*<br><br>*«Չեմ կարող չբացառել արտաքին ազդակները, քաղաքական նույնիսկ ասենք միջամտություն, որ որոշ հարցերով վարույթ չհարուցվի, կամ լուծված վարույթը դադարեցվի: Սա ես ենթադրում եմ, իմանալով մեր պետության կոնյուկտուրան, հնարավոր է, որ կա: Սրա համար, իհարկե, պետք է քաղաքական որոշում, որպեսզի քաղաքական միջամտություն չլինի հանձնաժողովի աշխատանքին...»:*<br><br>Հատկանշական է, որ փորձագետներից մեկի կարծիքով ԿԿՀ-ն ոչ այնքան օգտագործվում է որպես լծակ որոշակի քաղաքական ուժերի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | վրա ճնշում գործադրելու նպատակով, այլ խնդիրն այն է, որ ԿԿՀ-ն բավարար ուշադրություն չի դարձնում և/կամ անգործություն է դրսևորում իշխանական ուժերին առնչվող կոռուպցիոն ռիսկերին անդրադարձ կատարելու տեսանկյունից:<br><br>*«Ես ավելի շատ կասեի, որ ինքը ոչ թե որպես գործիք ա կիրառվում, որպեսզի ընդդիմությանը կամ չգիտեմ ինչ… Ինքը [ԿԿՀ-ն] ասում ա՝ եթե մամուլում կամ ինչ-որ մի տեղ հանրությանը հետաքրքրող ինչ-որ հարց կա կամ կոռուպցիոն դեպք կա կամ չգիտեմ ինչ կա, ինքը պետք ա դրան ինչ-որ ձևով անդրադառնա, պետք ա վերլուծի, պետք ա ինչ-որ բան տա և այլն և այլն, բայց մենք գիտենք քանի դեպք եղավ, որ իրանք ընդհանրապես դրան ոչ արձագանքեցին… Ավելի շատ էդ մասով, որ չեն ուզում, կոպիտ ասած, կպնեն իշխանությանը, ավելի շատ… Ոչ թե իշխանությունն իրանց օգտագործում ա որպես մեխանիզմ ընդդիմությանը ճնշելու համար, այլ որ իրանք փորձում են ավելի շատ նեյտրալիտետ պահեն երկու կողմի համար էլ… Չգիտեմ, ընդդիմության մասով կարող ա ունենան ինչ-որ բան անելու՝ անեն, բայց եթե իշխանությանը վերաբերվի, չգիտեմ՝ կանեն թե չէ…»:*<br><br>Փորձագետը նշում է, որ վերոնշյալի պատճառները ընթացակարգային չեն. ԿԿՀ-ն կարող է անհրաժեշտ ուշադրություն դարձնել նաև իշխանության հետ առնչություն ունեցող կոռուպցիոն ռիսկերին: Անգործության պատճառը, ըստ փորձագետի, նշանակված անդամների սուբյեկտիվ կողմնորոշումներն են:<br><br>Մեկ այլ փորձագետի կարծիքով ԿԿՀ-ն բավարար չափով անկախ է: Փորձագետը նշում է, որ բարեվարքության ուսումնասիրությունների տեսանկյունից չկա որևէ քաղաքական կողմնակալություն: Ըստ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | փորձագետի՝ ԿԿՀ-ն այս տեսանկյունից բավական վստահելի կառույց է: Վերջինիս աշխատակիցները կոռումպացված և/կամ կողմնակալ չեն: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է կառավարության կողմից ԿԿՀ-ին ապավինելը՝ կոռուպցիան քաղաքական հակառակորդների դեմ որպես գործիք կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար: Եթե կառավարությունը կոռուպցիան օգտագործում է որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ, ապա պետք է ներկայացվեն մանրամասները ԿԿՀ-ի կողմից ընդդիմադիր քաղաքական առաջնորդների վերաբերյալ հարուցված վարույթների, ներկայացված եզրակացությունների դեպքերը և քննության արդյունքները: Հետազոտողը պետք է հիմնվի այս կոռուպցիոն ռիսկերի և կանխարգելման պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանման, այդ քաղաքական առաջնորդների (հնարավորության դեպքում) և | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ԿԿՀ անդամների, ընդդիմության այլ առաջնորդների, ՔՀԿ ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Եթե լրատվամիջոցների հաղորդումների և հարցազրույցների արդյունքում ստացվում են տարբեր գնահատականներ, ապա հետազոտողը պետք է հարցազրույցի մասնակիցներից պարզի այդ գնահատականների պատճառները: | | | | |
| | **ԿԿՀ անկախության և կարգավիճակի միավորի հանրագումարը** | | | | | 14/18=77.8% | |
| | | **Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ (8 ցուցանիշ)** | | | | | |
| 10. | Բյուջեի համամասնությունը | ՀՀ ֆինանսների նախարարության կայքը, ԿԿՀ տարեկ | Պետական ընդհանուր բյուջեի 0.10%-ից ցածր | Պետական ընդհանուր բյուջեի 0.10%-0.20%-ը | Պետական ընդհանուր բյուջեի 0.20%-ից բարձր | Ցածր | **2020-2022 թթ. ԿԿՀ ֆինանսավորումը եղել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.01%-ից պակաս:**<br><br>ՀՀ պետական բյուջեից ԿԿՀ-ն ֆինանսավորում ստանում է «Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում (ծրագրի դասիչ՝ 1181): 2020-2022 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է 3 միջոցառում՝<br>• Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում (միջոցառման դասիչ՝ 11001),<br>• Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացման ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացում (դասիչ՝ 11002), |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ | | | | | • Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում (դասիչ՝ 31001):<br><br>ՀՀ պետական բյուջեից 2020-2022 թթ. ԿԿՀ-ին կատարված հատկացումներն աստիճանաբար ավելացել են և 2020 թ. 0.0064%-ից 2022 թ. կազմել են պետական բյուջեի ծախսերի 0.016%: 2020 թ. համեմատ 2021 թ. ՀՀ պետական բյուջեից ԿԿՀ փաստացի ֆինանսավորումն ավելացել է 77%-ով (121.44 մլն-ից հասնելով 214.97 մլն դրամ), իսկ 2022 թ. 2021 թ. համեմատ՝ 67% (214.97 մլն-ից հասնելով 358.41 մլն դրամի): |

ԿԿՀ ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2019-2022 թթ.

| | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. |
|---|---|---|---|---|
| Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացում (ծրագրի դասիչ՝ 1181), մլն դրամ | | | | |
| Պլան | 254.01 | 229.67 | 233.29 | 350.58 |
| Փաստ | 104.71 | 121.44 | 214.97 | 358.41 |
| ՀՀ պետական բյուջեի ծախսերը, մլն դրամ | | | | |
| | 1,629,436.9 | 1,894,647.1 | 2,004,301.0 | 2,242,625.5 |
| ԿԿՀ ֆինանսավորումը՝ որպես ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի, % | | | | |
| | 0.0064% | 0.0064% | 0.0107% | 0.016% |
| Այդ թվում՝ ըստ միջոցառումների (մլն դրամ) | | | | |
| 11001 | | | | |
| Պլան | 243.75 | 219.42 | 223.03 | 333.58 |
| փաստ | 245.40 | 121.44 | 214.97 | 344.69 |
| 11002 | | | | |
| Պլան | 10.25 | 10.25 | 10.25 | - |
| փաստ | 0 | 0 | 0 | - |
| 31001 | | | | |
| Պլան | - | - | - | 17.00 |
| փաստ | - | - | - | 13.72 |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | *Դիտարկվել են միայն ԱԺ կողմից կատարված հատկացումները և փաստացի ֆինանսավորումը: ՀՀ կառավարության կողմից կատարված ճշտումները չեն դիտարկվել:*<br><br>2022 թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական բյուջեից ԿԿՀ ֆինանսավորում աճել է թափուր հաստիքների համալրման, նոր հաստիքների ավելացման և այլ ծախսերի աճի պատճառով: Ծրագրային ցուցանիշներից շեղումը պայմանավորված է եղել թափուր հաստիքների առկայությամբ: ԿԿՀ կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման միջոցառման շրջանակներում 13.7 մլն դրամով ձեռք է բերվել 69 միավոր համակարգչային սարքավորում և 70 միավոր գրասենյակային գույք: Ծրագրային ցուցանիշներից շեղումը պայմանավորված է գնման գործընթացում առաջացած խնայողություններով և որոշ վարչական սարքավորումների ձեռքբերումը դոնորների կողմից ֆինանսավորվելու հանգամանքով:<br><br>2021 թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական բյուջեից ԿԿՀ ֆինանսավորումն աճել է՝ կապված հաստիքների ավելացմամբ:<br><br>«Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառման ցածր կատարողականը (86.4%) հիմնականում պայմանավորված է հաստիքներն ամբողջությամբ չհամալրվելու հանգամանքով: Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների համար նախատեսված 10.3 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ 2021 թ. պետական բյուջեով հաստատված ֆինանսական և արդյունքային ցուցանիշները բավարար չեն եղել |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | միջոցառումն իրականացնելու համար: Լրացուցիչ հաստիքները գույքով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ նոյեմբերին տվյալ միջոցառման համար նախատեսված գումարից 10 մլն դրամը վերաբաշխվել է վարչական սարքավորումների ձեռքբերմանը: Այնուամենայնիվ, մինչև 2021 թ. բյուջետային տարվա ավարտը ԿԿՀ-ն չի կարողացել ձեռք բերել գույքը:<br><br>«2020 թ. ռազմական դրությամբ պայմանավորված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ԿԿՀ հատկացված միջոցները ՀՀ կառավարությունը նվազեցրել է 74.3 մլն դրամով: Ճշտված ծրագրային ցուցանիշի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 121.4 մլն դրամ, կամ նախատեսվածի՝ 78.1%: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է հաստիքների թերի համալրմամբ, ԿԿՀ-ին հատկացված վարչական շենքի ուշ շահագործման հանձնվելով:<br><br>Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների շրջանակներում պաշտոնատար անձանց համար հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման նպատակով պատրաստվել է 8 ուսումնամեթոդական ուղեցույց, հանրության համար հակակոռուպցիոն ուղղվածությամբ 4 սոցիալական հոլովակ, պաշտոնատար անձանց ու ՔՀԿ ներկայացուցիչների համար կազմակերպվել է 60 միջոցառում (սեմինար, թրեյնինգ, և այլն): Այդ աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված 10.3 մլն դրամը ՀՀ կառավարության կողմից կրճատվել է, քանի որ այդ միջոցառման իրականացումը ֆինանսավորվել է ՄԱԿ և ԱՄՆ ՄԶԳ Management Systems International/ Armenia կազմակերպությունների կողմից: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ բյուջեի միջին | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեի նկատմամբ 2020-2022 թթ. ընթացքում: Եթե ԿԿՀ-ն իրականացնում է թե՛ կոռուպցիայի կանխարգելման և թե բարեվարքության հետ կապված, թե՛ կոռուպցիայի կանխարգելման ու բարեվարքության հետ չկապված գործառույթներ, ապա հաշվարկվում է միայն կոռուպցիայի կանխարգելման ու բարեվարքության գործառույթներով պայմանավորված բյուջեն (եթե այս տեղեկությունը հասանելի է): Եթե կա մեկից ավելի ԿԿՀ-ներ, ապա կոռուպցիայի հետ կապված գործառույթների համար նախատեսված նրանց բյուջեների հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեին հաշվարկվում է յուրաքանչյուր ԿԿՀ-ի համար: | | | | |
| 11. | Բյուջեի բավարար | Հարցազրույցներ ԿԿՀ անդամների | Անհամարժեք է (հաստատված է բյուջետային | Համարժեք է (բյուջետային հայտի 66%- | Ավելի քան համարժեք է (բյուջետային հայտի 80%- | ցածր | **<u>Բյուջեի բավարար լինելը</u>**<br><br>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման համաձայն ԿԿՀ-ն կազմում և ՀՀ կառավարություն է ներկայացնում ԿԿՀ առաջիկա տարվա բյուջետային |

<table>
<tr><th rowspan="2"></th><th rowspan="2">ՑՈՒՑԱՆԻՇ</th><th rowspan="2">ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td></td><td>լինելը</td><td>և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ</td><td>հայտի 66%-ից պակասը). ապավինում է ՔՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը</td><td>79%-ը հաստատված է)</td><td>100%-ը հաստատված է)</td><td></td><td>հայտը առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: ԿԿՀ բյուջետային հայտը ՀՀ կառավարության կողմից ընդունվելու դեպքում՝ անփոփոխ, իսկ առարկությունների դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: ԿԿՀ բյուջետային հայտը պետական բյուջեի նախագծի հետ միասին կառավարությունը ներկայացնում է ԱԺ:<br><br>2020-2022 թթ. ԿԿՀ-ն ՀՀ կառավարություն է ներկայացրել հետևյալ մեծությամբ հայտեր.<br><table><tr><th></th><th>Ներկայացված</th><th>Հաստատված</th><th>Բավարարման, %</th></tr><tr><td>2020 թ.</td><td>257,663.4</td><td>229,669.3</td><td>89.14</td></tr><tr><td>2021 թ.</td><td>445,902.7</td><td>233,286.4</td><td>52.32</td></tr><tr><td>2022 թ.</td><td>582,940.3</td><td>350,580.6</td><td>60.14</td></tr></table><br>2020-2022 թթ. ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն մասնակի են բավարարել ԿԿՀ բյուջետային հայտը: 2021-2022 թթ. պետական բյուջեի մասին օրենքով ԿԿՀ-ին է հատկացվել ներկայացված բյուջետային հայտի 60.14%-ը չգերազանցող գումար:<br><br>ԿԿՀ կարծիքով գործող օրենսդրության շրջանակներում ՀՀ կառավարությունը կարող է առանց համապատասխան հիմնավորումների փոփոխության ենթարկել ԿԿՀ բյուջեի հայտը: Իր կողմից դիտարկվող խնդիրը կարգավորելու համար ԿԿՀ-ն 2022 թ. ապրիլին հանրային քննարկման է ներկայացրել օրենքի փոփոխության նախագիծ, որով առաջարկում է սահմանել, որ բյուջետային հայտի վերաբերյալ առարկության դեպքում ՀՀ կառավարությունը պարտավոր</td></tr>
</table>

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | է հիմնավորել այն: Նախագիծը հասանելի է https://www.e-draft.am/projects/4256/about էջում:<br><br>Նախագիծը նախատեսում է, որ ԿԿՀ և նրա աշխատակազմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: Նման ձևակերպումը կարող է խզում առաջացնել ԿԿՀ բյուջեի և կատարողական ցուցանիշների միջև: Նաև հասկանալի չէ, թե ինչպես են ՀՀ իշխանություններն արձագանքելու տնտեսական վայրիվերումների արդյունքում բյուջետային եկամուտների նվազման պարագայում:<br><br>**ԿԿՀ բյուջեի բավարար լինելն իր գործառույթներն իրականացնելու համար**<br><br>ԿԿՀ-ն շատ ավելի մեծ ծավալի աշխատանք է կատարել, քան նախատեսված է եղել ՀՀ պետական բյուջեով: 2022 թ. նախատեսվել է, որ ռիսկային ցուցանիշների հիման վրա դուրսբերված և վերլուծված հայտարարագրերի տեսակարար կշիռը՝ որպես ռիսկային ճանաչված և վերլուծված հայտարարագրերի տոկոս, պետք է կազմի 30 : Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն փաստացի այն կազմել է 64.12%: Նախատեսվել է բարեվարքության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն, վերլուծություն և եզրակացության տրամադրել 150-250 հարցաթերթիկի 85%-ի դեպքում: ԿԿՀ-ն նախատեսել է ուսումնասիրել շահերի բախման, անհամատեղելիության, այլ սահմանափակումների և վարքագծի կանոնների վերաբերյալ 100 դեպք, սակայն իրականում ուսումնասիրվել է 162 դեպք: Նախատեսվել |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | է կազմակերպել 3 դասընթաց, սակայն իրականում կազմակերպվել է 11-ը:<br><br>Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ փաստացի հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել ԿԿՀ առջև դրված խնդիրները լուծելու համար: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ բյուջեի բավարար լինելն իր գործառույթներն իրականացնելու համար: Ի լրումն քանակական տվյալների, քննության առեք, թե ԿԿՀ-ն ունի արդյոք ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը, և արդյոք որոշ ժամանակ սպասում է դեպքերին անդրադառնալուն սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է: Եթե ԿԿՀ-ն իր բյուջեն լրացնելու համար ապավինում է նաև դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը, ապա պետք է հարցազրույցներ անցկացվեն համապատասխան դոնոր կազմակերպությունների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ՝ | | | | |

<table>
<tr><th rowspan="2"></th><th rowspan="2">ՑՈՒՑԱՆԻՇ</th><th rowspan="2">ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3">2020-2022 թթ. ընթացքում տրամադրված ֆինանսավորման մանրամասները ստանալու համար: Գնահատվում է նաև սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթների կամ միջոցառումների քանակը 2022, 2021 և 2020 թվականներին:</td><td></td><td></td></tr>
<tr><td>12.</td><td>Բյուջեի անվտանգությունը և կայունությունը</td><td>ՀՀ ֆինանսների նախարարության կայքը, ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անդամների և</td><td>ԿԿՀ բյուջեն 2020-2022 թթ. ընթացքում կրճատվել է և/կամ բյուջետային միջոցները ժամանակին չեն հատկացվել</td><td>ԿԿՀ բյուջեն 2020-2022 թթ. ընթացքում չի կրճատվել</td><td>ԿԿՀ բյուջեն երաշխավորված է նախորդ տարվա հատկացման հիման վրա և չի կրճատվել</td><td>միջին</td><td> 2020 թ. ՀՀ պետական բյուջեով ԿԿՀ-ին կատարված հատկացումը ՀՀ կառավարության կողմից նվազեցվել է, իսկ 2021-2022 թթ.՝ ավելացվել: Չնայած դրան՝ ԿԿՀ-ն չի օգտագործել հատկացված բոլոր միջոցները, իսկ 2021 թ. չի օգտագործել անգամ օրենքով նախատեսված (չավելացված) մեծությունը:
ԱԺ կողմից հաստատված և ՀՀ կառավարության կողմից «ճշտված» բյուջեն և փաստացի ֆինանսավորումը (հազար դրամ).
<table>
<tr><th></th><th>2020 թ.</th><th>2021 թ.</th><th>2022 թ.</th></tr>
<tr><td>Պլան</td><td>229,669.3</td><td>233,286.4</td><td>350,580.6</td></tr>
<tr><td>Ճշտված</td><td>155,396.7</td><td>259,171.0</td><td>368,851.9</td></tr>
<tr><td>Փաստ</td><td>121,435.9</td><td>214,971.8</td><td>358,408.9</td></tr>
</table>
2022 թ. ԿԿՀ փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է ԿԿՀ-ին կատարված հատկացումները: Չնայած ՀՀ կառավարությունն ավելացրել է ֆինանսավորումը, սակայն ԿԿՀ-ն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը: </td></tr>
</table>

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ | | | | | 2021 թ. ՀՀ կառավարությունը ևս ավելացրել է ՀՀ պետական բյուջեով ԿԿՀ-ին կատարված հատկացումը, սակայն ԿԿՀ-ն չի օգտագործել անգամ ԱԺ կողմից կատարված հատկացումը:<br><br>2020 թ. ՀՀ կառավարությունը նվազեցրել է ԱԺ կողմից կատարված հատկացումների մեծությունը, իսկ փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի փոքր:<br><br>**Բյուջեի հատկացումների ժամանակագրությունը**<br><br>ԿԿՀ-ն չի տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե արդյոք բյուջետային միջոցները ժամանակին են հասանելի ԿԿՀ-ին: Սակայն ԿԿՀ-ի կողմից հանրային քննարկման ներկայացված նախագծում, որի հղումն առկա է վերևում, ԿԿՀ-ն առաջարկում է նախատեսել դրույթ, համաձայն որի «Պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումը կատարվում է ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով»: Նման ձևակերպումը ենթադրում է, որ պետական բյուջեից միջոցների ստացման ժամկետների հետ կապված ԿԿՀ-ն խնդիրներ է առերեսել: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը ԿԿՀ անդամների և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ հարցազրույցներից պարզում է, թե ԿԿՀ-ն խնդիրներ ունեցել է արդյոք իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում: Նաև գնահատում է, թե նախատեսված բյուջեն ժամանակին է արդյոք | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հատկացվում: Եթե 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ բյուջեում էական փոփոխություններ են տեղի ունեցել, ապա հետազոտողը պետք է պարզի այդ փոփոխությունների պատճառները: Հետազոտողը պետք է նաև նշի, թե կան արդյոք բյուջետային հատկացումներին կցված պայմաններ (օրինակ, դրանք պետք է համաչափորեն ծախսվեն ողջ տարվա ընթացքում, դրանք ստացվում են որպես տարեկան միանվագ վճար և այլն): Այս ցուցանիշն առաջին հերթին չի գնահատում բյուջեի բարձր կամ ցածր լինելը, այլ՝ անդրադառնում է մասնավորապես ժամանակի ընթացքում բյուջեում կատարված փոփոխություններին: Գնահատվում է նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումների քանակը 2022, 2021 և 2020 թվականներին: | | | | |
| 13. | Աշխատակ | «Պետական պաշտ | Ցածր աշխատավարձ | Համարժեք աշխատ | Մրցունակ աշխատավարձ և | Միջին | ԿԿՀ-ի աշխատակազմի վարձատրության և խրախուսման հարցերը կարգավորվում են «պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին » ՀՀ օրենքով: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ազմի աշխատավարձ և խրախուսում | ոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, ԿԿՀ տարեկան հաշվետվություն և կայք, ԿԿՀ աշխատավա | և սահմանափակ խրախուսումներ (պետական հատվածի համանման մարմինների համեմատ) | ավարձ և խրախուսումներ (համադրելի են պետական հատվածի նույնպիսի մարմինների հետ) | խրախուսումներ (համադրելի են մասնավոր հատվածի սուբյեկտների հետ) | | https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178780 Օրենքի հավելված 9-ով կանոնակարգված և սահմանված են քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև պետական այլ ծառայողների՝ բացառությամբ զինվորական ծառայողների, վարձատրության գործակիցները ՝ըստ պաշտոնների խմբերի ու ենթախմբերի:<br><br>Համաձայն օրենքի՝ հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) հանդիսանում է որպես բազային աշխատավարձի և նախատեսված գործակցի արտադրյալ:<br><br>Նկատի ունենալով, որ ԿԿՀ աշխատակազմի ճնշող մեծամասնությունը քաղաքացիական ծառայողներ են՝ վերջիններիս վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը կարգավորված են վերոնշյալ օրենքով: Համաձայն օրենքի՝ ԿԿՀ աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձի համար որպես բազիսային աշխատավարձ հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն աշխատավարձի մեծությունը, իսկ գործակիցները սահմանված են օրենքի հավելված 9-ում:<br><br>«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176042 , քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | րծերի սանդղակ և խրախուսումների չափեր: ՀՀ վարչապետի ՔԾԳ-ի կողմից իրականացված «պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձան | | | | | Քաղաքացիական ծառայողի բազիսային աշխատավարձը 2022 թվականին սահմանվել է 83200 AMD (Armenian Drams): Այն կազմում է օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի՝ 88321 AMD (Armenian Drams) https://www.armstat.am/file/article/lab_market_2022_14.pdf 94.2%-ը, որը գտնվում է վարձատրության օրենքով սահմանված 80-120% անվանական նվազագույն աշխատավարձի միջակայքում: Սա նշանակում է, որ այն խրախուսում է պետական ծառայության համալրմանը քաղաքացիական ծառայության ամենացածր 8-րդ մասնագիտական պաշտոնների խմբի համար:<br><br>ԿԿՀ քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ: Մասնավորապես քաղաքացիական ծառայողների ղեկավար պաշտոնների խմբի համար այն գտնվում է 3.88-9.65-ի միջակայքում, այլ խոսքով խտացման գործակիցը (նվազագույն և առավելագույն գործակիցների հարաբերակցությունը) կազմում է 2.48, որը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում ղեկավար խմբի քաղաքացիական ծառայողների վարձատրության մակարդակները միմյանցից տարբերվում են 2.5 անգամ: Մասնագիտական պաշտոնների համար խտացման գործակիցը կազմում է 4.4/1.25=3.5, որն ավելի լայն է, քան ղեկավար պաշտոնների համար է սահմանված:<br><br>ԿԿՀ անդամների համար հիմնական աշխատավարձի գործակից է սահմանված 12-ը, իսկ նախագահի համար՝ 14: ԿԿՀ աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ու ԿԿՀ անդամների վարձատրության համամասնությունը միջինում կկազմի (14+12)/2=13, իսկ քաղաքացիական ծառայողների ղեկավար |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | գ բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց», հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ-ների | | | | | պաշտոնների միջին գործակիցը՝ (9.65+2.48)/4=3.03: Հարաբերակցությունը ցույց է տալիս, որ միջին հաշվով ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները ԿԿՀ անդամների նկատմամբ վարձատրվում են 13/3.03=4.29 անգամ նվազ:<br><br>Հակակոռուպցիոն կոմիտեի համարժեք պաշտոնների նկատմամբ վարձատրության գործակիցները ԿԿՀ քաղաքացիական ծառայողների ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց մասով նույնպես ցածր է՝ չհաշված քննիչներին տրվող հավելավճարներն ու հավելումները:<br><br>Մասնավոր ոլորտի նկատմամբ ԿԿՀ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրության մրցունակության մասով ներկայումս դժվար է համադրություններ կատարել՝ նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» զեկույցի [https://cso.gov.am/news/267 հաջորդ հրապարակումը կիրականացվի 2024](https://cso.gov.am/news/267)<br><br>թ.-ին: Այդուհանդերձ, 2021 թ. զեկույցի շրջանակում «քաղաքացիական ծառայության և ոչ պետական ոլորտի վարձատրության մակարդակների համադրությունը ցույց է տալիս, որ ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը 471473 դրամ է (պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 38%-ով), տնտեսագետինը՝ 533995 (բարձր է 2-ից ավել անգամ), կառավարման ոլորտի մասնագետինը (այդ թվում՝ մենեջերներ, տնօրեններ)՝ 643962 (պետական հատվածի գրեթե կրկնակին է): Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների |

| | ՑՈՒ ՑԱ ՆԻՇ | ՏՎՅԱԼ ՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | դեկավարների հետ, վերաբերելի լինելու դեպքում՝ մամուլի հաղորդումներ | | | | | համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ»:<br><br>Քաղաքացիական ծառայողներին ծառայությունում պահելու մոտիվացման հաջորդ հանգամանքը վարձատրության կառուցվածքի ու դրա բաղադրիչները կազմող հավելավճարների ու պարգևատրումների հիմնավորված համակարգի առկայություն է:<br><br>Ըստ պետական ծառայությունում միջին աշխատավարձի վերլուծության արդյունքների ՝ միջին աշխատավարձը քաղաքացիական ծառայությունում մոտ է պետական ծառայությունում միջին աշխատավարձին (341,565 դրամ): Առավելապես, միջին աշխատավարձը բարձր է հարկային ծառայությունում՝ 427,957 ՀՀ դրամ, որը գրեթե 1.25 անգամ բարձր է պետական ծառայողների միջին աշխատավարձի չափից, Ազգային ժողովի աշխատակազմում՝ 406,209 ՀՀ դրամ: Այսպիսով, պետական առանձին մարմիններում միջին աշխատավարձի նման տարբերակումները հիմնականում ձևավորվում են պարգևատրումների հաշվին: ԿԿՀ-ում պարգևատրումների պլանավորված մակարդակը ԿԿՀ անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում 2022 թ. կազմել է 22.1%: Նկատի ունենալով, որ ԿԿՀ-ում հաստիքների համալրման մակարդակը կազմել է ընդհանուր հաստիքների 76.5%-ը՝ https://cso.gov.am/charts կարելի է եզրահանգել, որ տնտեսված միջոցները նույնպես ուղղվել են քաղաքացիական ծառայողների պարգևատրումներին: 2022 թվականին ԿԿՀ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» (411200) հոդվածով փաստացի պարգևատրումների բյուջետային հատկացումները 2021 թ. նկատմամբ ավելացել են 1.5 անգամ կամ 50%-ով, իսկ 2020 թ. նկատմամբ՝ 2.5 անգամ: Քաղաքացիական, դատական և պետական |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | այլ ծառայողների պարգևատրում» (411300) հոդվածով 2022 թ. ԿԿՀ փաստացի օգտագործված պարգևատրումների միջոցները 2021 թ. համեմատ գերազանցել են 3.3 անգամ, իսկ 2020 թ. փաստացի միջոցների նկատմամբ՝ 2.6 անգամ:<br><br>Արդյունքում, թափուր հաստիքների հաշվին տնտեսված միջոցները ուղղվում են պարգևատրումներին, որի հաշվին արհեստականորեն բարձրանում է նաև ծառայողի փաստացի աշխատավարձը և խաթարվում է ըստ կատարողականի գնահատման պարգևատրման համակարգը: Բացի այդ, պետական ծառայությունում բազային աշխատավարձի պահպանման պայմաններում աճել է միջին աշխատավարձը՝ պարգևատրումների հաշվին ավելի մեծացնելով լրացուցիչ աշխատավարձի մասնաբաժինը ընդհանուր աշխատավարձի մեջ: https://cso.gov.am/news/267 Արդյունքում քաղաքացիական ծառայության ցածր և բարձր խմբի պաշտոններում ընդգրկվածների միջին աշխատավարձերի խիստ մեծ տարբերությունները հենց պարգևատրումների հաշվին են տեղի ունեցել:<br><br>ԹԻՀԿ 2021 թ. հրապարակած «Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցը https://www.transparency.am/en/publication/pdf/276/9667#page=27&zoom=100,92,432 նույնպես նշում է, որ «Քաղաքացիական ծառայողների շրջանում անցկացված անանուն հարցման մասնակիցների կողմից նշվել են մեկնաբանություններ առ այն, որ պարգևատրման գործընթացը սուբյեկտիվ տարրեր ունի, և պետք է բացառել բոլորին հավասարաչափ պարգևատրելու պրակտիկան, քանզի այն կարող է |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | նաև կոմպետենտ աշխատողներին ապամոտիվացնելու պատճառ դառնալ»:<br><br>ԹԻՀԿ կողմից ԿԿՀ նախկին և գործող աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքներով նախկին աշխատակիցների 49.2%-ը «ավելի շուտ բավարարված էին» վարձատրության մակարդակով, նույնչափով էլ «ավելի շուտ բավարարված չէին» աշխատավարձով և գտնում էին, որ նման աշխատանք կատարողները նույն վարձատրություն են ստանում: Մինչդեռ, ԿԿՀ գործող աշխատակիցների 81.8%-ը ընդհանրապես բավարարված չէ վարձատրության մակարդակով: Ավելին, վերջիններս կարծում են, որ աշխատավարձի մակարդակը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքին, և նման աշխատանք կատարողներն ավելի բարձր են վարձատրվում: Պարգևատրումների մասով նախկին և ներկա աշխատակիցներն արձանագրել են դրանց առկայությունը, մինչդեռ, դրամական պարգևատրումների տրամադրման գործոնների մասով առկա են տրամագծորեն հակադիր կարծիքներ: Ըստ նախկին աշխատակիցների՝ դրամական խրախուսումների համար հիմք են հանդիսացել «Ղեկավարության հետ հարաբերությունները»՝ 100% և «ԿԿՀ-ում բարեկամական, անձնական կապեր ունենալու»՝ 50%, հանգամանքները: Կատարողականի գնահատման արդյունքները հիմք չեն հանդիսացել բոնուսների ու պարգևատրումների համար: Մինչդեռ, ներկա աշխատակիցների 80%-ի կարծիքով « բարձր կատարողականը» և «պրոֆեսիոնալիզմը» են հանդիսացել պարգևատրումների ու դրամական խրախուսումների համար, այն դեպքում, երբ հարցվողների միայն 25,0%-ն է նշել, որ իրենց կատարողականի գնահատման արդյունքներն են հիմք հանդիսացել բոնուսներ հատկացնելու համար:<br><br>Փորձագետների հետ հարցազրույցները փաստում են, որ թափուր հաստիքների առկայության հաշվին ԿԿՀ-ում կան որոշակի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | պարգևավճարներ, սակայն դրանց հատկացման պրոցեսը բավարար հստակեցված և հիմնավորված չի, չկան աշխատակիցների կատարողականի գնահատման մեխանիզմներ: Նաև կա կարծիք, որ, ընդհանուր առմամբ, պետական սեկտորում (այդ թվում՝ նախարարություններում, ԿԿՀ-ում) սահմանված խրախուսումները/տոկոսային հավելումները բավարար չեն աշխատակիցներին մոտիվացնելու համար, մյուս կողմից՝ դրանք հիմնականում վերաբերում են վարչության պետերին/փոխնախարարներին: |
| | | | *Ուղղորդում*: ԿԿՀ անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները պետք է տրամադրվեն 2-րդ մասում՝ ԿԿՀ պրոֆիլում: 2020-2022 թ. ընթացքում աշխատավարձերի խրախուսումների ցանկացած էական փոփոխություն պետք է ընդգծվի և բացատրվի: Աշխատավարձերի մրցունակությունը գնահատելու համար սովորաբար համեմատություն է կատարվում մասնավոր հատվածի հետ (օրինակ, բանկեր, աուդիտորական ընկերություններ և այլն), որը սովորաբար ավելի լավ է վճարում, քան՝ պետական հատվածը: Այնուամենայնիվ, արժե նաև տեսնել, թե ինչպես են | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ԿԿՀ աշխատակիցների աշխատավարձերը համեմատվում այլ քաղծառայողների աշխատավարձերի հետ: Երբեմն ԿԿՀ աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձ է վճարվում, քան պետական հատվածի այլ մարմիններին, որպեսզի որակյալ թեկնածուներն ընդունվեն ԿԿՀ և մնան: Պետք է տրամադրվեն նաև խրախուսումների մանրամասները, քանի որ որոշ երկրներում դրանք կազմում են ԿԿՀ անձնակազմի ամսական վարձատրության փաթեթի զգալի մասը: Մասնավոր հատվածի մարմինների հետ համեմատելիս հետազոտողը պետք է կենտրոնանա հատկապես միջին օղակի անձնակազմի վրա, քանի որ բարձր օղակի անձնակազմի աշխատավարձերն ու նպաստներն ավելի քիչ են համեմատելի: Հետազոտողը պատմողական գնահատման մեջ պետք է մասնավորեցնի, թե որ սուբյեկտներն են օգտագործում համեմատության նպատակով: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 14. | Աշխատակազմի ընտրություն | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և համապատասխան անձնակազմի | Հովանավորչություն և ոչ թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ | Սահմանափակ արժանիքահեն (մերիտոկրատական) և/կամ թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ | Արժանիքահեն և թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ | Բարձր | ԿԿՀ-ն անձնակազմի հավաքագրման սեփական ընթացակարգեր չունի: ԿԿՀ աշխատակազմի անձնակազմի հավաքագրման գործընթացներն իրականացվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված մրցութային կարգով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143140 Մրցույթի անցկացումը կատարվում է թեստավորման և հարցազրույցի փուլերով, ինչպես նաև փաստաթղթերի համապատասխանության ստուգման գործընթացով: Մրցույթի թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափերը սահմանված են ՀՀ փոխվարչապետի կողմից: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=134493<br><br>«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով քաղաքացական ծառայության՝ ըստ առանձին խմբերի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված է կրթության և մասնագիտական ստաժի նվազագույն պահանջներ: ՀՀ փոխվարչապետի որոշմամբ սահմանված է «քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու: մեթոդաբանությունը» https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=127641 Գործնականում, ինչպես ցույց են տալիս ԹԻՀԿ-ի կողմից 2021 թ. «Քաղաքացիական ծառայության ոլորտում մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատման» զեկույցի արդյունքները, քաղաքացիական ծառայողների հավաքագրման և համալրման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերն արձանագրված են պաշտոնի նշանակման իրավասություն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | աշխատակիցների հետ, քաղաքացիական ծառայության հաստիքների համալրման ընթացակարգեր | | | | | ունեցող պաշտոնատար անձի կողմից ներքին և արտաքին մրցույթներ անցկացնելու ընտրության հարցում հնարավոր կամայական մոտեցում դրսևորելու, մրցույթի հարցազրույցի փուլում որոշումների կայացման գործընթացում պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող անձի կողմից կողմնակալ որոշումներ կայացնելու հնարավորությունը, հարցազրույցի փուլում գնահատման գործընթացի արդյունքում մրցույթի մասնակիցների ցանկից ոչ լավագույն թեկնածուի ընտրության հնարավորությունը և, վերջապես, հարցազրույցի մասնակից բոլոր թեկնածուների կողմից հարցազրույցի փուլը չհաղթահարելու մասին այն դեպքում, երբ մասնակիցների մի մասը ստացել է բավարար միավորներ հարցազրույցի փուլը հաղթահարած համարվելու համար: Քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների համալրման գործընթացի վերոնշյալ կոռուպցիոն ռիսկերը պայմանավորում են մարմնի ղեկավարի կողմից կողմնակալ որոշումների ընդունման և արժանիքահեն ծառայության սկզբունքի ծախողման ռիսկերը: [9667 (transparency.am)](9667 (transparency.am))<br><br>ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ հարցման արդյունքները վկայում են, որ 2023 թ. մայիսի 3-ի դրությամբ ԿԿՀ 57 հաստիքային միավորից թափուր են 14-ը, համալրված՝ 43 հաստիքային միավոր: 2023 թ. մայիսի 3-ի դրությամբ իրականացվել է 134-ից ավել մրցույթ, որին մասնակցել է 1310-ից ավելի մարդ: Նույն մարդ տարբեր պաշտոնների համար մրցույթներին դիմել է միջինը 7 անգամ:<br><br>2022 թ. միջինում 1 թեկնածուի տարբեր պաշտոնների մրցույթի դիմելու քանակը՝ 6, կազմակերպված մրցույթների քանակը՝ 132, մրցույթներին մասնակիցների քանակը՝ 1051: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը կենտրոնանում է ԿԿՀ | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերի վրա: Տրվում է բարձր միավոր, եթե գործնականում ընտրության ընթացակարգը և՛ արժանիքահեն է (հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա), և՛ թափանցիկ: Նշանակվում է միջին միավոր, եթե ընթացակարգն արժանիքահեն է, բայց ոչ թափանցիկ կամ ընդհակառակը: Տրվում է ցածր միավոր, եթե ընթացակարգը թափանցիկ չէ և հիմնված է հովանավորչության վրա: Հետազոտողը պետք է ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից պահանջի իր անձնակազմի ընտրությունը կարգավորող համապատասխան կանոնների պատճենը: | | | | |
| 15. | Քննության և վարույթների իրական | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ | Չունի փորձագիտություն վարույթների և քննությունների իրականացման | Չունի փորձագիտություն վարույթների և քննությունների որոշ | Փորձագիտության բարձր մակարդակ վարույթների և քննությունների | միջին | ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների [քանակը և հաստիքացուցակը] հաստատում է Կառավարությունը՝ հանձնաժողովի առաջարկությամբ:<br><br>Համաձայն ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման՝ 2022 թ. հանձնաժողովը ունեցել է 57 հաստիքային միավոր, որից<br>• Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն - 5 հաստիք (որից թափուր է 0), |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ացման փորձագիտությունը | անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ | ոլորտներում | ոլորտներում | ոլորտներում | | • Հայտարարագրերի վերլուծության վարչություն - 12 հաստիք (որից թափուր է 2),<br>• Վարույթների և իրավական ապահովման վարչություն - 10 հաստիք (որից թափուր է 7) :<br><br>Քննությունների ու վերլուծությունների, վարույթների իրականացման փորձագիտության գնահատման մասին աշխատակիցների ստաժի վերաբերյալ տվյալների բացակայության պայմաններում հիմք են ընդունվել նշված ստորաբաժանումներում թափուր հաստիքների քանակը, ինչպես նաև հոսունության մակարդակները: Փորձագիտական մակարդակն, ըստ թափուր հաստիքների, գնահատվել է 30%=9(7+2)/27(5+12+10): Մասնավորապես ռիսկային է վարույթների և իրավական ապահովման վարչությունում 7 հաստիքների թափուր լինելու հանգամանքը, որը կարող է հանգեցնել ինչպես նախանշված վարույթների իրականացման ծրագրերի խաթարմանը, այնպես էլ աշխատակիցների փորձագիտության մակարդակի իջեցմանը: Նոր ներգրավվող աշխատակիցներից պահանջվելու է ժամանակ և վերապատրաստումներ փորձ ձեռքբերելու ու աշխատանքները բնականոն հուն տեղափոխելու համար: Հոսունությունը վերոնշյալ ստորաբաժանումներում բարձր է, որը նույնպես հանգեցնում է աշխատակիցների փորձագիտության և հմտությունների ու որակավորումների կորստին:<br><br>ԹԻՀԿ հարցման արդյունքներով ԿԿՀ նախկին աշխատակիցների մոտ 43%-ը ունեցել են գիտական աստիճան և ԿԿՀ-ում աշխատանքի 1 տարուց ավելի փորձ: Մինչդեռ, գործող աշխատակազմի աշխատակիցների միայն 72.0%-ն ունի մագիստրոսի աստիճան, իսկ 20%-ը՝ բակալավրի, որոնք ԿԿՀ-ում ունեն 1 տարուց ավելի աշխատանքի փորձ: Զբաղեցրած պաշտոնների մասով նախկին |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | աշխատակիցների 43%-ը վարչության պետեր են եղել, իսկ ներկա աշխատակիցների միայն 37%-ն է զբաղեցրել վարչության պետի պաշտոն: Ըստ էության, հոսունության արդյունքում զգալիորեն վատթարացել է աշխատակիցների կրթական մակարդակը: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները բարեվարքության պահանջների խախտումների քննության և առերևույթ կոռուպցիոն տարրեր պարունակող դեպքերի արձանագրման ոլորտում ԿԿՀ անձնակազմի փորձագիտությունը: Գնահատումը հիմնականում որակական է և հիմնված է անձնակազմի կրթական որակավորման և վերապատրաստման (հատկապես քննության և վարույթների մեթոդների) վերաբերյալ տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի միջին աշխատանքային ստաժի վրա: Ցուցանիշը հիմնված է նաև ԿԿՀ-անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ներկայացուցիչների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ կարող է ծառայել նաև քննության և/կամ վարույթների գործառույթների համար պատասխանատու թափուր հաստիքների քանակը: | | | | |
| 16. | Կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության իրա | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն | Չունի փորձագիտություն բազմաթիվ ոլորտներում | Չունի փորձագիտություն որոշ ոլորտներում | Փորձագիտության բարձր մակարդակ | Միջին | Համաձայն ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման՝ 2022 թ. հանձնաժողովը ունեցել է 57 հաստիքային միավոր, որից<br>• Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն - 3 հաստիք (որից թափուր է 1),<br>• Մեթոդական աջակցության վարչություն -3 հաստիք (որից թափուր է 1),<br>• Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչություն - 4 հաստիք (որից թափուր է 1):<br><br>Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիտորինգի, մեթոդական աջակցության և հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցների փորձագիտությունը գնահատվել է 30%= 3(1+1+1)/10(3+3+4): Նշված մասնագիտական ստորաբաժանումներում թափուր հաստիքների առկայությունը, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի բարձր հոսունության և համալրվածության ցածր մակարդակն անուղղակիորեն վկայում են կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության վարչությունների աշխատակիցների ցածր փորձագիտական ստաժի մասին: Առավելապես ռիսկային են նշված ստորաբաժանումներում |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | կանացման փորձագիտություն | զբաղեցնող անձանց, ՔՅԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ | | | | | հաստիքների փոքրաթիվ լինելը, մասնավորապես հակակոռուպցիոն կրթության և մեթոդական աջակցության վարչության պայմաններում, որոնցում նախատեսված 3 հաստիքներից թափուր է մեկը՝ այն էլ վարչության պետի պարագայում:<br><br>ԹԻՀԿ-ի կողմից փորձագետների հետ հարցազրույցների արդյունքները վկայում են, որ ԿԿՀ անձնակազմի որոշ մասը բավական պրոֆեսիոնալ է իր գործում: ԿԿՀ աշխատակիցների գիտելիքներն ու հմտությունները, ընդհանուր առմամբ, բավարար են ԿԿՀ արդյունավետ գործունեության ապահովման համար:Միաժամանակ, հաճախ ընդգծում են ԿԿՀ աշխատանքում առկա թերացումները, որոնց պատճառը հենց փորձագիտության հետ կապված խնդիրներն են: Խնդիրների հիմքում փորձագետներն առաջին հերթին տեսնում են վարչական վարույթներ հարուցելու հմտությունների և փորձի, ֆինանսական հաշվետվությունների (հայտարարագրերի) վերլուծության հետ. չի արվում բովանդակային վերլուծություն, դեռ լավ չեն պատկերացնում կոռուպցիոն ռիսկերի վերհանման գործընթացը: |
| | | | *Ուղղորդում*: ԿԿՀ անձնակազմի փորձագիտության մակարդակի գնահատումը կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության համակարգի, հակակոռուպցիոն կրթության ոլորտում հիմնականում որակական է և հիմնված է անձնակազմի կրթական որակավորումների և վերապատրաստման վերաբերյալ տրամադրված տեղեկությունների վրա, ինչպես նաև ԿԿՀ | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | անձնակազմի միջին աշխատանքային ստաժի վրա, եթե այս տեղեկությունները հնարավոր է տրամադրել: Ցուցանիշը հիմնված է նաև ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ կարող է ծառայել նաև կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության, բարեվարքության համակարգի գործառույթների համար թափուր հաստիքների քանակը: | | | | |
| 17. | Անձնակազմի ուսուցում և վերապատ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրու | Վերապատրաստումները չեն կարևորվում և անտեսվում են | Անձնակազմի որոշ վերապատրաստված անդամներ՝ վերապատրաստմ | Լավ պատրաստված անձնակազմ՝ համապատասխան վերապատրաստման | Միջին | Համաձայն ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2020 թ. N 1500-Ա որոշման՝ ԿԿՀ անձնակազմի 57 հաստիքներից քաղաքացիական ծառայողների հաստիքներ են համարվում 48-ը: Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային տվյալների համակարգի՝ ԿԿՀ անձնակազմի 51 պաշտոններից 42-ն են ճանաչված քաղաքացիական ծառայողներ: [ՔԾՏՀ \| Կայքէջ (gov.am)]<br><br>2022 թ. հունվարի 21-ից Հանձնաժողովի տարածքում ԱՄՆ ՄԶԳ համագործակցությամբ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | րաստում | յցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակ | | անսահմանափակ հնարավորություններով, և/կամ առաջարկվող վերապատրաստումը տեղին չէ | բազմաթիվ հնարավորություններով | | շրջանակում իրականացվում է «Պետական մարմինների և վարչակազմի լիազորությունների մասին հայեցակարգ» թեմայով դասընթացների շարք: Այն վարում էր Բիզնեսի միջազգային ակադեմիայի (IAB) փորձագետ Գաբրիել Բալայանը, որը Հանձնաժողովի աշխատակիցներին ներկայացրեց պետական կառավարման համակարգի և այլ մարմինների հիմնական գործառույթները, պատասխանատվության հարաբերակցության, պետական կառավարման հայեցողական լիազորությունների առանձնահատկությունները: http://cpcarmenia.am/hy/news/item/2022/01/27/2022-01-27/<br><br>Կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովի աշխատակիցները 2022 թ. մասնակցել են մի շարք դասընթացների, այդ թվում Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կողմից կազմակերպված «Ալյօրինի գույքի նույնականացում», Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) կողմից կազմակերպված «Կրթական ծրագրերի կազմման առանձնահատկությունները», «Հանրային գնումների գործընթացի կոռուպցիոն ռիսկերը» թեմաներով վերապատրաստումներին և այլն: Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն:<br><br>«Հակակոռուպցիոն կրթություն և երիտասարդության հզորացման համաշխարհային ռեսուրսը»[115] միջազգային փորձի լավագույն հարթակ է, որի հետ ձևավորվել է համագործակցային միջավայր և պատրաստակամություն՝ աջակցելու Հայաստանում կոռուպցիայի |

[115] Global Resource for Anti-Corruption Education and Youth Empowerment

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | երպությունների ներկայացուցիչների հետ | | | | | կանխարգելմանը միտված կրթական ծրագրերի կազմմանը և արդիականացմանը:<br><br>Վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման համար միջոցներ չեն ծախսվել:<br><br>ԹԻՀԿ կողմից ԿԿՀ ներկա և նախկին աշխատակիցների հարցման արդյունքները վկայում են, որ ներկա աշխատակիցների միայն 18.2%-ն է լիովին բավարարված վերապատրաստման հնարավորություններով, իսկ 54.5%-ն ավելի շուտ բավարարված է: Մինչդեռ, նախկին աշխատակիցներից և ոչ մեկը լիովին բավարարված չի եղել վերապատրաստման հնարավորություններով, իսկ 57.2%-ը ընդհանրապես բավարարված չէ կամ ավելի շուտ բավարարված չի եղել վերապատրաստման հնարավորություններով: ԿԿՀ-ում կազմակերպվող վերապատրաստումների հաճախականության մասով 42% հստակ դիրքորոշում չի արտահայտել, մինչդեռ ԿԿՀ ներկա աշխատակիցների 42%-ը գտնում է, որ հաճախ են կազմակերպվում բարեվարքության հարցերի շուրջ վերապատրաստումներ:<br><br>ԿԿՀ աշխատակիցների վերապատրաստումների մասով փորձագետների հետ կազմակերպված հարցազրույցների արդյունքները վկայում են, որ ԿԿՀ աշխատակիցները որոշակի վերապատրաստումների մասնակցում են, որոշակի ուշադրություն դարձվում է կարողությունների զարգացմանը (առկա է HR capacity building բաղադրիչ): Սակայն հարց է, թե ԿԿՀ կարողությունների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | զարգացման պլանը որքանով է մշակված, որքանով են հետևողական այդ հարցում (նշվում է, որ նախկինում ԿԿՀ գլխավոր քարտուղարը կազմել է վերապատրաստումների տարեկան պլան, սակայն ներկա իրավիճակի մասին փորձագետները մանրամասնորեն տեղեկացված չեն):<br><br>ԿԿՀ-ն երբևէ չի դիմել ՊԿԱ-ին աշխատակիցների վերապատրաստումներ իրականացնելու հարցով, պարզ չեն դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպված վերապատրաստումների հետ կապված մանրամասները: |
| | | | *Ուղղորդում*: Պետք է մանրամասնորեն ներկայացվեն ԿԿՀ անձնակազմի վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև մասնակցած աշխատակիցների քանակը 2020-2022 թթ. ընթացքում կամ նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները: Պետք է տրամադրվեն ԿԿՀ-ի կողմից 2020-2022 թթ. ընթացքում վերապատրաստմանը հատկացված բյուջեի մանրամասները, եթե առկա են: Որպես ընդհանուր կանոն, մարդկային ռեսուրսների բյուջեի 1 -3%-ը համարվում է համարժեք: 1%-ից պակաս հատկացումը | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հուշում է, որ վերապատրաստումն առաջնահերթություն չէ: | | | | |
| 18. | Անձնակազմի կայունություն | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց,<br><br>ՔՀԿ-ների ղեկավա | Կադրերի հոսունության և հրաժարականների բարձր մակարդակ (տարեկան 10%-ից ավելի) | Կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ (տարեկան 5-10%) | Կադրերի հոսունության և հրաժարականների ցածր մակարդակ (տարեկան 0-5%) | Ցածր | Քաղաքացիական ծառայողներին ծառայությունում պահելու և մոտիվացման գնահատման կարևորագույն ցուցանիշը կադրերի հոսունությունն է: Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից պատրաստված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ 2021 թվականի զեկույց»-ի https://cso.gov.am/news/267 տվյալների՝ «2020 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, դադարեցվել են 536 քաղաքացիական ծառայողի լիազորություններ կամ ընդհանուր ազատվածների 54.6%-ը, այսինքն՝ լիազորությունները դադարեցրած քաղաքացիական ծառայողների հոսունության մակարդակը կազմել է 8%: Սա բավականին բարձր ցուցանիշ է նկատի ունենալով, որ հոսունության 3-5%ն է համարվում բնական»:<br><br>ԿԿՀ 2020-2022 թթ. մարդկային ռեսուրսների հաշվետվության և քաղաքացիական ծառայության գրասենյակի տվյալները վկայում են, որ 2020 թ. ԿԿՀ 44 հաստիքների (այդ թվում 4 փորձագետներ) պայմաններում համալրվել է 17-ը, ազատվածներ չեն եղել: Դրանք հիմնականում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմի նախկին աշխատակիցներն են վերահիրամանագրվել, գումարած հանձնաժողովի անդամները և օգնականները: Այլ խոսքով, քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների մրցույթներ չեն կազմակերպվել: 2020 թ. 17 համալրված հաստիքի և 23 թափուր պաշտոնների պայմաններում համալրվածությունը կազմել է 80.9% (17/44-23): Համաձայն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի 2020 թ. կատարման ենթակա |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | րների և մարդկային ռեսուրսների կառավարման փորձագետների հետ, հնարավորության դեպքում պետք է հարցազրույց անցկացվի ԿԿՀ անձնակազմի այն նախկին աշխատակիցների հետ, ովքեր վերջերս են | | | | | միջոցառումների իրականացման ընթացքի, մշտադիտարկման և գնահատման արդյունքների զեկույցի՝ «վերստուգիչ ցուցանիշի համաձայն՝ 2020 թ.-ին Հանձնաժողովն ունի բավարար շենքային, նյութական պայմաններ, աշխատակազմի առնվազն 70%-ը համալրված է»: https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1129762788951__2020.pdf 2021 թ. ԿԿՀ գործունեության հաշվետվությամբ՝ «Հանձնաժողովի հաստիքների քանակն ավելացել է 15 նոր հաստիքով՝ նախկին 40-ի փոխարեն դառնալով 55... Ներկայումս Հանձնաժողովն ունի 55 հաստիք, որից համալրված են 36 հաստիք»: https://www.moj.am/storage/uploads/15REPORT_ANNUAL_2021.pdf 2022 թ. հաշվետվությամբ՝ ԿԿՀ հաստիքների համալրման մասին տեղեկատվությունը բացակայում է: ԹԻՀԿ հարցման արդյունքով՝ «2023 թ. մայիսի 3-ի դրությամբ 57 հաստիքային միավորից թափուր են 14-ը, համալրված՝ 43 հաստիքային միավոր»:<br><br>Թափուր հաստիքների մրցույթները սկսվել են իրականացվել 2021 թ.-ից: 2021 թ. հաստիքները կազմել են 53 (առանց 5 փորձագետների), որի պայմաններում համալրվել է 33-ը, պաշտոնից ազատվել՝ 8, թափուր են մնացել 15 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 18.6% ( 8/58-15): 2022 թ., փաստացի հաստիքացուցակով 57 աշխատակիցներից (առանց 6 փորձագետների) համալրվել է 22-ը, ազատվել՝ 11, թափուր՝ 16: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 23.4% (11/63-16): Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, ԿԿՀ-ում հոսունությունը մնում է բարձր նաև ՀՀ քաղաքացիական ծառայողների շրջանում: Մասնավորապես համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների, 2021 թ. ԿԿՀ աշխատակազմում պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողների թիվը կազմել է 9 ծառայող, իսկ տարվա վերջի դրությամբ քաղաքացիական ծառայողների թիվը կազմել է 26 աշխատակից՝ 40 հաստիքներից: Հոսունությունը կազմել է 34.6% ( |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ազատվել աշխատանքից | | | | | 9/26): 2022 թ. ԿԿՀ քաղաքացիական ծառայողների շրջանում հոսունությունը նվազել, հասել է 21.8%-ի (7/32): Այդուհանդերձ, այն շարունակել է բարձր մնալ քաղաքացիական ծառայության համակարգի միջինից (8%)՝ ավելի քան 2.5 անգամ:<br><br>Հոսունության հիմնական հանգամանքները, ինչպես ցույց են տալիս ՔԾԳ տվյալները, պաշտոնական, փաստաթղթավորված արձանագրումները, ազատվել են «սեփական դիմումի հիման վրա» պատճառաբանությամբ: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս նախկին աշխատակիցների շրջանում ԹԻՀԿ հարցումների արդյունքները, աշխատանքից ազատման հիմնական պատճառների շարքում նշվել է «վատ աշխատանքային միջավայրի մթնոլորտի առկայությունը» 85.7% և «ցածր աշխատանքի վարձատրությունը/եկամուտները»՝ 28.6%: ԿԿՀ գործող աշխատակիցների շրջանում կատարված հարցման արդյունքները տրամագծորեն հակառակ պատկերն են նկարագրում: ՄասնավորապեսԿԿՀ-ում մնալու հիմնական գործոնների շարքում 72.7%-ը կարևորել է «ԿԿՀ-ում լավ աշխատանքային միջավայրի առկայությունը», 63.6%-ը՝ «հանրությանը ծառայելու վեհ գաղափարը», իսկ 45.5%-ը՝ «աշխատանքի հեղինակությունը»: Նույնիսկ նման պայմաններում ԿԿՀ աշխատակիցների 54.5 %-ը մտածում են մեկ կամ երկու անգամ և 18.2%-ը՝ պարբերաբար աշխատավայրը փոխելու մասին:<br><br>Փորձագետների հետ հարցազրույցները փաստում են, որ ԿԿՀ-ում թափուր հաստիքները շատ են, և կադրերի հոսունությունը բավական բարձր է: Փորձագետներից մեկը նշում է օրինակներ՝ (1) առնչվել են ԿԿՀ գլխավոր քարտուղարի հետ և ավելի ուշ իմացել, որ վերջինս այլևս չի աշխատում, (2) Պետական կառավարման ակադեմիայի (ՊԿԱ) ՄՌԿ ծրագրի շրջանավարտներից մեկն աշխատում էր ԿԿՀ-ում և |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | աշխատանքից դուրս է եկել, սակայն փորձագետը շեշտում է, որ պատճառների մասին տեղյակ չէ:<br><br>Որպես թափուր հաստիքների առկայության պատճառ նշվում են ԿԿՀ-ում ցածր աշխատավարձերը և ոլորտի «նոր», «սպեցիֆիկ» լինելը: Ինչ վերաբերում է բարձր հոսունությանը, փորձագետներից մեկը պատճառը համարում է ԿԿՀ-ում վատ աշխատանքային մթնոլորտը: Վերջինս որոշակիորեն կապվում է ԿԿՀ նախագահի հետ համատեղ աշխատանքի բարդությունների հետ.<br><br>*«Ինձ թվում ա մթնոլորտի հարցն ա ներսում... Անձնական ֆակտորներ կան... Կոնկրետ ԿԿՀ նախագահի հետ աշխատելը շատ դժվար ա, ինքը շատ փոփոխական, չես հասկանում... Մենք իրա հետ քննարկումներ ենք ունեցել, ահավոր ծանր ա անցել, ասեմ, որովհետև ինքը սենց, ոնց ասեմ, բաց չի ու համագործակցային չի...»* |
| | | | *Ուղղորդում*: Եթե ԿԿՀ կադրերի հոսունության մակարդակը բարձր է, ապա իր անձնակազմին պահելու ԿԿՀ անկարողության պատճառները պետք է պարզվեն ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից, և հնարավորության դեպքում, վերջին տարվա ընթացքում պաշտոնից ազատված նախկին աշխատակիցներից հարցազրույցների միջոցով: Կադրերի հոսունության մակարդակը կադրերի շարժն է, | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | որն առաջանում է հավաքագրման և հրաժարականների հետևանքով: Եթե անձնակազմը ժամանակավորապես գործուղվում, փոխադրվում կամ ռոտացիայի է ենթարկվում ԿԿՀ այլ պետական մարմիններից կամ հակառակը, ապա գործուղման կամ փոխադրման մանրամասները նույնպես պետք է գրանցվեն: Եթե ԿԿՀ-ն անցկացնում է ելքային հարցազրույցներ անձնակազմի այն անդամների հետ, ովքեր վերջին տարիներին հրաժարական են տվել, ապա հետազոտողը պետք է այդ տեղեկությունները պահանջի ԿԿՀ-ից: Նշված տվյալները կարելի է ստանալ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից հարցման միջոցով: | | | | |
| | **ԿԿՀ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ միավորի հանրագումարը**[116] | | | | | 7/18=38.9% | |

[116] Լրացուցիչ ուղղորդում հետազոտողների համար. ոշված ցուցանիշների նկատմամբ կիրառված «աշխատակազմ» և «անձնակազմ» իմաստով հասկացությունները ներառում են աշխատակազմի անդամներին, բայց ոչ՝ ԿԿՀ անդամներին:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | **Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն (9 ցուցանիշ)** | | | | | | |
| 19. | Տարեկան հաշվետվություն | ԿԿՀ-ի տարեկան հաշվետվությունը, Հարցազրույցներ ԿԿՀ-ի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և կոռուպ | ԿԿՀ-ն իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Խորհրդարանին, սակայն դա հասանելի չէ հանրությանը և/կամ հասանելի է դարձվում հանրությանը, սակայն բովանդակային մանրամասները | ԿԿՀ-ն իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Խորհրդարանին, և դա հասանելի է դարձվում հանրությանը, սակայն հաշվետվության տրամադրած տեղեկատվության մակարդակը «որոշ չափով | ԿԿՀ-ի վերաբերյալ տրամադրվում են համապարփակ տեղեկություններ տարեկան հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Խորհրդարանին և դյուր հասանելի է հանրությանը | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ով սահմանված են Հանձնաժողովի հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքի կիրարկումն ապահովող միջոցառումները, որոնք ներառում են.<br>ա) ԿԿՀ գործունեության կիսամյակային հաղորդումների հրապարակում հանձնաժողովի կայքէջում,<br>բ) ԿԿՀ ընդունած որոշումների և եզրակացությունների, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունների և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում կայքէջում,<br>գ) իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով,<br>դ) նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:<br><br>ԿԿՀ տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ ներկայացնելու մասին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի պահանջի իրականացումն «ԱԺ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ապահովված չէ: Մասնավորապես ԿԿՀ՝ ԱԺ ներկայացված տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ-ի կողմից չի քննարկվում և «ի գիտություն» չի ընդունվում: «ԱԺ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ գլխում կանոնակարգված են միայն սահմանադրական մարմինների կողմից ԱԺ-ին ներկայացվող հաղորդումների քննարկման գործընթացները: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ցիայի դեմ պայքարի փորձագետների հետ | շատ համառոտ են | սահման ափակ է» | | | arlis.am/DocumentView.aspx?DocID=175794 Ինքնավար մարմինների մասով նման կարգավորումները բացակայում են:<br><br>2019-2022 թթ. ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումներից Հանձնաժողովի կայքէջում առկա է միայն 2021 և 2022 թվականների ԱԺ-ին ուղղված հաղորդումները, http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf ինչպես նաև նույն թվականների կիսամյակային հաղորդումները: http://cpcarmenia.am/files/legislation/544.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/748.pdf<br><br>Հանձնաժողովի կայքէջում բացակայում է նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդման վերաբերյալ տեղեկատվությունը:<br><br>Հաղորդումների պատրաստման և հրապարակման ժամկետների տեսանկյունից համաձայն ԿԿՀ կայքէջի տվյալների՝ http://cpcarmenia.am/hy/report/page/1/ կիսամյակային հաղորդումները ներկայացված են նաև ԿԿՀ-ի մասին օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ժամկետների խախտումներով: Մասնավորապես 2022 թ. առաջին կիսամյակի հաղորդումը տեղադրված է 09.08.2022 թվականին, այն դեպքում, երբ այն պետք է հրապարակվեր մինչև 2022 թ. հուլիսի 10-ը: Նույն կերպ ժամկետի խախտմամբ են հրապարակված նաև 2021 թ. ԱԺ ներկայացվող ԿԿՀ տարեկան (08.04.2022) և 2021 թվականի առաջին կիսամյակի գործունեության հաղորդումները ( 08.11.2021): |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Նշված հաղորդումների համապարփակության գնահատման տեսանկյունից առկա հաշվետվությունների (հաղորդումների) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիսամյակային գործունեության հաղորդումները չունեն միասնական կառուցվածք, 2021 թ. կիսամյակային հաղորդումը ներկայացված է որպես բարեվարքության ստուգման և հայտարարագրերի ու բարեվարքության պահանջների խախտումների ու դրանց մասով իրականացված վարույթների վերաբերյալ աղյուսակային ու գրաֆիկական պատկերներով տեղեկատվություն, իսկ 2022 թ. կիսամյակային հաշվետվությունը ներկայացված է ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումներին վերապահված գործառույթների շրջանակում վերջիններիս կողմից կատարված աշխատանքների հաշվետվություն:<br><br>ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումները կառուցվածքի ու ներառված նյութերի ու տեղեկատվության տեսանկյունից առավել համապարփակ են, քանի որ ներառում են ԿԿՀ-ին վերապահված մանդատի ու լիազորությունների շրջանակը բնութագրող բոլոր ոլորտներում իրականացված աշխատանքները: Այդուհանդերձ, երկու տարիների հաղորդումների համադրությունը հնարավորություն չի տալիս արձանագրելու առաջընթացը, գնահատելու հաջողություններն ու բացերը: Տվյալների մեծ մասը չունի ագրեգատավորման կամ նպատակային առանձին խմբերի մասով տվյալներ: Մասնավորապես առավել լայն տարածում ունեցող հայտարարագրման վերաբերյալ տվյալները խիստ խոշորացված են և ըստ ծառայության տեսակների կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խմբերի՝ մանրամասնեցված չեն: Բարեվարքության ստուգման կամ ուսումնասիրությունների մասով մանրամասն ներկայացված են իրավիճակը և ստացված արդյունքներն՝ ըստ թեկնածուների խմբերի և ներկայացված եզրակացությունների արդյունքների: Օգտագործելու տեսանկյունից ԿԿՀ գործունեության հաղորդումների տեքստերը, |

| | ՑՈՒ ՑԱ ՆԻՇ | ՏՎՅԱԼ ՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ներկայացված տվյալները մեքենայական ընթեռնելի չեն, ներկայացված են PDF ձևաչափով: ԿԿՀ տարեկան գործունեության հաղորդման տեքստում մեծ տեղ են զբաղեցնում բարեվարքության և կանխարգելման օրենսդրական կարգավորումների կրկնությունները, դրանց մեկնաբանությունները, միջազգային կազմակերպությունների զեկույցներին հղումներն ու ցիտատները ուղղակիորեն չեն պայմանավորում ԿԿՀ գործունեության արդյունքները: Նշված հաղորդումները ունեն մեծամասամբ բացատրական բնույթ և կարող են առանձին հարցերի մասով ծառայել՝ որպես ուսուցողական նյութեր: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատվում է նաև ԿԿՀ տարեկան հաշվետվության համապարփակությունն ու մատչելիությունը ԿԿՀ տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունները և հաշվետվության հասանելիությունը: Վերլուծեք ԿԿՀ տարեկան հաղորդման մեջ ներկայացված տեղեկությունները՝ գնահատելու համապարփակությունը և հասանելիությունը հանրությանը: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | «Որոշ չափով սահմանափակ» տեղեկատվություն նշանակում է, օրինակ, ԿԿՀ գործունեության, բյուջեի և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ բարձր մակարդակի տվյալներ, որոնք բավականաչափ ապաագրեգացված չեն, ուստի ենթակա են սահմանափակ գործածության: | | | | |
| 20. | Արծագանքողականությունը տեղեկություններին, հանրության կողմից ներկայացվ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների | ԿԿՀ-ն չունի որևէ հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին կամ մեխանիզմներին՝ արձագանքելու տեղեկություններ ստանալու վերաբեր | ԿԿՀ-ն ունի որոշ մեխանիզմներ՝ արձագանքելու տեղեկություններ ստանալու վերաբերյալ հանրության կողմից ներկայացվող հարցումներին (ներառյալ ԿԿՀ | ԿԿՀ-ն ունի համակողմանի հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին և գործընթացներին և ժամանակին արձագանքում է հանրության կողմից | Միջին | Հանձնաժողովին և մյուս պետական մարմիններին ՀՀ պետական կառավարման համակարգում կոռուպցիայի պատճառները, օրինաչափություններն ու հետևանքները համակողմանիորեն գնահատելու գործընթացում օժանդակելու նպատակով Հանձնաժողովի և ՀԲ համագործակցությամբ իրականացվել է հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցախույզ: Հարցմանը մասնակցել է 3078 հանրային ծառայող ՀՀ 50 պետական գերատեսչություններից:<br><br>Հարցումն անց է կացվել 2022 թ. ապրիլի 19-ին Հանձնաժողովի և ՀԲ կառավարման գլոբալ պրակտիկայի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:<br><br>«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող Հայաստանի բարեվարքության ծրագրի շրջանակներում իրականացվել է «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն»: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ող հարցումներին | ղեկավարների, լրագրողների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ | յալ հանրության կողմից ներկայացվող հարցումներին և գործնականում չի արձագանքում նման հարցումներին: | որոշումները, և թե ինչպես են ընդունվել այդ որոշումները), բայց դա սովորաբար դժվարին, ծանր և/կամ երկարաշունչ գործընթաց է: | ներկայացվող հարցումներին: | | Վերոնշյալ երկու հետազոտության արդյունքներին արձագանքման տեսանկյունից ԿԿՀ-ն իր 2022 թ. տարեկան հաղորդման մեջ նախատեսում է մի շարք միջոցառումների իրականացում, որոնք այդպես էլ գործողությունների ծրագրի չեն վերածվել և կիրառություն չեն գտել:<br><br>Հանձնաժողովը հասանելիություն ունի էլեկտրոնային e-request.am հարթակին, որի վիճակագրությունը վկայում է, որ ԿԿՀ-ն չի գտնվում ամենապահանջված պետական մարմինների շարքում: https://e-request.am/hy/statistics |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ թափանցիկությունը հանրության կողմից ներկայացվող հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է): | | | | |
| 21. | Արտաքին | ԿԿՀ տարեկան | ԿԿՀ-ն հաշվետու է | ԿԿՀ-ն հաշվետու է | ԿԿՀ-ն ունի վերահսկո | Ցածր | ԿԿՀ-ն հանդիսանում է ինքնավար մարմին: ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածով ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | վերահսկողության մեխանիզմներ | հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, բարեվարքության հարցերով զբաղվող այլ մարմինների, ՔՀԿ-ների ղեկավարների | Գործադիրին՝ առանց որևէ վերահսկիչ հանձնաժողովի | վերահսկիչ հանձնաժողով(ներ)ին, որոնց անդամ են Խորհրդարանի պատգամավորները և/կամ ավագ քաղծառայողները, սակայն հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի գործում և/կամ առկա են սակավաթիվ լրացուցիչ | ղության մեխանիզմների համապարփակ փաթեթ, այդ թվում՝ արդյունավետ վերահսկող հանձնաժողով(ներ)՝ Խորհրդարանի պատգամավորների, ավագ քաղծառայողների և հայտնի քաղաքացիների գործուն մասնակցությամբ | | պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ով կարգավորվում ԿԿՀ տարեկան գործունեության հաղորդումների ներկայացումը ՀՀ ԱԺ-ին: Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ի կողմից ինքնավար մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով ԿԿՀ-ին վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը:<br><br>ԿԿՀ ամենամյա գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով ԱԺ-ին ամենամյա հաղորդումների ներկայացման ենթատեքստում: ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության 2021 և 2022 թվականների տարեկան ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԿԿՀ գործունեության հաշվեքննությունը ներառված չի եղել հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրում: Այն բացակայում է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023 թ. ծրագրից: http://armsai.am/hy/annual-program<br><br>Համաձայն ԿԿՀ-ին ուղղված ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ «Նման գործողություններ չեն իրականացվել, և համապատասխան արդյունքներ առկա չեն»:<br><br>Նկատի ունենալով, որ ԿԿՀ-ն օժտված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը մասնակցության գործընթացի գործառույթով և այդ մասով ցուցաբերում է ակտիվ ներգործություն ինստիտուցիոնալ խնդիրների լուծման ու հայեցակարգային հարցերի շուրջ ՀՀ կառավարությանն առաջարկությունների ներկայացման |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | հետ, մամուլի հաղորդումներ | | վերահսկողության մեխանիզմներ | | | միջոցով՝ ԿԿՀ գործունեության նկատմամբ վերահսկողությունը նպատակահարմար է դիտարկել և քննարկել պառլամենտական վերահսկողության գործուն լծակների սահմանման, ԱԺ գլխադասային մշտական հանձնաժողովների կողմից ԿԿՀ հաշվետվությունների հրապարակային քննարկման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ: ԱԺ մշտական հանձնաժողովը լիազորված պետք է լինի ԿԿՀ գործունեության գնահատման, ԿԿՀ անդամների թափուր հաստիքների համալրման, պաշտոնավարման նպատակահարմարության հարցերի լուծման, ԿԿՀ ռազմավարության և գործունեության մոնիտորինգի արդյունքների քննարկման, բյուջեի մշակման ու իրականացման խնդիրների լուծման վերաբերյալ պառլամենտին առաջարկությունների ներկայացման լիազորություններով: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը, որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԿԿՀ-վերահսկողական հանձնաժողով(ներ)ին: Նկարագրեք ԿԿՀ վերահսկողական հանձնաժողովների թիվը և կազմը՝ գնահատելու այս հանձնաժողովներում հանրության ներկայացվածության և մասնակցության աստիճանը: Արդյունավետ գործող հանձնաժողովը պահանջում է | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ուսումնասիրության գործընթաց և հանձնաժողովի առաջարկություններին հետամուտ լինելու մեխանիզմներ: Եթե ԿԿՀ-ն չունի վերահսկողական հանձնաժողով, ապա բացատրել, թե ինչու է դա այդպես: Նաև նկարագրեք, թե վերահսկողության ինչպիսի լրացուցիչ մեխանիզմներ են գործում (օրինակ, կանոնավոր հաշվետվություններ ներկայացնել Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում): Եթե ԿԿՀ-ն ենթակա է Աուդիտի գերագույն մարմնի (ՀՀ հաշվեքննիչ պալատի) կողմից, ապա պետք է տրամադրվեն նաև 2020-2022 թթ. ընթացքում բացասական աուդիտի հուշագրերի կամ դիտարկումների քանակը և մանրամասները: | | | | |
| 22. | Ներքին վերահսկողության մեխ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազ | ԿԿՀ-ն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության թույլ | ԿԿՀ-ն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության որոշ | ԿԿՀ-ն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության մեխանիզ | Ցածր | Պետական մարմիններում ներքին վերահսկողության համակարգերի օրենսդրական կարգավորումները սահմանված են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև տվյալ մարմնի կանոնադրությամբ:<br><br>«Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը սահմանում է, որ պետական մարմնի և ենթակա պետական |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | անիզմներ | րույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ | մեխանիզմներ կամ ամենևին չունի | մեխանիզմներ, բայց կարևոր բացերով | մների համակարգային մանի լրակազմ | | մարմնի գործունեության վերահսկողությունն իրականացնում են հենց ինքնավար և անկախ մարմինները arlis.am/DocumentView.aspx?docid=171966: Սա նշանակում է, որ ԿԿՀ ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են ԿԿՀ-ի կողմից: 2020 թ. օգոստոսի 25-ի ԿԿՀ թիվ 02-Ա «ԿԿՀ կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 14-րդ կետը պահանջում է հանձնաժողովի նախագահի կողմից հաստատել ԿԿՀ գործունեության ռազմավարական պլանը և ներքին կարգապահական կանոնները: 451.pdf (cpcarmenia.am) ԿԿՀ կայքէջում բացակայում է ԿԿՀ ռազմավարական պլանի վերաբերյալ փաստաթուղթը : Համաձայն ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ հարցման արդյունքների՝ ԿԿՀ նախագահի 2021 թ. փետրվարի 12-ի թիվ 01-Լ հրամանով հաստատվել է «ԿԿՀ աշխատանքային կարգապահությանը ներկայացվող պահանջները» փաստաթուղթը:<br><br>«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով՝ անկախ պետական մարմիններում և ինքնավար մարմիններում ներքին աուդիտի համակարգը գործում է այդ կոլեգիալ մարմնի ենթակայությամբ: ԿԿՀ կայքէջում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի առկայության և անցած 4 տարիների ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին: ԹԻՀԿ կողմից ԿԿՀ հարցման արդյունքներով նույնպես համապատասխան տվյալներ չեն ստացվել: |
| | | | Ուղղորդում: Նկարագրեք ԿԿՀ ներքին վերահսկողության գործընթացները, ներառյալ՝ ԿԿՀ-ն ունի արդյո՞ք կազմակերպության կառավարման ծրագիր (կորպորատիվ պլան), | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Մոնիտորինգի և գնահատման շրջանակ» և կատարողականի գնահատման մեխանիզմներ, չափանիշներ: ԿԿՀ-ն հավաքում է արդյո՞ք կատարողականի վերաբերյալ հանրային ընկալման տվյալներ: Հնարավորության սահմաններում պարզեք, թե նշված տվյալները օգտագործվում են արդյո՞ք ԿԿՀ կարողությունների զարգացման և իրազեկման գործընթացներում: | | | | |
| 23. | Գործընթացների պատշաճ պահպանում | ԿԿՀ հանրային ընկալումների հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ ԿԿՀ | Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50%-ից ցածր) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար | Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75%) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն | Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75%-ից բարձր) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնո | Ցածր | 2022 թ. իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի վերաբերյալ» հարցման տվյալներով «Հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի, 20,7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0,3%-ը՝ հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65,1%)»:<br><br>ԿԿՀ պարագայում փոքր աճ կա 2019 թ. համանուն հարցման արդյունքների համեմատ: Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (crrc.am) Հարցման վերաբերյալ տեղեկատվությունը և համառոտ արդյունքների նկարագրությունը տեղադրված է ԿԿՀ կայքէջում: http://cpcarmenia.am/hy/news/item/2022/11/11/2022-11-11/ Համաձայն նշված հարցման արդյունքների՝ ԿԿՀ աշխատանքի արդյունքներն արդյունավետ են գնահատել հարցվողների 52%-ը: 2019 թ. իրականացված համանման հարցման արդյունքներով https://www.crrc.am/wp-content/uploads/2020/02/Analytical-Report-2.pdf ԿԿՀ (բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի) գործունեությունն արդյունավետ է գնահատել |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | անձնակազմի դեկլարար պաշտոնն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների դեկլարարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, ԿԿՀ հետ անմիջա | պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների դեկլարարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ԿԿՀ հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում | զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների դեկլարարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ԿԿՀ հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում | ղ անձանց, ՔՀԿ-ների դեկլարարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ԿԿՀ հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում | | հարցվողների 24%-ը: Առաջընթացն ակնհայտ է, այդուհանդերձ, դեռևս պահպանվում է ԿԿՀ-ի մասին տեղեկատվություն չունեցողների բավականին մեծ տեսակարար կշիռը, որն արդյունավետ կամ ոչ արդյունավետ գնահատականները դարձնում է ոչ էական:<br><br>Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն. (2023). Միջազգային հանրապետական ինստիտուտ, Բրեվիս, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/<br><br>Համաձայն նշված զեկույցի՝ ԿԿՀ գործունեությամբ լիովին բավարարված են հարցվածների 9%-ը, ավելի շուտ բավարարված՝ 25%-ը (n=1513) (Հանրային Կարծիքի Ուսումնասիրություն. Հայաստանի Առկա Բնակչություն, 2023, p. 20). դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել հարցվածների միայն 8%-ը՝ չնայած որ ՅՌԿԿ-Հայաստանի 2022-2023 թթ. հետազոտության արդյունքներով հայաստանցիների միայն 9.4%-ն է տեղյակ ԿԿՀ գործունեության մասին): Նույն հետազոտությամբ պարզվել է, որ ըստ հայաստանցիների 42%-ի՝ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարը վերջին շրջանում բարելավվել է (Հանրային Կարծիքի Ուսումնասիրություն. Հայաստանի Առկա Բնակչություն, 2023, p. 30): Ընդ որում, սա վերջին 5 տարիների համար ամենավատ ցուցանիշն է, քանի որ 2018 թ. այդպես էին կարծում հայաստանցիների 82%-ը, իսկ 2019-ին՝ 63/67%-ը (Հանրային Կարծիքի Ուսումնասիրություն. Հայաստանի Առկա Բնակչություն, 2023, p. 34):<br><br>Համաձայն հետազոտության արդյունքների (Surveys of Public Servants: Accountability and Integrity in Public Management of Armenia, 2023, p. |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | կան շփումներ ունեցող անձանց հետ | | | | | 26)՝ չնայած հանրային ծառայողների 86%-ը լսել է ԿԿՀ գործունեության մասին՝ միայն 27%-ն է ծանոթ ԿԿՀ-ին և նրա գործառույթներին:<br><br>Վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման մասով գործնականում գնահատման օրինակները բացակայում են: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է հանրության վստահությունը ԿԿՀ-ի կողմից իր լիազորություններն օգտագործելիս և վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման, անկողմնակալության և արդարացիության վերաբերմունքի մեջ: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի գլխավորապես հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով, եթե | | | | |

| | ՅՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | անհրաժեշտ է: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե ԿԿՀ-ն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է ԿԿՀ-ից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները: | | | | |
| 24. | Ազդարարողների, բողոքներ կայացնողների կողմից իրենց ինք | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, տվյալներ ԿԿՀ-ի կողմից ստացված բողոքների վերաբերյալ, հարցազ | Ազդարարողների, բողոքողների փոքր մասնաքաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (25%-ից պակաս) | Ազդարարողների, բողոքողների միջին մասնաքաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (25-50%) | Ազդարարողների, բողոքողների խոշոր մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (50%-ից ավելի) | Չի գնահատվում | «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում 2022 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացված փոփոխությունների ու լրացումների արդյունքում՝ օրենքի հոդված 7-ով անանուն ազդարարման էլեկտրոնային համակարգով հնարավորություն է ընձեռնված ազդարարներին ներկայացնելու հաղորդումներ նաև «շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին»: Նշված հանգամանքներով կապված խախտումների մասին հաղորդումը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131<br><br>Նկատի ունենալով, որ անանուն ազդարարման ինստիտուտը, ԿԿՀ-ում գործնականում 2022 թվականին չի կիրառվել և դատախազությունից համանման հաղորդումներ ԿԿՀ-ին չի փոխանցվել, հետևաբար |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | նությունը բացահայտելու պատրաստակամությունը | րույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ | | | | | ազդարարողների ինքնությունը բացահայտելու պատրաստակամության աստիճանը հնարավոր չէ գնահատել:<br><br>ԿԿՀ և ՀՀ գլխավոր դատախազության 2022 թվականի հաղորդումները նման տեղեկատվություն չեն պարունակում: Համաձայն ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված ՌԻՀԿ հարցման արդյունքների՝ «2021-2022 թվականներին ազդարարման միասնական հարթակի միջոցով պետական և ՏԻՄ մարմիններից ստացված կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումներ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ԿԿՀ-ին վերահասցեագրման դեպքեր չեն արձանագրվել»:<br>https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf<br>https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf<br><br>Համաձայն ԿԿՀ-ին ՌԻՀԿ հարցման արդյունքների՝ ԿԿՀ-ն նման տեղեկատվության չի տիրապետում: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ազդարարողների, բողոքողների՝ իրենց ինքնությունը ԿԿՀ-ին բացահայտելու պատրաստակամությունը: Որպես ազդարարողներ՝ իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամության գնահատման ցուցանիշը հանդիսանում է ԿԿՀ գործընթացների հանդեպ նրանց | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | վստահության ցուցանիշը: Այն չափվում է՝ ստորագրված գրավոր բողոքների և անանուն բողոքների թիվը 2020-2022 թթ. ընթացքում համադրելով ստացված բողոքների ընդհանուր թվի հետ: Եթե ԿԿՀ-ն պաշտպանություն է տրամադրում ազդարարողներին, ապա պետք է նկարագրվեն նման պաշտպանության մանրամասները, եթե հնարավոր է, կոնկրետ օրինակներով: | | | | |
| 25. | ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն | Բողոքները ԿԿՀ անձնակազմի դեմ անտեսվում են և/կամ չեն քննվում առանց որևէ բացատրության | Բողոքները ԿԿՀ անձնակազմի դեմ քննվում են ներքին վերահսկման ստորաբաժանման կողմից | Բողոքները ԿԿՀ անձնակազմի դեմ քննվում են մեկ այլ պետական մարմնի կողմից շահերի բախումից խուսափելու նպատակով | Ցածր | ԿԿՀ անձնակազմի աշխատակիցները «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ: Համաձայն սույն օրենքի հոդված 21-ի՝ քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների և/կամ բարեվարքության և/կամ նրա գործունեության առնչվող և/կամ աշխատանքային հարաբերությունների հետ կապված խախտումների մասով ծառայողական քննությունների գործընթացի արդյունքում կիրառվում են կարգապահական տույժեր:<br><br>Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման վերաբերյալ այլ անձի դիմումի և/կամ լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, մամուլի հաղորդումներ | | | | | Քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են աշխատանքային ներքին կարգապահական կանոններով:<br><br>ԿԿՀ 2021 և 2022 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության՝ այդ թվում կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf , http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf<br><br>Համաձայն ԿԿՀ-ին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ԿԿՀ-ն նման տեղեկատվության չի տիրապետում: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի արդյունավետությունը: Եթե առկա է, ԿԿՀ-ից պետք է ձեռք բերել բողոքողների բնութագիրը, ներառյալ՝ նրանց սեռը, տարիքը, զբաղմունքը և կրթական որակավորումները: | | | | |
| 26. | Բողոքների արդյուն | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և | Բողոքները ԿԿՀ անձնակազմի դեմ անտեսվ | ԿԿՀ անձնակազմի դեմ որոշ հիմնավոր | ԿԿՀ անձնակազմի դեմ բոլոր հիմնավոր բողոքներ | Ցածր | ԿԿՀ 2021 և 2022 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում ԿԿՀ անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության՝ այդ թվում կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | քնեոը | կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, մամուլի հաղորդումներ | ում են և ամենևին չեն քննվում | բողոքներ հանգեցնում են պատժի կամ պատասխանատվության այլ միջոցների | ը հանգեցնում են պատժի կամ պատասխանատվության այլ միջոցների և հրապարակվում են նրա տարեկան զեկույցում | | Համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ԿԿՀ-ն նման տեղեկատվության չի տիրապետում: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները 2020-2022 թթ. ընթացքում: Ներկայացրեք սխալ վարքագծի համար ԿԿՀ անձնակազմի դեմ ներկայացված հիմնավոր բողոքների քանակը՝ նշանակված պատժի մանրամասների հետ միասին: Եթե միայն որոշ հիմնավոր բողոքներ են հանգեցնում պատժի նշանակման, կամ եթե բողոքներն անտեսվում են ԿԿՀ-ի կողմից, բացատրություն խնդրեք ԿԿՀ | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից կամ այլ պետական մարմիններից, որոնք լիազորված են կամ իրավասու են ԿԿՀ անձնակազմի վարքագծի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու համար: | | | | |
| 27. | Բարեվարքության ներքին մեխանիզմներ | | ԿԿՀ-ն չունի վարքագծի կանոններ կամ ներքին կարգապահական ընթացակարգեր կամ դրանք շատ թույլ են և/կամ գործնականում չեն կիրառվում | ԿԿՀ-ն ունի վարքագծի կանոններ և ներքին կարգապահական ընթացակարգեր, սակայն դրանք համապարփակ և/կամ հետևողական չեն կիրառվում | ԿԿՀ-ն ունի համակողմանի վարքագծի կանոններ և կարգապահական ընթացակարգեր, որոնք կիրառվում են արդարացիորեն և հետևողականորեն: | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 19 և 20-րդ հոդվածներով ԿԿՀ գործունեությունն ապահովում են վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են:<br><br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով հանձնաժողովի անդամների վարքագծի կանոնները սահմանվում են ԿԿՀ-ի կողմից: ԿԿՀ-ի կողմից դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, այդ թվում ԿԿՀ անդամների մասով: Այն գտնվում է նախագծման փուլում: https://www.e-draft.am/projects/5555/about<br><br>Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169106<br><br>ԿԿՀ անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների բարեվարքության պահանջները սահմանված են հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով: ԿԿՀ անդամների և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների քննությունն ու լուծումը ԿԿՀ-ի մասին ՀՀ օրենքով իրականացնում է ԿԿՀ-ն: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների խախտումների ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից: Քաղաքացիական ծառայության և ԿԿՀ կայքէջում բացակայում է որևէ տեղեկատվություն ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին տեղեկատվությունը:<br><br>Հայտարարագրման մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հայտարարագրման պարտականություն ունեն ԿԿՀ անդամները, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1-ին և 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող՝ գլխավոր քարտուղարը:<br><br>ԿԿՀ անդամների և աշխատակիցների բարեվարքության մեխանիզմների կիրարկման տեսանկյունից գործնականում ոչ մի գործընթաց չի իրականացվել:<br><br>Համաձայն ԿԿՀ-ին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ԿԿՀ-ն նման տեղեկատվության չի տիրապետում:<br><br>Փորձագետների հետ հարցազրույցի արդյունքները փաստում են, որ բացասական է համարվում այն, որ վերապատրաստումների ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները՝ որպես դասախոսներ/դասընթացավարներ չեն ներկայացնում ԿԿՀ փորձը |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | բարեվարքության ներքին կանոնների խախտմանն առնչվող հարցերում:<br><br>*«…հանձնաժողովը հենց պետք ա ինքը օրինակ ծառայի մարմինների համար, դա ևս մենք չենք տեսնում էլի: Օրինակ դեպքեր, նման հարց բարձրացվի, օրինակ հանձնաժողովում սենց մի հատ խնդիր ա եղել, էսպիսի լուծում ա ստացել: Ինքը շատ լավ մոտեցում կարա լինի միասնական մյուս պետական կառավարման համակարգի մարմինների մասով, բայց դա չեմ տեսել»:*<br><br>Որպես բացասական կողմ նշվում է, նաև, որ առհասարակ ՀՀ պետական մարմիններում չի կիրառվում էլեկտրոնային ուսուցում (e-learning): Վերջինս վերաբերում է նաև ԿԿՀ-ին: Հիմնականում տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվում են մեկանգամյա վերապատրաստումներ, սակայն նման վերապատրաստումների արդյունավետության շուրջ կան որոշ վերապահումներ: |
| | | | Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ վարքագծի կանոնների համապարփակությունը (օրինակ, գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և հյուրասիրության, հետաշխատանքային սահմանափակումները), և վարքագծի կանոնների և սահմանափակումների խախտումների վերացման | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | գործնականում կիրառելի ընթացակարգերը, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը: | | | | |
| | **ԿԿՀ հաշվետվողականության և ներքին բարեվարքության միավորի հանրագումարը** | | | | | 4/16=25.0% | |
| | **Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների[117] պահպանմանը հետևելը (9 ցուցանիշ)** | | | | | | |
| 28. | Հասանելիությունը բարեվարքության պահանջների խախտման վերաբե | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, տվյալներ ԿԿՀ-ի կողմից ստացած բարեվարքության պահանջների խախտումների | ԿԿՀ-ն անհասանելի է, ինչն արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ բարեվարքության | ԿԿՀ-ն հասանելի է, ինչն արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ բարեվարքության պահանջների | ԿԿՀ-ն ունի բարձր հասանելիություն է, ինչն արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ ստացված բարեվարքության | Ցածր | ԿԿՀ հասանելիությունը բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողների՝ ազդարարներին, դիմումատուներին, բողոքներին հաղորդակցման կապուղիների մասով՝ Հանձնաժողովի կայքէջից հնարավոր է տեղեկատվություն փոխանցել ԿԿՀ էլեկտրոնային հասցեով՝ info@cpcarmenia.am կամ Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջով https://www.facebook.com/profile.php?id=100068554087037 , +37412777721 հեռախոսահամարով, կամ էլ գրավոր՝ Հանձնաժողովի հասցեով առաքված նամակով: Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request համապետական կապուղու միջոցով հաղորդումներին հասանելիությունն իրականացվում է Հանձնաժողովի էլեկտրոնային հասցեով: Հանձնաժողովը չունի թեժ գիծ, ինչպես նաև անանուն հաղորդումների ընդունման հնարավորություն: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում 2022 թ. իրականացված փոփոխությունների ու լրացումների արդյունքում Հանձնաժողովը չունի հասանելիություն ազդարարման էլեկտրոնային համակարգին, որով հնարավորություն կունենար ստանալու անանուն |

[117] «Բարեվարքության պահանջների պահպանման» եզրույթի ներքո հասկացվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման սահմանափակման և շահերի բախման իրավիճակների, գույքի եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրմանը ներկայացվող՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | րյալ տեղեկատվություն ներկայացնողներին/ազդարարումներին, դիմումներին, բողոքներին | մասին բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ | պահանջների պահպանման վերաբերյալ ազդարարումների ցածր համամասնությամբ (տարեկան միջինը 1-ից պակաս բողոք 20 000 քաղաքացու հաշվով) | պահպանման վերաբերյալ ազդարարումների միջին համամասնությամբ (տարեկան միջինը 1 բողոք 10 000 - 20 000 քաղաքացու հաշվով): | պահանջների պահպանման վերաբերյալ ազդարարումների բարձր համամասնությամբ<br><br>(տարեկան միջինը 1-ից ավելի բողոք 10 000 քաղաքացու հաշվով) | | հաղորդումներ բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ:<br><br>Համաձայն, 2021 թ. ԿԿՀ տարեկան հաղորդման՝ 2021 թ. քաղաքացիների (փաստաբանների), պետական մարմինների, զանգվածային լրատվական միջոցի, հասարակական կազմակերպության կողմից Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից, գրություններից, հարցումներից 66-ը մակագրվել են Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչությանը:<br><br>2022 թ. Հանձնաժողովին են հասցեագրվել ևս 79 դիմում/գրություններ:<br><br>ՀՀ բնակչության թիվը 2022 թ., ըստ վիճակագրական կոմիտեի, կազմել է 2 961.4 հազ մարդ, իսկ 2021 թ,՝ 2 963.3 հազ մարդ: Արդյունքում՝ ԿԿՀ հասանելիությունն ազդարարումներին կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին 2021 թ. կկազմի 66*20.000/2 963.300=0,44, որը մեկից պակաս է:<br><br>2022 թ. համար ԿԿՀ հասանելիությունը կազմել է 79*20000/2961400=0.53: Սա նշանակում է, որ ԿԿՀ հասանելիությունն ազդարարումներին, դիմումներին և բողոքներին ցածր է:<br><br>Համաձայն ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ հարցման արդյունքների՝ ԿԿՀ-ին հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ դիմումներ, բողոքներ, տեղեկատվություն հաղորդելու կապուղիների՝ azdararir.am, e-requst.am, թեժ գիծ, անանուն հաղորդումների ներկայացման էլեկտրոնային հարթակի առկայության և դրանց |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | միջոցով 2020, 2021 և 2022 թթ. ստացված դիմումների, բողոքների, հաղորդումների թվի վերաբերյալ տեղեկատվությանը պատասխանվել է, որ «դրանց գործնական կիրառման մեխանիզմները ևս սնանկ են, և երբևէ չեն կիրառվել»: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ հասանելիությունն ազդարարումներին և/կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումներին և բողոքներին 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոնյաների ու ծառայողներին ներկայացվող բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ստացված ազդարարումների տվյալների միջոցով: Այս ցուցանիշի գնահատումը պետք է կատարվի հավաքագրված տվյալները երկրի բնակչության թվաքանակի մեջ կշռելու միջոցով: Առաջարկվող շեմերը պետք է դիտարկել երկրում կոռուպցիայի ընկալման մակարդակի համատեքստում՝ օգտագործելով այնպիսի տվյալներ, ինչպիսիք են ԹԻ Կոռուպցիայի ընկալման համաթիվը և Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | Եթե կոռուպցիայի ընկալման մակարդակը հատկապես բարձր է, ապա պետք է համապատասխանաբար բարձրացվեն շեմերը և ընդհակառակը, եթե երկրում կոռուպցիայի ընկալվող մակարդակը ցածր է: Առկայության դեպքում հետազոտողը պետք է ԿԿՀ-ից պահանջի այն անձանց վերաբերյալ տվյալներ, ովքեր տեղեկություններ են տրամադրել կամ բողոքներ ներկայացրել: Ազդարարողների, բողոքներ ներկայացնողների պրոֆիլների վերլուծությունը՝ ըստ նրանց տարիքի, սեռի և կրթության, ցույց կտա, թե որքանով են նրանք ներկայացնում ընդհանուր բնակչությանը: Հետազոտողը պետք է ներառի նաև ցանկացած տեղեկություններ այն մասին, թե որքանով է ազդարարումների, բողոքների, դիմումների ներկայացման համակարգը/ընթացակարգը օգտագործողի համար հարմար կամ համարժեք: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 29. | Արձագանքողականությունը բարեվարքության պահանջների խախտումներին վերաբերող տեղեկատվություններ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, տվյալներ ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ստացված բողոքների/դիմումների վերաբերյալ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակ | ԿԿՀ-ն արձագանքողական չէ, ինչն արտացոլված է 2020-2022 թթ. ընթացքում վարույթ իրականացված համապատասխան բարեվարքության պահանջների խախտումների մասով տեղեկատվություն ներկայա | ԿԿՀ-ն միջին չափով է արձագանքողական, ինչն արտացոլված է 2020-2022 թթ. ընթացքում վարույթ իրականացված համապատասխան բարեվարքության պահանջների խախտումների մասով տեղեկատվություն ներկայացնողների | ԿԿՀ-ն ունի բարձր արձագանքողականություն, ինչն արտացոլված է 2020-2022 թթ. ընթացքում վարույթ իրականացված համապատասխան բարեվարքության պահանջների խախտումների մասով տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, | Բարձր | 2021 թ. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է 46 դիմում, գրություն և մամուլի հրապարակում: Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընդհանուր թվով 15 մեդիա հրապարակում: Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից 11-ը վերաբերել են վարքագծի կանոններին, 10-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 4-ը՝ շահերի բախմանը, 3-ը՝ այլ սահմանափակումներին: Ստացված դիմումներից 4-ը Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել է: Հանրային պաշտոնյաների ու ծառայողների անհամատեղելիության պահանջների և շահերի բախման հետ կապված մի շարք դեպքերի մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումները հնարավորություն չեն ընձեռել Հանձնաժողովին հարուցելու համապատասխան վարույթ և ընթացք տալ:http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/<br><br>2021 թ. քաղաքացիների (փաստաբանների), պետական մարմինների, զանգվածային լրատվական միջոցի, հասարակական կազմակերպության կողմից Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից, գրություններից, հարցումներից 66-ը մակագրվել են Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչությանը:<br><br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից ստացվել են թվով 2 դիմումներ, որոնց քննության արդյունքում Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | կայացնողների, դիմումների, բողոքների | ազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ | ցնողների, դիմումների, բողոքների ցածր համամասնությամբ (33%-ից պակաս) | , դիմումների, բողոքների միջին համամասնությամբ (33-66%) | բողոքների բարձր համամասնությամբ (66%-ից ավելի) | | ժամկետում կայացրել է վարույթ հարուցելը մերժելու մասին պատճառաբանված որոշումներ:<br><br>Քաղաքացիների կողմից Հանձնաժողովին են հասցեագրվել նաև թվով 8 դիմում-բողոքներ, որոնցով բարձրացված հարցերը վերաբերել են կոնկրետ դատական գործերով կայացված դատական ակտերի առնչությամբ դատավորների կողմից դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտումներին, որոնք Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել են:<br><br>Հանձնաժողովին հասցեագրված քաղաքացիների՝ հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող թվով 4 դիմում-բողոքներ ներկայացվել են Գլխավոր դատախազություն:<br><br>Հանձնաժողովին քաղաքացիներից և պետական մարմիններից հասցեագրված շուրջ 50 (հինգ տասնյակ) դիմումները (գրությունները) հիմնականում կրել են պարզաբանում հայցելու բնույթ, որոնցում բարձրացվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում կիրառվող կոնկրետ իրավանորմերի բովանդակության (պաշտոնատար անձանց ներկայացվող անհամատեղելիության պահանջներ սահմանող կարգավորումների, հայտարարագրման պարտավորություններին առնչվող իրավահարաբերության պահին գործող կարգավորումների) պարզաբանման վերաբերյալ հարցեր:<br><br>2022 թ. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընդհանուր 44 դիմում/գրություն և 11 մամուլի հրապարակում վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ: Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից 33-ը վերաբերել են անհամատեղելիության |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | պահանջներին, 4-ը՝ շահերի բախմանը, 3-ը՝ վարքագծի կանոններին, 1-ը՝ այլ սահմանափակումներին, 1-ը՝ նվերների ընդունմանը:<br><br>Հանձնաժողովի ուսումնասիրած մամուլի հրապարակումներից անհամատեղելիության պահանջներին վերաբերել են 5-ը, 3 հրապարակում վերաբերել է շահերի բախմանը, 2-ը՝ այլ սահմանափակումներին, 1-ը՝ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի:<br><br>Անհամատեղելիության պահանջների մասով տրվել են պարզաբանումներ:<br><br>Վարքագծի կանոնների խախտումների մասով նշվել է, որ «Վարքագծի կանոնի խախտումը, դիմումը ստանալու պահին, գնահատել հնարավոր չի եղել՝ Տիպային կանոնների և Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի, ինչպես նաև վարքագծի ոլորտային կանոնագրքերի հաստատված չլինելու հանգամանքով պայմանավորված, իսկ ծառայողական քննությունների ընթացակարգերի պահպանումը կամ դրանց հետևելը Հանձնաժողովի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից դուրս է»:<br><br>Շահերի բախման վերաբերյալ դիմումներից մեկով հիմք է հանդիսացել Հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման:<br><br>ԿԿՀ-ի կողմից ուսումնասիրված մամուլի մոնիթորինգի արդյունքներով 2022 թ. կազմվել է 440 տեղեկանք: Ուսումնասիրված հրապարակումներից մեկը հիմք է հանդիսացել վարույթի հարուցման համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | 2022 թ. Հանձնաժողովին են հասցեագրվել 79 դիմում/գրություններ: Քաղաքացիների կողմից հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված թվով երկու դիմում-բողոքների հիման վրա հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ համապատասխան վարույթներ, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, մյուսը՝ շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով:<br><br>Հանձնաժողովին քաղաքացիների կողմից հասցեագրված թվով 11 դիմում-բողոքներ վերահասցեագրվել են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, 3-ը՝ իրավասու այլ պետական մարմիններին, իսկ 1-ը՝ տեղական ինքնակառավարման մարմնին, 2-ը՝ ՄԻՊ-ին: Հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող քաղաքացիների թվով 13 դիմում-բողոքներ ներկայացվել են Գլխավոր դատախազություն:<br><br>Այսպիսով, ԿԿՀ-ի կողմից քաղաքացիների կողմից դիմում բողոքներին, տեղեկատվություն ներկայացնողներին, լրատվամիջոցների հրապարակումներին արձագանքողականությունը գնահատվում է բարձր, քանի որ թե 2021 և թե 2022 թթ. բոլոր դիմում բողոքների և լրատվամիջոցների հրապարակումները (բացառությամբ վարքագծի կանոններին վերաբերող 11 դիմումներից) արձագանքվել են պարզաբանումերի, այլ պետական մարմիններին դիմումը վերահասցեագրելու կամ վարույթներ հարուցելու միջոցով: Այն քանակական գնահատման տեսանկյունից կազմում է 2021 թ. 83.3% (66-11=55/66): 2022 թ. առանց արձագանքման է մնացել վարքագծի կանոնների խախտումների մասով 3 դիմում, արդյունքում 2022 թ. ԿԿՀ արձագանքողականության մակարդակը կազմել է 96.2% (79-3=76/79): |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներկայացված դիմումների, բողոքների, մամուլի հրապարակումների շարքում դիտարկված չէ ազդարարողների կողմից անանուն հաղորդումների մասին տեղեկատվությունը, որը ԿԿՀ 2021-2022 թթ. հաշվետվություններում բացակայում է: Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում 2022 թ. իրականացված փոփոխությունների արդյունքների՝ ԿԿՀ-ն իրավասու է նաև ազդարարման էլեկտրոնային հարթակի միջոցով ստանալու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումներ: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ արձագանքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ստացված տեղեկատվություն ներկայացնողներին, դիմումներին, բողոքներին արձագանքման մակարդակը: ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ստացված տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, բողոքների թվի վերաբերյալ տվյալների համար նայեք ԿԿՀ տարեկան զեկույցը կամ պահանջել համապատասխան տեղեկատվություն ԿԿՀ-ից: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | Այնուհետև հաշվարկեք 2020-2022 թթ. ընթացքում ըստ բարեվարքության պայմանների տեսակների խախտումների մասով տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, բողոքների մասնաբաժինը, համանման տեսակի գծով ԿԿՀ-ին ներկայացված տեղեկատվություն ներկայացնողների, դիմումների, բողոքների ընդհանուր թվի մեջ: Նկատի ունեցեք նաև, թե ԿԿՀ-ի կողմից առկա՞ է արդյոք վարույթներ ձեռնարկելու դժկամություն, և առկա՞ է արդյոք գործերի զգալի կուտակում, կամ ժամկետների ձգձգում: Եթե այո, ապա նման որակական գործոններն ամենայն հավանականությամբ մատնանշում են ցածր միավոր: | | | | |
| 30. | Նախաձեռնողականությունը բար | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, տվյալներ ԿԿՀ | ԿԿՀ-ի կողմից նախաձեռնված բարեվարքության պահանջների | ԿԿՀ-ի կողմից նախաձեռնված բարեվարքության պահանջների խախտու | ԿԿՀ-ի կողմից նախաձեռնված բարեվարքության պահանջների խախտում | Միջին | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պահանջներով ԿԿՀ-ն վարույթներ հարուցում է «1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, 2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, 3) Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում»: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | եվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում | ստացած բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, | խախտումների վարույթների ցածր մասնաբաժին (բոլոր վարույթների 5%-ից պակաս) | մների վարույթների չափավոր մասնաբաժին (բոլոր վարույթների 5-10%-ը) | ների վարույթների բարձր մասնաբաժինը (բոլոր վարույթների 10%-ից ավելի) | | Համաձայն ԿԿՀ 2021 թ. տարեկան հաղորդման՝ **հայտարարագրմանն առնչվող խախտումների** վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ստուգվել և վերլուծվել են 170 պաշտոնատար անձանց մոտ 2500[118] հայտարարագրեր: Հարուցվել են թվով 42 վարույթներ, որոնցից 30-ը հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու մասով: ԿԿՀ նախաձեռնողականությունը բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման մասով գնահատվում է 42/2500=1,7%:<br><br>2022 թ. համար Հանձնաժողովի կողմից ստուգվել և վերլուծվել են 256 պաշտոնատար անձանց թվով 1703 հայտարարագրեր, հարուցվել է հայտարարագրմանն առնչվող 118 վարույթ, որից հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու մասով՝ 97: Արդյունքում, ԿԿՀ նախաձեռնողականությունը կկազմի 118/1703=6,9%:<br><br>**Կարգապահական վարույթների** մասով խախտումները պայմանավորված են հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ հայտարարագրման ենթակա տվյալներին առնչվող առերևույթ խախտումներին, հետևաբար դրանք արդեն իսկ հաշվառված են հայտարարագրման մասով նախաձեռնողականության ցուցանիշի գնահատման հաշվարկում:<br><br>**Անհամատեղելիության պահանջների** խախտումների մասով 2021 թ. հարուցվել են թվով 3 վարույթներ, որոնց հարուցման համար հիմք են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումները, ինչպես նաև պետական մարմնից ստացված գրությամբ ուսումնասիրությամբ վեր հանված խախտումները: |

[118] Թիվը վերցված է ԿԿՀ տարեկան հաղորդման հղումից, http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | մամուլի հաղորդումներ | | | | | 2022 թ. անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 10 վարույթներ, որոնցից թվով 6 վարույթները հարուցվել են Հանձնաժողովի նախաձեռնությամբ իրականացված 107 ուսումնասիրության արդյունքում:<br><br>Արդյունքում՝ ԿԿՀ նախաձեռնողականությունը գնահատվում է 2021 թ. համար 0, իսկ 2022 թ. համար՝ 6/107=5.6%:<br><br>Վարքագծի կանոնների, շահերի բախման, նվերների ընդունման և այլ սահմանափակումների մասով 2021-2022 թթ. ԿԿՀ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ վարույթներ չեն հարուցվել:<br><br>Բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման նախաձեռնողականության մասնաբաժինը 2021 թ. կկազմի 1.7%, իսկ 2022 թ. համար՝ 6.9+5.6/2=6.25%:<br><br>Այսպիսով, ԿԿՀ նախաձեռնողականությունը կարող է գնահատվել միջին, այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարույթների գործընթացում բացակայում են վարքագծի կանոնների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների խախտումների մասով վարույթները:<br><br>Նշված տվյալները վկայում են նաև, որ դեռևս ցածր է լրագրողների, քաղաքացիական հասարակության կողմից բարեվարքության խախտումների մասով ԿԿՀ-ին դիմումների քանակը և ակտիվությունը: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով է | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ԿԿՀ-ն նախաձեռնողական իր կամքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և դրանց մասով վարույթներ սկսելու հարցում:<br>Համեմատեք 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ նախաձեռնությամբ իրականացված բարեվարքության պահանջների խախտումների ընդհանուր թվի վերաբերյալ տվյալները նույն ժամանակահատվածում ԿԿՀ-ի կողմից իրականացված վարույթների ընդհանուր թվի հետ (ներառյալ՝ բողոքների, դիմումների, ազդարարման արդյունքում հարուցվածները):<br>Նախաձեռնողական վարույթների մեծ մասնաբաժին է համարվում բոլոր ուսումնասիրությունների ավելի քան 10%-ը, չափավոր (միջին) մասնաբաժին՝ 5-10%-ի սահմաններում, իսկ ցածր մասնաբաժին՝ 5%-ից պակասը:<br>Եթե ԿԿՀ-ն նախաձեռնել է վարույթներ քաղաքական ազդեցություն ունեցող և | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | բարձրաստիճան պաշտոնատար այլ անձանց նկատմամբ, ապա նախաձեռնողականության մակարդակը գնահատելիս սա ևս պետք է հաշվի առնվի: | | | | |
| 31. | Արդյունավետություն և պրոֆեսիոնալիզմ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, տվյալներ ԿԿՀ քննած բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ, հարցազ | Բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի անբավարար և ոչ պրոֆեսիոնալ քննություն | Բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի բավարար և պրոֆեսիոնալ քննություն | Բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի խիստ արդյունավետ և պրոֆեսիոնալ քննություն | Ցածր | Համաձայն ԹԻՀԿ՝ «բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննությունն ավարտելու համար ԿԿՀ-ից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ» հարցման արդյունքների ստացված տեղեկատվության՝ ԿԿՀ-ից պատասխանվել է, որ «Նշված բանաձևով վերլուծություն հնարավոր չէ իրականացնել»:<br><br>ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ բարեվարքության պահանջների պահպանության արդյունավետության մակարդակի գնահատման համար հաշվարկվող բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննության միջին ժամկետի հաշվարկը կատարվել է բարեվարքության պահանջների խախտումների առանձին տեսակների մասով, մասնավորապես՝<br><br>«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 46 և 47-ով վարույթի առավելագույն ժամկետ է սահմանված 30 օրը, որն առանձին դեպքերում կարող է երկարաձգվել 10-30 օրյա ժամկետով: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165294<br><br>«Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի հոդված 37-ի 7-րդ մասով «Սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | րույցներ ԿԿՀ անձնակազմի դեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ | | | | | գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում»:<br><br>«Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ ԿԿՀ-ը 2021 թվականի ընթացքում քննել և լուծել է (վարույթը եզրափակել է որոշմամբ) 26 գործի վարույթներ, իսկ թվով 16 գործի վարույթները եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող ամիսների ընթացքում»: Սա նշանակում է, որ վարույթի իրականացման ժամկետները հետաձգվել են:<br><br>Կարգապահական վարույթների մասով հարուցված 3 գործերով վարույթների ժամկետները մեկի դեպքում տևել է 38 օր, մյուսի դեպքում՝ 59 օր: Երրորդի վերաբերյալ նյութերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Արդյունքում, ըստ էության, պահպանվել են օրենքով սահմանված վարույթի ժամկետները:<br><br>Ըստ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ վարույթների առավելագույն ժամկետը 90 օր է: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271<br><br>Անհամատեղելիության պահանջների խախտումների վարույթների մասով 2021 թ. հարուցված վարույթի 1 գործով վարույթի տևողությունը կազմել է 4 ամիս, որն ավարտվել է անհամատեղելիության պահանջի բացակայության եզրակացությամբ:Նշված գործով մարզպետի նկատմամբ հարուցված վարույթը կասեցվել է ՝ գործի նյութերը Գլխավոր դատախազություն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ուղարկելու հիմքով, այնուհետև վերսկսվել է և եզրափակվել է խախտման բացակայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության ընդունմամբ: Անհամատեղելիության պահանջի խախտման մյուս գործով վարույթը տևել է 3 ամիս, որն ավարտվել է խախտումը հավաստող եզրակացությամբ, որի հիման վրա որոշում է կայացվել դադարեցնել դատավորի լիազորությունները: Երրորդ գործի վարույթը տևել է 2.5 ամիս, որի արդյունքում Հանձնաժողովի կայացրած եզրակացության հիման վրա որոշում չի կայացվել, քանի որ համայնքի ղեկավարի լիազորություններն արդեն իսկ դադարեցված է եղել: Արդյունքում՝ միջին հաշվով անհամատեղելիության պահանջի մեկ վարույթի միջին տևողությունը կազմել է 3.2 ամիս:<br><br>2022 թ. անհամատեղելիության պահանջների խախտման մասով հարուցված 10 համապատասխան վարույթներից եզրափակվել է ընդամենը մեկ վարույթ: 2023 թ. ընթացքում սահմանված ժամկետների պահպանմամբ եզրափակվել են 2 գործով վարույթները, որոնք կասեցվել են՝ գործի նյութերը Գլխավոր դատախազություն ուղարկելու հիմքով:<br><br>Բարեվարքության պահանջների խախտումների մյուս տեսակների մասով վարույթներ չեն իրականացվել: Ինչպես վկայում են «Հետք» https://hetq.am/hy/article/156800 հետաքննող լրագրողների հրապարակումները, ԿԿՀ-ն ձգձգում է վարույթների սկսելու գործընթացները՝ հիմքում ունենալով խախտման վերաբերյալ հաղորդումները, անհասկանալի պատճառաբանություններով և ապագայում համալիր վերլուծությունների խոստումներով երկարաձգում վարույթների հարուցման գործընթացները: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Եթե հիմք ընդունենք նաև ԿԿՀ վարույթների եզրակացությունների հիման վրա կայացրած որոշումները, ապա կարող ենք պնդել, որ ԿԿՀ-ի կողմից բարեվարքության պահանջների պահպանության գործում վարույթների իրականացման գործընթացի արդյունավետությունը գտնվում է դեռևս «ցածր» մակարդակում: https://infocom.am/hy/article/102475?fbclid=IwAR0I4gHeKIKSo1OHjPy_kNmk0KOtwb4uhFYaKX1DXABMGXSAltsAWG-7CH0 |
| | | | *Ուղղորդում*: Բարեվարքության պահանջների պահպանության արդյունավետության մակարդակի ցուցանիշը գնահատելու համար հավաքագրել տվյալներ 2020-2022 թթ. ընթացքում բարեվարքության պահանջների խախտումների գործերի քննությունն ավարտելու համար ԿԿՀ-ից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ: ԿԿՀ պրոֆեսիոնալիզմը բարեվարքության պահանջների խախտման դեպքերը քննելու հարցում արտացոլված է 2020-2022 թթ. ընթացքում հաջողությամբ վարույթ հարուցված գործերի թվով, պատասխանատվության ենթարկված պաշտոնատար անձանց թվով և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հարցումների գնահատականներով: Առանձնապես, վարույթների գործերի երկարատևության պատճառները պետք է բացատրվեն, եթե առկա են հատուկ հանգամանքներ: Առավել կարևոր է բարեվարքության պահանջների խախտման դեպքերի քննությունն ավարտելու համար ԿԿՀ-ից պահանջված միջին ժամանակը: | | | | |
| 32. | Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարբեր պարունակո | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող | 50%-ից ցածր | 50% - 75% | 75%-ից բարձր | Ցածր | Համաձայն ՀՀ գլխավոր դատախազություն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ 2021 թ. կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկանքի տվյալների «2021 թվականի ընթացքում հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու կամ հայտարարագրման տվյալը թաքցնելու հատկանիշներով հարուցվել է 14 գործ», որից 5-ի հարուցման առիթ են հանդիսացել ՀՀ ԿԿՀ-ից ստացված փաստաթղթերը:<br><br>2022 թ. ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ (հայտարարագիր դիտավորությամբ չներկայացնելը) և 314.3-րդ հոդվածների (հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը) հատկանիշներով քննվել է 31 քրեական վարույթ, որոնցից 7-ի նախաձեռնման առիթ են հանդիսացել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված տվյալները: Մեկ գործով, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թ. հունիսի 21-ի դատավճռով, համաձայնեցման վարույթի կիրառմամբ, Ա. |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | դ բարեվարքության պահանջների խախտումների հետ ապնդումների ցուցանիշը | անձանց, Գլխավոր դատախազության աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ | | | | | Մ-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկման՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելով մեկ տարի ժամկետով: Վերոնշյալը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված և քննված առաջին քրեական գործն է այս արարքի քրեականացումից (09.06.2017 թ.) ի վեր, որով առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում է մեղադրական դատավճիռ: https://www.prosecutor.am/myfiles/files/reports/Anti_corruption_2022.pdf<br><br>Ապօրինի հարստացման հոդվածով 2021 թ. ոչ մի գործ չի նախապատրաստվել Haxordum korupcia.pdf (prosecutor.am) , իսկ 2022 թ. Ապօրինի հարստանալու (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ:<br><br>ԿԿՀ 2022 և 2021 թթ. հաշվետվություններն ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, հանգամանքներով ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված նյութերի մասով տեղեկատվությունը բացակայում է: ՀՀ գլխավոր դատախազությանը ԹԻՀԿ հարցման արդյունքները վկայում են, որ ԿԿՀ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների կասկածով հաղորդումներ և դրանց հիման վրա հարուցված քրեական գործեր չեն արձանագրվել: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Սահմանված ժամկետում վարչական տույժի կիրառումից հետո հայտարարագիրը Հանձնաժողով դիտավորյալ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության հայտանիշերով ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել 2021 թ. հարուցված 4 և 2022 թ. հարուցված 1 գործի մասով՝ ընդամենը 5 գործ: 2021 թ. հանձնաժողովը ԲԴԽ նախագահի հայտարարագրերի վերլուծության արդյունքները և դրանց առնչվող նյութերը ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf , http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>Ինչպես ցույց են տալիս ԿԿՀ 2021 և 2022 թթ. հաշվետվությունների և ՀՀ գլխավոր դատախազության նույն ժամանակահատվածի կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկանքներում արձանագրված տվյալները, ԿԿՀ-ի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների խախտումների քննված դեպքերի մասով կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ տարրեր չեն արձանագրվել, հետևաբար նշված գործերը ՀՀ գլխավոր դատախազություն չեն ներկայացվել:<br><br>Ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների մասով ներկայացվել է միայն մեկ դեպք, իսկ հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելը և հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը հատկանիշներով քննվել է 31 քրեական վարույթ, որոնցից 7-ի նախաձեռնման առիթ են հանդիսացել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված տվյալները: Արդյունքում ԿԿՀ-ի կողմից առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | հետապնդումների ցուցանիշը 2022 թ. համար կազմում է 7/31=22.5%, իսկ 2021 թ. համար՝ 5/14= 35.7%: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ-ի կողմից քննված բարեվարքության պահանջների խախտումների, առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող դեպքերի հետապնդման միջին մակարդակը: Քանի որ ԿԿՀ-ն *չունի* կոռուպցիոն դեպքերի նկատմամբ հետապնդում իրականացնելու մանդատ, ապա այս ցուցանիշը գնահատում է բարեվարքության պահանջների խախտումների այն դեպքերի մասով, որոնք իրենց մեջ պարունակել են առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր և ենթակա են փոխանցման ՀՀ գլխավոր դատախազություն հետապնդում իրականացնելու համար: Այս տեսանկյունից ՀՀ գլխավոր դատախազությունից և ԿԿՀ-ից պարզել, թե ինչու  հետապնդման միջին մակարդակը 50%-ից ցածր | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | է, և որ գործոններն են նպաստում ցածր մակարդակին: | | | | |
| 33. | Պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, Գլխավոր դատախ | 50%-ից ցածր | 50% - 75% | 75%-ից բարձր | Ցածր | Բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի համար պատասխանատվության միջոցների կիրառման լիազորությունը՝ «կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու» մասով «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 244.17 հոդվածով վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178682 Նույն օրենսգրքով ԿԿՀ-ին վարչական պատասխանատվության միջոցների կիրառման լիազորություն է վերապահված նաև «Նվերներ ընդունելու կամ հաշվառելու սահմանված կարգը խախտելու», «Շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու» բարեվարքության պահանջների մասով, որոնց վերաբերյալ 2021-2022 թթ. վարույթներ չեն իրականացվել, քանի որ իրավական կարգավորումները ուժի մեջ են մտել 2022 թ. դեկտեմբերին:<br><br>Համաձայն ԿԿՀ 2021 թ. հաշվետվության տվյալների՝ հայտարարագրմանն առնչվող[119] խախտումների վերաբերյալ հարուցվել են թվով 42 վարույթներ: Հանձնաժողովը քննել և լուծել է (վարույթը եզրափակել է որոշմամբ) հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ 26 գործի վարույթ, իսկ թվով 16 գործի |

[119] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ազության աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ | | | | | վարույթները եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող ամիսների ընթացքում:<br><br>Հանձնաժողովի կողմից ընդունված թվով 2 որոշումներով հայտարարատու անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում վարչական տույժը, իսկ 8-ի նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք՝ 200,000-ական ՀՀ դրամի չափով: **Արդյունքում, պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 10/26=38.5%:**<br><br>2022 թ. հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ հարուցվել է 118 վարույթ: Գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու խախտումների հիմքով հարուցվել է 97 վարույթ, հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով՝ 20 վարույթ, իսկ 1-ը՝ հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտման հիմքերով: 118 վարույթից կարճվել են 107-ը, իսկ վարչական տույժ է կիրառվել 11 վարույթի արդյունքում: **Արդյունքում, պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 11/21=52.4%:**<br><br>Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների մասով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6.1-րդ մասի ուժով Հանձնաժողովը վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կամ ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ ներկայացնում է ԲԴԽ: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | 2021 թ. ԿԿՀ հաշվետվության տվյալներով Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթներ[120] են հարուցվել ԲԴԽ 3 անդամների նկատմամբ: Վերոնշյալ կարգապահական վարույթների գործերով ԲԴԽ-ին թվով 3 միջնորդություններ է ներկայացրել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Հանձնաժողովի վերոնշյալ միջնորդությունների քննության արդյունքում՝ ԲԴԽ-ն իր որոշումներով երկու գործով կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը, մեկի դեպքում միջնորդությունը մերժել է (ԲԴԽ-36-Ո-Կ-13, ԲԴԽ-36-Ո-Կ-14 , ԲԴԽ-38-Ո-Կ-16 ): **Արդյունքում, պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 0%**:<br><br>2022 թ. Հանձնաժողովի կողմից հարուցվել է 15 կարգապահական վարույթ, որից 14-ի մասով Հանձնաժողովը կայացրել է վարույթը կարճելու մասին որոշում: Մեկ գործով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությամբ պայմանավորված, Հանձնաժողովը ԲԴԽ-ին միջնորդություն է ներկայացրել: ԲԴԽ-ն իր կողմից կայացված որոշմամբ կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը՝ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով: **Արդյունքում, պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 0%:**<br><br>Անհամատեղելիության պահանջների խախտումների մասով 2021 թ. Հանձնաժողովի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց |

[120] Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման հիմքով, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է ԲԴԽ-ը:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | նկատմամբ հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով[121] նախատեսված թվով 3 վարույթներ: Դրանից 1-ով անհամատեղելիության պահանջի խախտում չի արձանագրվել, իսկ մյուս երկու գործերով Հանձնաժողովի եզրակացությունները ուղարկվել են հանրային պաշտոնը զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու իրավասություն ունեցող մարմիններ: Ավագանու կողմից քննարկվել և Հանձնաժողովին է ներկայացվել տեղեկատվություն առ այն, որ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով, իսկ ԲԴԽ որոշմամբ դադարեցվել են դատավորի լիազորությունները: https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf **Արդյունքում**, **պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 1/3=33.3%:**<br><br>2022 թ. ընթացքում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 10 վարույթներ: 10 համապատասխան վարույթներից եզրափակվել է մեկ վարույթ, որը հարուցվել է մարզպետի տեղակալի նկատմամբ: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա մարզպետի տեղակալի կողմից անհամատեղելիության պահանջի խախտումը գործնականում չի լուծվել: http://shirak.mtad.am/community-leader-council/582/ http://shirak.mtad.am/structure/ |

[121] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումներով Հանձնաժողովն իրականացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների առերույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ, որոնց հարուցման համար հիմք են հանդիսանում հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ հայտնաբերելու դեպքերը, լրատվամիջոցների հրապարակումները, անձանց գրավոր դիմումները:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | **Արդյունքում, պատասխանատվության միջոցի կիրառման մակարդակը կազմել է 1/0=0%:**<br><br>2021-2022 թթ. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների մասով վարքագծի կանոնների խախտումների, այլ սահմանափակումների, էթիկայի հանձնաժողովների եզրակացության վերանայման, ազդարարման վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից վարույթներ չեն հարուցվել և եզրակացություններ չեն ներկայացվել իրավասու մարմիններին:<br><br>Այսպիսով, Հանձնաժողովի կողմից հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը հաշվարկվել է որպես բարեվարքության պահանջների 6 տեսակի մասով կիրառված պատասխանատվության միջոցների տոկոսային մակարդակի միջին թվաբանական, որը 2021 թ. համար կազմել է (**38.5 +0+33.3+0+0+0)=71.8/6=11.9**%, իսկ 2022 թ. համար (**52.4 +0+0+0+0+0)= 52.4/6**=**8.7**%:<br><br>Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքում փաստվեց, որ ԿԿՀ-ի կողմից տրվող բարեվարքության եզրակացությունները կրում են խորհրդատվական բնույթ և համապատասխան իրավասու մարմինը կարող է հաշվի չառնել վերջինիս եզրակացությունները: Նման դեպքերը համատարած չեն, սակայն որոշ դեպքերում ԿԿՀ եզրակացությունները հաշվի չեն առնվում:<br><br>ԿԿՀ-ի կողմից տրված բացասական եզրակացությունները շատ դեպքերում որևէ դեր չեն ունենում: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ-ի կողմից քննված բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի համար կիրառված պատասխանատվության միջոցների միջին մակարդակը: Ճշտեք այն գործոնները, որոնք նպաստում են պատասխանատվության միջոցների կիրառման բարձր կամ ցածր մակարդակին՝ լինի դա հենց ԿԿՀ-ն, թե այլ պետական իրավասու մարմին, որը պատասխանատու է բարեվարքության պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցներ կիրառելու համար: Վերջին դեպքում, ԿԿՀ և պատասխանատվության միջոց կիրառող այլ մարմնի միջև գործակցության և աջակցության չափը պետք է պարզվի հարցազրույցների միջոցով: Եթե նշված գերատեսչությունների միջև չկա գործակցություն և աջակցություն, պարզեք, թե որ գործոններն են դրան նպաստում: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 34. | Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվա | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, դեպքերին առնչվող փաստաթղթեր, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավա | Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով ոչ մի քննություն կամ սակավաթիվ քննություններ բարեվարքության պահանջների խախտման գործով (5-ից պակաս դեպք) | Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով որոշ թվով քննություններ բարեվարքության պահանջների խախտման գործով (5-30 դեպք) | Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով զգալի թվով քննություններ բարեվարքության պահանջների խախտման գործով (30-ից ավելի դեպքեր) | Միջին | Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ որոշումների ընդունումը ԿԿՀ-ի կողմից պայմանավորվել են 2020 թ. մարտի 25-ին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի անցումային դրույթներով, որով նախատեսված է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերլուծել՝ «եռամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, հնգամյա ժամկետում՝ Սահմանադրական դատարանի, երկու տարվա ժամկետում՝ դատավորների հայտարարագրերը»: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141497<br>Միաժամանակ, 2022 թ. հոկտեմբերի 19-ի ԿԿՀ թիվ 02-Լ որոշմամբ սահմանվել է հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների հիման վրա վերլուծության ենթակա 34 պաշտոնի անվանում՝ ընդհանուր առմամբ, 95 պաշտոնյա, որոնք ամբողջությամբ ներառված են քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց խմբում: http://cpcarmenia.am/files/legislation/779.pdf<br><br>2021 թ. ԿԿՀ հաշվետվությամբ հայտարարագրմանն առնչվող խախտումների[122] վերաբերյալ հարուցվել են 42 վարչական վարույթներ, որոնցից 18-ը հարուցվել են հանրային պետական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ (այդ թվում՝ ԱԺ պատգամավորների, ԲԴԽ անդամների, դատախազի, քննիչների, վարչական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ), ինչպես նաև 18-ը՝ հանրային, համայնքային պաշտոն զբաղեցնող (Երևանի |

[122] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և լուծումը:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | որքության պահանջների խախտման քննություններ | ների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ | | | | | վարչական շրջանի ղեկավարի տեղակալի, համայնքների ղեկավարների, ավագանու անդամների, համայնքների ղեկավարների տեղակալների պաշտոն զբաղեցնող) անձանց, թվով 4-ը՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների նկատմամբ, 1-ը՝ պետական (ոստիկանության) ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ:<br><br>Հանձնաժողովի կողմից ընդունված թվով 2 որոշումներով հայտարարատու անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում վարչական տույժ, իսկ 8-ի նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք՝ 200,000-ական ՀՀ դրամի չափով, որոնցից 2-ի դեպքում հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու, իսկ 6-ը՝ հայտարարագրերը չներկայացնելու իրավախախտումները կատարելու համար:<br><br>2021 թ. ընթացքում Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթներ[123] են հարուցվել ԲԴԽ 3 անդամների (Ա. Մխիթարյան, Վ. Քոչարյան, Ռ. Վարդազարյան) նկատմամբ, որոնցից երկուսի դեպքում (Ա. Մխիթարյան, Վ. Քոչարյան)՝ հայտարարագրերի լրացման կարգի խախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքով, մյուսի դեպքում (Ռ. Վարդազարյան)՝ Հանձնաժողովին հայտարարատու պաշտոնատար անձի գույքի փոփոխությունը հաստատող պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու հիմքով: Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ |

[123] Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման հիմքով, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է ԲԴԽ-ն:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | հոդվածի 9-րդ և 9.1-րդ մասերը՝ Հանձնաժողովը ԲԴԽ անդամի (նախագահի) հայտարարագրերի վերլուծության արդյունքները և դրանց առնչվող նյութերն ուղարկել է Գլխավոր դատախազություն, վերջինիս նկատմամբ հարուցվել է նաև կարգապահական վարույթ: Հանձնաժողովի վերոնշյալ միջնորդությունների քննության արդյունքում կայացվել են թիվ ԲԴԽ-36-Ո-Կ-13, ԲԴԽ-36-Ո-Կ-14 , ԲԴԽ-38-Ո-Կ-16 որոշումները: ԲԴԽ-ն իր որոշումներով երկու գործով կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը, մեկի դեպքում միջնորդությունը մերժել է:<br><br>Անհամատեղելիության պահանջների խախտումների մասով Հանձնաժողովի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով[124] նախատեսված թվով 3 վարույթներ: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում 2021 թ. հուլիսի 26-ին կայացված եզրակացությամբ Հանձնաժողովը հաստատել է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Խանդանյանն իր գործողություններով խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:<br><br>ԲԴԽ-ն, քննության առնելով Հանձնաժողովի՝ դատավորի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ եզրակացությունը և վարույթի նյութերը, իր կողմից 2021 թ. հոկտեմբերի 4-ին կայացված որոշմամբ դադարեցրել է պաշտոնատար |

[124] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումներով Հանձնաժողովն իրականացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների առերույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ, որոնց հարուցման համար հիմք են հանդիսանում հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ հայտնաբերելու դեպքերը, լրատվամիջոցների հրապարակումները, անձանց գրավոր դիմումները:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | անձի լիազորությունները՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու հիմքով:<br><br>Մեկ այլ դեպքով, 2021 թ. սեպտեմբերի 17-ին կայացված Հանձնաժողովի եզրակացությամբ[125] Հանձնաժողովը հաստատել է, որ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձը խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Ավագանու կողմից քննարկվել և Հանձնաժողովին է ներկայացվել տեղեկատվություն այն մասին, որ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարել են վերջինիս լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով:<br><br>2022 թ. ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 118 հայտարարագրմանն առնչվող, թվով 15 կարգապահական, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների՝ թվով 9 և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի վերաբերյալ թվով 2 վարույթներ (մեկ վարույթը ներառում է ինչպես անհամատեղելիության, այնպես էլ իրավիճակային շահերի բախման դեպք՝ ընդամենը համապատասխան վարույթ թվով 10): 118 վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներից 15-ը հարուցվել է դատավորների նկատմամբ, 3-ը՝ Ազգային Ժողովի պատգամավորների (սուբյեկտներից 2-ը վարույթի հարուցման պահին եղել են նախկին պատգամավոր), 1-ը՝ նախարարի նկատմամբ: ԱԺ նախկին պատգամավորների, ինչպես նաև ՀՀ արդարադատության |

[125] ԿԿՀ «Մարտիկ Թևոնյանի մողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ» 03/2021 եզրակացություն, ընդունված՝ 2021 թ. սեպտեմբերի 17-ին, http://cpcarmenia.am/files/legislation/502.pdf ԲԴԽ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-19 որոշում, ընդունված՝ 2021 թ. հոկտեմբերի 04-ին, WriCbx6kyeScXmlV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf (court.am) :

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | նախարարի, 1 ԱԺ պատգամավորի նկատմամբ կիրառվել է 200,000 ՀՀ դրամ վարչական տույժ:<br><br>2022 թ. ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել է 15 կարգապահական վարույթ: Նշված վարույթները հարուցվել են դատավորների նկատմամբ: Հարուցված կարգապահական վարույթների արդյունքում Հանձնաժողովը կայացրել է վարույթը կարճելու մասին 14 որոշում: 1 գործով ԲԴԽ-ին միջնորդություն է ներկայացվել դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով ԲԴԽ որոշմամբ գործը կարճվել է:<br><br>Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 10 վարույթներ՝ Ազգային ժողովի պատգամավորների, համայնքի ղեկավարի, մարզպետի և Երևանի քաղաքապետի տեղակալի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ: Հարուցված 10 վարույթներից եզրափակվել է մեկ վարույթ, որը հարուցվել է մարզպետի տեղակալի նկատմամբ, որը համատեղել է համայնքի ավագանու պաշտոնը: http://cpcarmenia.am/files/legislation/765.pdf Այդուհանդերձ, Հանձնաժողովի եզրակացության հիման վրա առաջացած անհամատեղելիության պահանջի խախտումը գործնականում չի լուծվել: http://shirak.mtad.am/community-leader-council/582/ http://shirak.mtad.am/structure/<br><br>Իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի առթիվ Շիրակի մարզպետի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել անձի՝ Հանձնաժողովին հասցեագրված գրավոր դիմումը, որով |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | դիմումատուն հայտնել է, որ մարզպետը դրսևորել է կամայական վարքագիծ՝ իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը, նշանակելով պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ: http://cpcarmenia.am/files/legislation/891.pdf<br>http://cpcarmenia.am/files/legislation/994.pdf<br><br>Համաձայն «Հետք» հետաքննող լրագրողների և «Ինֆոկոմ» էլեկտրոնային կայքի հրապարակումների՝ ԿԿՀ-ն խուսափում է բարձրաստիճան պաշտոնատար որոշ անձանց, մասնավորապես ՀՀ վարչապետի ընտանիքի անդամների կամ նրա հետ փոխկապակցված բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով վարույթներ սկսել: Հրապարակված առանձին հոդվածներ վերաբերում են անմիջապես ԿԿՀ նախագահին, որը նույնպես խուսափում է իր հետ փոխկապակցված հայտարարագրման պարտականություն ունեցող ընտանիքի չափահաս անդամների նկատմամբ վարույթներ սկսել<br>https://hetq.am/hy/article/156800<br>https://infocom.am/hy/article/102475?fbclid=IwAR0I4gHeKIKSo1OHjPy_kNmk0KOtwb4uhFYaKX1DXABMGXSAltsAWG-7CH0<br><br>2021-2022 թթ. քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով վարքագծի կանոնների խախտումների, այլ սահմանափակումների, էթիկայի հանձնաժողովների եզրակացության վերանայման, ազդարարման վերաբերյալ վարույթներ չեն հարուցվել: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ պատրաստակամությունը՝ առանց վախի և բարեհաճության | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | բարեվարքության պահանջների խախտումների մասով քննություն անցկացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ: Տրամադրել մանրամասներ այն ազդեցիկ անձանց թվի և անունների վերաբերյալ, որոնց նկատմամբ քննություն է անցկացրել ԿԿՀ-ն 2020-2022 թթ. ընթացքում: Պետք է տրամադրվեն բարեվարքության պահանջների խախտման դեպքերի համապատասխան մանրամասները՝ ներառյալ քննության ու վարույթի արդյունքները և նշանակված պատասխանատվության միջոցները: «Ազդեցություն ունեցող անձինք»՝ նշանակում է քաղաքական առաջնորդներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, բացառությամբ հայեցողական պաշտոնների խմբի, ղեկավար խմբի քաղծառայողներ, | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | բիզնեսների ղեկավարներ և նշանավոր քաղաքացիներ: «Որոշ»-ի և «զգալի»-ի շեմերը կողմնորոշիչ (հուշող) են և կախված են բարեվարքության պահանջների առանձին տեսակների մասով իրականացվող քննությունների, վարույթների ընդհանուր թվից և կոռուպցիայի առավել տարածված ձևերից (օրինակ, մանր կամ քաղաքական կոռուպցիա, կամ ձեռնարկատիրական գործունեություն և պաշտոնական դիրքի չարաշահում, հովանավորչություն): | | | | |
| 35. | Ապօրինի հարստացման և ապօրինի ակտիվ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, ՀՀ գլխավոր դատախազությ | ԿԿՀ ոչ գործուն դերակատարություն | ԿԿՀ բավականին գործուն դերակատարություն | ԿԿՀ շատ գործուն դերակատարություն | Ցածր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»ՀՀ օրենքի հոդված 25-ի 9-րդ մասի պահանջով «հայտարարագրերի վերլուծության արդյունքում …Եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա Հանձնաժողովը նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն»:<br><br>2022 թ. ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ (հայտարարագիր դիտավորությամբ չներկայացնելը) և 314.3-րդ հոդվածների (հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը) հատկանիշներով |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ների վերականգնման գործընթացին աջակցություն | ան կայքէջ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, լրատվամիջոցների | | | | | քննվել է 31 քրեական վարույթ, որոնցից 7-ի նախաձեռնման առիթ են հանդիսացել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված տվյալները: Մեկ գործով, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թ. հունիսի 21-ի դատավճռով, համաձայնեցման վարույթի կիրառմամբ, Ա. Մ-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկման՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելով մեկ տարի ժամկետով: Վերոնշյալը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված և քննված առաջին քրեական գործն է այս արարքի քրեականացումից (09.06.2017թվական) ի վեր, որով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում է մեղադրական դատավճիռ: https://www.prosecutor.am/myfiles/files/reports/Anti_corruption_2022.pdf<br><br>Ապօրինի հարստացման հոդվածով 2021 թ. ոչ մի գործ չի նախապատրաստվել Haxordum korupcia.pdf (prosecutor.am) , իսկ 2022 թ. Ապօրինի հարստանալու (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Ինչպես ցույց են տալիս ՀՀ գլխավոր դատախազությանը ԹԻՀԿ հարցման արդյունքները, նշված՝ ապօրինի հարստացման հոդվածով քրեական գործի հարուցման առիթ են հանդիսացել մեկ այլ քրեական գործով նախաքննության ընթացքում առերևույթ հանցագործության մասին ստացված տվյալները:<br><br>ԿԿՀ 2022 և 2021 թթ. հաշվետվություններն ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանությունների կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | հաղորդումներ | | | | | թաքցնելը, հանգամանքներով ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված նյութերի մասով տեղեկատվությունը բացակայում է: Սահմանված ժամկետում վարչական տույժի կիրառումից հետո հայտարարագիրը Հանձնաժողով դիտավորյալ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության հայտանիշերով ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել 2021 թ. հարուցված 4 և 2022 թ. հարուցված 1 գործի մասով՝ ընդամենը 5 գործ: 2021 թ. հանձնաժողովը ԲԴԽ նախագահի հայտարարագրերի վերլուծության արդյունքները և դրանց առնչվող նյութերը ուղարկել է ՀՀ Գլխավոր դատախազություն: Հայտարարագրերի հիման վրա ապօրինի հարստացման դեպքերի քրեական հետապնդման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրաված ընդհանուր գումարների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությանը ԹԻՀԿ հարցման արդյունքները վկայում են, որ «ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից 2020-2022 թվականների ընթացքում ներկայացված հայցերի ընդհանուր հայցագինը գերազանցում է 93 միլիարդ 670 միլիոն ՀՀ դրամը»: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf , http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ դերը հանրային պաշտոնյաների ու ծառայողների հայտարարագրերի վերլուծության հիման վրա ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանություններ ի բացահայտման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման գործում | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ուսումնասիրություններին աջակցությունը: Տեղեկություններ տրամադրել ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված 2020-2022 թթ ընթացքում ապօրինի հարստացման առերևույթ անհամապատասխանություններ ի դեպքերի թվի, և դրա հիման վրա ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարուցված քրեական գործերի, վերականգնված, սառեցված կամ բռնագրավված ակտիվների գումարների և մանրամասների մասին: Երբ գնահատվում է, թե ԿԿՀ դերակատարությունը գործուն է արդյոք նման գործընթացներում, պետք է հաշվի առնել այն դեպքերի թիվը, որոնցում կիրառվել են հայտարարագրերի հիման վրա ապօրինի հարստացման դեպքերի քրեական հետապնդման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրաված ընդհանուր գումարները՝ համեմատելով երկրում գողացված ակտիվների գնահատված ընդհանուր ծավալի | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հետ (եթե նման գնահատումներ առկա են): | | | | |
| 36. | ԿԿՀ կատարողականի ընկալում | ԿԿՀ հանրային ընկալումների հետազոտությունը (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ- | Արդյունավետության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50%-ից ցածր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորությա | Արդյունավետության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75%), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, | Արդյունավետության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75%-ից բարձր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, ԿԿՀ-ի հետ անմիջակ | Ցածր | *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն*. (2023). Միջազգային հանրապետական ինստիտուտ, Բրեվիս. https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/:<br><br>Համաձայն նշված զեկույցի՝ ԿԿՀ գործունեությամբ լիովին բավարարված են հարցվածների 9%-ը, ավելի շուտ բավարարված՝ 25%-ը (n=1513) (Հանրային Կարծիքի Ուսումնասիրություն. Հայաստանի Առկա Բնակչություն, 2023, p. 20). դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել հարցվածների միայն 8%-ը:<br><br>*Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն* (p. 102). (2022). ՀՌԿԿ-Հայաստան, ԱՄՆ ՄԶԳ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf<br><br>Համաձայն զեկույցի՝ պետական անձանց և այլ հաստատությունների համեմատ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն՝ ըստ հայաստանցիների, առավել քիչ կոռումպացված կառույցներից է, 11.8%-ն է կարծում, որ մեծապես կոռումպացված է, և 18.4%-ը՝ որ որոշ չափով է կոռումպացված (n=897) (Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, p. 28): Սակայն այստեղ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ այս հարցին պատասխանողների 84%-ը գրեթե տեղյակ չէ ԿԿՀ գործունեության մասին: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, ԿԿՀ-ի հետ անմիջական շփումներ ունեցող անձանց հետ | ն դեպքում, ԿԿՀ-ի հետ անմիջական շփումներ ունեցող անձանց տեսակետներում | ԿԿՀ-ի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում | ան շփում ունեցող անձանց տեսակետներում | | «Հարցման շրջանակներում կոռուպցիայի տարածումը կանխարգելելուն ուղղված տեղեկատվական հարթակների և կառույցների գործունեության մասին տվյալները ցույց են տվել, որ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) 49% հարցված, որոնց միայն 9,4%-ն[126] է տեղյակ վերջինիս գործունեության/ գործառույթների մասին: ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատանքն արդյունավետ է գնահատել կառույցի գործունեությանը տեղյակ հարցվածների (n=143) գրեթե 51%-ը ... Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող կառույցների շարքում (առանց զրուցավարների կողմից կառույցների անվանումներ բարձրաձայնելու) ԿԿՀ-ն 2019 թ.- ին նշել է 1.1% հարցված, մինչդեռ 2021 թ.- ին՝ 8.4%:» (Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, p. 32):<br><br>ՀՀ հանրային ծառայողների շրջանում, ՀԲ-ի կողմից մշակված «*Surveys of Public Servants: Accountability and Integrity in Public Management of Armenia*». 2023, p. 26 զեկույցի արդյունքներով, չնայած հանրային ծառայողների 86%-ը լսել է ԿԿՀ-ի գործունեության մասին, սակայն միայն 27%-ն է ծանոթ ԿԿՀ-ին և նրա գործառույթներին:<br><br>Հարցվածների միայն 23%-ն է արդյունավետ գնահատել ԿԿՀ գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում:<br><br>ԹԻՀԿ-ի և «Սոցիես» փորձագիտական ՀԿ-ի կողմից հետազոտող լրագրողների հետ իրականացված ֆոկուս խմբային քննարկման |

[126] Կառավարության կողմից իրականացվող գործողություններից կամ նախագծերից միայն տարբեր պետական մարմինների թեժ գծերի մասին է, որ տեղյակ է քաղաքացիների կեսից ավելին, իսկ ամենացածր տեղեկացվածությունը մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների (e-request, e-hotline, e-petition) վերաբերյալ է : (Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, 2022, p. 7):

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | արդյունքներով՝ «Հանձնաժողովի անկախությունից զատ մասնակիցները գնահատել են նաև ԿԿՀ աշխատանքի արդյունավետությունը: Մասնակիցները ԿԿՀ աշխատանքի արդյունավետությունը (1-ից 10 սանդղակով. 1-խիստ անարդյունավետ, 10-բարձր արդյունավետ) գնահատում են (համապատասխանաբար՝ 6, 3 (կամ 4), 2, 4 և 2, որը նշանակում է, որ ԿԿՀ գործունեությունը գնահատում են հիմնականում անարդյունավետ կամ ավելի շատ անարդյունավետ»:<br><br>Նշվում է, որ արդյունավետությունը ցածր է կոռուպցիոն ռիսկերի վերհանման տեսանկյունից, չնայած՝ վերջին շրջանում հանձնաժողովի գործունեության մեջ տեղի են ունեցել որոշակի բարելավումներ, մասնավորապես ընդլայնվել է հանձնաժողովի գործունեության շրջանակը, բարելավվել է հայտարարագրման համակարգը, շատացել են գործիքները: Հայտարարագրման համակարգի վերանայման վերաբերյալ հնչում են բացասական կարծիքներ: Կա կարծիք, որ, ընդհանուր առմամբ, հանձնաժողովն անգործության է մատնված:<br><br>*«Իսկ մյուս հարցը՝ թե արդյունավետությունը ինչքան եմ գնահատում, երևի 3 կամ 4: Երեքն էլ գնահատում եմ նրա համար, որ հայտարարագրերի ռեեստրը լրիվ չէն փակել էլի: Այսինքն, ուրիշ ինչ-որ բան չկա [ծիծաղում են]»:*<br><br>*«...Էդ կառույցը չի կարողանում նույնիսկ ֆիքսի՝ քանի հոգի հայտարարագիր չի ներկայացրել, որ պիտի ներկայացներ...»:*<br><br>*«Իրենք հիմնականում զբաղված են փաստաթուղթ ընդունելու և փաստաթուղթ հրապարակելու գործառույթով, և դա մեխանիկական* |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | *աշխատանք ա, դրա համար կարելի ա մի հատ ինչ-որ IT ընկերության ասել, մի հատ հավելված սարքի և էդ հանձնաժողովը փակել»:*<br><br>Որպես աշխատանքի արդյունավետության ցածր մակարդակի ցուցանիշ նշվում է, որ հանձնաժողովը տարվա ընթացքում քիչ թվով հայտարարագրեր է կարողանում ստուգել: Նշվում է, որ հանձնաժողովը տարվա ընթացքում պլանավորում է ստուգել ընդամենը 95 հայտարարագիր:<br><br>*«Այսինքն, էդ ամբողջ կառույցը, որ հայտարարագրերի վերլուծության վարչությունում 12 հաստիքի տեղ ունի, 95 հայտարարագիր ա նախատեսում...»:*<br><br>ԹԻՀԿ-ի և «Սոցիես» փորձագիտական ՀԿ-ի կողմից՝<br>• ԿԿՀ ներկա և նախկին աշխատակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքներով ԿԿՀ աշխատանքի արդյունքները «շատ անարդյունավետ» է գնահատել նախկին աշխատակիցների 57.1%-ը, այն դեպքում, երբ ներկա աշխատակիցների 45.5%-ն այն գնահատել է «հիմնականում արդյունավետ»: Կոռուպցիայի դեմ պայքարում գործող հակակոռուպցիոն մարմինների շարքում ԿԿՀ ներկա աշխատակիցների 54.5%-ն արդյունավետ են համարում ԿԿՀ, Դատախազության գործունեությունը, իսկ նախկին աշխատակիցները բոլոր հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը համարել են անարդյունավետ:<br>• Փորձագետների շրջանում իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ «ԿԿՀ գործունեության արդյունավետությանը դժվար է ընդհանրական գնահատական տալ: Ընդհանուր է այն տեսակետը, որ որոշ գործառույթներ ԿԿՀ-ն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | հաջողությամբ իրականացնում է (հայտարարագրման համակարգը), սակայն առկա են նաև թերացումներ և խնդիրներ»: Նշվում են ԿԿՀ ներքին կառուցվածքային և գործառության, որոշումների կայացման գործընթացի խնդիրները: Մասնավորապես խոսքը վերաբերում է ԿԿՀ նախագահի դերին և ֆունկցիաներին: Ըստ փորձագետների՝ կառավարչական որոշ խնդիրներ առաջին հերթին կապված են կոլեգիալության սկզբունքի պահպանման և ԿԿՀ կառավարման գործող պրակտիկայի հետ:ԿԿՀ նախագահն ունի առանցքային դեր ԿԿՀ-ում որոշումների կայացման մեջ, մինչդեռ նա առավելապես պետք է գործի որպես ադմինիստրատիվ ղեկավար: Հաջորդ առանցքային խնդիրը ԿԿՀ արտաքին հաղորդակցության մեխանիզմների թույլ լինելն է: ԿԿՀ ճանաչելիությունը շատ ցածր է, և վերջինս հանձնաժողովի արդյունավետ գործունեության առաջնային խոչընդոտն է: ԿԿՀ նախագահը, ընդհանուր առմամբ, չի կարևորում հաղորդակցությունը:<br>• ԿԿՀ-ն հանրության համար բավարար չափով հասանելի չի, և այդ ուղղությամբ բավարար աշխատանք չի տարվում: Ընդհանուր առմամբ, ԿԿՀ գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավական ցածր է: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ կատարողականը հանրային ընկալումներում: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի գլխավորապես հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | լրացվի ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով, եթե անհրաժեշտ է: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե ԿԿՀ-ն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է ԿԿՀ անդամներից և անձնակազմից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները: | | | | |
| | **Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանման միավորի հանրագումար** | | | | | 3/18 =16.7% | |
| | **Կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում (9 ցուցանիշ)** | | | | | | |
| 37. | Հատկացված | ԿԿՀ տարեկան զեկույցը | ԿԿՀ գործառնական ծախսեր | ԿԿՀ գործառնական ծախսեր | ԿԿՀ գործառնական ծախսերի | Ցածր | Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների (ծրագրի և միջոցառման դասիչ 1181-11002) ֆինանսավորման |

<table>
<tr><th rowspan="2"></th><th rowspan="2">ՑՈՒՑԱՆԻՇ</th><th rowspan="2">ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td rowspan="2"></td><td rowspan="2">բյուջե</td><td rowspan="2">և կայքը, ՀՀ ֆինանսների նախարարության կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ</td><td>ի 2,5%-ից ցածր</td><td>ի 2,5%-ից 5%</td><td>5%-ից բարձր</td><td></td><td>նպատակով ՀՀ պետական բյուջեով կատարված հատկացումները 2020-2021 թթ. չեն օգտագործվել, իսկ 2022 թ. այդպիսի հատկացումներ չեն կատարվել:<br><br>Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացման ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացում (միջոցառում 11002)
<table>
<tr><th></th><th>2020 թ.</th><th>2021 թ.</th><th>2022 թ.</th></tr>
<tr><td>Պլան</td><td>10,254.0</td><td>10,254.0</td><td>0.0</td></tr>
<tr><td>Ճշտված</td><td>0.0</td><td>254.0</td><td>0.0</td></tr>
<tr><td>Փաստ</td><td>0.0</td><td>0.0</td><td>0.0</td></tr>
</table>
<br>ԿԿՀ ներկայացրած տեղեկատվության համաձայն 2020-2022 թթ. գործառնական ծախսերը կազմել են (հազար դրամ).
<table>
<tr><th></th><th>Գործառնական ծախս</th><th>Հանրային իրազեկում</th><th>Տեսակարար կշիռը (%)</th></tr>
<tr><td>2020 թ.</td><td>124,830.2</td><td>0.0</td><td>0.0</td></tr>
<tr><td>2021 թ.</td><td>237,187.3</td><td>0.0</td><td>0.0</td></tr>
<tr><td>2022 թ.</td><td>358,487.8</td><td>0.0</td><td>0.0</td></tr>
</table></td></tr>
<tr><td colspan="3">Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում ԿԿՀ-ի կողմից հանրային իրազեկմանը, հաղորդակցմանը և կանխարգելմանը հատկացված գործառնական ծախսերի միջին</td><td></td><td></td></tr>
</table>

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | մասնաբաժինը: Հավաքագրել ԿԿՀ՝ հանրային իրազեկման և կանխարգելման ծրագրերի ծախսերի վերաբերյալ տվյալներ և հաշվարկել այս ծախսերի միջին մասնաբաժինը ԿԿՀ ընդհանուր գործառնական ծախսերի մեջ 2020-2022 թթ. ընթացքում: Հնարավորինս պարզաբանել, թե ինչն է համարվում «կանխարգելում» ԿԿՀ բյուջեում (որպես հիմք ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ով հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակը), քանի որ դա երբեմն կարող է ներառել հիմնական կանխարգելման գործառույթներից դուրս գտնվող գործողություններ (օրինակ՝ նյութերի ուղարկում հետաքննողների թիմին): | | | | |
| 38. | Կանխարգելման ռազմավ | ԿԿՀ տարեկան հաշվետվություն և | Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթությ | Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթությ | Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և | Ցածր | **«**Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»ՀՀ օրենքի հոդված 24-ով հանձնաժողովին է վերապահված «կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակման և դրանք Կառավարություն ներկայացման, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակման և իրականացման միջոցառումների, իր մշակած հակակոռուպցիոն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | արական ծրագրավորում/պլանավորում | կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ | ան և իրազեկման միջոցառումների ծրագիր գոյություն չունի կամ թույլ է | ան և իրազեկման միջոցառումների ծրագիրը համապարփակ է, բայց ամբողջովին չի իրականացվել | իրազեկման ծրագիրը համապարփակ է և ամբողջովին իրականացվել է | | ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների կազմման և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման» լիազորությունները:<br><br>Ինչպես վկայում են ԿԿՀ 2021 և 2022 թթ. հաշվետվությունները, կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մասով հանձնաժողովի գործունեությունը միտված է եղել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով սահմանված ԿԿՀ-ին վերապահված գործողությունների իրականացմանը, ՀՀ պետական մարմինների կողմից հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների և առաջարկությունների ներկայացմանը: Այդուհանդերձ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահված՝ կոռուպցիայի կանխարգելման ծրագրի մշակման և այն ՀՀ կառավարությանը ներկայացնելու լիազորությունը չի իրականացվել և հանձնաժողովի կայքէջի http://cpcarmenia.am/hy/strategy/ «Ռազմավարություն» բաժնում բացակայում են նման ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և դրա իրականացման մոնիտորինգի զեկույցները:<br><br>Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման մասով ԿԿՀ 2021 և 2022 թթ. տարեկան հաշվետվությունները վկայում են, որ 2021 թ. իրականացվել է ՀՀ 15 կազմակերպությունների կողմից կազմակերպվող հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ուսումնասիրություն: 2022 թվականին կոռուպցիայի դեմ պայքարի կրթական ծրագրերի՝ 4 բաղադրիչների մասով նախապատրաստական աշխատանքները սկսվել են իրականացվել 2022 թվականի հոկտեմբերից սկսված ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում, որի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | առաջին բաղադրիչով նախատեսվում է բարելավել ԿԿՀ-ի կարողությունները հակակոռուպցիոն կրթական և իրազեկման բարձրացման ծրագրերի մշակման գործընթացը:<br><br>Հանրային իրազեկվածության բարձրացման ծրագրերի մշակման մասով նույնպես ԿԿՀ 2021-2022 թթ. հաշվետվությունները վկայում են, որ հանրային իրազեկման ծրագրերի մասով իրականացվել են բազմաբնույթ գործողություններ, որոնք ներկայացվել են նաև որպես իրազեկման ծրագրեր կամ միջոցառումներ: Մասնավորապես 2021 թ. համեմատ 2022 թ. հանձնաժողովի կայքէջի հիմնականում «Նորություններ» բաժնի միջոցով կատարվել է կրկնակից ավելի՝ շուրջ 140 հրապարակում: Ընդարձակվել են իրազեկման ուղիները. Հանձնաժողովը իրազեկման նպատակով գործարկում է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով կայքը, Facebook-յան էջըhttps://www.facebook.com/profile.php?id=100068554087037 , Telegram- յան և youtube-յան էջերը:<br><br>Իրազեկման միջոցառումներ-ծրագրեր են ճանաչվել նաև միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպված աշխատաժողովները, աշխատանքային-թեմատիկ քննարկումները: Որպես իրազեկման միջոցառում է ներկայացված նաև ՀԲ օժանդակությամբ «Հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների ու դրանց ընկալումների վերաբերյալ» հարցախույզի անցկացումը, ինչպես նաև ՀՌԿԿ-ի (CRRC) կողմից իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը»: Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf (crrc.am) Իրազեկման միջոցառումների շարքում գերակշռել են ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ ՀՀ 5 մարզերում և Երևանում կազմակերպված հակակոռուպցիոն բարեփոխումների ու ԿԿՀ գործառույթների ներկայացման վերաբերյալ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | իրազեկման միջոցառումները: Այդուհանդերձ, նշված միջոցառումները չեն հանդիսացել նախօրոք ծրագրավորված ԿԿՀ իրազեկման բարձրացման միջոցառումների ծրագրի մաս և դրանց արդյունքների մոնիտորինգ ու գնահատում չի իրականացվել:<br><br>Նշված միջոցառումներն առավելապես կրել են իրավիճակային բնույթ և նպատակ են ունեցել բացահայտելու առանձին խմբերի կողմից կոռուպցիայի ընկալումների ու իրազեկվածության խնդիրները: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրերի համապարփակությունը և դրանց իրականացումը: Ներկայացրեք մանրամասներ ԿԿՀ կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման երկարաժամկետ ռազմավարության և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի առաջին մասի 13, 16 և 19-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացման մասին, ներառյալ՝ ընդգրկված ոլորտները և իրականացման աստիճանը: Եթե ԿԿՀ-ն չունի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | իրազեկման իր միջոցառումների ծրագիր, հետազոտողը պետք է ճշտի դրա պատճառները ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից: Համապարփակ ծրագիրը պետք է ներառի բոլոր երեք ոլորտները՝ կանխարգելում, կրթություն և իրազեկում: Հետազոտողը պետք է արձանագրի բարձր, միջին կամ ցածր միավոր նշանակելու հիմնավորումը, ներառյալ այն տարրերը, որոնք օգտագործվել են ծրագրի համապարփակության (համակողմանիության) աստիճանը պարզելու համար: | | | | |
| 39. | Հակակոռուպցիոն կրթություն և զարգացում | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, Հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար | ԿԿՀ-ն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման սակավաթիվ նախաձեռնությու | ԿԿՀ-ն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման որոշ նախաձեռնություններ (տարեկ | ԿԿՀ-ն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման բազմաթիվ նախաձեռնություններ | Ցածր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովին վերապահված է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և միջոցառումների իրականացում:<br><br>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մշակում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում միջոցառումներ: Նույն հոդվածի 17-րդ կետը սահմանում է, որ Հանձնաժողովն առաջարկություններ է ներկայացնում կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ | ններ կամ ոչ մի նախաձեռնություն | ան միջինը 1-4) | (տարեկան միջինը 5 և ավելի) | | վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ:<br><br>2022 թ. կազմակերպվել է «Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով պետական կառավարման համակարգի մարմինների [ավելի քան 60՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնակցությամբ աշխատաժողով](#):<br><br>Համագործակցության հուշագրեր են ստորագրվել ՀՀ 4 բուհերի հետ, որոնց, սակայն, որևէ գործողություն դեռ չի հաջորդել:<br><br>Հանձնաժողովի կողմից աշխատանքներ են տարվել Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի ([International Anti-Corruption Academy](#) (IACA) հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: 2022 թ. ստորագրված համագործակցության հուշագրով ամրագրվել է Հանձնաժողովի և IACA հետ համագործակցությունը, որը նոր խթան է հանդիսացել երկու կառույցների համագործակցության համար:<br><br>ԿԿՀ և ԵՄ Թվինինգ ծրագրի համագործակցության շրջանակներում իրականացվող համատեղ ծրագրի Բաղադրիչ 1-ի գործողություններն ուղղված են հակակոռուպցիոն կրթական և իրազեկման բարձրացման ծրագրերի մշակմանը և դրանց իրականացման աջակցման ոլորտում Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը: Ծրագրի գործողություն 1.1-ը ենթադրում է բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման համար գործող ենթակառուցվածքի ստեղծում: Նշված գործողության արդյունքում 2022 թ. իրականացվել է՝ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | • Հանձնաժողովի տեսանկյունից թիրախային խմբերի վերապատրաստման կարիքների վերլուծություն,<br>• առկա նյութերի և իրականացվող վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,<br>• Քաղաքացիական ծառայության գրասենյակի և Պետական կառավարման ակադեմիայի ներկայացուցիչների և փորձագետների միջև հանդիպումներ,<br>• հարմարեցված առաջարկների մշակում (վերապատրաստման միջոցառումներ, ուսումնական նյութեր, ձեռնարկներ և այլն),<br>• մշակված հայեցակարգերի և նյութերի հիման վրա վերապատրաստման ծրագրերի նախագծերի մշակում/հանրային իրազեկվածության բարձրացում:<br><br>Ծրագրի գործողություն 1.3-ը նախատեսում է բարեվարքության կրթության ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ բարձրագույն կրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում: Նշված գործողության արդյունքում իրականացվել է՝<br>• Հանձնաժողովի տեսանկյունից թիրախային խմբերի վերապատրաստման կարիքների վերլուծություն,<br>• բուհերում առկա նյութերի և կրթության/վերապատրաստման հաշվառում,<br>• քննարկում հայաստանյան բուհերի և շահագրգիռ կառույցների հետ:<br><br>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի լիազորությունները ներառում են կրթական ծրագրերի իրականացման |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | համար ուսումնամեթոդական ուղեցույցների և այլ նյութերի տրամադրումը:<br><br>ԵՄ Թվիննինգ ծրագրի 1.4 գործողության շրջանակներում նախատեսվում է հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի վերաբերյալ մասնագիտական զարգացման համակարգի ստեղծում և բարեվարքության վերապատրաստման ծրագրերի նյութերի մշակում, հաստատում և հրապարակում:<br><br>2021 թ. ընթացքում Հայաստանի Ամերիկյան համալսարանի և ԿԿՀ ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել է 2 քննարկում, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել ԿԿՀ աջակցությամբ ՀԱՀ ուսումնական պլաններում նոր հակակոռուպցիոն, բարեվարքության ամրապնդմանն ուղղված առարկայի ներառման հնարավորություններին:<br><br>Հանձնաժողովում ՀՀ արդարադատության նախարարի մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ քաղհասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում կարևորվել է հասարակական կազմակերպությունների դերակատարումը կոռուպցիայի կանխարգելմանը միտված գործընթացներն ամենօրյա օրակարգում ունենալու հարցը և վերջիններիս ներգրավվածությունը:<br><br>2022 թ. ընթացքում իրականացվել է «Բարեվարքությունը և կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել են Հանձնաժողովի անդամները, ԵԽ կոռուպցիայի դեմ |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | պայքարող պետությունների (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը (առցանց), ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ և միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, կառավարման համակարգի բարեվարքության հարցերով կազմակերպիչներ:<br><br>Կազմակերպվել է աշխատանքային քննարկում Հայաստանում գործող դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մասնակցությամբ: Քննարկմանը մասնակցել են նաև ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, միջազգային կառույցների ու գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:<br><br>Հանձնաժողովի, U4 նորվեգական հակակոռուպցիոն ռեսուրս-կենտրոնի և Հայաստանում Շվեյցարիայի դեսպանության հետ համատեղ տեղի է ունեցել «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացում» խորագրով աշխատանքային աշխատաժողով, որին մասնակցել են շուրջ 51 ներկայացուցիչներ ՀՀ պետական կառավարման մարմիններից, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպություններից: Աշխատաժողովի ընթացքում դասախոսությունների միջոցով ներկայացվել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման միջազգային փորձը և ՀՀ-ում համակարգի ներդրմանն առնչվող հարցեր:<br><br>ԵՄ Թվիննինգ ծրագրի 1.4 գործողության շրջանակում 2022 թ. իրականացվել են քննարկումներ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության թեմաներով դասընթացներ իրականացնող ՔՀԿ ներկայացուցիչների և փորձագետների հետ: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | 2021 թ. ընթացքում ՔՀԿ նախաձեռնությամբ տեղի է ունեցել 2 ճանաչողական այց՝ ուսանողական խմբերի մասնակցությամբ: ԿԿՀ նախաձեռնությամբ հանձնաժողովի գործառույթների և առկա թափուր աշխատատեղերի մասին իրազեկման երկու հանդիպումներ են տեղի ունեցել ուսանողների հետ (որոնցից մեկը՝ առցանց ֆորմատով): Մասնակիցների քանակի մասին ինֆորմացիան բացակայում է:<br><br>2022թ. ընթացքում, մեծամասամբ կրկին ՔՀԿ նախաձեռնությամբ, տեղի է ունեցել 5 ճանաչողական այց: Հանձնաժողովում հյուրընկալվել են Վանաձորի, Ալավերդու բուհերի և քոլեջների, Բերդի պետական բազմագործառութային քոլեջի, Պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի տեխնոլոգիական քոլեջի մանկավարժներ և ուսանողներ: Այցելությունների մասնակիցների քանակի մասին ինֆորմացիան բացակայում է:<br><br>Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասով փորձագետների հետ կազմակերպված հարցազրույցի արդյունքներով՝ նշվում է, որ կրթական տեսանկյունից ներկա պահին ԿԿՀ-ի համար առաջնային մարտահրավերներ են վերապատրաստման ծրագրերի/մոդուլների մշակումը, վերանայումը, մեթոդական ուղեցույցների մշակումը և կայքի հագեցումը վերջիններիս մասին տեղեկատվությամբ:<br><br>Փորձագետները գտնում են, որ այժմ առավել կարևոր է, որ ԿԿՀ-ն կենտրոնանա, ռեսուրսներ տրամադրի իրազեկման և կրթության գործառույթների իրականացման համար:<br><br>ԿԿՀ-ն չունի բավարար փորձագիտություն և ռեսուրս կրթական ծրագրեր մշակելու համար: ԿԿՀ-ում կրթական ծրագրերի մշակման ընթացակարգերը բավարար հստակեցված և սահմանված չեն: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Ասվածը վերաբերում է թե՛ հանրային իրազեկման և կրթական գործընթացներին, թե՛ քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման մոդուլներին: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ-ի կողմից 2020-2022 թթ. ընթացքում նախաձեռնված հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման նախաձեռնությունները («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ին մասի 17 և 18-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացում), ներառյալ ԿԿՀ կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, ԿԿՀ այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և հանրային պաշտոն զբաղեցրած և ծառայողների վերապատրաստման դասընթացների քանակը և դրանց մասնակցած պաշտոնյաների թիվը: | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 40. | Կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրություններ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ԿԿՀ-ի կողմից ուսումնասիրված պետական և ՏԻՄ մարմինների անձնակ | Անցկացվել են սակավաթիվ ուսումնասիրություններ կամ ոչ մի ուսումնասիրություն չի անցկացվել (իրավասու կազմակերպությունների թվի համեմատ) | Անցկացվել են զգալի թվով ուսումնասիրություններ (իրավասու կազմակերպությունների թվի համեմատ) | Անցկացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ (իրավասուն կազմակերպությունների թվի համեմատ) | Ցածր | ԿԿՀ-ի համար պետական և ՏԻՄ մարմիններում դրանց կազմակերպական ընթացակարգերի, համակարգերի, կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրությունների իրականացման լիազորությունը վերապահված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ին մաս կետ 12-ում, որում նշված է, որ «իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին»: Նշված լիազորությունը միանշանակորեն չի արտահայտում պետական և ՏԻՄ մարմիններում և հանրային կառավարման առանձին ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա հակակոռուպցիոն ուսումնասիրությունների ու ծրագրերի մշակման գործառույթը: Այդ իսկ պատճառով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրում ( ՀՀ կառավարության 2019 թվականի 3 հոկտեմբերի 2019 թվականի N 1332-Լ որոշման 7-րդ և 8-րդ միջոցառումներ [PT70.1_2019N1332hav.2.docx (live.com)](PT70.1_2019N1332hav.2.docx (live.com)) ) ՀՀ վարչապետի աշխատակազմին և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված էր մշակելու մեթոդաբանություն և ԿԿՀ-ի հետ համատեղ իրականացնելու մի շարք պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտում և գնահատում և դրանց հիման վրա հակակոռուպցիոն ծրագրերի մշակում: Ինչպես վկայում է ԿԿՀ 2022 թ. հաշվետվությունը http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf , 2022 թվականի օգոստոսի 24.08.22 N 1351-Լ ՀՀ կառավարության որոշմամբ վերանայվել է հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը: Վերանայման արդյունքում «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում» ռազմավարական միջոցառման |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | ազմի հետ | | | | | ներքո հետադարձ ուժով նախատեսվել է «Մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը և ներկայացվել է Կառավարության հաստատմանը» ակնկալվող արդյունքը: Նշված ակնկալվող արդյունքի հիմնական կատարող է ճանաչվել ԿԿՀ-ն: Նման պայմաններում, ըստ ԿԿՀ հաշվետվության արդյունքների, հանձնաժողովը մշակել է հայեցակարգի նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ինչպես վկայում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակված «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցը» https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf , «կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը գտնվում է լրամշակման փուլում: Ուստի սույն միջոցառումը մասնակի է կատարվել»: Արդյունքում, կազմակերպությունների, պետական և ՏԻՄ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ուսումնասիրություններ չեն կատարվել: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է 2020-2022 թթ. ընթացքում կոռուպցիայի կանխարգելման նպատակով ԿԿՀ-ի կողմից պետական և ՏԻՄ մարմիններում իրականացված կազմակերպական ընթացակարգերի, համակարգերի, հնարավորությունների և ռիսկերի ուսումնասիրությունները, («Կոռուպցիայի կանխարգելման հ | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | անձնաժողովի մասին»ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ին մաս կետ 12 վերապահված լիազորություն և 2019-2022 թթ. ՀՌԻՄԾ կոռուպցիոն ռիսկերի գնահատում պետական և ՏԻՄ մարմիններում): Բացի այդ, արդյո՞ք ԿԿՀ-ն նախաձեռնել է վերանայումները, թե նրան խնդրել են դա անել: Սա կարող է ներառել նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրությունները, եթե ԿԿՀ իրավասության շրջանակն ընդգրկում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածները: Հաշվի առնելով մասնավոր հատվածում կոռուպցիոն դեպքերի աճը՝ կարևոր է, որ ԿԿՀ-ն իրականացնի նաև այս ուսումնասիրությունները, երբ մասնավոր հատվածում բացահայտվեն կոռուպցիոն դեպքեր: | | | | |
| 41. | Կանխարգել | ԿԿՀ տարեկան | Ամենևին | Երբեմն (իրավասու | Հաճախ (իրավասու | Բարձր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 14 և 15-րդ կետերով ԿԿՀ-ն լիազորված է «14) իրավասու մարմին կարծիք է ներկայացնում կոռուպցիայի դեմ պայքարին |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | մանվերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ | հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ | | մարմիններին ներկայացված առաջարկությունների մինչև 50%-ը բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ) | մարմինների ներկայացված առաջարկությունների 50%-ից ավելին բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ) | | առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, 15) իրավասու մարմին ներկայացնում է իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ»:<br><br>Նշված լիազորությունների իրականացման մասով ԿԿՀ 2021 և 2022 թթ. հաշվետվությունները վկայում են, որ 2021 թ. ընթացքում իրականացվել են օրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ, որոնց շրջանակում մշակվել և լրամշակման փուլում են գտնվում ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», « «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթները: «Հանձնաժողովը գրավոր դիրքորոշումներ և առաջարկություններ է ներկայացրել նաև այլ պետական մարմինների կողմից շրջանառվող թվով 4 օրենսդրական փոփոխությունների փաթեթների վերաբերյալ, ներկայացրել 37 առաջարկություններ: Հանձնաժողովի գործունեության ընթացքում վեր հանված խնդրահարույց կարգավորումների, օրենսդրական բացերի վերացմանն ուղղված օրենսդրական ակտերի մշակման աշխատանքների մասով՝ 1. մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի կառուցակարգերի կատարելագործման հայեցակարգ և գործողությունների ծրագիր, 2. հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կարգապահական պատասխանատվության օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն, 3. օրենսդրական բացերի |

| | ՑՈՒ ՑԱ ՆԻՇ | ՏՎՅԱԼ ՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | վերհանում և դրանց շտկմանն ուղղված առաջարկներ՝ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ բացեր և խնդիրներ, որոնք ամփոփվել են օրենսդրական փոփոխությունների հայեցակարգում, 4.Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու նպատակով Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների մշակում»: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf<br><br>2022 թ. Հանձնաժողովի կողմից ընդունվել են 8 իրավական ակտեր: Իրավական ակտերից 6-ը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն են: Հանձնաժողովը կարծիք է ներկայացրել այլ պետական մարմիններից ստացված 11 իրավական ակտերի նախագծերի ավելի քան 41 առաջարկություններ: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>Վերոնշյալ առաջարկությունները բխում են ԿԿՀ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործառույթից, դրանք ունեն համակարգային բնույթ և հայեցակարգային նոր լուծումներ են առաջարկում հանրային ծառայողների բարեվարքության ու կոռուպցիայի կանխարգելման ոլորտներում հանրային ծառայողների բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման նոր գործիքակազմերի ու դրանց կառուցակարգերի մշակման ու կիրառման գործում:<br><br>Այդուհանդերձ, ԿԿՀ-ի կողմից 2021-2022 թթ. իրավասու մարմիններին կանխարգելման վերաբերյալ ներկայացված առաջարկությունները կրել են առավելապես օրենսդրական փոփոխությունների տեսք և հիմնված |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | են եղել օրենսդրական անհամապատասխանությունների, բացերի ու կարգավորումների ոչ ամբողջական գործընթացների խնդիրներով: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ 2020-2022 թթ. գործունեության ընթացքում վեր հանված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների քանակը («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ին մաս կետ 14 և 15-րդ) և դրանք տարեկան հաշվետվություններում ներառելու հաճախականությունը: Հավաքել տվյալներ 2020-2022 թթ ընթացքում ԿԿՀ գործունեության (կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկման և կոռուպցիայի դեմ պայքարի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք հայտնելու նպատակով) ԿԿՀ-ի կողմից պատրաստված առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | քանակը և դրանց տեսակարար կշիռն իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների (եզրակացություններ, վարույթների քանակ և այլն) թվում, որպեսզի հնարավոր լինի որոշել նման առաջարկությունների հաճախականությունը: Սա արվում է պարզելու համար, թե ԿԿՀ-ն իր գործունեությամբ արդյոք ակտիվորեն բացահայտում է համակարգային խնդիրները և տրամադրում առաջարկություններ: Եթե ԿԿՀ-ն հիմնականում անգործուն է համակարգային խնդիրների վերհանման բովանդակային առաջարկություններով, ապա անկախ իր գործունեության արդյունքներով ներկայացված առաջարկությունների քանակից հետազոտողը պետք է նշանակի միայն ցածր (կամ, հնարավոր է, միջին) միավոր: | | | | |
| 42. | Կոռուպցիայի | ԿԿՀ տարեկան հաշվետ | ԿԿՀ-ի կողմից կիրառվել է փոքր | ԿԿՀ-ի կողմից կիրառվել է որոշ | ԿԿՀ-ի կողմից կիրառվել են | Ցածր | Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման գործընթացը ուղղակիորեն առնչվում և մաս է կազմում կոռուպցիոն ռիսկերի հիման վրա ոլորտային հակակոռուպցիոն |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտություններ | վությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ | ծավալի կամ աննշան անկախ հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար | ծավալի հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար | հետազոտությունների լայնածավալ օգտագործում կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար | | ծրագրերի մշակման, ինչպես նաև կոռուպցիայի առանձին տեսակների, գործոնների բացահայտման գործընթացների հետ:<br><br>ԿԿՀ 2021 և 2022 թթ. հաշվետվությունները վկայում են, որ 2022 թ. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ), պետական այլ գերատեսչությունների և ՀԲ-ի համագործակցության շրջանակներում կազմակերպվել է հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցում: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>«Հարցման նպատակն է օգնել ԿԿՀ-ին և ՀՀ կառավարությանն՝ ավելի լավ պատկերացնել բարեվարքության ռիսկերը պայմանավորող գործոնները, և թե հաշվետվողականության թույլ համակարգերն ինչպես կարող են ազդել աշխատանքի արդյունավետության վրա, և թե վերջին հաշվով ինչպես կազմել այնպիսի բարեփոխումներ, որոնք կարող են օգնել լուծել ու հակակշռել հանրային հատվածում բարեվարքության թույլ աշխատակարգերը: https://docs.google.com/document/d/1WBKxpQz1AoJFd9x1CiR4nnRQ06oSIRcx/edit Համաձայն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թ. միջոցառումների՝ եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցի նշված հարցման արդյունքները դեռևս հրապարակված չեն, և դրանց հիման վրա մշակված չէ գործողությունների ծրագիր:<br><br>ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն» ծրագրի և ԿԿՀ համագործակցությամբ Հետազոտական ռեսուրսների Կովկասյան Կենտրոնին (CRRC) պատվիրվել է «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն», որը իրականացվել է 2021 թ. հոկտեմբեր-նոյեմբերին: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research- |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | report_Arm.pdf Հետազոտության արդյոիինքները քննարկվել են ԿԿՀ-ի հետ, ինչի հիման վրա դեռևս ԿԿՀ-ի կողմից մշակված չեն հետագա գործողությունների ծրագիրը:<br><br>ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նշված հետազոտություններից զատ այլ հետազոտություններ չեն պատվիրվել, և դրանց արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրեր մշակված չեն: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտման գործում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները: Հավաքագրել տվյալներ և տեղեկություններ ԿԿՀ անձնակազմի և այլ հետազոտողների կողմից երկրում առկա կոռուպցիայի վերաբերյալ իրականացվող հետազոտական նախագծերի մասին, եթե այդպիսիք առկա են կամ կիրառելի: Ներառված հետազոտությունները պետք է | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | նախաձեռնվեն և համակարգվեն ԿԿՀ-ի կողմից: | | | | |
| 43. | Տարածում և քարոզարշավներ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, Հարցազրույցներ ԿԿՀ-ի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, լրատվամիջոցների | Չի տարածում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ և չի դիմում քարոզարշավների | Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների սահմանափակ տարածում և քարոզարշավների սահմանափակ օգտագործում | Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների ընդարձակ կերպով տարածում և քարոզարշավների ընդարձակ կերպով օգտագործում | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24 մաս 1, կետ 16-ով ԿԿՀ-ին է վերապահված «կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակման և իրականացման միջոցառումների» լիազորությունները: Համաձայն ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ-ին ուղղված հարցման արդյունքների՝ հանրային իրազեկման շրջանակներում ԿԿՀ-ի կողմից 2022 թ. իրականացվել է թվով 2 ծրագիր, որոնցով սահմանվել են թվով 12 իրազեկման միջոցառումներ բարեվարքության հարցերով կազմակերպիչների, մանկավարժների և ծնողների շրջանում:<br><br>«Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով իրականացվել է պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով ավելի քան 60 կազմակերպիչների մասնակցությամբ իրազեկման միջոցառում:<br><br>«Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման հանդիպումներ են իրականացվել ՀՀ Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում: ուսումնական հաստատությունների ուսուցիչների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների շրջանում:<br><br>Իրազեկման հանդիպումներին ներգրավվել են ՀՀ մարզերի 33 ուսումնական հաստատություններից 131 մանկավարժներ և ծնողներ, իսկ Երևանում՝ 6 ուսումնական հաստատություններից 141 մասնակիցներ: 2022 թ. Հանձնաժողովի կողմից իրականացվել են |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | հաղորդումներ | | | | | իրազեկման ընդհանուր թվով 11 հանդիպումներ, որոնց մասնակցել են 272 մանկավարժներ և ծնողներ: Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության տարածման և հանրությանն իրազեկման կազմակերպված քարոզարշավների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:<br><br>Փորձագետների հարցազրույցների արդյունքները փաստում են, որ ԿԿՀ-ի մասին հանրության տեղեկացվածության ցածր մակարդակն առաջին հերթին պայմանավորված է ԿԿՀ-ի կողմից տեղեկատվության տարածման, հանրության իրազեկման և կրթական աշխատանքների պակասով: Ընդհանուր առմամբ, հանրային իրազեկման տեսանկյունից հանձնաժողովի աշխատանքն անարդյունավետ է: Տեղեկատվության տարածման միջոցառումներ և քարոզարշավներ հանձնաժողովը չի իրականացնում: Հանրային իրազեկման և հանրության հետ հաղորդակցության խնդիրների հիմքում փորձագետները տեսնում են ԿԿՀ-ում հաղորդակցության մասնագետների պրոֆեսիոնալիզմի պակասը, ինչպես նաև ԿԿՀ դերի սահմանման և ինքնաընկալման հետ կապված խնդիրները: ԿԿՀ-ում հստակ չեն պատկերացնում ինչպես պետք է կազմակերպել հանրային իրազեկում, կան փորձագիտության խնդիրներ, ուրվագծվում է նաև կանխարգելման փորձագիտության պակասը ԿԿՀ-ում: Համագործակցությունը մեդիայի հետ հնարավորություն կտար ԿԿՀ-ին տարածել հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ ինֆորմացիա: Սակայն, նման քայլեր և նման համագործակցություն ԿԿՀ-ն չի իրականացնում: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացման ծրագրերով սահմանված | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | տեղեկությունների տարածման տեսակը, քարոզարշավների կազմակերպման միջոցով կոռուպցիայի կանխարգելման ուղերձի տարածման մակարդակը: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք հոդված 24 մաս 1, կետ 16-ով սահմանված լիազորությունների իրականացում: | | | | |
| 44. | Առցանցհաղորդակցություն | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց | ԿԿՀ-ն չունի կայք և չի օգտվում սոցցանցերից կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածելու համար | ԿԿՀ-ի կողմից իր կայքի և սոցցանցերի սահմանափակ օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածել | ԿԿՀ-ի կողմից իր կայքի և սոցցանցերի ընդարձակ կերպով օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար | Միջին | Կոռուպցիայի կանխարգելման թեմատիկան հանրային շրջանակներում առավել տարածելի դարձնելու և Հանձնաժողովի գործառույթներն առավելապես լուսաբանելու նպատակով http://www.cpcarmenia.am պաշտոնական կայքէջում պարբերաբար տեղադրվում են Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2021 թ. երկրորդ կիսամյակում կայքում շուրջ 60 հրապարակում է տեղադրվել, 2022 թ.՝ շուրջ 140 հրապարակում:Հանձնաժողովի անդամների և ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել են Հանձնաժողովի գործառույթներից բխող մոտ հինգ տասնյակ հարցազրույցներ:<br><br>Հանձնաժողովի անդամների և ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպվել են Հանձնաժողովի գործառույթներից բխող մոտ երեք տասնյակ հարցազրույցներ:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն գործարկվել և շարունակաբար իր լսարանն է ընդարձակել Հանձնաժողովի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | , ՔՀԿ-ների դեկավարների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ | | ու համար | | | ֆեյսբուքյան էջը: Այս պահին էջն ունի մոտ 2200 հետևորդ, որոնց գերակշիռ մասը՝ 90%-ը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, մոտ 80%-ը՝ երևանաբնակ:<br><br>2021 թ. Հանձնաժողովի աշխատակազմը որակյալ մասնագետներով համալրելու նպատակով կազմակերպվել էր ճանաչողական քննարկում, որին տեղում և տեսակապի միջոցով մասնակցում էին հայաստանյան բուհերի շրջանավարտներ: Մասնակիցներին ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեությունը և քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների գործառույթները:<br><br>ԿԿՀ կայքում հրապարակված են մարմնի կառուցվածքը, գործառույթները, լիազորությունները, կանոնադրությունը, ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները:<br><br>Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող բոլոր նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքներ, որոշումներ, հրամաններ, կարգադրություններ, սակայն դրանք խմբավորված չեն՝ ըստ թեմատիկ ոլորտների/ուղղությունների:<br><br>Կայքում հրապարակված են մարմնի հաստիքացուցակները, ԿԿՀ անդամների մասին մանրամասն ինֆորմացիա և վերջիններիս կոնտակտային տվյալները:<br><br>Կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկատվություն: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ԿԿՀ պաշտոնական սոցիալական ցանցերի էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Սակայն նշված երեք սոցիալական հարթակներից գործում է միայն մեկը:<br><br>Կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ:<br><br>Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ ակտիվ հղումներով:<br><br>ԿԿՀ պաշտոնական կայքում չկան հայտարարագրերի, նվերների, բարեվարքության պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ կայացրած որոշումների առանձնացված ռեեստրներ:<br><br>Դատարկ է «Ռազմավարություն» բաժինը, որտեղ կարող էին տեղադրված լինել ԿԿՀ գործունեության ծրագիրը, նախորդ և ներկա Հակակոռուպցիոն ռազմավարությունները, ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների ամենամյա աշխատանքային պլանները,դրանց կատարողականները:<br><br>Հրապարակվող փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք չունեն մատչելի ձևաչափ, ներկայացվում են միայն PDF ձևաչափով, չունեն պատճենելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկատվությունն առկա չէ այլընտրանքային ձևաչափերով: Առկա չէ տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիք:<br><br>Կայքում չի գործում որոնման համակարգը:<br><br>Հանձնաժողովի կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում հայտարարագրերի որոնումն իրականացվում է պաշտոնատար անձի |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | «Անուն, Ազգանուն», «Պաշտոն» և «Տարի» հայտանիշներով: «Հայտարարագրերի ռեեստր» բաժինն օգտվողների համար դեռևս մատչելի չէ՝ ըստ կոնկրետ հայտանիշի հայտարարագրերի համապատասխան տվյալների ընտրության առումով:[127] Ռեեստրը չունի տվյալների ամբողջական արտահանման, այլ տվյալների և համակարգերի հետ փոխգործելիության ապահովման, ինչպես նաև թվայնացված վերլուծության հնարավորություն:<br><br>Առկա չէ տեղեկատվություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները բացակայում են: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են:<br><br>Կայքում հրապարակված չէ տեղեկատվություն քաղաքացիների հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր: Կայքում առկա չէ տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին:<br><br>Առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «Հայտարարություններ» ընդհանուր բաժնում: |

[127] Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության չորրորդ գործողությունների ծրագրի (2018-2020) ամփոփ զեկույց, 2021 թ., https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/Bac-karavarman-gorc-25_05_21.pdf, էջ 9:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | Կայքում առանձին բաժնով հրապարակված չեն մարմնի բյուջեն և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները:<br><br>Կայքում ազդարարման առանձնացված պատուհան առկա չէ: Հայտարարություններ բաժնում ազդարարման կարգի մասին տեղեկատվությունը հին է:<br><br>Կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում ներկայացված են միայն հայտարարագրման համակարգի վերաբերյալ հարցեր: ԿԿՀ այլ գործառույթներին և կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերի մասին տեղեկատվություն առկա չէ:<br><br>ԿԿՀ-ի կողմից մշակված ուղեցույցները տեսանելի և օգտագործողին հարմար դաշտերում չեն գտնվում:<br><br>Ընդհանուր առմամբ, ԿԿՀ կայքն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ ունի բարելավման կարիք:<br><br>Փորձագետների կարծիքով ԿԿՀ- առցանց հաղորդակցության տեսանկյունից առկա են բացեր: Մասնավորապես ԿԿՀ կայքը բավարար չափով ինֆորմատիվ չէ: Նշվում է, որ ԿԿՀ կայքում հստակ չեն տարբեր շահագրգիռ խմբերի համար անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու/ստանալու եղանակներն ու մեխանիզմները: Խնդիրներ կան, ընդհանուր առմամբ, որոնողական մեխանիզմների հետ կապված, բավարար չափով ինֆորմատիվ և հարմար չէ: ԿԿՀ նիստերի արձանագրությունները կայքում բացակայում են. դրանք պետք է պարտադիր տեղադրված լինեն: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ-ի կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար: Վերլուծել ԿԿՀ կայքը և այլ առցանց հաղորդակցման ուղիները՝ պարզելու ԿԿՀ գործունեության վերաբերյալ տրամադրված տեղեկությունների քանակն ու տեսակը: Հանրության հետ կապ հաստատելու համար ԿԿՀ-ի կողմից սոցցանցերի օգտագործումը նույնպես պետք է պարզվի, ներառյալ՝ ԿԿՀ-ն արդյո՞ք ունի առցանց հաղորդակցության ընդարձակ ռազմավարություն: | | | | |
| 45. | Կուսակցությունների ֆինանսական | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ | ԿԿՀ-ի կողմից «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված | ԿԿՀ-ի կողմից «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված | ԿԿՀ-ի կողմից «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջն | Ցածր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | գործունեության և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողություն | անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, Կուսակցությունների ղեկավարների, ՔՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ | պահանջները չեն պահպանվում | պահանջները պահպանվում են մասնակի | երբ լիովին պահպանվում են | | ամբողջականության ստուգումը 2022 թ. հունվարից վերապահվել է ԿԿՀ-ին: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242<br><br>ԿԿՀ-ի կողմից 2021 թ. «Նշված գործառույթների իրականացման շրջանակներում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ կուսակցությունների և նրանց կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում, իրազեկման միջոցառումներ, մշակվել են կուսակցության ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ձևանմուշները, սկսվել են օրենքով սահմանված այլ ենթաօրենսդրական ակտերի և օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքները»: Նշված աշխատանքներն ավարտվել են 2022 թ.-ին. Հանձնաժողովի կողմից հաստատվել են՝<br><br>Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը,<br><br>«Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թ. հունիսի 17-ի N 02-Ն որոշումը, որով սահմանվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմավորման կարգը և գործառույթները,<br><br>«Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» 2022 թ. |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | հունիսի 17-ի N 03-Ն որոշումը, որով սահմանվել են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը,<br><br>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թ. հուլիսի 29-ի N 05-Ն որոշումը, որով սահմանվել են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:<br><br>ՀՀ-ում 2022 թ. գրանցված 115 կուսակցությունից http://cpcarmenia.am/hy/news/item/2022/04/22/2022-04-22-1/ միայն 55-ից է ստացվել աուդիտի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկությունները, ինչի հիման վրա պարզվել է 2022 թ. աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկը, ըստ որի՝ 2022 թ. աուդիտի ենթակա կուսակցությունների թիվը կազմել է 11: http://cpcarmenia.am/hy/news/item/2022/06/29/2022-06-29/<br><br>2022 թ. օգոստոսի 30-ին և սեպտեմբերի 7-ին «ԹՄ աուդիտ» ՓԲ ընկերությունը Հանձնաժողովին հասցեագրված գրություններով խնդրել է «Բարգավաճ Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգել՝ միաժամանակ տեղեկացնելով, որ նշված կուսակցությունների կողմից |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | դեռևս չեն ներկայացվել ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ աուդիտորական եզրակացությունների տրամադրման գործընթացը փաստացի ավարտին է հասցվել 2022 թ. հոկտեմբերի 15-ին և Հանձնաժողով է ներկայացվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների 11 աուդիտորական եզրակացություն: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>«Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում պարզվել է, որ Սահմանադրական օրենքի կիրառելիության հետ կապված առկա են որոշակի անհամապատասխանություններ, կիրառվող հասկացությունների ոչ հստակություն, կիրառման ենթակա հարցերում՝ օրենսդրական բաց, ինչպես նաև իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ:Արդյունքում կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 թվականի համար տրամադրվել է ամբողջությամբ՝ առանց Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման» http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf:<br><br>Ելնելով վերոնշյալից՝ 2022 թ. կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները ԿԿՀ-ին ներկայացնելու ժամկետների պահպանման, աուդիտ անցած հաշվետվությունների, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունների առկայության մասով ԿԿՀ-ի կողմից օրենքով սահմանված պահանջների խախտումների համար չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ, ավելին, որպես բացառություն, առանց «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | ապահովման, ՀՀ կառավարությունը կուսակցություններին հատկացրել է նպատակային ֆինանսավորումը: |
| | | | *Ուղղորդում:* Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ-ի կողմից կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվություններին «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանմանը հետևելու մակարդակը: Այն ներառում է 2020-2022 թթ. ընթացքում կուսակցությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները ԿԿՀ-ին ներկայացնելու ժամկետների պահպանումը, աուդիտ անցած հաշվետվությունների թիվը, պետական նպատակային ֆինանսավորման հատկացման վերաբերյալ եզրակացությունների առկայություն, ԿԿՀ-ի կողմից սահմանված պահանջների խախտումների համար կիրառված | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | պատասխանատվության միջոցները:<br><br>Նախընտրական հիմնադրամների մուտքերի և ծախսերի օրինականության, հայտարարագրում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականությանը ներկայացվող պահանջների պահպանմանը հետևելու[128] գործընթացն այս փուլում չի գնահատվելու: | | | | |
| | **ԿԿՀ կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման միավորի հանրագումարը** | | | | | 4/18=22.0% | |
| | **Համագործակցություն և արտաքին հարաբերություններ (6 ցուցանիշ)** | | | | | | |
| 46. | Վստահությունը կառավարության | ԿԿՀ հանրային ընկալումների հետազոտություն (եթե | Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցմա | Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցմա | Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման | Միջին | ԿԿՀ հանրային ընկալումներում մակարդակի գնահատման համար հիմք են ընդունվել 2022 թ. ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն» ծրագրի և ԿԿՀ համագործակցությամբ Հետազոտական ռեսուրսների Կովկասյան Կենտրոնի (CRRC) կողմից «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության» արդյունքները: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf |

[128] Նախընտրական հիմնադրամների մուտքերի ու ծախսերի օրինականության պահանջների պահպանմանը հետևելու ԿԿՀ լիազորությունները ուժի մեջ են մտնելու 2024 թ. հունվարից:

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ն կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ | առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց , ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի | ն արդյունքներում (50%-ից ցածր) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում | ն արդյունքներում (50-75%) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում | արդյունքներում (75%-ից բարձր) և ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում | | Համաձայն ուսումնասիրության՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կոռումպացվածության վերաբերյալ հանրության ընկալումները կազմել են 30.2% (11.8 մեծապես կոռումպացված և 18.4% որոշ չափով կոռումպացված) այն դեպքում, երբ «քիչ կոռումպացված» և «կոռումպացված չէ» պատասխանների հանրագումարը ընդամենը 28.8% է: Կոռումպացվածության համեմատաբար բարձր մակարդակը վկայում է ԿԿՀ հանդեպ վստահության ցածր մակարդակի մասին:<br><br>ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) 49% հարցված, որոնց միայն 9.4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/ գործառույթների մասին: ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատանքն արդյունավետ է գնահատել կառույցի գործունեությանը տեղյակ հարցվածների (n=143) գրեթե 51%-ը: Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող կառույցների շարքում (առանց զրուցավարների կողմից կառույցների անվանումներ բարձրաձայնելու) ԿԿՀ-ն 2019 թ. նշել է 1.1% հարցված, մինչդեռ 2021 թ.՝ 8.4%:<br><br>Ընդ որում, տեղեկացվածության մակարդակում ԿԿՀ պարագայում փոքր աճ կա: ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին տեղյակ է քաղաքացիների մոտավորապես կեսը (49%), սակայն հարցվողների ընդամենը 9.4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/գործառույթների մասին: Հարկ է նշել, որ ըստ 2019 թ. հարցման՝ ԿԿՀ-ի/ էթիկայի հանձնաժողովի գործունեության/գործառույթների մասին տեղյակ էր քաղաքացիների միայն 1.1%-ը: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | փորձագետների, լրագրողների հետ | | | | | ԿԿՀ հակակոռուպցիոն գործունեությունն արդյունավետ է գնահատել (n=123) 8.4%-ի միայն 52%-ը:<br><br>Վերոնշյալ գնահատումն իրականացվել է տնային տնտեսությունների շրջանում: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ կառավարությունը ԿԿՀ-ին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիան կանխարգելելու համար: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի գլխավորապես հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով, եթե անհրաժեշտ է: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ԿԿՀ-ն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, պահանջել այդ հարցումների հաշվետվությունները ԿԿՀ անդամներից և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից: Բացի դրանից, որպես ԿԿՀ-ին կառավարության ցուցաբերած աջակցության լուսաբանում՝ հաշվի առնել նաև Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) հետևյալ հարցի պատասխանները «Ձեր կարծիքով ներկայիս կառավարությունը որքանո՞վ է լավ կամ վատ զբաղվում հետևյալ հարցերով. […] Պայքար կոռուպցիայի դեմ կառավարությունում» (ԿՀԲ-ի հարց թիվ T17): | | | | |
| 47. | Համագործակցություն բարեվարքու | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ | Հակամարտության և/կամ գործակցության բացակայություն ԿԿՀ, | Սահմանափակ գործակցություն ԿԿՀ, պետական և ՏԻՄ մարմինն | Գործակցության բարձր աստիճան ԿԿՀ, պետական և ՏԻՄ մարմինների | Միջին | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 44-46-ով սահմանված են պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտներում էթիկայի հանձնաժողովների ձևավորման պահանջ: Որպես բարեվարքության պահանջների պահպանմանը հետևող մարմիններ՝ էթիկայի հանձնաժողովները և բարեվարքության հարցերով կազմակերպիչների բնականոն գործունեության ապահովման նպատակով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ի մասի 7-րդ կետով |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | թյամբ զբաղվող այլ մարմինների հետ | ԿԿՀ-անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, և պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների հետ, այլ | պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների, այլ մարմինների միջև | երի բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների, այլ մարմինների միջև | բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների, այլ մարմինների միջև | | ԿԿՀ-ին վերապահված «7) էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցության տրամադրման» գործառույթները, ինչպես նաև վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը, նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ուղեցույցներ: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. գործողությունների ծրագրով նախանշված էր բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթի վերապահումը ԿԿՀ-ին: Այդուհանդերձ, ԿԿՀ-ն գործառույթներ չունի օրենսդիր, դատական մարմիներում, ինչպես նաև դատախազական ու քննչական գործառույթներ ունեցող մարմինների ծառայողների վարքագծի կանոնների, շահերի բախման, այլ սահմանափակումների խախտումների բացահայտման, հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման մասով: https://transparency.am/hy/publication/pdf/244/1351<br><br>Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների եզրափակիչ գնահատման զեկույցի «բարեվարքության հարցերով կազմակերպիչների և էթիկայի հանձնաժողովների անդամների գործունեության ուղեցույցները մշակված և հաստատված չեն, ԿԿՀ-ի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության նկատմամբ համակարգման գործառույթը օրենսդրորեն ամրագրված չէ»: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | մարմինների միջև | | | | | https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf<br><br>2021-2022 թթ. ընթացքում ԿԿՀ համագործակցությունը էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնակցությամբ կազմակերպվել է «Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով աշխատաժողով: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>Թույլ համագործակցության հիմնական պատճառների շարքում առանձնանում է օրենսդրական կարգավորումների բացակայությունը, գործնականում հանձնաժողովի կողմից էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ապահովման մեթոդական նյութերի ու ուղեցույցների բացակայությունը: Ուղեցույցների մշակման գործում նշանակալի է միջազգային փորձագիտության ներուժի կիրառումը, որով պայմանավորված է դրանց մշակման գործընթացի երկարատևությունը: Մասնավորապես հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների նախագծի մշակումը, որը հաստատվել է ԿԿՀ-ի կողմից 2022 թ. հունիսին տևել է առնվազն մեկ տարի: Տիպային կանոնների կիրառման և ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման ուղեցույցի նախագիծը 2022 թ. դեռևս հաստատված չէր: http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf Այն մշակվել է 2023 թ.-ին:<br><br>Փորձագետների կարծիքով բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ համագործակցության տեսանկյունից կան որոշակի բացեր: Առաջին հերթին, բարեվարքության հարցերով |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | կազմակերպիչների դերը և գործառույթները դեռևս հստակեցված և սահմանված չեն: Մյուս կողմից, վերջիններիս հետ ԿԿՀ համագործակցության շրջանակը և ծավալը ևս հստակեցված չեն: Ասվածը վերաբերում է նաև էթիկայի հանձնաժողովների հետ ԿԿՀ համագործակցությանը:<br><br>ԿԿՀ-ն չունի բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար սահմանված ուղենիշներ, աջակցող նյութեր: Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում ԿԿՀ-ի կողմից կազմակերպվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար միայն մեկ դասընթաց, որը բավարար չէ:<br><br>Բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ ԿԿՀ առնչության համատեքստում հատկանշական է այն դիտարկումը, որ «ԿԿՀ-ն առավել հակված է վերջիններիս վերահսկել, քան ուղղորդել կամ վերապատրաստել»: Այս տեսանկյունից պետական մարմինները հակված են բացասաբար վերաբերվել բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ ԿԿՀ աշխատանքին՝ վերջինս դիտարկելով որպես ԿԿՀ-ի կողմից միջամտություն: |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ, պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, էթիկայի հանձնաժողովների և այլ մարմինների (Հաշվեքննիչ պալատ, ՄԻՊ, Գլխավոր դատախազություն, հակակոռուպցիոն կոմիտե և այլն) | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | հարաբերությունները, կոռուպցիայի կանխարգելման գործընթացում/տեղեկատվական գործունեության տեսանկյունից: Եթե երկրում կան կանխարգելման մի քանի մարմիններ, ապա պետք է վերլուծվեն ԿԿՀ-ի՝ պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների, հանրային ծառայության և այլ պետական մարմինների էթիկայի հանձնաժողովների հետ հարաբերությունները: Եթե առկա է գործակցության կամ համակարգման բացակայություն ԿԿՀ և բարեվարքության հարցերով զբաղվող այլ մարմինների միջև, նշել դրանց պատճառները: | | | | |
| 48. | Համագործակցություն ոչ կառավար | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ | Հակամարտություն և/կամ գործակցության բացակայություն ԿԿՀ-ի և | Սահմանափակ գործակցություն ԿԿՀ և այլ ոչ կառավարական կազմակ | Գործակցության բարձր աստիճան ԿԿՀ և այլ ոչ կառավարական կազմակե | Միջին | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջով Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:<br><br>Հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման և գործունեության հանրայնացման առումով համագործակցությունը |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | ական (հասարակական) կազմակերպությունների հետ | ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և մասնավոր ընկերությունների անձնակազմի ներկայացուցիչների հետ | այլ ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև | երպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև | րպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև | | 2021-2022 թթ. հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման նպատակով համագործակցության հուշագրեր են ստորագրվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ, «նախաձեռնել է համագործակցության ձևավորում Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ՝ կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կրթական ծրագրերի մշակման և ՀԱՀ-ում դասավանդման նպատակով», «2021 թվականի ավարտին Հանձնաժողովն անձնակազմի մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով՝ կնքել է մտադրությունների հուշագիր, համաձայն որի «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ 2022 թ. առաջին կիսամյակի ընթացքում միջազգային փորձագետների ներուժով պետք է կազմակերպվեն ISO 37001:2016 և ISO 37000:2021 ստանդարտների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ: http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf<br><br>2022 թ. հակակոռուպցիոն կրթական ծրագրերի շուրջ համագործակցության հուշագիր է կնքվել Հանձնաժողովի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի միջև:<br><br>Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (International Anti-Corruption Academy (IACA) հետ համագործակցության զարգացման ուղղությամբ 2022 թ. մարտի 29-ին ստորագրված համագործակցության հուշագրով[129] ամրագրվել է Հանձնաժողովի և IACA հետ համագործակցությունը:<br><br>Համագործակցության հուշագիր է կնքվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության |

[129] Memorandum of understanding between The International Anti-corruption Academy and Corruption Prevention commission of the republic of Armenia, https://drive.google.com/file/d/1xbPDP7ZlwqVsnALvAUYIj7d400bpf413/view

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | պետական կառավարման ակադեմիայի միջև, որով կողմերը պայմանավորվել են համագործակցել իրավաբանական, ուսումնակրթական բնույթի ծրագրերի իրականացման, գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով տարբեր հարցերի քննարկման և լուծման, Կառավարման ակադեմիայի մագիստրանտների պրակտիկայի կազմակերպման, կողմերի գործունեությանն առնչվող հանրամատչելի նյութերի հրատարակման, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման և համագործակցության ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններով:<br><br>2022 թ. ապրիլի 19-ին Հանձնաժողովի և ՀՔ կառավարման գլոբալ պրակտիկայի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցում:<br><br>Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվել է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, այդ թվում առանձին աշխատաժողովների շրջանակներում նրանց մասնակցության, առանձին նախագծերի վերաբերյալ կարծիքների ստացման եղանակներով |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | | | | | https://transparency.am/hy/publications/view/378,<br>https://transparency.am/hy/publications/view/377<br><br>https://www.e-draft.am/projects/3889/about<br><br>2022 թ. հունիսի 28-ին և 30-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի նախնական տարբերակի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:<br>https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf<br><br>2022 թ. մարտի 24-ից 31-ը Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների որոշման նախագծի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, Փաստաբանների պալատի, գիտակրթական ոլորտի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:<br>http://cpcarmenia.am/hy/news/item/2022/04/04/2022-04-04/<br><br>Քաղաքացիական հասարակության միավորումների հետ կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության ոլորտում կոնկրետ համագործակցության ծրագրերը բացակայում են:<br>http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf<br><br>Հանձնաժողովը համագործակցում է ԱՄՆ ՄԶԳ (USAID) «Հայաստանի բարեվարքություն», ինչպես նաև ԵՄ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» |

<table>
<tr><th rowspan="2"></th><th rowspan="2">ՑՈՒՑԱՆԻՇ</th><th rowspan="2">ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td rowspan="2"></td><td rowspan="2"></td><td rowspan="2"></td><td></td><td></td><td></td><td></td><td>Թվիննինգ ծրագրերի հետ, որոնց շրջանակներում իրականացվող միջոցառումները միտված են զարգացնելու ԿԿՀ կարողությունները և նպաստելու կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմերի ու կառուցակարգերի ստեղծմանը:<br><br>Փորձագետների հետ կատարված հարցազրույցների արդյունքով, կարծիք կա, որ ԿԿՀ հարաբերությունները ՔՀԿ-ների հետ համագործակցային չեն: Որոշ ՔՀԿ-ներ գոհ են ԿԿՀ-ի հետ հարաբերություններից, սակայն, ընդհանուր առմամբ, դժգոհությունները գերակշռում են:<br><br>Նշվում է, որ ՔՀԿ-ների հետ համագործակցությունը կարող է ԿԿՀ-ի համար շատ օգտակար լինել, մասնավորապես կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից: Միաժամանակ կարևորվում է ԿԿՀ-ում միջազգային համագործակցությունը համակարգող ստորաբաժանման ստեղծումը: Հիմնականում նման հարցերով զբաղվում է հենց նախագահը: Այս առումով կա ինստիտուցիոնալ հիշողության խնդիր:<br><br>«Միջավգային համագործակցության հետ կապված ստորաբաժանում ա պետք, որովհետև էսօրվա օրով եթե հանկարծակի նախագահը դուրս եկավ աշխատանքից, չկա ընդեղ ինստիտուցիոնալ որևէ unit…»:</td></tr>
<tr><td colspan="3">Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական մասնակցությամբ</td><td></td><td></td></tr>
</table>

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | ձեռնարկությունների միջև գործակցությունը կոռուպցիայի կանխարգելման, գործունեության հանրայնացման առումով: Հետազոտողը պետք է խնդրի այն անձանց, ում հետ հարցազրույց է վարում, բերել համապատասխան օրինակներ կամ դեպքերի մանրամասներ, որոնք ցույց են տալիս ԿԿՀ և ոչ կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության աստիճանը: | | | | |
| 49. | Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն | ԿԿՀ-ն չի մասնակցում որևէ հակակոռուպցիոն ցանցի | Ակտիվ է. ԿԿՀ-ն մասնակցում է 1 կամ 2 հակակոռուպցիոն ցանցերի | Շատ ակտիվ է. ԿԿՀ-ն մասնակցում է 3 կամ ավելի հակակոռուպցիոն ցանցերի | Բարձր | ԿԿՀ-ն մասնակցություն ունի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում, որում պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելման բաժնի ՀՀ կառավարության կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման համար: https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm<br><br>ԿԿՀ-ն ներգրավված է նաև Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի Հանրապետության գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարմանը: https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia<br><br>ԿԿՀ-ն ներգրավված է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ | | | | | պատրաստման գործում՝ կոնվենցիայի կոռուպցիայի կանխարգելման միջոցները գլխի պահանջների կատարման մասով: 2021 թ. հունիսի 14-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության կողմից «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխով սահմանված պարտավորությունների գնահատման գործառնական համառոտագրություն» փաստաթուղթը, որի արդյունքներով ինստիտուցիոնալ համակարգի առնչությամբ Հայաստանին առաջարկվել է երաշխավորել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների գործառնական, ֆինանսական և որոշում կայացնելու հարցերում անհրաժեշտ անկախությունը: https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf<br><br>«Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակներում ԿԿՀ-ն ստանձնել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի» ստեղծման հանձնառությունը, https://ogp.gov.am/hy/commitments/33 |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և նրա մասնակցության (ներգրավվածության) աստիճանը: Այն կարող է ներառել, օրինակ, ՏՀԶԿ | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | գործողությունների ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» կոալիցիային կամ ԳՐԵԿՕ-ին: Եթե ԿԿՀ-ն չի մասնակցում որևէ միջազգային հակակոռուպցիոն ցանցի, խնդրեք ԿԿՀ անդամներին և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց բացատրել, թե ինչու է դա այդպես: | | | | |
| 50. | Համագործակցություն այլ երկրների հետ | ԿԿՀ տարեկան հաշվետվությունը և կայքը, այն երկրների կոռուպցիայի կանխարգելման | Գործակցության բացակայություն ԿԿՀ և այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինն | Որոշ ոլորտներում սահմանափակ գործակցություն ԿԿՀ և մեկ կամ երկու այլ երկրների կոռուպցիայի կանխար | Համատեղ ծրագրերի առումով գործակցության և փորձագիտական օժանդակության բարձր մակարդակ ԿԿՀ և մի քանի այլ | Ցածր | 2021 թ. Հայաստանում գտնվող Արաբական Միացյալ Էմիրությունների վերահսկիչ պալատի նախագահ, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության նախագահ Հարիբ Սաիդ Ամիմը հյուրընկալվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա կապերն ակտիվացնելու համար ձևավորել համագործակցության օրակարգ: http://cpcarmenia.am/hy/news/item/2021/10/13/2021-10-13/<br><br>ԿԿՀ կայքէջում և ամենամյա հաղորդումներում այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների հետ համագործակցության մասին տեղեկատվություն արձանագրված չէ: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | մարմինների տարեկան հաշվետվությունը և կայքը, որոնց հետ գործակցում է Հայաստանի ԿԿՀ-ն, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ | երի միջև | գելման մարմինների հետ | երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ | | |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ գործակցությունն այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման այլ մարմինների հետ: Եթե ԿԿՀ-ն համագործակցում է այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ, նկարագրեք նման գործակցության մանրամասները և չափը, այդ թվում՝ համատեղ ծրագրերը և տրամադրված փորձագիտական օժանդակությունը: Եթե ԿԿՀ-ն չի գործակցում այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ, պետք է բացահայտել գործակցության բացակայության պատճառները: | | | | |
| | Հասանե | ԿԿՀ տարեկ | ԿԿՀ-ն չունի | ԿԿՀ-ն ունի | ԿԿՀ-ն ունի | Ցածր | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի պահանջով՝ «վարում է անհամատեղելիության |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| 51. | լիությունը մարգինալացված խմբերին | ան հաշվետվությունը և կայքը, հարցազրույցներ ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ | ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ կտային մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի (այդ թվում՝ կանանց և փոքրամասնությունների) հանդեպ իր արձագանքողա | ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի հանդեպ իր արձագանքողականությունը, սակայն գործուն կերպով մոնիտորինգի չի ենթարկում այդ | ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի հանդեպ իր արձագանքողականությունը, ինչը նա գործուն կերպով ենթարկում է մոնիտորինգի | | պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակում տվյալներ»: ԿԿՀ 2021 և 2022 թթ. գործունեության հաշվետվությունները կամ ԱԺ-ին ներկայացված հաղորդումները մարգինալացված (խոցելի ) խմբերի կտրվածքով ագրեգատավորված վիճակագրական տվյալները բացակայում են:<br><br>Ինչպես նշում է ԱՄՆ ՄԶԳ «Հայաստան: Բարեվարքություն» ծրագրի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներում, «The public does not view corruption as a gendered issue, but rather a challenge to Armenia being a democratic state. While the perception of corruption has changed over time, it remains pervasive, and the understanding of what corruption is and isn't varies. This affects how corruption is seen to affect women and men, youth and the elderly, people living with disabilities, and other socially excluded groups: respondents are either unaware of or do not observe gendered differences to being affected by corruption, and few saw a link between corruption and gender and social inclusion.» AIP GESI Analysis Final Report_Dec 2022 (encompassworld.com)<br><br>ԹԻՀԿ-ի կողմից ԿԿՀ-ի հարցման արդյունքներում նշվում է, որ նման տեղեկատվությունը բացակայում է: |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | կանությունը | տարբերությունները | | | |
| | | | *Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ԿԿՀ արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված (խոցելի) խմբերին: Ստուգել, թե ԿԿՀ-ն ունի արդյոք ապաագրեգացված կամ տարանջատված տվյալներ (օրինակ՝ կոռուպցիոն իրավախախտումների կամ ստացված բողոքներ բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ )՝ ըստ մարգինալացված առանձին խմբերի ու բնութագրերի: Նաև պարզել, թե առկա են արդյոք ընթացակարգեր այս տվյալների մոնիտորինգի և ԿԿՀ-ի կողմից հանրայնացման և իրազեկման համար: Այս ցուցանիշը դիտարկվում է նաև հասկանալու համար, թե ԿԿՀ տեղյակ է արդյոք իր քաղաքացիների տարբեր խմբերի, այդ թվում՝ կանայք, հաշմանդամներ կամ ազգային փոքրամասնություններ, ինչպես նաև այլ մարգինալացված | | | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ | | | ՄԻԱՎՈՐ | ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՑԱԾՐ (0) | ՄԻՋԻՆ (1) | ԲԱՐՁՐ (2) | | |
| | | | խմբերի կողմից կոռուպցիոն շփումների ու դրանց մասին համապատասխան մարմիններին տեղեկացնելու հնարավորություն: Ի վերջո, ապաագրեգացված տվյալներ ունենալը ԿԿՀ-ին հնարավորություն կտա լինելու առավել ներառական, հասանելի և արդյունավետ հասարակության բոլոր մասերի համար: | | | | |
| | **ԿԿՀ համագործակցության և արտաքին հարաբերությունների միավորի հանրագումարը** | | | | | 5/12=41.7% | |

## Հավելված 2. ԿԿՀ գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման խմբերի և ցուցանիշների

| ԽՄԲԵՐ | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Անկախությունը և կարգավիճակը** | Ինստիտուցիոնալ անկախություն | Հանձնաժողովի անդամների նշանակում և հեռացում | Մանդատ | Իրավասություն | Վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման լիազորություններ | Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները | Իրավական ինքնավարություն | Գործառնական ինքնավարություն | Լիազորությունների քաղաքական օգտագործում |
| **Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ** | Բյուջեի համամասնությունը | Բյուջեի բավարար լինելը | Բյուջեի անվտանգությունը և կայունությունը | Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում | Աշխատակազմի ընտրություն | Քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը | Կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության փորձագիտություն | Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում | Անձնակազմի կայունություն |
| **Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն** | Տարեկան հաշվետվություն | Արձագանքողականությունը հանրության խնդրանքներին | Արտաքին վերահսկողության մեխանիզմներ | Ներքին վերահսկողության մեխանիզմներ | Գործընթացների պատշաճ պահպանում | Բողոքողների ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը | Բողոքների քննությունը | Բողոքների արդյունքները | Բարեվարքության ներքին մեխանիզմներ |
| **Հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների պահպանումը հետևելը** | Հասանելիությունը բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ բողոքավորողների / տեղեկատվություն ներկայացնողների, դիմումներին | Արձագանքողականությունը բարեվարքության պահանջների խախտումներին վերաբերող բողոքներին, դիմումներին | Նախաձեռնողականությունը բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում | Արդյունավետություն և պրոֆեսիոնալիզմ | Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների հետապնդումների ցուցանիշը | Պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը | Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտման քննություններ | Ապօրինի հարստացում և ապօրինի ակտիվների վերականգնում | ԿԿՀ-ի Կատարողականի ընկալում |
| **Կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում** | Հատկացված բյուջե | Կանխարգելման ռազմավարական ծրագրավորում/պլանավորում | Հակակոռուպցիոն կրթություն և զարգացում | Կազմակերպությունների հակակոռուպցիոն ուսումնասիրություններ | Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ | Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտություններ | Տարածում և քարոզարշավներ | Առցանց հաղորդակցություն | Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն |
| **Համագործակցություն և արտաքին հարաբերություններ** | Վստահությունը կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ | Համագործակցություն բարեվարքությամբ զբաղվող այլ մարմինների հետ | Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ | Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր | Համագործակցություն այլ երկրների հետ | Հասանելիությունը մարգինալացված խմբերին | | | |

Որտեղ՝

| 0 – Ցածր միավոր | 1 - Միջին միավոր | 2 - Բարձր միավոր | Գնահատել հնարավոր չէ |
|---|---|---|---|

Հավելված 3. ԿԿՀ գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին ազդեցության և կատարողականը բնութագրող գործոնների

| | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ | | ԿԿՀ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ |
|---|---|---|---|---|
| | | ԱՐՏԱՔԻՆ | ՆԵՐՔԻՆ | |
| 1. | Ինստիտուցիոնալ անկախություն | 2 | | |
| 2. | Հանձնաժողովի անդամների նշանակում և հեռացում | 2 | | |
| 3. | Մանդատ | 2 | | |
| 4. | Իրավասություն | 0 | | |
| 5. | Վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման լիազորություններ (քննություն և հետապնդում) | 2 | | |
| 6. | Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ | 1 | | |
| 7. | Իրավական ինքնավարություն | 2 | | |
| 8. | Գործառնական ինքնավարություն | 1 | | |
| 9. | Լիազորությունների քաղաքական օգտագործում | 2 | | |
| 10. | Բյուջեի համամասնությունը | 0 | | |
| 11. | Բյուջեի բավարար լինելը | 0 | | |
| 12. | Բյուջեի անվտանգությունը և կայունությունը | 1 | | |
| 13. | Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում | | 1 | |
| 14. | Աշխատակազմի ընտրություն | | 2 | |
| 15. | Քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը | | 1 | |
| 16. | Կանխարգելման, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթության փորձագիտություն | | 1 | |
| 17. | Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում | | 1 | |
| 18. | Անձնակազմի կայունություն | | 0 | |
| 19. | Տարեկան հաշվետվություն | | 1 | |
| 20. | Արձագանքողականությունը հանրության խնդրանքներին | | 1 | |
| 21. | Արտաքին վերահսկողության մեխանիզմներ | 0 | | |
| 22. | Ներքին վերահսկողական մեխանիզմներ | | 0 | |
| 23. | Գործընթացների պատշաճ պահպանում | | | 0 |
| 24. | Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը | | | 0 |

| | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ | | ԿԿՀ ԿԱՏԱՐՈՂ ԱԿԱՆ |
|---|---|---|---|---|
| | | ԱՐՏԱՔԻ Ն | ՆԵՐՔԻՆ | |
| 25. | Բողոքների քննությունը | | | 0 |
| 26. | Բողոքների արդյունքները | | | 0 |
| 27. | Բարեվարքության ներքին մեխանիզմները | | 1 | |
| 28. | Հասանելիությունը բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին/ազդարարումներին, դիմումներին, բողոքներին | | | 0 |
| 29. | Արձագանքողականությունը բարեվարքության պահանջների խախտումներին վերաբերող տեղեկատվություն ներկայացնողներին, դիմումներին, բողոքներին | | | 2 |
| 30. | Նախաձեռնողականությունը բարեվարքության պահանջների խախտումների բացահայտման և քննության գործում | | | 1 |
| 31. | Արդյունավետություն և պրոֆեսիոնալիզմ | | | 0 |
| 32. | Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող բարեվարքության պահանջների խախտումների հետապնդումների ցուցանիշը | | | 0 |
| 33. | Պատասխանատվության միջոցների կիրառման մակարդակը | 0 | | |
| 34. | Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց նկատմամբ բարեվարքության պահանջների խախտման քննություններ | | | 1 |
| 35. | Ապօրինի հարստացման և ապօրինի ակտիվների վերականգնման գործընթացին աջակցություն | | | 0 |
| 36. | ԿԿՀ-ի Կատարողականի ընկալում | | | 0 |
| 37. | Հատկացված բյուջե | 0 | | |
| 38. | Կանխարգելման ռազմավարական ծրագրավորում/պլանավորում | | | 0 |
| 39. | Հակակոռուպցիոն կրթություն և զարգացում | | | 0 |
| 40. | Կազմակերպությունների հակակոռուպցիոն  ուսումնասիրություններ | | | 0 |
| 41. | Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ | | | 2 |
| 42. | Կոռուպցիայի տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտություններ | | | 0 |
| 43. | Տարածում և քարոզարշավներ | | | 1 |
| 44. | Առցանց հաղորդակցություն | | | 1 |
| 45. | Կուսակցությունների ֆինանսական գործունեության և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողություն | | | 0 |
| 46. | Վստահությունը կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ | 1 | | |

| | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ | | ԿԿՅ ԿԱՏԱՐՈՂ ԱԿԱՆ |
|---|---|---|---|---|
| | | ԱՐՏԱՔԻՆ | ՆԵՐՔԻՆ | |
| 47. | Համագործակցություն բարեվարքությամբ զբաղվող այլ մարմինների հետ | | 1 | |
| 48. | Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ | | 1 | |
| 49. | Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր | | 2 | |
| 50. | Համագործակցություն այլ երկրների հետ | | 0 | |
| 51. | Հասանելիությունը մարգինալացված խմբերին | | | 0 |
| | **Գնահատման մակարդակները՝ տոկոսները** | **16/16*2=50%** | **13/14*2=46.4%** | **8/21*2=19.0%** |

Հավելված 4. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ Հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ ԿԿՀ-ի համար

| ՋԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **1. ՄԱՆԴԱՏԸ**<br><br>ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատներ՝ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով: | **3. Մանդատը** կենտրոնանում է ԿԿՀ մանդատի և գործառույթների վրա, գլխավորապես այն բանի, թե ԿԿՀ-ն իրականացնում է արդյոք կանխարգելման, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթները: | 2 | ԿԿՀ-ն, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ունի լայն լիազորություններ՝ քննելու ու լուծելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքությանը ներկայացվող պահանջները, պետական պաշտոնյաների վարքագիծը, կառավարելու հայտարարագրերի համակարգը, վերահսկելու կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունները, մշակելու կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր: Վերոնշյալ լիազորություններով պայմանավորված ԿԿՀ-ն մի կողմից հանդես է գալիս որպես պետական պաշտոն զբաղեցնող անձանց էթիկայի հանձնաժողով, իսկ մյուս կողմից՝ կոռուպցիայի կանխարգելման կարգավորող մարմին:<br><br>Որպես էթիկայի հանձնաժողով՝ ԿԿՀ-ն օրենքով իրավասու է իրականացնել վարույթներ, վերլուծություններ և իրավասու մարմիններին տրամադրել եզրակացություններ ու առաջարկություններ: Որպես կոռուպցիայի կանխարգելման կարգավորման մարմին՝ ԿԿՀ-ն օրենսդրությամբ օժտված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման մասնակցության գործառույթով և լիազորված է դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կառավարությանը: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ԿԿՀ կայացրած եզրակացություններն իրավասու մարմինների համար կարող են հիմք հանդիսանալ հանրային պաշտոնյաների ու ծառայողների նկատմամբ կիրառելու պատասխանատվության միջոցներ: |
| | **4. Իրավասությունն** ընդգրկում է ԿԿՀ ոլորտային և աշխարհագրական շրջանակը (օրինակ, արդյո՞ք ԿԿՀ իրավասությունն ընդգրկում է կոռուպցիան ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում և գործո՞ւմ է երկրի բոլոր վարչական մակարդակներում): | 0 | |
| | **5. Վարույթների, վերլուծությունների և եզրակացությունների տրամադրման լիազորությունները (քննություն և հետապնդում)** կենտրոնանում են ԿԿՀ գործնական լիազորությունների վրա՝ նախաձեռնողական վարույթ սկսելու, պահանջելու այլ պետական մարմիններից համագործակցություն՝ | 2 | |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | ստուգելու կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամտահարկի գրառումները և գույքը, խուզարկելու և մուտք գործելու տարածք, և այլն: | | Բարեվարքության ուսումնասիրությունների մասով ԿԿՀ եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:<br><br>ԿԿՀ մանդատի համապատասխանության մասով խնդրահարույց են լայն մանդատի պայմաններում միաժամանակ սահմանափակ իրավասությունը, որի արդյունքում չի ապահովվում ԿԿՀ-ի կողմից պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության պահանջների համակարգման գործընթացը: Միաժամանակ, ԿԿՀ ունեցած մանդատը չի տարածվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ողջ շրջանակի վրա:<br><br>Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ եզրակացություններն ու քաղաքականության մշակմանը միտված առաջարկությունները չունեն պարտադիր կիրառման պահանջ և իրավասու մարմնի կողմից ԿԿՀ եզրակացությունների չկիրառման համար պատասխանատվության միջոցներ չեն նախատեսվում: |
| | **6. Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններն** ուսումնասիրում են ԿԿՀ լիազորությունները՝ մշակելու և կիրարկելու պարտադիր առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ, առավել ընդհանրական, կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է ուղեգրումների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը: | 1 | |
| | **9. Լիազորությունների քաղաքական օգտագործումն** անդրադառնում է այն հարցին, թե կառավարությունն արդյոք ապավինում է ԿԿՀ-ին վերոհիշյալ մանդատը և լիազորությունները, որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար: | 2 | |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսացված կերպով: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ միջազգային գործակցությունը: | **47. Համագործակցությունը բարեվարքության հարցերով զբաղվող այլ մարմինների հետ** գնահատում է ԿԿՀ և բարեվարքության հարցերով զբաղվող այլ մարմինների (գլխավոր աուդիտոր, ՄԻՊ, պետական մեղադրող և այլն) հարաբերությունները, ինչպես նաև կանխարգելման/տեղեկատվական գործունեության տեսանկյունից երկրի պետական և ՏԻՄ մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների հետ հարաբերությունները: | 1 | ԿԿՀ-ի համար օրենքով սահմանված է պետական և ՏԻՄ մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ՔՀԿ ներկայացուցիչների հետ համագործակցության պահանջ:[130]<br><br>Օրենսդրորեն ԿԿՀ համագործակցությունը պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների և էթիկայի հանձնաժողովների հետ սահմանափակված է բարեվարքության պահանջների պահպանման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության, ինչպես նաև վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման, նվերների ընդունման սահմանափակման կիրարկման ուղեցույցների տրամադրման գործառույթներով: ԿԿՀ-ն օրենքով նախատեսված գործառույթներ չունի հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման մասով:<br><br>ՔՀԿ-ների հետ փաստացի համագործակցությունը սահմանափակվել է հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և ԿԿՀ գործունեության հանրայնացման շրջանակներում: Համագործակցության հուշագրեր են ստորագրվել ՀՀ և միջազգային մի շարք բուհերի հետ: Քաղաքացիական հասարակության մյուս միավորումների հետ համագործակցությունը դրսևորվել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, |
| | **48. Հասարակական կազմակերպությունների հետ գործակցությունը** գնահատում է ԿԿՀ և երկրի այլ կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների միջև գործակցությունը կանխարգելման/հանրայնացման գործունեության առումով: | 1 | |

[130] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | **49. Միջազգային ցանցեր** ցուցանիշը գնահատում է ԿԿՀ մասնակցությունը միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և ներգրավվածության աստիճանը (օրինակ, ՏՀԶԿ ստամբուլյան գործողությունների հակակոռուպցիոն նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» կռալիցիան): | 2 | այդ թվում՝ առանձին աշխատաժողովների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման շրջանակներում նրանց մասնակցության, առանձին նախագծերի վերաբերյալ փորձագիտական կարծիքների ստացման եղանակներով:<br><br>Միջազգային հակակոռուպցիոն ցանցերի ու նախաձեռնությունների մասով ԿԿՀ-ն ակտիվ ներգրավվածություն ու մասնակցություն ունի ՏՀԶԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործում: «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակներում ԿԿՀ-ն ստանձնել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի» ստեղծման հանձնառությունը:<br><br>Միջազգային տեխնիկական աջակցության առանձին ծրագրերի շրջանակներում ԿԿՀ-ն համագործակցում է ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքության» ծրագրի, ինչպես նաև ԵՄ Թվիննինգ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում», ՀԲ պետական հատվածի արդիականացման ծրագրերի հետ, որոնց շրջանակներում իրականացվող միջոցառումները միտված են զարգացնելու ԿԿՀ կարողությունները և նպաստելու կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմերի ու կառուցակարգերի ստեղծմանը: Այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված կառույցների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներ արձանագրված չեն:<br><br>ԿԿՀ համագործակցության սկզբունքի համապատասխանության |
| | **50. Այլ երկրների հետ գործակցությունը** գնահատում է ԿԿՀ գործակցությունն այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ, այդ թվում՝ համատեղ նախագծերի և փորձագիտական օժանդակության միջոցով: | 0 | |
| | **39. Հակակոռուպցիոն կրթություն և զարգացում ցուցանիշը** գնահատում է ԿԿՀ-ի կողմից վերջին 3-5 տարիների ընթացքում նախաձեռնված հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման նախաձեռնությունները: | 0 | |

| ՉԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ Ր | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏ ՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | մասով խնդրահարույց են դիտվում հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների, պետական և ՏԻՄ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման բացակայությունը: Վերջիններիս գործունեության ապահովման մեթոդական նյութեր ու ուղեցույցներ ԿԿՀ-ի կողմից մշակված և հաստատված չեն:<br><br>Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կոնկրետ ծրագրերը բացակայում են: Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և գործունեության հանրայնացման կնքված համագործակցության հուշագրերի շրջանակներում որևէ գործողություն դեռևս չի հաջորդել: Թույլ է համագործակցությունն այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմինների հետ: Դրանք, ըստ էության, բացակայում են, իսկ առկա համագործակցությունը սահմանափակված է միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմակերպված ուսումնական ու ճանաչողական այցերով: |
| **3. ՄՇՏԱԿԱՆՈՒԹ ՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ները, իրենց երկրների հիմնական իրավական սկզբունքների համաձայն, պետք է ստեղծվեն | **1. Ինստիտուցիոնալ անկախությունն** անդրադառնում է ԿԿՀ իրավական հիմքին, մասնավորապես այն հարցին, թե ԿԿՀ-ն օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմի՞ն է, որևէ նախարարությանը հաշվետու առանձին մարմի՞ն է, թե գործում է ոստիկանության կամ որևէ նախարարության կազմում: | 2 | ԿԿՀ-ն ձևավորվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն առանձին օրենքով, ունի ՀՀ Սահմանադրությամբ ինքնավար մարմնի կարգավիճակ: Այն գործում է կոլեգիալության, ֆինանսական ինքնուրույնության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության, համագործակցության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա և հաշվետու է Ազգային ժողովին: |

| ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| պատշաճ և կայուն օրենսդրական դաշտով, օրինակ, Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա ՀԿՄ շարունակականությունն ապահովելու համար: | | | |
| **4. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ**<br><br>ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, | **2. ԿԿՀ անդամների նշանակումը և հեռացումը** ներառում է ԿԿՀ անդամների նշանակման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անձինք, ուսումնասիրում է, թե առկա են արդյոք անկողմնակալության ապահովման երաշխիքներ, այդ թվում՝ անաչառ ընտրության չափանիշներ և նշանակման ընթացակարգի թափանցիկություն: (Այս ցուցանիշը ներառում է նաև հեռացման գործընթացը: | 2 | ԿԿՀ անդամների նշանակման և հանձնաժողովի ձևավորման գործընթացները կանոնակարգված են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 146.2 և 153.1 հոդվածներով:<br><br>ԿԿՀ առաջին կազմը ձևավորվել է 2019 թվականին,ԱԺ-ում ներկայացված 3 խմբակցությունների, Կառավարության և ԲԴԽ-ի կողմից ներկայացված թեկնածուներից: ԿԿՀ անդամները ընտրվել են 6 տարի ժամկետով: 2020 թ. հետո ԿԿՀ թափուր անդամի պաշտոնում նշանակումները կատարվում են բաց մրցույթի եղանակով ԱԺ-ի կողմից ստեղծված մրցութային խորհրդի միջոցով: Մրցութային խորհրդի անդամները նշանակվում են Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների կամ Ազգային ժողովի խորհրդի, ԲԴԽ, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի կողմից՝ մեկական անդամներ: Մրցութային խորհուրդն ԱԺ աշխատակազմի |

| ՉԱՓԱՆԻՇԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| բարեվարքությունը և ձեռնհասությունը: | | | օժանդակությամբ իրականացնում է մրցույթի կազմակերպման գործընթացները՝ ապահովելով թեկնածուների կողմից օրենքով սահմանված փաստաթղթերի ընդունման, թեկնածուների թեստավորման ու հարցազրույցների անցկացումը, գնահատման հիման վրա մրցույթը հաղթահարած թեկնածուների ցուցակն ԱԺ նախագահին ներկայացնելը: Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են ԱԺ կայքէջում: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն ընտրվում է ԱԺ պատգամավորների կողմից փակ գաղտնի քվեարկությամբ:<br><br>ԿԿՀ անդամների նշանակումների սկզբունքին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է բացառապես ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մեծամասնության ձայներով ԿԿՀ անդամների նշանակումները, քանի որ ԱԺ-ում տիրող քաղաքական պառակտվածության և ընդդիմադիր մասի բոյկոտի արդյունքում, բացակայել է կոնսենսուսը:<br><br>Միաժամանակ քաղաքական ազդեցության ներքո են ԿԿՀ անդամի մրցութային խորհրդի անդամները, որոնք նշանակվում են Ազգային ժողովի խորհրդի, իշխող քաղաքական ուժի կողմից կամ էլ ԲԴԽ-ի և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, որոնք նույնպես ընտրված են քաղաքական մեծամասնության ներկայացմամբ ու կողմից: |
| **5. ՇԱՐՈՒՆԱԿԱԿ** | **8. Գործառնական ինքնավարությունը**, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է այն խնդրին, թե ԿԿՀ-ն օպերատիվ | 1 | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ը նախատեսում է «Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **ԱՆՈՒԹՅՈՒՆ**<br><br>Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ համապատասխան պաշտոնյայի մինչև ՀԿՄ նոր ղեկավարի նշանակումը: | վերահսկողություն ունի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ, որը ներառում է ԿԿՀ նախագահի բացակայության դեպքում շարունակականությունն ապահովելու մեխանիզմներ: | | Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը» դրույթը, որը լիովին համահունչ է սահմանված սկզբունքին: |
| **6. ՀԵՌԱՑՈՒՄ**<br><br>ՀԿՄ-ների ղեկավարները պետք է ունենան | **2. ԿԿՀ անդամների նշանակումը և հեռացումը**, ի լրումն վերը նկարագրված տարրերի, ներառում է ԿԿՀ անդամների հեռացման գործընթացը, այդ թվում՝ նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները, ինչպես նաև հեռացման | 2 | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված են ԿԿՀ անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցման գործընթացները: ԿԿՀ անդամի պաշտոնից հեռացման բոլոր հանգամանքները՝ անձնական դիմում, անհամատեղելիության պահանջներ, քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի |

| ՉԱՓԱՆԻՇԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ Ր | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏ ՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և պետք է հեռացվեն միայն իրավականորեն սահմանված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատարի (օրինակ, Գերագույն դատարանի նախագահի) պաշտոնազրկման ընթացակարգին: | ընթացակարգերի անաչառության և թափանցիկության ապահովման երաշխիքները: Նաև ուսումնասիրում է, թե Հանձնաժողովի անդամները ունեն արդյոք հաստատագրված ժամկետ (պաշտոնավարության ժամկետով) և չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ, անձեռնհասություն կամ սխալ վարքագիծ): (Այս ցուցանիշը ներառում է նաև նշանակման գործընթացը): | | խախտում, հանձնաժողովի նիստերից անհարգելի բացակայություն, օրենքով սահմանված պաշտոնավարման տարիքի ու դատավորին ներկայացվող հիվանդության պահանջներին անհամապատասխանություն, պայմանավորված չեն ԿԿՀ անդամի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտությամբ և կողմնակի ազդեցությամբ: Միայն ԿԿՀ նախագահի մասով է նախատեսված պաշտոնից հեռացման հնարավորություն «իր պարտականությունները չկատարելու հիմքով», հանձնաժողովի անդամների 2/3-ի ընդհանուր ձայների միջոցով:<br><br>ԿԿՀ անդամի պաշտոնեական լիազորությունների դադարեցման գործընթացում ռիսկային է դիտվում ԿԿՀ անդամի բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ եզրակացությունների կայացման գործընթացները, որոնք «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով կազմակերպվում են նույն հանձնաժողովի այլ անդամների կողմից: Այդուհանդերձ, ԿԿՀ մյուս անդամները նման հարցերում ունենում են կաշկանդվածություն և պաշտպանվածության պակաս, մասնավորապես ԿԿՀ նախագահի նկատմամբ վարույթներ հարուցելու հարցում, քանի որ ԿԿՀ նախագահին է վերապահված ԿԿՀ կառավարման գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները, և վերջինս օժտված է ԿԿՀ մյուս անդամների նկատմամբ իշխանությամբ: |
| **7. ԷԹԻԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ**<br><br>ՀԿՄ-ները պետք է ընդունեն | **27. Բարեվարքության ներքին մեխանիզմներ** ցուցանիշը գնահատում է ԿԿՀ վարքագծի կանոնների համապարփակությունը (օրինակ, գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և | 1 | ԿԿՀ անդամների և աշխատակազմի քաղաքացիական ծառայողների բարեվարքության պահանջները սահմանված են «Հանրային ծառայության մասին և քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով: |

| ՋԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| վարքագծի կանոններ, որոնք իրենց անձնակազմից պահանջում են էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության (պահանջների պահպանման) խիստ ռեժիմ: | հյուրասիրության կանոնները, հետաշխատանքային սահմանափակումները), կանոնների խախտման և այլ խախտումների վերացման գործընթացները, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը): | | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով հանձնաժողովի անդամների, որպես պետական պաշտոն զբաղեցնող ինքնավար խմբի պաշտոնատար անձանց, վարքագծի կանոնները սահմանվում են ԿԿՀ-ի կողմից: ԿԿՀ-ի կողմից դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, այդ թվում՝ ԿԿՀ անդամների մասով: Այն գտնվում է նախագծման փուլում:[131]<br><br>ԿԿՀ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից:<br><br>ԿԿՀ քաղաքացիական ծառայողների մասով բարեվարքության պահանջների առավել խիստ ռեժիմ սահմանելու սկզբունքի տեսանկյունից ռիսկային է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայության ղեկավար և մասնագիտական խմբերի բոլոր ծառայողներին բարեվարքության ստուգման ու գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրման համակարգ չներառելը: |
| **8. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ների ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի | **7. Իրավական ինքնավարությունը**, ի թիվս այլոց, ուսումնասիրում է, թե ԿԿՀ անդամները և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք անձեռնմխելի են արդյոք քրեական և քաղաքացիական հետապնդումից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: | **2** | Այս սկզբունքի համապատասխանության պահանջները սահմանված են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով: ԿԿՀ-ին վերապահված լիազորությունների իրականացման գործում ԿԿՀ անդամները օժտված են անկախության և անձեռնմխելիության պաշտպանությամբ: Վերջինս ենթադրում է, որ «Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ |

[131] ԿԿՀ 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված է վերոնշյալ կանոնագիրքը, որը ուժի մեջ է մտնելու 2024 թվականի ապրիլի 1-ից, http://cpcarmenia.am/files/legislation/1359.pdf

| ՉԱՓԱՆԻՇԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից: | | | Նրա արարքում առկա են վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ», ինչպես նաև՝ «Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել, կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա միայն Հանձնաժողովի համաձայնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել 72 ժամից ավելի»: Հանձնաժողովի անդամը պարտավոր չէ բացատրություններ տալ Հանձնաժողովի վարույթում գտնվող կամ Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի կամ փաստաթղթերի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:<br><br>ԿԿՀ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ որպես քաղաքացիական ծառայողներ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով մասնագիտական գործունեությունը պաշտպանված է՝ տարանջատելով քաղաքական գործունեությունից: Միաժամանակ, նրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված չեն անձեռնմխելիության պահանջներ, քանի որ վարույթների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացման գործում չունեն որոշումների կայացման լիազորություն: |
| **9. ՎԱՐՉԱՐՈՒԹ** | **13. Աշխատողների աշխատավարձի և խրախուսման** ցուցանիշը ներառում է ԿԿՀ միջին օղակի անձնակազմի | 1 | Այս սկզբունքի համապատասխանության պահանջները սահմանված են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **ՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ների աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված աշխատողների: | աշխատավարձերի սանդղակների և խրախուսման մանրամասները, այդ թվում՝ վերջին 3-5 տարիների ընթացքում աշխատավարձերի և խրախուսումների ցանկացած էական փոփոխություն: Հարցնում է, թե աշխատավարձերը մրցունակ են մասնավոր հատվածի (օրինակ՝ բանկերի, աուդիտորական ընկերությունների և այլն), ինչպես նաև քաղաքացիական ծառայության այլ համադրելի պաշտոնների համեմատ: | | կանոնակարգված են աշխատակազմի ծառայողների վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը: Քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) հանդիսանում է որպես բազային աշխատավարձի և քաղաքացիական ծառայողների վարձատրության գործակցի արտադրյալ: Քաղաքացիական ծառայողի բազիսային աշխատավարձը 2022 թվականին սահմանվել է 83,200 ՀՀ դրամ, որը խրախուսում է պետական ծառայության համալրմանը քաղաքացիական ծառայության ամենացածր 8-րդ մասնագիտական պաշտոնների խմբի համար: |
| | **18. Անձնակազմի կայունությունը** ուսումնասիրում է ԿԿՀ կադրերի հոսունության մակարդակը (այսինքն՝ անձնակազմի շարժը, որն առաջանում է անձնակազմի հավաքագրման և հեռանալու արդյունքում), որն ինքնին կարող է լինել վարձատրության մակարդակների համարժեքության ցուցանիշ: | 0 | ԿԿՀ քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար են հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ:<br><br>ԿԿՀ աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների վարձատրության մակարդակները միջին հաշվով 4.29 անգամ նվազ են ԿԿՀ անդամների վարձատրության գործակիցներից:<br><br>Մասնավոր ոլորտի նկատմամբ ԿԿՀ աշխատակազմի վարձատրության մրցունակության տեսանկյունից՝ բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը դիտվում է որպես |

| ՉԱՓԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | համարժեքորեն ոչ մրցունակ:<br><br>Քաղաքացիական ծառայության ցածր և բարձր խմբի պաշտոններում ընդգրկվածների միջին աշխատավարձերի խիստ մեծ տարբերությունները, պարգևատրումների հաշվին են տեղի ունեցել: ԿԿՀ-ում կադրերի հոսունությունը ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի միջինին (8%) գերազանցում է 3 անգամ, որը թափուր հաստիքների համալրման գործընթացների տեմպերի դանդաղեցման պայմաններում քաղաքացիական ծառայողներին ԿԿՀ-ում պահելու և մոտիվացման տեսանկյունից ունի բացասական միտում: |
| **10. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**<br><br>ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն՝ ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն: | **14. Աշխատակազմի ընտրությունը** կենտրոնանում է ԿԿՀ անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերի (անկախ քաղաքացիական ծառայության գործող կանոններից), այդ թվում՝ ընթացակարգի և՛ արժանիքահեն, և՛ թափանցիկ լինելու վրա: | 2 | ԿԿՀ-ն աշխատակազմի անձնակազմի հավաքագրումն իրականացնում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված մրցութային կարգով (ներքին և արտաքին): Մրցույթի անցկացումը կատարվում է թեստավորման և հարցազրույցի փուլերով, ինչպես նաև փաստաթղթերի համապատասխանության ստուգման գործընթացով: Մրցույթի թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափերը սահմանված են ՀՀ փոխվարչապետի կողմից:<br><br>«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով քաղաքացական ծառայության ըստ առանձին խմբերի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված է կրթության և մասնագիտական ստաժի նվազագույն պահանջներ: ՀՀ փոխվարչապետի որոշմամբ սահմանված է «քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացիական |
| | **15. Քննության և վարույթների իրականացման փորձագիտությունը** գնահատում է ԿԿՀ անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները բարեվարքության պահանջների խախտումների քննության և վարույթների, առերևույթ կոռուպցիոն տարրեր պարունակող դեպքերի արձանագրման ոլորտում, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի միջին աշխատանքային ստաժը: Որպես | 1 | |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ Ր | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏ ՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | փորձագիտության մակարդակի ցուցանիշ է ծառայում նաև վարույթների և/կամ քննության գործառույթների համար պատասխանատու չլրացված հաստիքների քանակը: | | ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը»:<br><br>ԿԿՀ նախագահը պատասխանատու է ԿԿՀ գլխավոր քարտուղարի և ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ից 3-րդ ենթախմբերի ծառայողների նշանակման ու ազատման համար: ԿԿՀ անձնակազմի մյուս ենթախմբերի քաղաքացիական ծառայողների նշանակման ու ազատման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը: ԿԿՀ անձնակազմի քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման մրցույթների կազմակերպման ու մրցութային հանձնաժողովների ձևավորման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը: Միայն գլխավոր քարտուղարի թափուր պաշտոնի մրցույթն է կազմակերպվում և իրականացվում ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից, իսկ նշանակումը՝ ԿԿՀ նախագահի կողմից:<br><br>Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է ԿԿՀ նախագահը՝ անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց մասով և գխավոր քարտուղարն՝ այլ խմբերի քաղաքացիական ծառայողների մասով:<br><br>ԿԿՀ աշխատակազմի համալրման գործընթացում ՔԾԳ-ի կողմից քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերում փոփոխությունների կատարման մասով համաձայնությունների կամ «թույլտվությունների» ստացման |
| | **16. Կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության փորձագիտությունը** գնահատում է ԿԿՀ անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության ոլորտում, ինչպես նաև ԿԿՀ անձնակազմի միջին աշխատանքային ստաժը: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ է ծառայում նաև կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության գործառույթների համար չլրացված հաստիքների քանակը:<br><br>***Ծանոթություն:*** *Թեև 15-րդ և 16-րդ ցուցանիշներն ուղղակիորեն չեն անդրադառնում մարդկային ռեսուրսների նկատմամբ իրավասության հարցին, սակայն կարող են հանդես գալ որպես համեմատության եզր՝ պարզելու, թե ԿԿՀ-ն որքանով ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ իր գործառույթներն իրականացնելու համար (վերաբերում է նաև Ջակարտայի 11-րդ սկզբունքին):* | 1 | |

| ՉԱՓԱՆԻՇԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | ինստիտուտը ԿԿՀ-ն դիտարկում է որպես ԿԿՀ գործառնական ինքնավարության վրա արտաքին միջամտության հանգամանք և կախվածություն ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից: |
| **11. ՀԱՄԱՐԺԵՔ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**<br><br>ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և տարածքը: ՀԿՄ-ները | **10. Բյուջեի համամասնությունը** դիտարկում է վերջին 3-5 տարիների ընթացքում ԿԿՀ բյուջեի միջին համամասնությունը ընդհանուր պետական բյուջեի նկատմամբ: | 0 | ԿԿՀ ֆինանսավորումն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր տարի ԿԿՀ-ն կազմում և ՀՀ կառավարություն է ներկայացնում ԿԿՀ առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով Հանձնաժողովի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: ԿԿՀ բյուջետային ֆինանսավորման հայտը ՀՀ կառավարության կողմից ընդունվելու դեպքում՝ անփոփոխ, իսկ առարկությունների դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: ՀՀ կառավարությունը ԿԿՀ բյուջետային ֆինանսավորման հայտը պետական բյուջեի նախագծի հետ ներկայացնում է ԱԺ: Պետական բյուջեի ծախսային մասում ԿԿՀ ծախսերը ներկայացվում են առանձին տողով:<br><br>ԿԿՀ ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից «Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում, «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում», «Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային |
| | **11. Բյուջեի բավարար լինելը** գնահատում է ԿԿՀ՝ իր գործառույթներն իրականացնելու համար բավարար բյուջետային միջոցների առկայությունը և սահմանափակ ռեսուրսների պատճառով, որքան ժամանակ է սպասում բյուջետային միջոցների ստացմանը, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է: | 0 | |
| | **12. Բյուջեի անվտանգությունը և կայունությունը** պարզում է, թե ԿԿՀ-ն խնդիրներ ունեցել է իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում, հատկացված բյուջեն ժամանակին է բաշխվում, և վերջին 3-5 | 1 | |

| ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ մանդատի իրագործման համար: | տարվա ընթացքում ԿԿՀ-ի բյուջեում նշանակալի փոփոխություններ եղել են, թե՝ ոչ:<br><br>**17. Անձնակազմի վերապատրաստումը** ընդգրկում է ԿԿՀ անձնակազմի վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև վերջին 3-5 տարվա ընթացքում նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները, մասնակիցների քանակը: Ուսումնասիրում է նաև վերջին 3-5 տարվա ընթացքում ԿԿՀ-ի կողմից վերապատրաստմանը հատկացված բյուջեն: | <br><br><br>1 | իրազեկվածության բարձրացման ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» երեք միջոցառումների ներքո: ԿԿՀ ֆինանսավորումը նախորդ երեք տարիների ընթացքում կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.01%-ից պակաս:<br><br>Բյուջետային ֆինանսավորման գործընթացի մասով ԿԿՀ գրեթե բոլոր տարիների բյուջետային հայտերը խմբագրվել են Կառավարության կողմից, իսկ ծախսային ծրագրերը՝ ենթարկվել փոփոխությունների և կրճատվել: Այդուհանդերձ, ԿԿՀ բյուջեի ցածր կատարողականը (86.4%) հիմնականում պայմանավորված է եղել հաստիքների թերիամալրվածության հանգամանքով: Բյուջետային միջոցների անբավարարության հետևանքով կոնկրետ օրենքով վերապահված լիազորությունների չիրականացման դեպքեր չեն արձանագրվել: Արդյունքում, ԿԿՀ բյուջետային հատկացումները բավարարել են նախանշված բյուջետային ծրագրերի իրականացումն ապահովելու համար:<br><br>ԿԿՀ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և մանդատի իրագործման մասով խնդրահարույց է ԿԿՀ անձնակազմի կարողությունների զարգացման համար բյուջետային միջոցների բացակայությունը, անձնակազմի վերապատրաստման դասընթացների իրականացումը միջազգային կազմակերպությունների ու կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում: Նշված ծրագրերը հիմնված չեն եղել անձնակազմի կարողությունների բացահայտված կարիքների վրա և չեն կրել պլանավորված բնույթ: |

| ՉԱՓԱՆԻՇԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ Ր | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏ ՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒ ԹՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ները ստանում են բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունեն կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին: | **11. Բյուջեի բավարար լինելը,** ի հավելում վերը նկարագրված տարրերի, գնահատում է նաև, թե ԿԿՀ-ն ունի ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը: | 0 | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն՝ ԿԿՀ-ն ԱԺ-ում բյուջեի նախագծի քննարկումների նախնական փուլում հնարավորություն ունի ներկայացնելու առարկություններ Կառավարության կողմից բյուջետային հայտում կատարված փոփոխությունների վերաբերյալ՝ հայտնելով անհամաձայնություններ:<br><br>ԿԿՀ-ն իրեն հատկացված բյուջետային հատկացումների նկատմամբ ունի կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն, սակայն ՀՀ կառավարությունը «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով լայն լիազորություններ ունի նաև ինչպես բյուջեի ձևավորման, այնպես էլ կատարման գործընթացում կատարելու փոփոխություններ ու վերաբաշխումներ: Համաձայն ԿԿՀ տվյալների՝ ՀՀ կառավարությունը վերոնշյալ լիազորության շրջանակներում 2020-2022 թթ. նվազեցրել է ՀՀ պետական բյուջեով ԱԺ կողմից ԿԿՀ-ին կատարված հատկացումները, այնպես էլ ավելացրել է դրանք:<br><br>ԿԿՀ-ին հատկացված բյուջետային միջոցների կառավարման և վերահսկման գործընթացում ՀՀ կառավարության իրավասությունը փոփոխության ենթարկելու կամ վերաբաշխելու ԱԺ կողմից հատկացված միջոցների ծավալը դիտվում է որպես խնդրահարույց ԿԿՀ ֆինանսական ինքնուրույնության ապահովման սկզբունքի կիրառման տեսանկյունից: |
| **13. ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | **27. Բարեվարքության ներքին մեխանիզմները**, ի թիվս այլոց, գնահատում են վարքագծի կանոնների խախտման և այլ չարաշահումների վերացման, ինչպես նաև ներքին բողոքների քննության | 1 | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով հանձնաժողովի անդամների վարքագծի կանոնները սահմանվում են ԿԿՀ-ի կողմից: ԿԿՀ-ի կողմից դեռևս սահմանված չեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, ներառյալ՝ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու ՀԿՄ-ների կողմից ցանկացած սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում: | առկա գործընթացները: | | այդ թվում՝ ԿԿՀ անդամների մասով: Այն գտնվում է նախագծման փուլում:<br><br>Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից:<br><br>ԿԿՀ անդամների, կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների բարեվարքության պահանջները սահմանված են հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով: ԿԿՀ անդամների և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների քննությունն ու լուծումը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով իրականացնում է ԿԿՀ-ն:<br><br>ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների քննության ու լուծման ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից: Քաղաքացիական ծառայության և ԿԿՀ կայքէջերում բացակայում է որևէ տեղեկատվություն ԿԿՀ կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին:<br><br>ԿԿՀ աշխատակիցների կարգապահական կանոնները հաստատված են 2021 թվականի փետրվարի 12-ի ԿԿՀ նախագահի «Աշխատանքային կարգապահության |
| | **24. Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը** գնահատում է բողոքողների և ազդարարների՝ իրենց ինքնությունը ԿԿՀ-ին բացահայտելու պատրաստակամությունը՝ ի նշան ԿԿՀ գործընթացների հանդեպ իրենց վստահության: | - | |
| | **25. Բողոքների քննությունը** գնահատում է ԿԿՀ անձնակազմի դեմ բողոքների քննարկման ընթացակարգը և դրա արդյունավետությունը: | 0 | |
| | **26. Բողոքների արդյունքները** գնահատում են վերջին 3-5 տարվա ընթացքում ԿԿՀ կամ նրա անձնակազմի դեմ ներկայացված բողոքների արդյունքները և այն, թե անտեսվել են արդյոք որոշ հիմնավոր բողոքներ: | 0 | |

| ՉԱՓԱՆԻՇԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | առաջադրվող պահանջները հաստատելու մասին» թիվ 01-Լ հրամանով: ԿԿՀ ներքին հաշվետվողականության սկզբունքի ապահովման տեսանկյունից ԿԿՀ անդամների և աշխատակիցների բարեվարքության մեխանիզմները, սահմանված ընթացակարգերը գործնականում չեն կիրառվել: ԿԿՀ անձնակազմի նկատմամբ ստացված բողոքների թվի, դրանց քննության արդյունքում կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ տվյալները նույնպես բացակայում են: |
| **14. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**<br><br>ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմների, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար: | **21. Արտաքին վերահսկողության մեխանիզմները** գնահատում են ԿԿՀ արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԿԿՀ վերահսկողական հանձնաժողով(ներ)ին: Նաև ուսումնասիրում է հսկողության լրացուցիչ մեխանիզմներ (օրինակ, կանոնավոր հաշվետվությունների ներկայացում Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում): | 0 | ԿԿՀ-ն հանդիսանալով ինքնավար մարմին՝ «ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ի կողմից ինքնավար մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացնում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ հանրային լսումների մեխանիզմով ԿԿՀ-ին վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը: ԿԿՀ ամենամյա գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով ԱԺ-ին ամենամյա հաղորդումների ներկայացման ենթատեքստում: ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրերում ԿԿՀ գործունեության հաշվեքննությունը ներառված չի եղել:<br><br>ԿԿՀ արտաքին հաշվետվողականության սկզբունքի համապատասխանության մասով խնդրահարույց է արտաքին վերահսկողության մեխանիզմների բացակայությունը: |
| | **23. Պատշաճ գործընթացի պահպանումը** գնահատում է հանրության վստահությունը ԿԿՀ-ի կողմից իր լիազորություններն օգտագործելիս ընթացակարգերի, պատշաճ, անկողմնակալության և արդարացիության պահպանմանը և վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ վերաբերմունքի մեջ: | 0 | |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| **15. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br><br>ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարեկան մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանն իրենց գործունեության մասին: | **19. Տարեկան հաշվետվությունը** գնահատում է ԿԿՀ տարեկան հաշվետվության համակողմանիությունը և հասանելիությունը: | 1 | «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ով սահմանված են հանձնաժողովի հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքի կիրարկումն ապահովող միջոցառումները, որոնք ներառում են ա) ԿԿՀ գործունեության կիսամյակային հաղորդումների հրապարակում հանձնաժողովի կայքէջում, բ) ԿԿՀ-ի ընդունած որոշումների և եզրակացությունների, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունների և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում կայքէջում, գ) իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով, դ) նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:<br><br>ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումներից հրապարակված է միայն 2021 և 2022 թվականների ԱԺ-ին ուղղված հաղորդումները, ինչպես նաև նույն թվականների կիսամյակային հաղորդումները: ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումները ներառում են ԿԿՀ-ին վերապահված մանդատի ու լիազորությունների շրջանակը բնութագրող որոշ ոլորտներում իրականացված աշխատանքները:<br><br>ԿԿՀ հրապարակային հաշվետվողականության սկզբունքի համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են ԿԿՀ գործունեության տարեկան հաղորդումների համապարփակության՝ ոչ միասնական կառուցվածքի առկայությունը, տվյալների անհամադրելիությունը և հանրության շրջանում հարցումների կամ այլ հետազոտությունների արդյունքների չներառումը: Դեռևս մշակված ու հրապարակված չէ նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը: «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական |
| | **20. Արձագանքողականությունը տեղեկությունների հարցումներին** ցուցանիշը գնահատում է ԿԿՀ թափանցիկությունը հանրության կոնկրետ հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է): | 1 | |

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ Ր | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏ ՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | ՀՀ օրենքով ԿԿՀ տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ-ի կողմից քննարկելու պահանջ սահմանված չէ: Արդյունքում, ԿԿՀ՝ ԱԺ ներկայացված տարեկան գործունեության հաղորդումն ԱԺ-ի կողմից, ինչպես նաև շահագրգիռ ՔՀԿ-ների մասնակցությամբ չի քննարկվում և «ի գիտություն» չի ընդունվում: |
| **16. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈ ՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ**<br><br>ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և աշխատակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության վստահությունն իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ: | **44. Առցանց հաղորդակցությունը** գնահատում է ԿԿՀ-ի կողմից առցանց ալիքների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածման և հանրության հետ առավել լայն կապեր հաստատելու համար, ներառյալ՝ ԿԿՀ-ն առցանց հաղորդակցության ռազմավարության առկայությունը: | 1 | Հանրության ընկալումներում[132] ԿԿՀ-ի մասին տեղեկացվածութ-յան մակարդակն աճել է: Հակակոռուպցիոն գործունեություն իրա-կանացնող կառույցների շարքում (առանց զրուցավարների կող-մից կառույցների անվանումներ բարձրաձայնելու) ԿԿՀ-ին 2019 թ.-ին նշել է հարցվածների 1.1%-ը, մինչդեռ 2021 թ.-ին՝ 8.4%-ը: ԿԿՀ-ի մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) հարցվածների 49%, որոնց միայն 9.4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/ գործառույթների մասին:<br><br>ԿԿՀ հանրության հետ հաղորդակցման ու ներգրավման հիմնական գործիքը www.cpcarmenia.am պաշտոնական կայքէջն է, որում պարբերաբար տեղադրվում են ԿԿՀ գործունեությանն առնչվող տեղեկատվական նյութեր, ապահովված է կապը հայտարարատուների հետ հայտարարագրերի լրացման ու հրապարակման համար: ԿԿՀ կայքում հրապարակված են մարմնի կառուցվածքը, գործառույթները, լիազորությունները, կանոնադրությունը, ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները, հաստիքացուցակները, ԿԿՀ անդամների կենսագրականները և վերջիններիս կոնտակտային տվյալները: Կայքում հրապարակված են նաև մարմնի գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքներ, որոշումներ, հրամաններ, կարգադրությունները: Կայքն ապահովում է հետադարձ կապի համար անհրաժեշտ տեղեկատվությունը: ԿԿՀ |
| | **46. Վստահություն կառավարության կողմից ԿԿՀ-ին ցուցաբերվող աջակցության հանդեպ** ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ կառավարությունը ԿԿՀ-ին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիան զսպելու համար: | 1 | |
| | **51. Հասանելիությունը մարգինալացված խմբերին** գնահատում է ԿԿՀ | 0 | |

[132] ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի բարեվարքության ծրագիր, «ՀՌԿԿ» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

| ՁԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ ՀԿՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ | ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|---|
| | արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված խմբերին (օրինակ՝ կանայք, հաշմանդամներ կամ ազգային փոքրամասնություններ), այդ թվում՝ ԿԿՀ-ի կողմից ապաագրեգացված տվյալների օգտագործումը հանրայնացման և հակակոռուպցիոն քաղաքականության իրազեկման համար: | | պաշտոնական սոցիալական ցանցերի էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ ակտիվ հղումներով:<br><br>ԿԿՀ հանրային հաղորդակցության և ներգրավման սկզբունքի համապատասխանության տեսանկյունից կայքն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ ու բովանդակությամբ ունի բարելավման կարիք: |

Գրականության ցանկ


**Իրավական ակտեր**

1. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178682,
2. «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2018 թ. փետրվարի 7-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=119531
3. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2016 թ. դեկտեմբերի 16-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824
4. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, ընդունված՝ 2016 թ. դեկտեմբերի 16-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242
5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թ. մարտի 25-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141497
6. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թ. մարտի 23-ին, arlis.am/DocumentView.aspx?docid=120832
7. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=120807
8. «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թ. մարտի 18-ին, arlis.am/DocumentView.aspx?docid=171966
9. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թ. հունիսի 9-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131
10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թ. հունիսի 9-ին https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271
11. «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2013 թ. դեկտեմբերի 12-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178780
12. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2010 թ. դեկտեմբերի 22-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138980
13. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2004 թ. փետրվարի 18-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165294
14. «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 1997 թ. հունիսի 24-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=175826

**Այլ իրավական ակտեր**

15. ԿԿՀ անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ ՄԽՈ-Ո-04 որոշումը, ընդունված՝ 2023 թ. հոկտեմբերի 3-ին, http://parliament.am/Competition_Committee/03102023-MKH_VO_04.pdf?lang=arm
16. ՀՀ փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 697-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հոկտեմբերի 10-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169106

17. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1351-Ն որոշում, հաստատված՝ 2022 թ. օգոստոսի 24-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168042
18. ՀՀ կառավարության «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշման հավելված 2, ընդունված՝ 2019 թ. հոկտեմբերի 3-ին, https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.2.pdf
19. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելված, https://www.gov.am/files/docs/4586.pdf
20. ՀՀ Ազգային ժողովի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացնելու մասին» թիվ Ն-303-3 որոշումը, ընդունված՝ 2006 թ. հոկտեմբերի 23-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28164

**ԿԿՀ որոշումներ**

21. ԿԿՀ «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը) հաստատելու մասին» N 02-Ն որոշում, ընդունված՝ 2024 թ. փետրվարի 6-ին, http://cpcarmenia.am/files/legislation/1359.pdf
22. ԿԿՀ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» N 01-Ն որոշում, ընդունված՝ 2023 թ. դեկտեմբերի 22-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188181
23. ԿԿՀ «ԿԿՀ-ի նիստերի անցակացման աշխատակարգը հաստատելու մասին» N 02-Լ որոշում, ընդունված՝ 2023 թ. դեկտեմբերի 20-ին, http://cpcarmenia.am/files/legislation/1207.pdf
24. ԿԿՀ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» N 02-Լ որոշում, ընդունված՝ 2022 թ. հոկտեմբերի 19-ին, http://cpcarmenia.am/files/legislation/779.pdf
25. ԿԿՀ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 05-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հուլիսի 29-ին, arlis.am/DocumentView.aspx?DocID=166673
26. ԿԿՀ «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 04-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հուլիսի 22-ին, arlis.am/DocumentView.aspx?docid=166518
27. ԿԿՀ «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» թիվ 02-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հունիսի 17-ին, arlis.am/DocumentView.aspx?DocID=164524
28. ԿԿՀ «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 03-Ն որոշում, ընդունված՝ 2022 թ. հունիսի 17-ին, arlis.am/DocumentView.aspx?DocID=164739
29. ԿԿՀ 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, 2023 թ., http://cpcarmenia.am/files/legislation/995.pdf
30. ԿԿՀ Հաղորդում 2020-2021 թթ. գործունեության վերաբերյալ, 2022 թ., http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf
31. ԿԿՀ Եզրակացություն 03/2021, Մարտին Թևոնյանի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ, ընդունված՝ 2021 թ. սեպտեմբերի 17-ին, http://cpcarmenia.am/files/legislation/502.pdf, https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf
32. ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կանոնադրություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թ. օգոստոսի 25-ի թիվ N 02-Ա որոշման հավելված 1, 451.pdf (cpcarmenia.am)

**Այլ պաշտոնական փաստաթղթեր**

33. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա», ընդունված՝ 2003 թ. հոկտեմբերի 31-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021
34. «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, JAKARTA_STATEMENT_en.pdf (unodc.org)
35. ԲԴԽ «Բարձրագույն դատական խորհրդի անդամ Անի Մխիթարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-13 որոշում, ընդունված՝ 2021 թ. հուլիսի 8-ին, XxKyVZtn4lax4eRLpUwBAbe7ChM4kJva58O2qeQv.pdf (court.am)
36. ԲԴԽ «Բարձրագույն դատական խորհրդի անդամ Վիգեն Քոչարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-14 որոշում, ընդունված՝ 2021 թ. հուլիսի 8-ին, qOufWQRtjAb1t8HjJ8MyTyOKNrEt6rRbnPit1x6o.pdf (court.am)
37. ԲԴԽ «Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-16 որոշում, ընդունված՝ 2021 թ. հուլիսի 26-ին, 4nrSkd5mlfYwoXpoj72BaIKGIvVe7eu5bPCTCIgL.pdf (court.am)
38. ԲԴԽ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» ԲԴԽ-36-Ո-Կ-19 որոշում, ընդունված՝ 2021 թ. հոկտեմբերի 04-ին, WriCbx6kyeScXmIV8Y5omDeyXswfveiPhQ54CF9v.pdf (court.am)

39. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, նախագիծ, e-draft.am


**Հրապարակումներ**


40. «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնությունում ԿԿՀ ստանձնած պարտավորություններ, https://ogp.gov.am/hy/commitments/33
41. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում. էթիկայի հանձնաժողովներ, բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, ազդարարման հարցերով պատասխանատուներ, Երևան, 2021 թ., https://transparency.am/hy/publication/pdf/244/1351
42. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Քաղաքացիական ծառայության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների կոռուպցիոն ռիսկերի գնահատում, Երևան, 2021 թ., https://transparency.am/hy/publication/pdf/276/9667
43. Ինֆոկոմ, ԿԿՀ նախագահի ընտանիքի անդամները երկու տարի հայտարարագիր չեն ներկայացրել. վարույթ չի նախաձեռնվել, 06 մայիսի, 2023 թ., https://infocom.am/hy/article/102475?fbclid=IwAR0I4gHeKlKSo1OHjPy_kNmk0KOtwb4uhFYaKX1DXABMGXSAltsAWG-7CH0
44. Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած կանխարգելմանը վերաբերելի պարտավորություններ, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia
45. Հետք, Ինչի՞ց է վախենում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Փաշինյանի հարազատներին պատասխանատվության կանչելու հարցում, 06 հունիսի, 2023 թ., https://hetq.am/hy/article/156800
46. ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույց, Երևան, 2023 թ.,https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf
47. ՀՀ գլխավոր դատախազություն, Տեղեկանք 2021 թվականի ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf
48. ՀՀ գլխավոր դատախազություն, Տեղեկանք 2022 թվականների ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf
49. ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ, Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2021 թ., ՔԾՏՀ | Կայքէջ (gov.am)
50. ՀՀ վիճակագրական կոմիտե, Աշխատավարձ և աշխատողների թվաքանակ 2019-2021, Lab_Market_2022_14 (armstat.am)
51. «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն,

Երևան, 2022 թ., https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf
52. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցում Հայաստանի գնահատման զեկույցներ, https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm
53. International Republican Institute, Public Opinion Survey: Residents of Armenia|January-March 2023, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/
54. Surveys of Public Servants: Accountability and Integrity in Public Management of Armenia. 2023. Corruption Prevention Commission, The World Bank. http://cpcarmenia.am/hy/news/item/2022/05/06/2022-05-06/
55. TI, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf
56. United Nations, Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption, Implementation Review Group, Twelfth session, Vienna, 14–18 June 2021, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf
57. USAID, Gender Equality And Social Inclusion Analysis: Corruption In Armenia, Armenia Integrity Project, June 2022, AIP GESI Analysis Final Report_Dec 2022 (encompassworld.com)